

ԱՆԱՀԻՏ ՊԱՐՍԱՄՅԱՆ

ՇՈՒՇԱՆ-ՎԱՐԴԵՆԻ

Վարքագրուկան վիպակ



Ս. Էջմիածին - 2007

1

Armenian Church Library <http://hygradaran.weebly.com>

ՀՐԱՄԱՆԱԴ

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆԻ ԵՐԿՐՈՐԴԻ

ՍՐԲԱՁՆԱԳՈՅՆ ԵՒ ՎԵՀԱՓԱՌ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՅՆ ՀԱՅՈՅ

Տպագրվում է մեկենասությամբ՝

**«ՍԻՍԻԹԱՐ ՀԵՐԱՅՈՒ» ԱՆՎԱՆ
ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՍՏԱՏԱՐԱՆԻ**

ՀՏԴ 24: 891.981-3 Պարսամյան

ԳՄԴ 86.3+84Հ-4

Պ – 351

ՊԱՐՍԱՄՅԱՆ ԱՆԱՀԻՏ

Պ – 351 Շուշան-Վարդենի: - Վարքագրական վիպակ:/Անահիտ
Պարսամյան.- Եջմիածին: Մայր Աթոռ Սուրբ Եջմիածին,
2007.- 216 էջ:

ԳՄԴ 86.3+84Հ-4

ISBN 978-99930-75-60-8

© Մայր Աթոռ Սուրբ Եջմիածին, 2007թ.

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Աշխարհակալությունների ու քաղաքակրթությունների մրցակցությունը մշտապես ուղեկցվել է զինված բախումներով, պատերազմներով: Հզոր տերությունները ձգտում էին ձուլել հպատակ ժողովուրդներին՝ ուժացնան, դավանափոխության ճանապարհով: Եթե դա չէր հաջողվում «խաղաղ» միջոցներով՝ դիմում էին ամեն կարգի բռնությունների: Պետականության չգոյության պայմաններում հայ ժողովրդի առջև ծառացել էր սեփական լեզվի ու հավատքի, ասել է թե՝ ինքնության պահպանության խնդիրը: Միջնադարյան մեր պատմությունը հարուստ է բազում դրվագներով, երբ նվիրյալ հայորդիները հնարավոր բոլոր միջոցներով պաշտպանել են սեփական մշակութային կյանքով քաղաքավարելու իրենց անկապտելի իրավունքը և, ի պահանջել հարկին, պայքարել են աննահանջ, նաև զոհաբերել կյանքը «յանուն միակ ճշմարտութեան»:

Համառ և անձնուրաց այդ մաքառման արձագանքները պահպանվել են հայ մատենագրության էջերում: Հակամարտության շատ դրվագներ պատկերվել են պատմագրության, տաղերգության մեջ, ձեռագրերի հիշատակարաններում և այլուր: Բայց հին գրականությունն ուներ հատկապես այս պայքարին նվիրված հարյուրավոր բնագրեր, որոնք ընդհանուր անունով կոչվում են սրբախություն: Մըրերի, նահատակների, խոստվանողների կյանքը, իբրև բարեպաշտության օրինակ, զնահատվել ու նկարագրվել է անիշխանության բոլոր դարաշրջաններում:

Ազգային դիմագծի ու հավատի պահպանության խնդիրները հրատապությունը չեն կորցրել նաև նոր ժամանակներում: Սակայն սրբախոսության ավանդները ընդհատվել են: Հայոց նոր գրականության մեջ այս թեմատիկան չունեցավ իր մշակումը, չստեղծվեց համապատասխան գրական ենթատեսակ:

Մայր Աքոռ Ս. Էջմիածնի հրատարակչությունը ձեռնամուխ է լինում մի մատենաշարի հրատարակության, որով, հուսանք, կմեղմացվի գրական այդ կարևոր բնագավառի պակասը, կգրվեն և լույս կտեսնեն պատմական վեպեր, վիպակներ, պատմվածքներ, գուցե նաև չափածո ստեղծագործություններ, որ պակաս հնչողություն չեն ունենամեր օրերում:

Ահավասիկ ընթերցողին է ներկայացվում մատենաշարի առաջնակը՝ Անահիտ Պարսամյանի «Ծուշան-Վարդենի» վիպակը, որի նյութը քաղված է Ս. Ծուշանիկ Մամիկոնյանի (Ծուշան-Վարդենի) վկայաբանությունից, որն իր հերթին հայ սրբախոսության երախայրիքներից է՝ գրված V դ. Վերջին: Վկայաբանության վրացերեն տարրերակը խմբագրվել է VI դարում, իսկ ավելի ուշ, բնագրի պատմական և գեղարվեստական արժանիքների բերումով, այն թարգմանվել է լատիներեն, անգլերեն, ռուսերեն:

Ս. Ծուշանիկը մահկանացուն կնքել է Ցուրտավում:

Ս. Պարսամյանի վարքագրական վիպակում նա հանդես է գալիս իբրև մերօրյա ընթերցողին հասկանալի ու սիրելի մի կերպար, որ հարազատ հետնորդն է Ոսկեծղիկն Եղիշեի ներքողած՝ Հայոց աշխարհի փափկասուն տիկնանց՝ Հայրենիքի ու Եկեղեցու նվիրյալների...

Մաղթենք բարի երթ այս գրքին և արգասարեր ճանապարհ՝ մատենաշարին:

Ա. Մադոյան

ՆԱԽԱՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Մեր պատմության համար բախտորոշ 387 թվականին Մեծ Հայքը մասնատվեց, իրանի տիրապետության տակ հայտնվեց նրա տարածքի 4/5 մասը: Գրավված երկրի ազգային պետականությունը խարխլելու և քանդելու անթաքույց նպատակասլացությամբ պարսից արքունիքը երկրից կտոր-կտոր անջատում էր Մեծ Հայքի տարածքները, հարավում երկրից անջատվեց Աղիարենեն, Նոշիրականը հանձնվեց Ատրպատականին: Ուտիքը, ապա և 428 թվականից հետո՝ Արցախը, միացվեցին Աղվանքին, ստեղծելով Աղվանից մարզպանությունը:

Մինչ այդ, 387 թվականին Գուգարաց բգեշխությունը միացվել էր Վիրքին: Գուգարքը Վիրքին միացվելուց հետո (մինչև 5-րդ դարի վերջը) այնտեղ երկիշխանություն էր տիրում: Առքայական գահին համահավասար գոյություն ուներ պարսիկների տիրապետության համակրանքը վայելող զորեղ բգեշխությունը, որն իրականում կառավարում էր երկիրը: Արևելքում Վրաց աշխարհի Գուգան, Գուրգան, Գյուրջիստան անվանումը Գուգարք-Գուջարեթի աղավաղված ձևն է:

Գրավված տարածները վերջնականորեն յուրացնելու համար պարսիկների գործունեության մեջ առաջնահերթ էր դառնում տեղի ընակչության դավանափոխությունը, այն է՝ քրիստոնեությունն արմատախիլ անելով տեղայնացնել զրադաշտական կրոնը: Հայության գլխին կավել էր հավատափոխման դամոկլյան սուրը, որն այն ժամանակա հայեցակետով նաև կեցության, գոյության վտանգ էր

Ներկայացնում:

5-րդ դարի երկրորդ կեսին՝ 450-451 թթ. և 481-484 թթ.
պարսիկները բացահայտորեն անցան հպակատ ժողովուրդների կրօնական շուրջկալի: Մաքառման, պայքարի
առաջին շրջանի ավարտը հանդիսացավ Ավարայրի ճակատամարտը,որ հայ ժողովրդի կյանքում քրիստոնեական
հավատքի պահպանման ճանապարհին հզոր պատվար եղավ դար ու դարեր...

Ավարայրի ճակատամարտին հաջորդած տարիներին
հաշտարար առաքելությամբ ասպարեզ մտավ Գուգարաց
Աշուշա (Արշուշա) բդեշիր: Մթնոլորտը փոքրիշատե
հստակվեց, քաղաքական և կրօնական լարված դրությունը
փոխարինվեց ծանր ու սպասողական վիճակով: Գերությունից տուն դարձան ապստամբությանը մասնակցած շատ
նախարարներ: Երկիրն ուժ էր հավաքում նոր մարտահրա-
վերներին ու անակնկալներին վճռականորեն դիմակայելու
համար:

Գուգարքի ժողովրդի դավանափոխությունը՝ իբրև չա-
րի հաղթության օրինակ, կարող էր բախտորոշ, այլև կոր-
ծանարար դառնալ ողջ Հայոց աշխարհի համար: Զարմա-
նալի, աստվածային մի զուգադիպությամբ փրկության
ձեռքը դարձյալ Մամիկոնյանների տոհմից էր՝ Շուշան-
Վարդենիի անձով ու նահատակությամբ, որ զորավար
Վարդան Մամիկոնյանի կրտսեր դուստրն էր և Մահակ
Պարթևի թունուհին:

Շուշան-Վարդենին (Վարդենի մանկության, ծննդյան
անունն էր, ծնողների կողմից տրված), որ հարսնացել էր

Վրաց Աշուշա բդեշխի որդուն՝ Վազգենին, ո՛չ միայն ի հարկին ընդվզեց ու ընդդիմացավ ամուսնու հավատափոխությանն ու դավաճանությանը, այլև կանացի՝ փխրուն ու թույլ թվացող էռթյամբ կրեց այրական ուժ ու ոգի պահանջող բազում ցավ ու զրկանք, մարմնական ու հոգեկոր խոշտանգումներ, անպատմելի տառապանք՝ անխախտ, աներեր նվիրված լինելով քրիստոնեական հավատին։ Զուր չէ, որ իր ճշմարիտ նահատակության իբրև փոխհատուցում, ժողովրդի, ինչպես նաև հոգեկոր դասի կողմից արժանացավ Սրբի լուսապսակի, և այսօր էլ մեզ հետ է։

... Բարդ, դարձդարձիկ այն տարիներին բազում անցքեր եղան։ Վարդան Մամիկոնյանի դստեր և Գուգարաց հարս Շուշան-Վարդենիի ըմբոստացումը ոգեշնչեց ողջ ժողովրդին՝ արժանի հակահարված տալու ամբարիշտներին։ Եղավ և այն, ինչ պիտո՞ էր, որ լիներ, արդարացի դատաստանի արժանացավ չարի արմատ և ակունք դարձած Վազգեն բդեշխը։ Վրաց արքա Վախթանգ Գորգասալը գլխատեց նրան, ձեռքն առնելով ժողովրդական ապստամբության ղեկը։ Պարսիկ մարզպանի զորքերն անարգված դուրս շպրտեցին երկրից։

Իվինում հիմք դրվեց հայկական կառավարության՝ Սահակ Բագրատունու գլխավորությամբ։ Սպարապետ նշանակվեց, դարձյալ Մամիկոնյան տոհմից, Վահան Մամիկոնյանը։

Դժվարին է ճշմարիտ հավատքի ուղին, ինչպես միշտ է եղել դարերի հոլովույթում։ Իրապես էլ դյուրի՞ն է մի թուփ, մի ծառ անգամ աճեցնելու, առանց հոգ տանելու նրան, փխրեցնելու հողն ու հագեցնելու բույսի ծարավը։

Այլև անհրաժեշտ է մաքրել հողը որոմից և մոլախոտից, պատվար լինել ծառին, խորշակներից ու հողմերից պահպանել և պաշտպանել այն:

Այսօր հավատի մեր ծառը նույն խնամքի կարիքն ունի օտարադավան զանազան տարափոխիկ հողմերի ու հարձակումների գեմ: Ուկեսեր գործակալներ՝ կրոնական ասպատակությունների միտող, փորձում են շեղել մեզ մեր պատկերի սուրբ հավատից, որ գարեր շարունակ գորավիդ է եղել մեզ՝ մեծախորհուրդ և անշփոթելի:

Հանուն քրիստոնեական հավատի իր սիրտն ու կյանքը վառած սրբերից մեկի՝ Շուշան-Վարդենիի նահատակության պատմությանն է նվիրված սույն վիպակը:

ՕՐՎԱ ԽՈՐՀՈՒՐԴ

Քունը մոտ չէր գալիս Շուշան տիկնոջ հոգնաբեկ աչքերին: Գիշերվա լոռության մեջ, բաց աչքերով պառկած, նա դարձյալ ու դարձյալ խոռվի մեջ էր ընկնում անհասկանալի, ծանր ինչ-որ բանի նախազգացումից: Սիրտը ճմլվում էր չգիտես ինչու: Եվ հիշողությունները նրան տանում էին իր կյանքի այն վաղեմի օրերը, երբ նոր էր ամուսնացել Վազգեն իշխանի հետ: Զարմանալին այն էր, որ հոգուն ծանրորեն նստած անորոշ այս զգացումն ու թախիծը հաջորդել էին ամուսնու մեկնումին: Ի՞նչ էր եղել: Չէ՞ որ առաջներում էլ նա շատ անգամ է բացակայել երկար ժամանակով՝ տարիներով... ինչու այս անգամ Շուշանի սիրտն անհանգիստ է, տագնապահար, որսորդի զարկին սպասող որսի պես: Ինչու այս անգամ քունը մոտ չի գալիս իր աչքերին: Ինչու այս անգամ նրան թվում է, որ ամուսնուն վատ, վատ բան պիտի պատահի...

Եվ տիկինն հիշեց իրենց լավ ժամանակների ջերմիկ օրեւը, երբ երջանկանում ես հենց միայն սիրելիիդ տեսնելով, գոհ ես նրա գոյությամբ, փառք ես տալիս Արարչին նրան հանդիպելու հնարավորության, առ առավելն՝ նրանից սիրված լինելու համար, ո՛ւր մնաց թե, որ սիրած էակիդ բազմապատկումը տեսնես զավակներիդ մեջ, ի՞նչ երջանկություն...

Այո, ինքն, հիրավի, երջանիկ էր, շատ երջանիկ: Սակայն հիշողության խորքերից հանկարծ ասես սահեց ու գուրս եկավ, դառնալով այնքան տեսանելի (ասես երեկ էր...) նշանակալից մի դեպք: Նշանակալից, խորհեց Շուշան տիկինը, չարագուշակ չասելու համար: Իրենց հարսանյաց հանդեսն էր: Ի՞նչ կրակոտ աչքերով էր նայում իրեն Վագդենը, հարսնաքողի տակ թաքուն սեղմում էր ձեռքը: Շքեղ էր հավաքույթը: Որքան պատվելի մարդիկ, որքան բարի մաղթանք ու աղոթք հնչեցին այդ օրը՝ ի սեր իրենց երջանկության, հօրհնություն իրենց սուրբ պսակի: Բայց... այսպիսի բան պատահեց. երբ պսակադրության ծեսի ավարտից հետո, խորանից հետ-հետ էին քաշվում փոքր քայլերով, որպեսզի ամբողջապես թիկունքով չշրջվեն դեպի այն, հարսնաքույրերից ո՞րն էր (այո, այո, Գայանեն...), որ իր բոնած մոմե վարդը՝ հուրհատող, անզգուշաբար դիպցրեց Վարդենիի ճերմակածուփ հարսնաքողին... Տե՛ր Աստված, հարսնաքողը բոնկվեց... ճիշեր լսվեցին: Հայրը՝ Վարդանը, իր լայն, ամուր ափերը երկու կողմից վրա բերեց՝ բոան մեջ առնելով կրակը... Մինչ ջուր կհասցնեին, կրակը, թանձը միսալով, մարեց: Տարածվեց մարդկային մսի խանձահոտ: Զորավար Վարդանի ճակատին ցավի քրտինք էր ծաղկել, որ կաթիլ-կաթիլ գլորվում էր բրոնզագույն այտերն ի վար. սրբել չէր կարող, ձեռքերն այրված էին, մըոտ... Մինչ լուսավոր հայացքը գոհունակություն էր ճառագում, խաղաղ,

գորովալից, հանդիստ... Հետո, երբ տեղի ունեցածը մեկնաւ բանում ու ասում-խոսում էին, Վարդենիի հիշողության մեջ ծաղկի պես բացվեց եպիսկոպոս Ափոցի այն ժամանակ ասած խոսքը, թե Վարդան զորավարի դեմքն այդ պահին ասես սրբի՝ դեմք լիներ...

Ննջասենյակի սեմին հայտնված դեմքը լիովին սթափեց-ըեց նրան:

— Դո՞ւ ես, Բրաբի,— ասաց տիկինը,— նե՛րս արի:
— Ե՛ս եմ, անո՛ւշս, գիտեի, որ արթուն ես, անանուխահ-յութ ըմպեիր սակավ, քնաբեր է, հանգստացնում է, — և մեկնեց գավաթը: Շուշան տիկինը վերցրեց, ումաղ արեց գա-վաթից, դրեց կողքի սեղանին:

— Նստի՛ր,— ասաց,— նստի՛ր, եթե չպիտի քնես:
Ի պատասխան Բրաբին հոգոց հանեց միայն, իբր, որ դու քնած չես, ես կարո՞ղ եմ քնել:

Արդեն ծեր էր դայակ Բրաբիոնը, որ Վարդենիի հետ ե-կել էր Հայաստանից, հորենական տանից: Շուշանը կապ-ված էր Բրաբիին մանկության օրերից, նա ամեն ինչ վստա-հում էր իր դայակին, ինչ մորն իսկ՝ Աահականույշին, կդժվարանար վստահել: Ամեն ինչ... իսկ հիմա, երբ ինքն արդեն երեք որդու և դստեր մայր է, և սիրտը բզկտվում է մորմոքից, հենց Բրաբիին, սիրելի Բրաբիին ի՞նչ ասի, ինչ-պե՞ս ասի... ինչպե՞ս ասի, որ իր ամուսին Վազգեն իշխա-նը շնական հայացքներ է նետում հարազատ դստե՛ր՝ Մա-նեի վրա, ինչպե՞ս ասի, որ նրա պարսկական կողմնորոշ-ման արհավիրքի մեջ ինքը՝ կանացի ներքնատեսությամբ, նաև ա՛յդ էր զգում...

«Լստ պարսկաց աւրինին հանդերձեալ էր առնուլ իւր ի կնութիւն»:

Տե՛ր իմ, խենթանալն ի՛նչ է այս տառապանքի հանդեպ:

ԹԵ ԻՆՉ ՊԱՏՄԵՑ ԲՐԱԲԻՆ

— Վարդի՛, աղջի՛կս, ի՞նձ լսիր: Ամեն վշտի սուգ է վայել, ամեն ցավի՝ ճար: Յավի մի ճարն էլ խոսքն է, խոսելը, ցավը մեկի հետ բաժանելը: Հների խոսքն ուսուցանում է. «Վիշտը պահողի մոտ է մնում»: Պատմի՛ր ինձ, ասա՛, գիտես, որ դագաղի պես խուփ եմ: Ասա՛, թեթևացի՛ր, և կտեսնես (իմ կյանքից գիտեմ...), որ ցավդ կամաց-կամաց լույսով է լցվում, մի բարակ, թեթև քող քեզ արդեն փոքր ինչ բաժանում է նրանից: Փոքր ինչ խաղաղվում ես, հաշտվում... Հիշի՛ր մեր Տեր Հիսուսին, որ խաչելության պահին խաղաղ էր ու հանգիստ...

Այս խոսքերի վրա Վարդենին մեկեն փլվեց, ուսերը կուչեկան, աչքերը լցվեցին, դեմքն ափերով ծածկեց ու հեծկլտաց.

— Բրա՛բի, սիրելիս, թող սա էլ իմ խաչը լինի՝ Տիրոջ օրինակով, ես... գուցեկ գոհ եմ այս տառապանքի համար: Բայց կա մեկն էլ՝ անմեղ իմ դուստրը, տասնհինգամյա Մանեն, որի գլխին զոհի լուսապսակն է երևում: Նա՝ ծաղկատի, մատաղ իմ դուստրը՝ իր խանում-խաթուն Սահականույշ տատի և զորաբազուկ Վարդան պապի աչքի լույսը, երեք եղբայրների մի հատիկ քույրը, հրեշտականմա՛ն, մինուժար իմ Մանեն, որի շուրթերն աղոթքներն են միայն զարդարել, այսօր...

Շուշան-Վարդենին էլ չդիմացավ, գլուխը սեղմեց Բրաբիոն դայակի կրծքին ու դառնապես ողբաց. «Եղո՛ւկ ինձ, եղո՛ւկ, անբախտ, անիծված իմ պսակին, հիշո՞ւմ ես, Բրաբի, թե ինչպես այրվեց իմ հարսնաքողը պսակի սուրբ պա-

Հին... Ա՛յս էր, ա՛յս. Տերն ինձ նշան էր տալիս գալիք ողբերգության մասին»:

Բրաբիոն դայակը լոելյայն շոյում էր իր կրծքին հանգչող սիրունատես գլուխը, ոսկյա բարձր հերկալով ամրացված չքեղ գիսակները, նիհարած-բարակած թիկունքը: Թոշնո՞ղ իմ ծաղիկ, — մտորում էր նա, — ցավից թոշնող իմ վարդ, սիրելի՝, սիրելի՝ Վարդենի»: Մինչ բարձրածայն արտաքերեց.

— Ունկն դիր ինձ, Վարդի՛, աղջիկս, ես..., ես նկատել էի այդ, սակայն չէի իշխում ասել, մտածել անգամ այդ մասին... Վազգեն բոեշխի այդ հիացումն ու տարվելն իր դուստրով վերագրում էի հայրական հպարտության ու փառքի: Հետո, ես էլ քեզ պես, համոզվեցի, որ այդպես չէ, ավա՞ղ: Այրմարդու հայացք կա, որ հո՛րը, հորինը լինել չի՛ կարող, չպիտի՛ լինի: Պարսկաց շնական բարքերը այստեղ էլ արմատ են ձգում, Տե՛ր աստված, Մարիամ Աստվածածին, դո՛ւ օգնության հասիր:

Այս խոսքերը լսելով Շուշան-Վարդենին գլուխը բարձրացրել էր դայակի կրծքից և ակնդետ նրան էր նայում.

— Բրաբի, սիրելի՝ Բրաբի, դու..., դու... նկատե՞լ ես ինչ մի...

— Այդպես է, — հոգոց հանեց անցյալ գեղեցկության հետքերը տակավին պահպանած դայակը: Տեսել եմ հոգով, Վարդի՛: Ակա՞նջ դիր: Անցյալ տարի էր այդ: Այն ժամանակից ի վեր, ինչ Մանեն հասունացավ և արդեն առանձին ննջարանում պիտի հանգիստ առներ, ես մշտապես հետն էի. ննջարանն էլ, գիտես, քոնին կից է: Խորհում էի՝ մատադ աղջիկ է, տակավին երեխա, չնեղվի՞..., և ոտքիս մեկն այնտեղ է: Զէ՞ որ, իմ լա՛զ Վարդի, դու իմ չունեցած դուստրն ես, իմ հոգու աղջիկը, և Մանեն էլ քո՛ ճյուղն է... Ուրեմն, նույնքա՞ն հարազատ ու թանկ ինձ համար...

Ահա, այդպես մի օր, երբ տարածամել էր արդեն, ես՝ աշագոտն, ասացի մինչ ննջելս մի հայացք նետեմ Մանեին՝ արդյոք քնած տեղը չի՝ բացվել, չմրսի... ինքս էլ արդեն համակված էի հանգիստ առնելու ցանկությամբ։ Դույզն ինչ ծերպ արեցի դուռը, որ տեսնեմ, թե հարկ կա՞ ներս մտնելու, ինչպես շատ անգամ էի արել։

Բայց այն, ինչ տեսա, քնից զրկեց ինձ ողջ գիշեր։ ... Վազգեն բղեշխը ներսում էր. արդեն մուշ-մուշ քնած դստեր գլխավերեռում։ Բղեշխը տարված նայում էր անմեղ քնած Մանեի գիշերազգեստից լուսո պես ցայտած ստինքին...

Իմ մուտքը բղեշխին հանկարծակի բերեց։ Ինքս էլ, նմանապես, ինձ կորցրի, Վարդի՛։ Հայացքը՝ տռփական, ինձ տեսնելով՝ շիշեց, ապա չարացավ, պողպատի փայլ առավ։

— Ի՞նչ ես անում այս տարածամին, — մոնչաց։

Տե՛ր իմ, չէ՞ որ այդ ե՛ս պիտի նրան հարցնեի, եթե հանդգնեի։ Լուռ մնացի մի պահ, ապա, ծանրորեն, խոսքս առաջ տարա, ասելով. «Ես Մանեի էլ դայակն եմ, ինչպես և Շուշան-Վարդենիի, և պարտքս է հոգատար լինել նրանց հանդեպ։ Մտա նայելու՝ արդյոք չի՝ բացվել քնի մեջ, մատաղ աղջիկ է, հիվանդությունը սիրում է անփորձ մանուկ-ներին։»

Այս «մանուկներին» բառը, գուցեև, ինձանից անկախ, շեշտմամբ արտաքերեցի, և բղեշխը հայացքով կրկին շանթահարեց ինձ, ապա ըստ կարելվույն հավաքելով իրեն, մրթմրթաց. — ե՛ս էլ, ե՛ս էլ դրա համար մտա այստեղ։

Հուշիկ՝ դուրս եկանք երկուսս էլ։»

Շուշան տիկինը լուռմ էր, հետո սրբեց արցունքներն ու ոտքի ելավ. «Այդ չի՛ լինի, Բրա՛քի, — գոչեց նա, — Տերն ինձ ուժ կտա տանելու իմ խաչը, թող ես նահատակվեմ, թող

մեռնեմ հանուն մաքուր մեր հավատի, թող... լինի ա՛յն, ինչ
լինելու է»:

Ապա, հոգեբուխ, ծնկի իջավ, սեորակ աչքերն հառեց
վեր, աղոթել սկսեց. «Տեր Հիսուս, ուժ տուր ինձ, որ բառ-
նամ զցավս...»

Աղոթքի հետ արցունքներ բխեցին աչքերից: Զէր
սրբում: Արտասվելով, աղոթում էր ու աղերսում ամենա-
բարձրյալից փրկություն, փրկություն, փրկություն...

Բրաբիոնն էլ ծնկի եկավ կողքին, նույնպես աղոթք ո-
գեց՝ դառն, տրտմագին, բզկտված հոգով... Ներքուստ
տանջվում էր, թե ճի՞շտ արեց արդյոք լուսավորելով իշխա-
նական տանը հետզհետե խտացող մութի ծալքերից մեկը...

ՈՒՐԱՑՈՂԸ

Լույսը բացվում էր: Ծանր վարագույրները հետ տանե-
լով Շուշան տիկինը ներս թողեց արևածագի առաջին մու-
նետիկներին՝ լույսի մի խուրձ էլ նրա գունատ դեմքին ըն-
կավ: ...Ողջ գիշեր անցկացրել էր աղոթքով ու սաղմոսեր-
գությամբ: Եվ հոգեմաքրման այդ արարողության ընթաց-
քում լացն էլ իրենն էր արել, լացը, արտասուքը, որ հոգու
դժվար արահետներից բխելով կաթիլ-կաթիլ քամում-հա-
նում է կեղեքիչ թույները՝ հոգս, ցավ, մտատանջություն:
Քիչ անց ներս մտավ սենեկապանուհի էթերին, որ սկուտե-
ղի վրա բերում էր ուրցի անուշաբույր թեյ՝ ճենապակե ըն-
տիր գավաթով: Տիկինն ընկրկեց. այդ գավաթը, որ Վազ-
գեն իշխանն էր բերել հեռավորերկրյա ճամփորդությու-
նից, իրենց բախտավոր օրերին... Երկու գավաթ, մեկը՝
բղեշխինը՝ կրակագույն (որով Վազգենն մեղրաջուր էր
ըմպում), մյուսը՝ իրենը՝ ամբողջությամբ բաց խոտա-

գույն, ճերմակ, մանրիկ ծաղիկներով զարդարուն: Երկու գավաթ, երկու ճակատագիր: Էթերիկ դուրս գալուց հետո ներս հայեց, ապա՝ տիկնոջ կանչի վրա, սենյակ մտավ դաշակ Բրաբիոնը:

— էլի՞ չես քնել, Վարդի՛, այսպես կմարես փութով, կայրվես մոմի պես: Խնայիր քեզ, երեխաներիդ: Ափսոս են: Ի՞նքդ, ի՞նքդ ափսոս ես...

Շուշան-Վարդենին ձեռքն էր առել գավաթը և ումագ առ ումագ խմում էր ուրցի դառնավուն հեղուկը: «Դառնություն դառնության վրա», — մտածում էր նա:

Առժամապես լուռ էին: Ներս մտավ ծառան և ծանրաշունչ արտաքերեց. «Սուրհանդա՛կ բգեշխից»:

Կանայք մի պահ անխոս նայեցին միմյանց:

— Թող նե՛րս գա, — արտոնեց տիկինը:

Պատգամաբերը երեսնամյա տղամարդ էր, թուխ բեղումորուսով, խորընկա խաժ աչքերով: Ներս մտնելուն պես ողջունեց տիկնանց, հապաղեց մի պահ. կարծես տատամսում էր ինչ-որ: Խոնարհել էր հայացքը:

Շուշան-Վարդենին ոտքի ելավ, ձեռքն ինքնաբերաբար տարավ կրծքին՝ սրտին, ասես սատարելու համար նրան: Ի վերջո, սի՛րտն էր կրում կյանքի բոլոր ալեբախումներում վերուվարող ցավը:

— Արդարեւ ո՞ղջ է հոգով, — դժվար արտաքերեց նա: — Պատգամաբերը լուռ էր:

— ճշմարի՛տը զբուցիր, երդվի՛ր առ Աստված կենդանի, — պնդեց տիկինը:

Պատգամաբերը դարձյալ լուռ էր, հայացքը խոնարհած, մի երկվայրկյան անց բարձրացրեց հայացքը, արդարեւ, այրմարդու լաց՝ անարցո՛ւնք, աչքերից հորդացող անսփոփ, խորը վշտի հորձանքով: Ասես ինքն էլ տակավին չէր հավատում կատարվածին:

— Քո ամուսինը ուրացավ քրիստոնեությունը և ատրուշանները երկրպագեց՝ պարսից կրոնն ընդունելով:

Հետո ծնկի եկավ Շուշան տիկնոջ առաջ.

— Ների՛ր ինձ, գուժկանիս, իշխանուհի՛, գուժկանիս՝ ների՛ր...

— Վե՛ր կաց, — խլածայն, ասես հեռու քարանձավից եկող ձայնով, արտասանեց Շուշան տիկինը, միաժամանակ մատնացույց արեց գուռը:

Ու տապալվեց մեկեն՝ կայծակնահար ծառի հանգույն, իրեն պահել-գրկելու փութացած դայակի ձեռքերի վրա: Գետնին ընկած լալիս էր դառնորեն և ավաղում աստվածուրաց ամուսնուն ու խղճալի համարում զավակներին՝ երեք ուստր և մինուճար դուստր մի...

Հետո ծնկի եկավ, վարսերի հերկալը հանեց-նետեց, և հերարձակ ողբում էր կսկիծ-կսկիծ արյուն-արցունք բխելով...

Լալիս էր և դայակը: Արցունքուտ աչքերով ներս ընկած սենեկապանուհի էթերին ծունկի իջավ տիրուհու կողքին, սկսեց աղոթել: Քիչ անց Շուշան-Վարդենին ձգվեց, վեր բարձրացրեց գլուխը, թեպետ էլի՛ ծնկաչոք, և, դառնալով Բրաբիոնին և էթերիին, աղաղակեց. «Այն բաժակը, որ Հայրն է տվել ինձ, չպիտի՞ ըմպեմ...»

Եվ ընկավ ուշակորույս...

ԱՅՆ ԲԱԺԱԿԸ, ՈՐ ՀԱՅՐՆ Է ՏՎԵԼ ԻՆՉ, ԶՊԻՏԻՑ ԸՄՊԵՄ...

Եվ այսպես, ամբարշտությամբ ու պարգևներով վերադառնում էր իր երկիր, իշխանության էր գալիս վրաց Աշուշա բղեշիսի որդի Վազգենը՝ ուրացողը: Նա, որ դրժելով

քրիստոնեությունը, պարսից արքունի դուռը գնաց և պարսկական կրոնն ընդունեց կամովին, այլ ոչ հարկադրաբար կամ բռնությամբ։ Առավելն՝ ճշմարիտ Աստծուն ուրանալով՝ երկրպագեց կրակը, և դեռ... թագավորից պարսիկ կին ուզեց իր համար։ «Խորիր գլորվել, գտել է պուտուկը»,— ասում է ժողովուրդը։

Պարսից արքան սիրով ընդառաջեց դավաճան-ուրացողի խնդրանքին, նրան կնության տալով, ո՞չ ավելի, ո՞չ պահան, քան... իր զոքանչին... իր կնոջ մորը։

Դավաճան բղեշխը՝ մինչև վերջ ուրացյալ ու պիղծ, խոստացավ ավելին՝ իր նախկին կնոջն ու զավակներին ևս մոգության հավատի դարձնել։

Մինչ դավաճանությամբ իրեն արատավորած և արդեն խարանյալ բղեշխը տուն էր դառնում, ցավից ու վիավորանքից քուն ու դադար կորցրած Շուշան-Վարդենին երեխաներին առած փութաց եկեղեցի։ Խորունկ մի հավատով ծնկեց, արտասվեց, քաջ գիտենալով, որ ապաբախտ իր կյանքի անիվը թեքվել է անդարձ։ Աղոթք ոգեց սրտաբուխ։ «Ահա ճանապարհ ընկած դալիս է ամբարշտությամբ լի ուրացողը ի կորստյան վիճ որսալու համար ինձ և իմ ծնունդներին։

Եվ արդ, Տեր Հիսուս Քրիստոս, ինձ ու իմ որդիները հանձնում եմ քեզ, դո՛ւ ես Տեր ու Աստված, իսկ ես պատրաստ եմ չարչարանքներ կրելու և մեռնելու քո սուրբ անվան համար, որովհետեւ դու Աստված ես ճշմարիտ, և քեզ է վայել երկրպագություն ու փառք հավիտյանս հավիտենից։»

Եվ եկեղեցում երանելին այգաբացից մինչև երեկո արտասվելով այլևս բազում պաղատանք էր անում Տիրոջը։ Երեկոյան ժամասացությունն ավարտած բոլոր եկեղեցականները սգակից էին լինում նրան։ Շուշան-Վարդենին վեր էր

կենում, տուն ճամփում իր մանկանց, իսկ ինքը գնում-մտնում եկեղեցուն կից փոքրիկ տնակը, մնում այնտեղ՝ առ Աստված աղոթելով ամբողջ գիշեր, լալով ու ողբալով, դառնությունից անհանգիստ ու անսպազ: Եվ մերձավորներից ոչ ոք չէր հանդինում մի խոսք ասել նրան. միայն դրան երեցը (քահանան) ասում էր երանելուն. «Ի՞նչ ես մտադիր և ի՞նչ պիտի անես ուրացող բգեշխի կողմից քո հանդեպ հարուցված այս պայքարում՝ բազում այն չարիք-ների վերաբերմամբ, որ գործելու է»:

Շուշան-Վարդենին, որ այդ կարճ ժամանակամիջոցում բազում տարիների տառապանք էր կրել, ուրեմն և ամրացել հոգով, պատասխանում է. «Այդ տարակուսանքներն ու հոգսերն են կեղեքում ինձ ու իմ զավակներին, որովհետև գիտեմ այդ մարդու ամբարշտությունը և այդ պատճառով եմ շարունակում սուգ անել ու արտասուց հեղել: Ո՞վ կտա իմ գլխին ջուր և իմ աչքերին արտասուքի աղբյուրներ ու օթևաններ անապատում, որ ես՝ կատարվածից անայլայլս, սպամ աստվածանանաչությունից՝ անաստվածություն, լույսից՝ խավար փոխարկված ամբարիշտ ամուսնուս՝ ճշմարիտ Աստծուն ուրացողի չարաչար կորուստը և կանխեմ իմ զավակներին սպառնացող փորձանքը:

... Ո՞ր մահվան լուրն է, որ այսպես հոգի ու մարմին է գեհենի մատնում, ո՞ր մեռյալն է, որ մխիթարության գեթնշույլ չի թողնում երկրի վրա ապրող իր մերձավորներին: Սրանցից որո՞վ մերժեմ սուգն ու սակավ ինչ մխիթարեմ իմ անձը:

Մարդկանց ու երկրայինի հանդեպ իմ հավատը կորավ, ողջ հույսս հատվեց-սպառվեց, ակնկալությունս առ ամենակալ Աստված է, որ փրկի ինձ, աղավնու պես թեր տա, որպեսզի թերով ու սուրբ Հոգու չնորհներով թռչելով՝ հեռացյալ դադար առնեմ անապատում, և զորություն տա

ընդունելու վերին խնամքներից ու փոքր ինչ սթափիվել ու
այս մըրկյալ խոռվքից, որին նա տեղյակ է իր իմաստությամբ:

... Պատրաստ եմ իմ անձը բանտերի ու կապանքների և
ամենայն կտտանքների հանձնելու, որպեսզի Աստծով ապ-
րեմ ու մեռնեմ հանուն նրա անվան և չթողնեմ իմ սուրբ
հայրերի՝ Հայոց լուսավորիչների հավատքը...»:

Ուրացյալ բդեշխը եկավ-հասավ իր նստոցը՝ Յուրտավ:
Մոտենում էր անխուսափելին՝ հանդիպումը հայրենյաց
մեծ ու փոքրի, այլև Շուշան-Վարդենի տիկնոջ հետ... Գի-
տեր իր տիկնոջ շիտակ ու առաքինասեր բնությունը, մա-
նավանդ՝ անվերապահ նվիրումն առ Աստված: Գիտեր
նաև, որ, արդարե, քաջազնիվ հոր՝ Վարդան զորավարի
արժանի գուստո՞ն է՝ նրա պես անկոտրում հավատի և զո-
րավոր կամքի տեր:

Նախքան տիկնոջն ու երեխաներին տեսնելը Վազգենը
քաշվեց իր հարկաբաժինը՝ հրավեր ուղարկելով իր եպիս-
կոպոսին ու քահանաներին: Նրանք եկան՝ ծանրաքայլ ու
մտահույզ, յուրաքանչյուրն իրեն վիրավորված համարելով
տեղի ունեցածի համար: Ամեն մեկի հոգու խորքում թա-
քուն մի հույս էր առկայծում, թերևս հաջողվի՞ դարձի բե-
րել ապականյալին, ուրացողին: Ո՞վ գիտե, գուցե Աստծո
փորձությունն է սա՝ ստուգելու իր հավատի ուժը: Ո՞վ գի-
տե: Անքննելի են Աստծո խորհուրդները: ... Բայց երբ տե-
սան Վազգեն բդեշխի ինքնահաճ դեմքն ու սկեռուն հա-
յացքը, աջ ձեռքի շքեղ՝ կարմրակն մատանին (պարսից ար-
քայի նվերը...), ներսուղուրս անող պարսիկ մոգերին,
սահմուկեցին-մնացին: Նաև՝ պարսկական շքեղ մի գորգ
զարդարում էր գահավորակը, ուր նստեց բդեշխը:

«Մոգ» կոչվում էին զրադաշտական կրօնի պաշտոնյաները: Մարերն ու պարսիկները մոգ էին անվանում քուրմերին, իմաստումներին ու փիլիսոփաներին, որոնք իրազեկ էին բնական գիտությանց, աստղագիտության, նաև՝ բժշկություններ էին անում: Նրանք, ընդունված էր մտածել, որ կարգում էին ապագան, կանխագուշակում գալիքը՝ պատերազմ, սով, երկրաշարժ, հեղեղ... Խորհրդատուներ էին համարվում, առանց որոնց երկրի մեծամեծերը վճիռորոշումներ չէին կայացնում: Մոգերը երկրպագում էին չորս տարրերը՝ կրակ, օդ, ջող և ջուր: Առավել հարգի էր կրակի պաշտամունքը, ի խոնարհումն որի բարձրադիր վայրերում կառուցում էին կրակատներ, ուր գիշեր-ցերեկ վառվում էր կրակը: Տներում, պալատներում ևս կրակն իր սրբազն ու պատվավոր անկյունն ուներ:

Վազգեն բղեշխի ընդունաբան-հյուրասրահում, գեղակերտ մետաղյա պատվանդանի վրա, շքեղ կրակարանում հուրհրում էր կրակը: ճերմակ պատմուճան հագած մոգերից մեկը ներս մտավ հյուրերի հետ գրեթե միաժամանակ, ցուցադրաբար մոտեցավ ատրուշանին և հատուկ ձողիկով թեժացրեց կրակը, ապա ձողիկը կողքի դնելով, երկարուծիք խոնարհում արեց կրակին:

Ծանր լոռություն էր տիրում, և ասես համր ու անխոս մեկը՝ Վազգեն բղեշխը մատանեկիր ձեռքի թեթևակի շարժմամբ մոգին մատնացույց արեց դուռը: Կրկին խոնարհում անելով կրակին՝ մոգը դուրս եկավ, ինչպես քրիստոնյաներն են դուրս գալիս եկեղեցուց՝ դեմքը կրակին, թիկունքով դեպի դուռը, հետընթաց մանր քայլքով:

Լոռությունն չէ՝ կարծես մեկական խոշոր քար էին կախ տվել ներկաների պարանոցներից։ Ուրացող բդեշխը ողջ այդ ժամանակ խոնարհել էր աչքերը։ Վերջապես բարձրացրեց հայացքը՝ մա՛ո ու պղտո՛ր, աչքերի բազեանման զննումով չափեց շրջապատն ու... զարմանալի վհատ ձայնով արտաքերեց։ «Մի՛ խորշեք և մի՛ վարանեք իմ տիրությունից»։ Հետո լոեց երկար, ապա շարունակեց։ «Այլ հորդորեցեք Շուշան-Վարդենի տիկնոջը՝ թողնել իր կամքը և ընդունել իմը, և աշխարհի փառքի մեջ վայելել այն նախկինից առավել»։

... Ընտիր համադամներով ծանրաբեռ սեղանին ոչ ոք այդպես էլ չմոտեցավ։ Ո՛չ էլ չքեղ ըմպանակներին, որ լի էին գինով՝ արյա՛ն պես կարմիր... Հրավիրյալները, ինչպես մունջ ու գանդաղաքայլ մտել էին, նույն կերպ դուրս եկան՝ առանց խոնարհում անելու։ Թվում էր, թե մեռելատնից են դուրս գալիս...

Հուղարկավորի նույն քայլքով խումբը շարժվեց դեպի Շուշան տիկնոջ կացարանը։ Այստեղ՝ նախամուտքում նրանց էր սպասում բդեշխի ջոջիկ եղբայրը։ Այստեղ էր և սենեկապանուհի էֆերին՝ տագնապահար դեմքով (նա լավ գիտեր իր տիրուհուն)։ Բոլորը միասին ներս մտան։

Զարմանալի էր տեսնել առաջվա հմայիչ, գեղատես տիկնոջը խամրած, վշտաբեկ, ասես ցողունը կոտրած ծաղիկ։

Հանդերձանքն էլ ա՛յլ էր. շատ, շատ տարբեր այն կերպարից, որով դիմավորում են հեռավոր ճամփորդությունից դարձած տիրոջն ու ամուսնուն։ Շուշան-Վարդենին... սգազգեստո՛վ էր, պարզագույն սև քուղով մազերն ամփոփած ծոծրակին, անզարդ... Նիհարած էր շատ, աչքերի տակ կապույտ երանգով խորշումներ, որ գիշերն ի լույս

չդադարող աղոթքների վկաներն էին, հայացքն՝ ալեկոծ...
Եպիսկոպոսն ու քահանաները, նրանց հետ և բգեշխի
ջոջիկ եղբայրը հապաղեցին մի պահ, ապա տիկնոջ ձեռքի
շարժմանն ընդառաջ նստեցին գահավորակներին: Դարձ-
յալ նույն լուսթյունը, ինչպես Վազգեն բուշիի հետ հան-
դիպման ժամանակ, նույն անշնչելի օդը: Խոսեց Ափոց ե-
պիսկոպոսը, սղալելով արծաթավուն մորուսը, մեկ առ մեկ
հաղորդելով Վազգենի պատգամն առ այն, որ Շուշան-
Վարդենին թողնի իր կամքը և ընդունի իր ամուսին-տիրո-
ջը ինչպես կա՝ դավանափոխ... Եպիսկոպոսն ինքն էլ դժվա-
րանում էր ավարտել միտքը, բառեր չէր գտնում, երբ տի-
կինը ցասկոտ պոռթկաց.

- Ինչո՞ւ չես ասում, որ այդ ամուսին-տերն հավատու-
րա՞ց է և ուխտանենդ, սրբազա՞ն, ինչո՞ւ չես հիշում Տիրոջ
խոսքերը, թե՝ «Պիղծերին մի՛ մոտենաք, որովհետեւ պոռնի-
կին և ուրացողին մերձեցողը մի մարմին է, իսկ Տիրոջը
մերձեցողը՝ մի հոգի, և ուր հոգին է, այնտեղ ազատութ-
յուն է մեղքերից»:

Եվ քանի որ այս ավետիսն ունենք, իմ սիրելիներ ու վե-
րակացուներ, բաժանեցե՛ք ինձ նրանից, և ես կմիանամ
Քրիստոսին՝ սատանայի կամքը կատարող ուրացողին հա-
ղորդվելուց ինձ փրկողին: Եվ իմ անելիքն ամենայն
սրբությամբ ու արդարությամբ կենդանի Աստծուն պաշ-
տելն է և բոլոր այն չարչարանքներն ու փորձությունները
կրելը, որ ինձ վրա է թափելու այս աստվածուրացն ու ար-
դարության թշնամին»: Տիկինը լոեց՝ հեասպառ: Այստեղ
Եպիսկոպոսն ասաց. «Այդ ասածներդ լավ են, դուստր իմ,
բայց այս է մտածելիք, թե գուցե առավել բարկության ու
նախանձի բորբոքվի և վերակացուների ու ժողովրդի հան-
գեպ չարի վրա չար հարուցի: Այլ ցանկալի է՝ վեր կենաս
գաս, թերեւս բարկությունը մի փոքր մեղմվի»:

Հրավիրյալները քայլեցին դեպի դուռը:

Տիրող կարճ լուսթյան պահն ընդմիջվեց անակնկալ մի աղմուկով՝ լուսամուտագոգից վայր ընկավ ու կոտրվեց բյուրեղապակյա մեծ սափորը՝ դաշտային ծաղկունքով լեցուն։ Մանկամարդ աղախինը, որ ակամա պատճառ էր դարձել դրան՝ սափորի փոշին սրբելու առիթով, ափսոսանքի ճիչ ու լացով ընկավ տիկնոջ ոտքը…

— Զէի՛ ուզում, տիրուհի՛ս, չէի ուզում, այս ի՛նչ եղավ, ների՛ր, ների՛ր…

Սափորը շատ թանկարժեք նվերն էր երկրի մեծամեծերից մեկի:

— Վե՛ր կաց, դո՛ւստը իմ, խաղաղվի՛ր, երանի՛ թե մեր կորուստներն այսպես իրեղեն լինեին, երանի թե, սակայն խորունկ վշտերն ու անբուժելի ցավերը մշտատե են։ Գնա՛, խաղաղվի՛ր։

Այսպես խոսեց Շուշան-Վարդենին ու Հիշեց, որ չքե՛ղ այդ սափորը իր և բդեշխի բախտավոր օրերի վկայություններից մեկն էր, նրանց անդրանիկ արու զավակի ծննդյան հանդամանքն արձանագրող։

… Այժմ փովել էր գետնին փշո՛ւր-փշո՛ւր, թափված ծաղիկների ու ջրի հետ խառնված։

— Զգո՛ւյշ եղիր, չարյունոտես ձեռքդ, — ասաց Շուշան տիկինը հատակը մաքրող աղախնին։

Ապա դեպի դուռը դիմեց։ Դուրս եկավ բդեշխի քարակոփ ամրոցից, քայլեց բակն ի վեր, որի վերջում անշուք, հողաշեն մի քողտիկ կար, որ տարիներ առաջ կառուցել էին մառանին կից՝ այլևայլ իրեր և ուտելեղեն զետեղելու համար։

Շուշան-Վարդենին այժմ այնտեղ էր անցկացնում իր օրերն ու գիշերները՝ մշտական աղոթքով ու ծոմապահությամբ, ա՛յն ցավակոծ օրվանից ի վեր, երբ լսել-իմացել էր

ամուսնու դավաճանությունը:

ԵՐԵՍ ԱՌ ԵՐԵՍ

Երբորդ օրը, երբ ընթրիքի նստեցին, բգեշխն իր եղբայր Զոջիկին և նրա կնոջն ուղարկեց Շուշան տիկնոջն ընթրիքի կանչելու։ Շուշան-Վարդենին չէր համաձայնում, և բազում աղաչանքներից ու պաղատական խոսքերից հետո ոտքի ելավ՝ լալով ու տրտմությամբ։ Իր նախնի սուրբ Սահակից հիշատակ մնացած մի փոքրիկ Ավետարան կար ձեռքին, որ մոտն էր պահում և նրանով ծածկաբար Աստծուն աղաչում։ Հընթացս ողջ ընթրիքի, որն ասես հոգեհացի սեղան լիներ՝ լուռ ու տրտմալից, տիկինը չկերավ ու չխմեց ոչինչ, աչքն՝ արցունքու։ Եվ ավարտին, անխոս, վեր կացավ գնաց իր տեղը։

Առավել նեղսրտած բգեշխը բարկությամբ տակնուվրա էր լինում, և ընթրիքի ավարտից հետո, երբ ներկաներն հեռացան, դարձյալ մարդ ուղարկեց տիկնոջ մոտ՝ կանչելով նրան։ Շուշան-Վարդենին չկամեցավ գնալ։ Նրա մերժումը լսելով՝ բգեշխը ելավ գազանացած՝ ինքը գնաց և ծառաների հետ քարշ տալով բերեց։ Տիկնոջ մոմագույն, դալուկ դեմքին զույգ ջահերի պես բոցավառվում-այրվում էին խոշոր, սև աչքերը, որ առավել խորն էին ընկել նիհարելուց։ Շուրթերը դողում էին։ Եվ ողջ ընթացքում, մինչ քարշ տալով բերում էին նրան, տիկինն աղաղակում էր և ասում. «Ճե՛ր Հիսուս, օգնի՛ր ինձ»։

Կատաղած ուրացողը, որ Շուշան-Վարդենիի ողջ կերպարի մեջ տեսնում էր (ուզեր թե չուզեր) իր աններելի արարքի պժգանքով լի գնահատականը, հարվածեց նրան, հետո էլի՛ ու էլի՛... Եվ չգիտես որտեղից ձեռքին հայտնված

բրով (թերեւս նախապես էր վերցրել) ազատություն տվեց գաղանային իր ընազդին, խփելով ուր և ինչպես պատահի... Տիկինը նվում էր միայն, հետզհետե ավելի ու ավելի մարող ձայնով: Հայտնեցին բգեշխի եղբայր Զոջիկին: Ներս ընկավ իշխան Զոջիկը՝ այլայլված, փութաց եղբոր ձեռքերից խել (որ երկար ժամանակ չէր հաջողվում...) ուշաթափ հարսին: Վրա հասած ծառաները ջուր սրսկեցին տիկնոջ արյունոտ-ուռած գեմքին, ծեծված-ջարդված մարմնին կյանք ներարկելու փորձեր արեցին՝ թփթփացնելով-շարժելով... Հարվածներից ողջ տեղ չէր մնացել տիկնոջ մարմնի վրա: Երանելի Շուշան-Վարդենին ընկած էր իբրև մեռյալ՝ անշունչ ու անկենդան: Խորհեցին, թե մահացել է: Բարկությունից կրակ կտրած բգեշխն արդեն նախատում էր աստծուն, և սուրբ տիկնոջ նախնյաց... Տիկնոջից ո՛չ պակաս ծեծված էր և ի՞նքը՝ ամիսների երկվության այս տառապանքից, դաշաճանության ակնհայտ հանգուցալուծումից, պարսից կրոնն ընդունելու փաստից, ապա հետագա այս ընթացքից:

Նահատակվող Շուշան-Վարդենին իր հերթին և իր խաչով, ուրացյալ բգեշխը իր արարքին ի պատասխան ամոթու նախատինք էր կարդում բոլորի, բոլորի հայացքներում, ասվող ու չասվող խոսքերի մեջ, իրեն ուղղված կամ ուրիշ կողմ նայող հայացքների մեջ, ամենուր... Հապա աչքերն իր մանկանց՝ Մանեի, Հերակլի, Ա.ահակի, Բագրատի...

Շուշան-Վարդենին մահացած համարելով տարան իր տնակը:

Առավոտյան բգեշխը գնաց երանելի տիկնոջը տեսնելու, և երբ համոզվեց, որ ողջ է՝ պահապաններ կարգեց, հրաման տալով նրա մոտ ոչ ոքի չթողնել (տղամարդ, կին, երեխա), որպեսզի նա «չարչարանքով մեռնի, և իբրև կերակուր տալ նրան միայն գարեհաց ու ջուր»:

Շուշան-Վարդենին՝ հոգեկան անընդմեջ ալեկոծ վիճակից, մշտատև ծոմապահությունից, վերջապես առավել քան սակավ սննդից, որ էր հանապազ ջուր ու գարեհաց, հյուծվել էր: Դալուկ ու բարակիրան՝ նա ասես դեռատի օրիորդ լիներ թիկունքից, եթե դեմքի գույնն ու արտահայտությունը չտեսնեին: Մեկ անգամ չէ, որ թե՛ դայակ Բրաբիոնը, թե՛ սենեկապանուհի էթերին ջանում էին նրան որևէ միրգ կամ քաղցրավենիք հասցնել (ծառաներից շատերն էլ էին ուղղում այդ անել, բայց չէին համարձակվում):

Շուշան-Վարդենին արդեն մի տեսակ հետ վարժված լինելով վայելուչ ուտելիքից, նաև նրա՛ համար, որ այդ ամիսների ընթացքում մարմնական նոր ցավերի տեր էր դարձել, սկզբում մերժում էր, ապա սկսեց վերցնել թուչուններին կերակրելու համար: Այդպիսի մի օր էր: Նա՝ գոհունակ, որ գոնե մի քանի թուչնի կերակրեց, ափերն էր մաքրում փշրանքից, երբ մեկի ստվերը ծածկեց դռնից թափանցող լուսո շերտը: Դրան երեցն էր:

— Լույս բարի, տիկի՛ն, — արտասանեց նա, հարցական հայացքն ուղղելով Շուշան-Վարդենիին:

— Լույսը քեզ հետ, տե՛ր հայր, համեցի՛ր, — ասաց տիկինն ու հավելեց տխուր. — Տեղ իսկ չկա, որ առաջարկեմ նստել:

Գետնին փոված էր մի կիսամաշ փսիաթ, որի վրա գիշերային «հանգիստն» էր անցկացնում իր պապերի հավատի և արդարության համար պայքարի ելած Վարդենին: Զորավար Վարդան Մամիկոնյանի՝ Ավարայրի ճակատամարտի ճշմարիտ արծվի՛ դուստր Վարդենին: Հավատարժան Մահակ Պարթևի թոռնուհի՛ Վարդենին: Շուշան-Վարդենին, որ ինքն էլ չիմանալով այդ, արդեն ոտք էր դրել սրբութ-

յան լուսանորոգ ուղին: Զորս զավակների մա՛յր Վարդենին... Վերջապես, երի՛ցս անարժան Վազգեն բդեշխի կին Վարդենին...

Ապաբա՛խտ ու բախտավոր Շուշան-Վարդենին: Երկրի և Երկնքի արանքում բանտված, հո՛ղ և երկի՛նք Շուշան-Վարդենին: Այսպես էր մտորում դրան երեցը, հայելով տիկնոջ մաշված և դժգույն կերպարանքին:

— Արդեն երեք օր ու երեք գիշեր է, որ դու ոչինչ չես կերել, դուստր իմ: Այդպես կհանգչես վաղաժամ: Հիշի՛ր Աստծուն ու մխիթարիր քեզ նրա հույսով, որը տարակուսողներին համբերություն է տալիս և սիրտը կոտրվածներին՝ կյանք: Արդ, ինքու քեզ սփոփիր հանուն Քրիստոսի մարտնչելու հաջող մարտով, որով ապրում ես ու քաջալերվում, անցավորները թողնելու մխիթարությամբ և առ Աստված մերձենալու հույսով, որ ամենակարող է, թեպետև չունես սրտակից մեկը, որ ընտանեբար հոգա քո մասին: Միմիթարվի՛ր Աստծով: Հացի պատառն այս, որ ես եմ քեզ տալիս, պիտի ճաշակես այժմ:

Մինչ Վարդենին փոքրիկ պատառներով պոկում էր հացն ու ուտում (իսկ դա հեշտ չէ՛ր ուռած շրթունքների, հարվածներից կապտած և ցավող ծնոտի պատճառով...), դրան երեցը մտահոգ նստած էր հոգնած այն ճանապարհորդի նման, որ չգիտե, թե ո՞ւր է տանում իրեն այս ուղին:

— Եվ ի՞նչ ես խորհում զավակներիդ մասին, տիկին: Տեսնում եմ, նրանց առած մտնում ես եկեղեցի: Ի՞նչ է սպասում նրանց:

Այս ամենն ասելու ընթացքում դրան երեցը ժամանակ էր շահում նախապատրաստելու համար Շուշան տիկնոջը, մինչև որ հայտներ նրան իր այցելության բուն շարժառիթը, թե Վազգեն բդեշխը արգելում է այսուհետեւ իր երե-

խաներին տանել եկեղեցի... Խստիվ արգելում է, քանզի ժամանած մոգերը նրանց արդեն պատրաստում էին պարսից կրոնն ընդունելու համար:

...Անարժան ամուսնու ուրացումից ի վեր այս էլ երկրորդ բոթն էր: Շուշան-Վարդենին նախ ընկրկեց նստած տեղը (ասես պաշտպանվում էր աներևույթ հարվածից), ապա փորձում էր վեր կենալ, որ չէր հաջողվում սաստիկ այտուցված ոտքերի, արյունլվա վիճակի պատճառով: Այս տեսնելով քահանան լաց եղավ դառնապես, իսկ երանելի տիկինն ասաց. «Մի՛ լար ինձ վրա, որովհետև այս չարչարանքներով ես մաքրվեցի ամբարիշտ ամուսնու պիղծ անկողնուց: Եվ արդ՝ ես ուրախ եմ ինձ հասած չարչարանքների համար, որովհետև այսու կգտնեմ իմ նախնիների բարի ժառանգությունը, որ ի Հիսուս Քրիստոս է: Եվ այս ամենի համար գոհություն հատուցեցի և միշտ կհատուցեմ նրան»:

Ապա երկար լոեցին: Դրան երեցն ապշած էր այդ փխրուն կնոջ տոկունությամբ, հիացած նրա աներեր կամքով, անկոտրում հավատով: Միաժամանակ, սիրտը ցավում էր նրա կրած աներևակայելի տանջանքների համար, մարմնական այս խոշտանգումների, որ ավելի էին զորացնում Հոգի՛ն: Հոգի՛ն...

Երեխաներին հավատով իրենից բաժանելու, ուրեմն՝ իրենից խլելու լուրը դաշույնի պես խրվեց Վարդենիի թիկունքը: Թեև գիտեր, որ ուրացող ամուսնու հաջորդ քայլն ա՛յդ պիտի լինի, կանխազգում-կանխատեսում էր, սակայն... Աչքի առաջ եկան մանուկների գեմքերը՝ Մանեի, Հերակլի, Սահակի, Բագրատի... Ի՞նչ շքեղ արարողակարգով ու ծեսով էին կատարվել նրանց կնունքի հանդեսները... Ի՞նչ պատիվ-հարգանքով, ի՞նչ հպարտությամբ էր ընդունում բղեշիւը իր ամեն արու զավակի ծնունդը, որ

պեսզի այսօր... պղծի՞՞ն նրանց մանուկ հոգին, ինչպես ի՞նքն է պղծվել... Տե՛ր իմ... Եվ ինչպե՞ս է շրջում նա, ինչպե՞ս է կարողանում նայել մարդկանց երեսն ի վեր, ինչպե՞ս է հանդգնում դեռ խոսե՛լ նրանց հետ իր դավաճանության մասին, այլև՝ թելագրե՞լ իր կամքը: Հիմա էլ՝ երեխաներին է պատուհասում, ի՛ր մանկանց, խորտակելով նրանց առհավետ: Հրե՛շ, Հրե՛շ... Մարմնավոր ցավն ի՞նչ է հոգեոր այս լլկումի հանդեպ: Օ՛, Հոգո՛ւ ցավն անդարձանելի է, Հոգո՛ւ ցավը վախճան չունի՛: Հոգու ցավը... մա՛հ է:

Դրան երեցի գնալուց հետո այսպես դեռ երկար մորմոքում – հատնում էր Շուշան-Վարդենին, ապա սկսեց աղոթել: Աղոթում էր կիսաձայն (ձայնը քաշվել էր վաղուց, այս ինքնահոժար չարչարանքն սկսելուց ի վեր), աղոթում էր ծնկի եկած: Եվ դռան տեղում կախված փսխաթը երերում էր իրիկնաղեմին բարձրացած քամուց, երերում էր ցավագին՝ հեծեծյունի նմանվող ձայն հանելով...

ԲՐԱՅԻՆ ԸՆԴՎՃՈՒՄ Է

Արդեն որքա՞ն ժամանակ էր, որ Շուշան-Վարդենին, անապատական ճգնակյացի նման, ապրում էր միայն աստծո խոսքով, նաև՝ գարեհացով ու ջրով, անշուք այս հյուղակում, որը եթե փոքր լիներ ավելի, կվայելեր շնաբուն լինելու...

Դայակ Բրաբիոնը ինքն էլ հալումաշ էր եղել սիրելի սանուհու և հոգեղստեր այդօրինակ վիճակից: Տե՛ր իմ, այս ի՞նչ ճակատագիր է. այս, արդարե, Վարդը՝ Շուշան-Վարդենին, որին ի՞նչ բեհեղի, ատլաս ու խասի մեջ է մեծացրել ինքը, այս օրի հասած... Այսպես... Շուշանի հայտնի գեղեցկությունն էլ խամրել է. անասելի նիհարած, դիմագ-

ծերն էլ ասես փոխվել են: Բարձր ու լայն ճակատն ակու-
վել է կնճիռներով, նուրբ-կորնթարդ քիթը՝ Աահականույշ
տատից ժառանգած, սրվել է, աչքերն՝ ավելի խորն ընկել,
առաջվա շքեղ, սպիտակ-վարդագույն մաշկը հողմահար է
ու անկենդան, մազերի մեջ... ճերմակնե՛ր, անժամանակ,
վաղաժամ հայտնված ճերմակներ... Անսնունդ՝ մարմնա-
պես, Շուշան տիկինն օրուգիշեր հագենում է սաղմոսեր-
գությամբ ու աղոթքով, և ամրանալով Հոգո՛վ, շիջում է
մարմնապես... հատնող մոմի հանգույն: Ցավալի է նրան
նայելը, ցավալի, և դայակ Բրաբիռնի սրտից արյուն է
գնում այդ ամենը տեսնելիս:

Գալիս էր բգեշիսից գաղտնի, որքան որ հաջողվում էր,
քանի որ արգելված էր տիկնոջ մոտ մտնելը:

Օրե՛ր, գիշերնե՛ր երկար ու ձիգ, երեխաներից հեռու՝
*(բգեշիը նրանց տեսնելը արգելել էր) Շուշան-Վարդենին
անմարմին լիներ ասես՝ կրակված-վառված, Աստծուն
հասնելու-միանալու իր երազով (քանի որ իր սիրելի՛
մարդն իսկ ոտնակոխ արեց նրա սրբազան երազները...),
արդարև սրբուհի:*

Այդ ժամանակներում ինչ-որ տեղից վերահաս վտանգ
կար, ուստի Վարդենիի զավակներին տանում էին այլուր
ամրոցներ՝ Կուր գետն անցկացնելով: Մանուկներից մեկը
խեղդվեց գետում՝ մեծ վիշտ պատճառելով բգեշին ու
երկրին: Որքան էլ խորն էր Շուշան-Վարդենի տիկնոջ՝
մայրական խորհուրդն ու նվիրումը, որքան էլ բգկոված՝
որդեկորույս մոր անսփոփ սիրու, նա, իր մեջ ուժ գտնելով
կշռադատելու եղածը, ասում էր. «Թեպետ և մեռավ մարմ-
նով, այլ հոգո՛վ փրկվեց իր ուրացող հոր որոգայթից, և
այդ ամենի համար փա՛ռք Աստծուն»:

Նրա հանդերձն էր մերկ մարմնին՝ քուրձ, վրան՝ ան-
տիոքյան պարեգոտ, սնարին՝ մաշկյա փոքրիկ մի բարձիկ,

գետնին՝ փոքրիկ փսիաթ... Նաև՝ բոկոտն էր մշտապես, ուտելիքը՝ գարեհաց և ըմպելիքը՝ ջուր։ Շատ անգամ նույնիսկ առանց ուտելիքի էր լինում։

...Դայակ Բրաբիոնը տեսնում էր այս ամենը, ա՛յն Բրաբին, որ տիկնոջ մանուկ օրերն էր հսկել, լուսավորել, գուրգուրել, զգում էր իր սիրելիի հատնումի, հանգչելու, մոտալուտ կորստյան պաղ շունչը։ Առանձին՝ լալիս էր հաճախ, այնինչ, տիկնոջ մոտ գնալիս (միշտ գաղտագողի՝ թաքո՛ւն...) ջանում էր պայծառադեմ լինել, որպեսզի առավել չտրտմեցնի տիրուհուն։ Եվ մի օր էլ, երբ իր Վարդենիի մոտ էր, և մնջիկ նստած վայելում էին Լոռության խորհուրդը, անակնկալ ներս խուժեց մոլեգնած բղեշխը, կաս-կարմիր երեսով, ձայնը՝ զայրույթից խռպոտած։ Մեկը մատնել էր երեխ...
— Ի՞նչ բանի ես այստեղ, կի՞ն, չէ՞ որ արգելել եմ, — ասաց։

Դուան տեղում կախված փսիաթի արանքից ներս էր նայում պահապանը՝ մեղավոր հայացքով։ Նրան էլ հասել էր բղեշխի ծանր ձեռքից, աչքն անմիջապես ուռել էր գեմքին ստացած հարվածից։ Նա բղեշխի առջև փորձել էր արդարանալ, թե իբր չի իմացել Բրաբիի գալը, իրականում հարմար պահերին ներս էր թողնում նրան։

Բրաբիոն դայակը լուռ, արգահատանքով զննում էր ո՛չ միայն հոգով, այլև արտաքուստ փոխված բղեշխին՝ մութ, բրդոտ գագան լիներ ասես՝ չարությամբ վառվող հայացքով։ Վայրից էլ ինչ-որ օտար անուշահոտություն էր բուրում, պարզ է՝ պարսկական...

— Սրտի՛ բանին, տեր իմ, — գոչեց արտասվախառն, — այս տիկինը նաև իմ աղջիկն է՝ քո տան տիրուհին լինելուց առաջ։ Հիմա նա Աստծո—տանն է, քո՛ տանը չէ՛ այլես, որպես էր առաջ։ Ես՝ իմ չարչարվող, իմ տանջվող Վարդիի

կողքին եմ, և կլինեմ... քանի...

Արցունքները խեղդեցին նրան, և հեկեկանքը դուրս հորդեց՝ զսպված, ներփակված տարիներով...

Վազգեն բդեշխը կարծես մի պահ լցվեց ինքն էլ, կարկամեց, հետո պահապանների կողմը նայելով, որոտաց.

— Հանդինո՞ւմ ես, կի՞ն դու... հրամայել եմ հեռու կենալ...

— Հանդինո՞ւմ եմ,— հասակով մեկ կանգնեց դայակ Բրաբիոնը,— և պիտի զղջաս դառնապես այս հրեշտակին նման չարչարանքների մատնելու համար։ Պիտի հատուցե՛ս, ամբարի՛տդ սատանայակիր, պիտի հատուցե՛ս....

Ծեր դայակը խոսքն էլ չէր ավարտել, երբ բդեշխի ծանրթաթիւ անվրեալ իջավ նրա ճերմակահեր գլխին, տապալելով նրան։ Շուշան-Վարդենին՝ ավելի գունաված, իր գիրկն առավ մարած դայակին, ապա շրջվեց և ձայնեց հեռացող բդեշխի թիկունքն ի վեր.

— Գազանակո՞ւր լինես, բնուստ գազա՛նդ...

Ապա վերցրեց ջրամանը, մի շորի կտոր թրջեց և դրեց ուշակորույս կնոջ ճակատին։

Բակում՝ երեխանների դրած թակարդ-վանդակն ընկած աքարը ճչո՞ւմ էր մարդու պես և պատեպատ զարնվում։ Շուշան տիկինն շտապեց ազատելու նրան։

ԵՐԱԶՆԵՐԸ

Մինչ այս դառն դեպքերն իր ողջ կյանքի ընթացքում Շուշան-Վարդենին չէր տեսել այնքան երազներ, որքան՝ հիմա... ի՞նչ երազներ... Ասես գիշերները կախարդական, գերբնական մի դուռ էր բացվում նրա առաջ, և Վարդենին այդ դռնով մտնում էր ներս... դեպի իր անդարձ անցած

մանկությունը, պատանեկությունը, հարսնությունը, երեխաների ծնունդի ու հարակից անցքերի ժամանակները... Երազների ճանապարհը նրան կրկին բերում-հասցնում էր իր այս դժվար օրերը, տանջանքի այս կացարանը...

Վերջերս էր: Երազում տեսավ, որ հանգուցյալ Սահականույշ տատը իր այս հյուղակը մտավ՝ տարինե՞ր առաջվա արքենի կերպարանքով, ժպիտը դեմքին: Տարօրինակ է, որ նրան այստեղ տեսնելով Շուշան-Վարդենին քնական գտավ այդ ամենը, տատի բարեհոգի ժպիտն անգամ: Ինքն ասես նորից աղջնակ էր՝ փոքրիկ Վարդին (Սահականույշ տատին հար ու նման...), որին առանձնակի սիրով էր կապված տատը: Հենց նրա սիրած ձևն էր «Վարդի» փաղաքշականը, որ դայակ Բրաբիոնն էլ էր նախընտրում մտերմիկ զրույցների ժամանակ:

— Վարդի, աղջի՞կս, — երազում հանկարծ փոխվեց տատի դեմքը, դառնալով տխուր, արտասվալից:

— Ի՞նչ ես անում այստեղ, — ու նայելով շուրջը, նորից: — Այստեղ ի՞նչ ես անում:

— Այստեղ ապաշխարում եմ անիծյալ ամուսնուս մեղքերի համար, աղերսո՞ւմ եմ Ամենակալին, որ նրա մթագնած գլխում վերստին լո՞ւյս ծագի, Սահականո՞ւյշ տատ, ապաշխարո՞ւմ եմ, նաև՝ ընդդիմանում չարին՝ ի դեմս Վազգեն բդեշխի: Ուրիշ ի՞նչ պիտի անեմ, եթե ո՞չ այդ: Ուրիշ ո՞վ պիտի անի, եթե ոչ՝ ե՛ս...

Ասհականույշը լուռ ու ցավագին հայացքով ընդգրկեց հյուղակի փոքրիկ, բռաչափ տարածքը, հետո բարձրացրեց ձեռքերն առ Աստված ու ողբաց ծանր. «Վա՛յ ինձ, վա՛յ ինձ, վա՛յ...»:

Շուշան տիկինն այդպես էլ արթնացավ՝ տատի ձայնն ականջում: Հյուղակի դռանը շարունակ կանգնող պահապանները ինչ-որ բան էին խոսում...

Մի այլ անգամ հայրը՝ զորավար Վարդանն արժանացրեց իր այցելությանը երազում։ Նաև՝ մայրը։ Երկուսով նստած էին՝ Վարդենիի հարսնությանը նախորդող վաղեմի՛ օրերին։ Խորհում էին վրաց Աշուշա բդեշիսի առաջարկի մասին, որը Շուշան-Վարդենիին իր որդու՝ Վազգենի համար կնության ուղելու խոսքն էր բացել։ Դեռևս հավանություն չստացած՝ դատարկածեռն չէր եկել՝ ոսկե ծանրագին մի շղթա՝ մարդարտով ընդելուզված, Վարդենիի համար, զորավար Վարդանին՝ արծաթե թաս՝ բաժակակալով, Վարդենիի մորն էլ՝ ուղտի թանկարժեք բրդից հյուսված շալ։ Արանք այնպես, իբրև ընծա առտնին։ Հայրախնամ բդեշիսը (որը վաղուց էր աչքադրել Վարդենիին իր որդու համար) հանապազ հետաքրքրվում էր նրա առողջությամբ, Վարդանին հյուր եկած ժամանակ հարցուփորձում աղջկան՝ եզրահանգելու նրա մտահորիզոնի մասին, և անվերապահ հիացած էր Վարդենիի չնորհատուր իմացությամբ, նաև՝ հազվագեպ գեղեցկությամբ ու հմայքով։ Փոքրիկ ընծաներ էր բերում աղջկան, մերթ՝ ոսկյա վայելուչ մի խաչ, մերթ՝ ծաղկեփունջ, ու մերթ՝ վրացական անուշահամ քաղցրավենիք։

— Դուստրդ գա՞նձ է, գա՞նձ, - մի անգամ բացեիբաց դիմեց Վարդան զորավարին, — եթե տաս իմ որդուն՝ վարդի՛ պես կպահենք ձեր և մեր Վարդին։

Որքա՛ն մեծ էր նրա ուրախությունը, երբ վերջապես ստացավ Շուշան-Վարդենիի ծնողների համաձայնությունը։ Իսկ հետո հարսանիքին, հոգեշունչ ի՛նչ մաղթանք արեց, ի՛նչ ջերմությամբ ու սիրով։ Եվ շեշտեց ողջ բազմության ներկայությամբ, թե հպարտ է ու երջանիկ, որ զորնդեղ, կրոնակից Վարդան զորավարի դստերն է ընդունում

Իր հարկի տակ իբրև հարս:

«Լավ մարդ է Աշուշան, – հիշում էր Շուշան տիկինը հոր խոսքերը, – եթե որդին՝ Վազգենը, նրա կեսն իսկ լինի՝ լավ է»:

Այդպես սկսվեց:

Վերջին երազը, որ տեսավ նախորդ գիշերը, սարսափելի էր: Վարդենին արթնացավ պաղ քրտինքի մեջ կորած, իր իսկ աղաղակից: Ի՞նչ էր եղել: Ի՞նչ էր տեսել երազում: Երանի տեսած չլիներ...

Փաթեփաթ եկած մի վիշապ, ծանր գալարներով, մինչ գլուխը... Վազգենին է: Այդ գլուխը խոսում ու հանդիմանում է իրեն, նույն հայհոյանքներն ու լուսանքները թափում, ինչ ուրացողը ... այս օրերին: Վիշապի գալարների մեջ հանկարծ հայտնվում է ... Մանեն, իր գո՛ւսարը... Զեռքերը տարածելով՝ նա օգնություն է աղերսում, մինչ հայր-վիշապը սեղմում ու սեղմում է գալարները: Մանեն աղաղակում է՝ ահից այլակերպած դեմքով, շրջվելով դեսուդեն, մա՛րդ փնտրելով շուրջը: Երազում Շուշան տիկինը խոյանում է ընդդեմ վիշապի, և Վազգենի գլուխն ունեցող վիշապը ժահը ու թույն է արտաշնչում նրա դեմքին...

Մեկ էլ, որտեղից-որտեղ, ճերմակ ձին հեծած մի ձիավոր է հայտնվում. Սուրբ Աարդի՛սն է, շունչ է քաշում երազում Վարդենին, և դառնում նրան. «Առաք Սարդիս, օգնությա՞ն հասիր»:

Ճերմակ ձիավորը մոտենում է վիշապին, հետզհետե ավելի ու ավելի, և սրով հարվածելով՝ կտոր-կտոր է անում նրա օձագալար մարմինը: Ապա մյուս Ճեռքով գրկում է Մանեին, որ ջանում էր դուրս պրծնել արնաշաղախ գալարներից, նստեցնում ձիու գավակին: Իրեն՝ Շուշան տիկնոջն էլ Ճեռքով է անում: Երազում Շուշան-Վարդենին դառնում է ... աղավնի, ձյունափետուր, հեհեռուն թռչում է

վե՛ր, վե՛ր..., դեպի երկնային կապույտը...

Արթնանալուց հետո էլ Շուշան-Վարդենին երկար ժամանակ չէր հանգստանում: Լաց եղավ, տառապած հոգին կարեկից խոսքի, օգնող մի բազկի էր կարոտ: Ոչ ոք չկար, ոչ ոք, բացի երկնավորից: Եվ Շուշան տիկինը լուելյայն ծնկի եկավ, ապա սկսեց աղոթել ո՛չ առաջվա (լավ օրերի...) արծաթահունչ ձայնով, այլ լեզվակը ընկած զանդի նման՝ ծա՛նր, նվազո՛ւն, հոգու ընդերքից եկող խուլ ու խզզացող ձայնով: Զա՛յն, որը լսելիս մարդու արյունը կսառչեր երակներում, քանի որ հոգու անլուր փոթորիկներն էր մատնում... Զա՛յն, որ երկրային չէր այլևս, քանի որ անդենականի դարպասներն էր ծեծում վաղուց... Վաղո՛ւց, ա՛յն ժամանակից ի վեր, ինչ ուրացողը ոտք դրեց հայրենական հողին:

ԷԹԵՐԻԻ ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Էթերին՝ գեղանի վրացուհին, սենեկապանուհին էր Շուշան-Վարդենի տիկնոջ: Մշտարթուն՝ իր պարտքի և պարտականության հանդեպ, ժրաշան, զվարթ՝ այն կենսասիրությամբ, որ շրջապատին հույս, ուժ և ոգի է հաղորդում: Էթերին, շատ սիրելի էակ Շուշան տիկնոջ համար, իսկ նրա երեխաների՝ իշխանիկների և հատկապես դեռափթիթ Մանեի համար՝ նաև ընկերուհի՝, քո՛ւյր, մտերմուհի՝:

Էթերին՝ եղնիկի սլացիկ իրանով, խոշորաչյա ու ճերմակամորթ, մուգ ոսկու երանգով խիտ մագերը վեր հավաքած, ամրացրած մարգարտահուռ ճարմանդով, որ Շուշան-Վարդենին էր նվիրել նրան: Էթերին, Էթերին, Էթերին, այստեղ ու այնտեղ, հանապազ ու ամենուրեք: Իշխանիկներից մեկնումեկն անհանգիստ է. Էթերին նրա կողքին է, ինքն

էլ՝ քուն ու դադար կորցրած, մինչև որ մանկան վիճակը բարվոքվի:

Մահացած վաճառականի դուստր էթերին լա՛վ գիտե Յուրտավի ներսն ու դուրսը, շա՛տ բան, որ նորահարս Շուշան-Վարդենին չգիտեր, բնականաբար: Որքան օգտակար եղավ էթերին նրան, հետզհետե դառնալով տիկնոջ համար խիստ կարևոր մեկը, նաև՝ մի տեսակ ուղեցույց-խորհրդատու նոր, վրացական միջավայրում: Ուշիմ, հոգեպնդիչ, համնող ու փրկող էթերին:

Վերջին անցուղարձի հետ էթերին էլ էր փոխվել էր: Դեմքը մթագնում էր տիսրության մի ստվեր: Դա, մի տեսակ, ներքին տիսրություն էր, որ երիտասարդ կինը ճգնում էր թաքցնել արտաքին առույգ շարժուձեկի և սիրալիրության տակ: Նա շա՛տ բան գիտեր..., և ա՛յդ ամենից բխող առավել վտանգավոր ու ավերիչ հետևանքների էր սպասում:

Իրիկնանում էր, երբ վախվորած եղնիկի զգուշավոր քայլերով Վարդենիի հյուղին մոտեցավ էթերին, շուրջը հայեց, ապա կիսաբաց արեց դռան փոխարեն կախված ծանր փսիաթն ու... «Կարո՞ղ եմ ներս գալ, տիրուհի», — ասաց: Շուշան տիկինը պարզեց իր նիհարած ձեռքը, ի նշան սիրո և համաձայնության թեթեակի շոյելով նրան, պատասխանեց.

— Արի՛, իմ գեղանի էթերի, այս ծանր օրերիս հուսուլույս: Դու և Բրաբին շա՛տ բանով թեթեացնում, մեղմում եք ցավս: Հիրավի, նա՝ իմ ավագ քույրն է, դու՝ կրտսեր:

Էթերին ինքն էլ ծնկեց տիրուհու կողքին, որ թիկնել էր գետնին փոված փսիաթին, նստեց, հետո հագուստի ծալքից դուրս բերեց խաղողի տերևների մեջ փաթաթած երկու բաղարչ:

— Կե՛ր, տիրուհիս, ինքս եմ թխել Շուշան տիկնոջս համար: Որքա՞ն դժվար է այս ամենը...

Եվ երիտասարդ կինը հանկարծ փղձկաց, խլեց տիկնոջ բարակած-դալկացած ձեռքը (ասես ծա՛նը հիվանդի ձեռք) և տարավ շուրթերին, համբուրեց...

— Առ՛ւրբ ես գու, Շուշան տիկին, ո՞վ կդիմանար այսքան չարչարանքին, անցյալ օրը նոդար իշխանի տիկինը՝ Մաղվալան, խոսում ու լալիս էր քեզ համար: Երբ իմացավ, որ Վազգեն բդեշխն արգելել է այցելել քեզ, բարկացավ, խիստ բարկացավ: «Նա մեր ամոթն է ու խայտառակությունը, — ասաց, — նա արժանի չէ՛ Շուշանի երեսի՛ն անգամ նայելու»: Մաղվալա, նինո, էկատերինե, նաթելա իշխանուհիները խնդրեցին փոխանցել քեզ իրենց սերն ու նվիրումը:

— Երախտապարտ եմ, — լցվեց Շուշան-Վարդենին, — երախտապաշրտ եմ, էթերի, սիրունս...

Հանկարծ էթերին հետ գցեց գլուխը, մի բան արդեն լիովին վճռած մարդու պես, և կրկին դիմեց Շուշան տիկնոջը:

— Այո, տիկին, Վազգեն բդեշխը իշխան Զոջիկը չէ՛ շետակ ու պարզասիրտ, տեսանելի՝ ըստ ամենայնի... Վազգեն բդեշխը մութ ամպերով պատած հորիզոն է ասես, որը սակավ է լուսավորվում արևի հայացքով: Վազգեն բդեշխը, ... ա՛յն ժամանակ, տարիների հեռվում ի՛մ գլխին էլ կայծակի պես շաչեց: Նա մի ձեռքով բաժանեց ինձ ու Զոջիկին (մեր սիրո դեռ խանձարուրում...), մյուս ձեռքով, երբ հայրս արդեն ծանր հիվանդ էր, և փեսացուներս էլ քաշվել էին, իր տանն ինձ ապրուստ ու աշխատանք տվեց, շնորհակալ եմ, ինձ Շուշան տիկնոջ սենեկապանուհի կարգելով: Տիկնոջս շնորհակալ եմ կրկնակի...

Շուշան-Վարդենին զարմացել էր երկո՛ւ առումով, նախ, որ աշխարհում իր վշտից բացի ուրիշ ցավ ու հոգս էլ կա

(այնքա՞ն էր սեեռվել իր վշտին), և ապա, այդ ամենն իր համար իրապե՞ս նորություն էր, այսքա՞ն տարի այստեղ ապրելուց հետո... Ապա գլխով արեց, նշանացի հասկացնելով էթերիին, թե՝ շարունակի՞ր...

— Իշխանուհի նախելան,— շարունակեց էթերին, — իշխան Զոջիկի կինը, երկի չգիտե այս ամենը, քանի որ մի անգամ իմ ներկայությամբ իշխան Զոջիկին ասաց, թե կփափագեր ինձ նման մեկին ունենալ կողքին, թե նախանձում է Շուշան տիկնոջս դրա համար: Հիշում եմ, ես տխուր ժպտում էի, մինչ իշխան Զոջիկը լուր էր... Անցա՛վ-գնաց կյանքս, տիկի՞նս, բայց սերը... չի՞ անցել: Թեև Զոջիկի բեղումորուսի մեջ սպիտակ թելե՛ր կան արդեն...

— Իսկ Զոջի՞կը, — մեղմաձայն հարցրեց Շուշան տիկինը:
— Զոջի՞կը, տիկի՞ն, զգում եմ, որ նա էլ բախտավոր չէ: Այստեղ, այսինքն, ձեր տանը լինելով հաճախ է ինձ հարցնում. «Ինչպե՞ս ես, էթերի»: «Լավ եմ, Զոջիկ իշխան, չնորհակալ եմ», պատասխանում եմ, մինչ կրծքիս տակ այրվում է սիրտս: Եվ միայն Աստծուն է հայտնի, թե այդ երկու-երեք բառերի մեջ ի՞նչ խորք ու ցավ ենք դնում թե՛նա, թե՛ ես:

Մի անգամ էլ ահա թե ի՞նչ եղավ: Իշխանուհի նախելան կորցրել էր ձեր սկեսրայրի նվիրած (Շուշան տիկնոջն էլ, անշուշտ, նվիրել է նույնից) ոսկե, աղամանդակուռ կրծքազարդը: Ի՞նչ օրի էր նախելան, տիկինս, ողջ օրը լաց էր լինում, բախտագուշակին նայել տվեց, մեկ է, չգտավ կրծքազարդը: Իսկ երբ ես... գտա՛, չգիտեր ինչպե՞ս չնորհակալ լիներ, փող առաջարկեց, ես, անշուշտ, մերժեցի: Այդ ժամանակ նախելա իշխանուհին վզովս ընկավ և ջերմ-ջերմ համբուրեց... Աչքս ընկավ իշխան Զոջիկին, որ մուայլ նայում էր մեզ: Նա շա՛տ է փոխվել, տիկի՞նս, նա, որ Վազգեն բղեշխից փոքր է ամբողջ տա՛սը տարով, հիմա նրան հա-

սակակից է երևում:

Լռեցին: Շուշան-Վարդենին ապշել էր. արդեն քանի՛ տարվա հարս լինելով Աշուշա բղեշխի տանը՝ նա առ այսօր անգամ չէ՛ր լսել այդ ամենի մասին: Ահա, այստեղ էլ, ուրեմն, խառնվել է Վազգենի ամբարիշտ ձեռքը: Ինչո՞վ պակաս կլիներ էթերին իշխանուհի Նաթելայից, եթե ոչ՝ պելի... Ահա ևս բեկված մի ճակատագիր, փլված մի տուն, մարած մի ճրագ, մտորում էր Շուշան տիկինը:

ԾՈՒՆԸ

Հյուղակի շեմին խշրտոց լսելով՝ Շուշան-Վարդենին կողքանց դուրս նայեց, չուզեց կտրվել աղոթքից: Երբ ձայնը կրկնվեց, տիկինը շրջվեց դեպի ելքը, ուր դռան փոխարեն փսխաթ էր կախված: Ինչ-որ էակ ջանում էր ներս խցկվել: ... Շեմին կանգնած էր մի շուն (որքա՛ն շուն կածուրտավ մեր քաղաքում՝ մտածեց Վարդենին): Շունը վիրավոր էր: Արյան բարակ մի շիթ հոսում էր պարանոցն իվար՝ կորչելով կենդանու սևագորշ մագերի մեջ: Աչքերը՝ մարդու աչքերից առավել բանական ու խելացի, ուղղված էին տիկնոջը այնպիսի՝ զորավոր հույսով, խեղճը կարծես ուզում էր հայտնել, թե միայն նրա՛ մոտ է եկել, հենց նրա՛, ոչ թե մեկ ուրիշի: Տիկինը ներս թողեց շանը, մինչ բղեշխի կարգած պահապանները, որ հաց էին ուտում քիչ հեռվում, մոտենում էին վրդովկած:

— Մենք չտեսա՛նք սրան, տիկի՛ն, — արդարացավ մեկը, — ների՛ր, հիմա դուրս կհանենք:

— Բղեշխն այստեղ մարդկա՛նց մուտքն է արգելել, ո՛չ կենդանիների, — տխուր, հեգնալից ժպիտով պահապաններին դիմեց տիկինը, — թող մնա՛, միայն ջուր բերեք, որ վեր-

ՔԵ ԼՎԱՆԱՆՔ:

... Վերքը լվաց ու կապեց սեփական ձեռքով։ Շունը երախտալից հայացքը տիրուհուն հառած էլի՛ ինչ-որ բան էր ուզում։ Դիմելով պահապաններին՝ Շուշան-Վարդենին ասաց։

— Իմ գարեհացը շան համար ախորժելի չէ։ Մի՛ս տվեք նրան՝ ձեր ուտեստից։ Եվ ջուր։ Երբ ուտի, թողեք ներս գա։

Քիչ անց, երբ շունը ներս մտավ, տիկինը վերջացրել էր աղոթքը։

— Եկա՞ր, — ասաց նա դիմելով շանը, — արի տեսնեմ, ինչ-պե՞ս կոչենք քեզ։

Շունը հոգնած փովեց նրա ոտքերի մոտ և համարյանույն պահին էլ քուն մտավ (կենդանիներին տրված եղակի շնորհ)։ Հոգնել էր, կռի՛վ, մա՛րտ, վիրավորվե՛լ էր, ահա, երբ երջանիկ հնարավորություն էր տրվել նաև ուտելու, կշտանալու, չարչարված, սակայն գոհ, քուն մտավ։ Շուշան-Վարդենին (արդեն որքա՛ն ժամանակ չխնամված, կոշտացա՛ծ ձեռքերով...) շոյում էր շանն, ասելով. — Հանգիստ առ, հոգնա՞ծ ես։ Ուրեմն դու ինձ մոտ ես եկել, այդպես վիրավո՛ր, քաղցա՞ծ։ Ա՛յ քեզ շո՛ւն։ Ուրեմն, ի՞նձ էիր փնտրում այսքան ժամանակ։ Անունդ թող լինի Հույս։



ԲՈՐՈՏ ՊԱՐՍԿՈՒՀԻՆ ՓՐԿՈՒԹՅՈՒՆ Է ՈՐՈՇՈՒՄ

Պրան երեցի բերած լուրը զարմանալի էր և ուրախալի: Ցուրտավում (ողջ Վիրքում) գտնվող պարսիկ մոռգերի (Վազգեն բղեշխի հետ եկած) շրջանակում խոսվել էր այդ հիվանդ կնոջ մասին: Հենց նրանք էին հայտնել դրան երեցին, թե բախտից ու մարդկանցից, նաև աստծուց խոռված կինը փրկություն է վնարում, ինչպես և ինչ գնով լինի, ուզում է բորոտությունից մաքրված լինել, թեկուզ մեռնել՝ մաքր'ւր... Ապրելն արդեն տանջանք էր տարաբախտի համար: Պատմում էին, թե մեծահարուստ իշխանավորի կին է, և որ ջահել օրերին նրա խղճի վրա ծանրացած մի հանցանքի համար մեկն անիծել է նրան ի խորոց սրտի... Շուշան-Վարդենին, Դրան երեցից լսելով այդ մասին, զարմացել էր.

— Եվ կամենում է նա ինձ մո՞տ գալ, հայր սուրբ, ինչո՞ւ սակայն, ես կրոնավոր չեմ, և...

— Համարում է, դուստր իմ, որ տարիների քո այս սրբակենցաղ վարքով արժանի ես տեր Աստծուց փրկություն խոսքը մեծակշիռ է, և քրիստոնեից աստվածը կմաքրի-կբժկի նրան զարհուրելի ախտից:

Շուշան-Վարդենին լռում էր: Այդ կարծր լռության մեջ՝ խեցու ներսում փակված մարդարտի հանգույն շողարձակում էր նրա բարի հոգին: Արդարացի հպարտություն էր զգում: Ուրեմն ինքը զուր չի ապրել, եթե մի՛ հոգի իսկ փրկի, այն էլ՝ օտարադավա՞ն... Ահա պարսկուհին, թողած մոգերին, որ փրփուրն ի բերան գովաբանում են իրենց

...ի՞ր մոտ է եկել: Զնայած, չփակվող խոցի՛ պես, նույն հոգին ցավում էր հանապազ, որ իր հարազատին ու մտերմին, ամուսնուն՝ չարից փրկել չկարողացավ: Դավաճանությա՛ն ախտից, որ բորոտությունից պակաս չէ:

Եվ մղձավանջների մղձավանջը՝ զավակները՝ խլվածեն իրենից, օրը օրին օտարանում, հեռանում են իրենից՝ հոր (ո՛չ բարով) կրոնական սադրանքներով:

— Եվ ի՞նչ, ե՞րբ կկամենաս ընդունել նրան, Շուշան տիկին, — հարցը մասնավորեց դրան երեցը:

— Ուղեկցիր առավոտ կանուխ կամ էլ իրիկնամուտին, ինչպես կամենա: Միջօրեին հարմար չէ: Մեր տան անցուդարձն ու եռուզեռը թող չխանդարեն մեզ:

Պարսկուհին կարծես ժամ առ ժամ սպասում էր թույլտվության և հրավերի, ժամանեց նո՞ւյն օրն իսկ, մթնշաղին՝ երկու մոգերի ուղեկցությամբ: Դարպասից դուրս մնաց չքեղ կառքը, որով եկել էին, իսկ իրենք՝ Սամվել եպիսկոպոսի ուղեկցությամբ մտան բակ: Մոտեցան հյուղակին (գիտեին նախապես, որ Շուշան-Վարդենին հենց հյուղակում է ապրում...), ներս մտան, հարգալից ողջունեցին, և, անակնկալի եկած, կանգնեցին-մնացին, մտորելով, թե ինչպե՞ս պիտի տեղավորվեն: Մինչ այդ ծառաները շուտափույթ երկու-երեք նստարան բերեցին հյուրերի համար:

Պարսկուհին չքեղ հանդերձների մեջ էր, գլխանոցի սևքողը ծածկում էր գեմքը: Երեսունն անց կին էր:

Տե՛ր իմ, ի՞նչ ցավեր կան աշխարհում, խորհում էր Շուշան-Վարդենին, երբ աչքն ընկավ պարսկուհու ձեռքերին: Դաժան հիվանդությունը խեղել էր դրանք, մաշկը սովորականից ավելի գունատ էր, մի տեսակ մեռելային դալկությամբ, ծածկված կարմիր բծերով, հին ու նոր խոցերով...

Մատների արանքներում, բադի թաթերի պես, լպրծուն թաղանթի բարակ շերտ էր սերտաճել: Քայլում էր դժվարությամբ: Ուղեկիցը պատմեց, որ արդեն երկու տարի է, ինչ չարագույժ հիվանդությունը ճանկել է դժբախտին:

— Այս հիվանդության գաղտնի շրջանը, սակայն, ամբողջ տասնհինգ տարի է, — ավելացրեց Սամվել եպիսկոպոսը:

Պարսկուհին խոսում էր, իսկ մոգը, հավանաբար ծանրութեթև անելով, թե որ խոսքը թարգմանի, որը՝ «չ, դանդաղ, հապաղելով թարգմանում էր»: Շեշտեց, որ հիվանդը ամուսնու սիրելի կինն էր, ավա՞ղ, հիմա՝ լրիվ մեկուսացած: Ապրում է հեռու, առանձին մի տան մեջ: Ծառաներից մեկն էլ նույն հիվանդությամբ է տառապում: Շատ դժվար է մարդ գտնել, որ բորոտներին խնամելու պատրաստ լինի՝ թեկուզ շա՞տ մեծ գումարներ զոհաբերելով:

Պարսկուհին դառնագին լաց եղավ, հայտնելով Շուշան-Վարդենիին, թե շատ հեքիմների ու բժիշկների է դիմել, բայց՝ ապարդյուն: Հնդգծեց, թե հոգով հավատում է, համարյա համոզված է, որ քրիստոնեից աստվածը կփրկի իրեն: Լսել էր նոր կտակարանի պատմությունները, թե ինչպես Հիսուս բժշկեց արյունահոսություն ունեցող կնոջը, կույրին ու համրին, դիվահարին, մանավանդ բորոտներին: Մոգը հիվանդ պարսկուհու անունից թախանձագին պնդեց, որ եթե Շուշան-Վարդենին դեմ չէ, թող պատմի նոր կտակարանի այն կտորները, ուր խոսվում է Հիսուսի՝ բորոտներին բժշկելու մասին: Շուշան տիկինը սիրով համաձայնեց:

ԲՈՐՈՏԻ ԲԺԾԿՈՒՄԸ

«Հիսուս իր շրջագայությունների ընթացքում, երբ մոտենում էր Գալիլեայի մի քաղաքի, բորոտությամբ պատաժ

մի մարդ, նրան տեսնելով, մոտ գնաց և, երեսնիվայր ընկ-
նելով սկսեց աղաչել, որ Հիսուսն իրեն բժշկի: Նա ասաց.

— Տե՛ր, եթե կամենաս, կարո՛ղ ես ինձ մաքրել:

Հիսուս դժալով՝ ձեռքը երկարեց, դիպավ նրան ու ա-
սաց. «Կամենում եմ, մաքրվի՛ր»: Այդ խոսքի հետ հիվան-
դի բորոտությունն անցավ և նա մաքրվեց:

«Ոչ ոքի չպատմես, թե ինչպե՞ս ես բժշկվել,— խստիվ
պատվիրեց նրան Հիսուս:— Այլ՝ գնա՛, քեզ ցո՛ւյց տուր
քահանային և մաքրվելու մտադրությամբ մատուցի՛ր Մով-
սեսի հրամայած զոհի ընծան՝ նրանց համար վկայություն
լինելու համար»:

Հակառակ Հիսուսի պատվերի, սակայն, հիվանդը սկսեց
եռանդուն կերպով պատմել, թե Հիսուս ինչպես էր մաքրել
իր բորոտությունը: Այդ պատճառով էլ Հիսուսի համբավն
ավելի ու ավելի էր տարածվում և ամեն կողմից այնքան
բազմություն էր հավաքվում նրան լսելու և հիվանդութ-
յուններից բժշկվելու, որ նա երբեմն ստիպված էր լինում
խույս տալ և քաշվել ամայի տեղեր՝ հանգստանալու և ա-
ղոթելու»:

Շուշան-Վարդենին լռեց, իսկ հիվանդ կինը լալիս էր:
Փոքր-ինչ շունչ քաշելով Շուշան-Վարդենին ասաց. «Բո-
րոտների մասին երկրորդ պատմությունն էլ կա: Ահա
այն»:

ՏԱՍԸ ԲՈՐՈՏՆԵՐԻ ՄԱՔՐՎԵԼԸ

«Հիսուս, իր աշակերտներով սամարացիների գյուղում
ասպնջականություն չգտնելով, առաջ շարժվեց մի ուրիշ
գյուղ գնալու համար: Գյուղը գտնվում էր Գալիլեայի և
Սամարիայի սահմանի միջև:

Այդ գյուղից դուրս ապրում էին տասը բորոտներ. Հիվանդության պատճառով՝ նրանց արտօնված չէր գյուղ մտնել: Հիսուսի հրաշալի բժշկությունների համբավը հասել էր նաև նրանց և նրանք սպասում էին, թե երբ կտեսնեն նրան, որ օգնություն խնդրեն:

Հիսուս դեռ գյուղ չմտած՝ այդ տասը բորոտները տեսան ու ճանաչեցին նրան և հեռու մի տեղ կանգնած՝ բարձրածայն գոչեցին. «Հիսուս վարդապետ, ողորմի՛ր մեզ»; Հիսուս տեսավ նրանց, լսեց նրանց աղաչանքը և ասաց նրանց.

«Գնացե՛ք դուք ձեզ քահանաներին ցույց տվեք»:

Նույն ըոպեին, երբ սկսեցին քայլել դեպի քահանայապետի տունը, մաքրվեցին...

Նրանցից մեկը սամարացի էր, երբ տեսավ, որ բժշկվեց, վերադարձավ Հիսուսի մոտ և բարձր ձայնով Աստծուն փառաբանելով՝ Հիսուսի ոտքերի առաջ երեսի վրա ընկավ և հայտնեց իր գոհունակությունն ու երախտագիտությունը:

Հիսուս հարցրեց. «Դրանք տասն էլ չմաքրվեցի՞ն, մյուս ինը ո՞ւր են, որ չվերադարձան փառք տալու Աստծուն, բացի միայն այս սամարացի մարդուց»:

Մյուս ինը հեռացել էին՝ առանց շնորհակալության խոսք ասելու Տիրոջը: Տերը խոսքն ուղղելով մաքրված սամարացուն, ասաց. «Վե՛ր կաց, գնա՛, որովհետեւ քո հավատքը քեզ փրկեց»:

Սամարացին վեր ելավ և շտապելով վագեց, հասնելու իր ընկերներին՝ քահանաների մոտ գնալու համար»:

Շուշան-Վարդենին լռեց: Խորունկ լռություն տիրեց: Պարսկուհին հուզված սկսեց պարսկերեն խոսել մոգի հետ: Աչքերից արցունք էր հոսում: Երբ լռեց, մոգն ասաց Շուշան տկնոջը. «Նազիրե խանումը չգիտե ինչպես հայտնի

ձեզ իր երախտագիտությունը, նա խորապես ազդված է, և ձեր պատմածը լսելուց հետո կասկած չունի, որ կբուժվի ձեր աղոթքներով։ Նա թույլտվություն է խնդրում, ժամանակ անց, կրկին գալու»։

Շուշան-Վարդենին պատասխանեց, թե այդ ամենը իր հոգին լցնում է անհուն սիրով ու հավատով դեպի պարսկուհին։ Անկասկած, նա կարող է գալ ե՛րբ կամենա։ Ինչ վերաբերում է աղոթքին, ապա այսօրվանից Շուշան տիկինը կաղոթի նաև նրա համար։

Ծառաները ներս բերեցին նաև մի փոքրիկ սեղանիկ՝ թեկուզկ հյուղակում հայկական անուշեղենով հյուրասիրելով եկածներին։ Ապա և մատուցելով այնքան հարգի վարդի օշարակ։

Գնալիս թարգման մոգը աղամանդակուռ շքեղ մի մատանի մեկնեց Շուշան տիկնոջը՝ իբրև չնորհակալական նվեր պարսկուհու կողմից։ Շուշան-Վարդենին հայտնապես մերժեց, արդեն առանց թարգմանի էլ հասկանալի դարձնելով ասելիքը։ Ցույց տալով պարսկուհու արցունքու դեմքը (նա ստեղ-ստեղ թաշկինակը տանում էր երեսը ծածկող քողի տակ՝ աչքերը սրբելու...) Շուշան տիկինն ասաց, թե մարդկային մի՛ կաթիլ արցունքն իսկ հազար ադամանդ արժե։ Ապա խնդրեց թարգման մոգին հայտնելու նրան, թե տեր Հիսուսն ինքը, բազում իր բժշկություններն անելով, ամենեին վարձ չէր ակնկալում կամ վերցնում։

Նման արժանապատիվ պատասխանի ի գնահատումն՝ պարսկուհին և մոգը կրկին խոնարհվեցին Շուշան-Վարդենիի առաջ, և Սամվել եպիսկոպոսի ուղեկցությամբ դուրս եկան։

ԾՈՒԾԱՆ-ՎԱՐԴԵՆԻԻ ՀԻԾԱՏԱԿԱՐԱՆԸ (Հիշատակարանիս սկիզբը)

Վաղեմի՛ հարսանելան ընծաների կույտի մեջ գտա
գույնգույն, նախշագարդ եղրերով մագաղաթե այս
մատյանը: Բնտանելան անցուղարձն ու տարեգրությունն
արձանագրելու համար էին նվիրել: Բնտանիք էր հիմ-
նագրվում, տուն էր ստեղծվում, նոր կյանքերի, նոր
ծնունդների դուռ բացվում: Խնամքով ու սիրով արձանագ-
րել եմ մեր տանը եղած հիշարժան անցքերը, երեխաներիս
ծնունդը, հարազատներիս կորուստը... Մատյանի մեծ մասն
ազատ է, ուստի որոշեցի այսօր, թերևս կյանքիս ամենակա-
րեոր շրջանի իրադարձությունները վստահել հարազատ
դարձած այս մագաղաթի էջերին: Դա ամուսնուս՝ Վազգե-
նի, հոգեոր կորսայան հետագա օրերին էր, երբ արդեն
փակվել էի այլես իմ կացարանը դարձած այս հյուղակում:

ՕՐ ԱՌԱՋԻՆ ... Յավեր կան, որ անուն չունեն, կո-
րուստներ կան, որ անպարագրելի են, մորմոքներ կան, որ
սրից ավելի՛ են խոցում մարմինն ու հոգին:

...Զէի՛ հավատում, չէի կամենում հավատալ, սակայն
ճշմարտությունը ծա՛նը քարի պես ընկավ գլխիս, Տե՛ր իմ:
Ծա՛նը քարի՛ պես... Եվ այսուհետե, նաև՝ առմիշտ, այդ
քարի ծանրության տակ եմ, և այդ քարն էլ տապանաքարս
պիտի դառնա: Այսպես կամեցավ Աստված: Եվ թող եղիցի
կամք նորա:

ՕՐ ԵՐԿՐՈՐԴ ... Գիշերները ցուրտ են, քամի է
փչում, ուստի էթերիից խնդրեցի փոքրիշատե թեթև, բայց

տաք մի ծածկոց, որպեսզի կարենամ նաև արագ թաքցնել,
երբ բղեշիսի կողմից մեկնումեկը ստուգելու լինի... Ոտքերս
ուռել և կապտել են. հանապազ բորիկ, երեխ այդպես էլ
պիտի լիներ, նաև՝ ցավում են, գիշերներն առանձնապես:

Այսօր երազիս երեխաներիս հետ էի՝ Մանեի, Հերակլի,
Ասհակի, Բագրատի: Ախ, իմ Սահակը, որ ջրամույն եղավ:
Խաժ, տաքուկ աչքերով, բարձրաճակատ իմ տղեկը՝ տաս-
նամյա, դեմքով ինձ այնքա՞ն նման: Որքա՞ն սիրում էր
կարդալ: Պես-պես հանելուկներ էին լուծում միասին: Փոք-
րը՝ հնգամյա Բագրատը, հապաղում էր, մինչ Մանեն, Հե-
րակլն ու Սահակը, մեկը մյուսից առաջ ընկնելով, գտնում
էին պատասխանները: Ի՞նչ քաղցր պահեր ենք անցկացրել
միասին: Կամ երբ ես նրանց համար կարդում էի մեր Տիրոջ
կյանքի սրբազն պատմությունը՝ նոր Կտակարանը, և
մեկնում: Ի՞նչ պարզաչք ու շիտակ հայացքով էին նայում
իրենց մորը, հարցեր տալիս, հետաքրքրվում... Իսկ հիմա՞...
Քանի՛ օր է, որ տեսնում եմ նրանց հեռվի՛ց երկու իմաս-
տով, նախ, իրապես հեռվից, քանի որ հայր կոչեցյալը
կտրել է նրանց ինձնից՝ պատժելո՛ւ համար ինձ... Եվ ապա,
նրանք արդեն հեռո՛ւ են ինձնից, որովհետեւ նրանց ուսու-
ցանում են մոգե՛րը օտարադավան... Տե՛ր իմ, զավակներս
արտաքինո՛վ էլ փոխվել են. կրում են օտարածին հանդեր-
ձանք, չաստվածի են աղոթում: Իրենց սուրբ նախնյաց ա-
նարժան սերունդ է մեծանում այս հարկի տակ: Արդեն՝ ա-
նիծյա՛լ հարկի: Իցի՛վ թե անօրեն Վազգենը որսի կամ ճա-
կատամարտի ժամանակ մահ գտներ... Հազա՞ր անդամ ա-
վելի լավ կլիներ, եթե մեռած լիներ: Թե չէ այսպես մեռնում
է ամեն օր, ամեն ժամ... Այն էլ՝ խայտառա՛կ մահով:

ՕՐ ԵՐՐՈՐԴ ... Այսօր դրան երեցի հետ միասին եկել
էր և Հակոբ երեցը: Դրան երեցը դարձյալ խոսեց բղեշիս

Հետ թեկուզ ձևականորեն հաշտվելու մասին, քանի որ բացահայտ կորսոյան եմ գնում այսպես... Երեսում է, բդեշխը լավ «զինել» է սրան, ով գիտե, գուցեև ի՞նքն է մտահոգ: Այո, բացահայտ կորսոյան եմ գնում, բայց մարմնապես միայն, այն էլ՝ հոգի՝ վրկելու հավատով: Իսկ Հակոբ երեցը, որ դրան երեցից հետո ինքն էլ կռացավ ու ձեռքս համբուրեց, հակառակն ասաց ու պնդեց: Երկար ժամանակ խոսում էր ի գովարանումն իմ ընթացքի, իմ ազնիվ աստվածասիրության, շեշտեց նաև քանից ցա, թե Վարդան սպարապետի արժանի դուստրն եմ: Հայտնեց, թե ինքն արձանագրում է դաժան այս ժամանակի օրն ու պահը՝ հետագայում հանձնելու համար սերունդներին...

ՕՐ ԶՈՐՌՈՐԴ ...Այս գիշեր արթնացա ոտքերիս ցավից:
 Շունը՝ Հույսը, կողքիս էր, հանկարծ կծկվեց-պառկեց ոտքերիս վրա՝ ի՞նքը տաքանալու, նաև, բնազդորեն, ինձ էլ տաքացնելու համար: Քիչ անց զգացի, որ ցավն անցավ:
 Շա՛տ զգայուն շուն է, թե՝ բոլոր չներն են այդպիսին: Սակայն ինչո՞ւ բոլոր չները կամ բոլոր մարդիկ միատեսակ պիտի լինեին: Ոչ, իհարկե: Տարբեր են, այլազան: Եվ ամեն մեկի մեջ, Աստծո ողորմածությամբ ու կամքով, Խղճի, ուրեմն և Սիրո չափն էլ տարբեր է: Ո՞ւմ մեջ՝ որքան... Կարող է թագավորական անձ համարվածի մեջ այն մի ծեղի՝ չափ լինի, կամ չլինի առհասարակ, մինչդեռ հասարակ հոգիի սրտում՝ լեռնաչափ:

Ինձ լեռնաչափ Խիղճ, ուրեմն և նույնքան Սեր ճամփիր,
 Տե՛ր իմ, որպեսզի կարենամ տանել ուսերիս դրածդ ձյունը: Զէ՞ր որ ասված է. «Աստված ձյունը լեռան չափով է դնում»: Երախտապարտ եմ այս ձյան, այս վստահության համար, Տե՛ր իմ:

ՕՐ ՀԻՆԳԵՐՈՐԴ ... ի՞նչ անձրև եկավ, իսկը՝ երկնային շնորհ, քանի՛ օր է, որ հողը՝ չորացած, խոնավություն էր աղերսում: Եկավ ահա՝ շքեղ ու առատ. քար ու ճամփա, բակ ու դուռ օծեց իր լուսեղեն շղարշով: Թեթևացավ հոգիս, հյուղակի հատակն ահա հաճելի հողահոտով է շնչում, ի՛նչ հարազատ բուրմունք: Այս քանի՛ օր է ո՛չ կարողացել եմ լվացվել, ո՛չ լողանալ: «Դե, քանի որ նախընտրում ես շնաբնում ապրել, շունն ահա, եկե՛լ է, այդպես մնա՛, – հեգնանքով որոտաց օրերս բղեշիը, – ինքդ ես ընտրություն կատարել, սիրի՛ր, վայելի՛ր քո աստծուն»:

Հյուղակի դռան բացվածքից դեմքս պարզեցի երկնային ջրի օրհնանքին, անձրևաշիթերին խառնված արցունքներս հոսում էին, հոսում, լվանալով-մաքրելով հոգիս: Երկարժամանակ վայելում էի անձրւը: Հեիհե, թրջված ու դողալով ներս ընկավ շունը՝ Հույսը: Չորացրի նրա թրջված, ջուր ծորացող գլուխը, նստեցրի կողքիս՝ հատակին փոված փսխաթի վրա: Եվ հոգեպարար մի լուլթյուն գրկել էր մեղ խտացող կիսամութի մեջ, և քաղցր էր գոյության հրաշքը, թեկուզ այստեղ, ամեն կողմից քամի փչող, անշուք այս հյուղակում: Փա՛ռք քեզ, Տեր, այս ամենի համար՝ լուսաբացի՛ և երեկոյի՛, արեի՛ և անձրւի՛, գոյության հրաշքի՛ համար:

ՕՐ ՎԵՅԵՐՈՐԴ ... ինչպե՛ս օտարացանք իրարից Վազգեն բդեշխն ու ես, ինչպե՛ս, որ ասես կողք-կողքի, շունչ-շնչի չե՛նք էլ եղել... Աստված իմ, ամենադա՛ռն, ամենաօտար օտարականը նա՛ է դառնում, ով մի օր ամենամոտիկդ է եղել: Ի՞նչ դաժան հատուցում: Մեր համատեղ կյանքից պահեր եմ հիշում, երբ կրակի և օդի նման անբաժան էինք իրարից: Նա ինձ համեմատում էր կրակի հետ: Կրակի՛... Ուրեմն կրակն էր նրա համար արժեչափը սիրո ու երջան-

կության, տաքության, կանացի հմայքի: Կյանքի՝ կրակը: Սակայն հիմա, հիմա կարծես սկսում եմ թափանցել նրա կրակասիրության խորքերը: Արդյո՞ք սա չի առնչվում Վազգենի՝ պատանության տարիներին Վասակ Սյունու (մարզպանի) որդիների հետ միասին պարսից արքունիքում պատանդ լինելու (նշանակալի՝ ժամանակով...) հետ: Առնչվում է... Այնտեղ է տեսել նա պարսից եղծված բարքերը, արյունակից մերձավորների միջև ամուսնությունների և մյուս պղծությունների արատները: Այնտեղ է տեսել, սակայն արձագանքե՛լ է, ուրեմն, իր հոգում: Եվ ինչպես եպիսկոպոս Ափոցն ասաց, մազգեզանց կրոնին հակվելու գերազույն պատճառը Վազգենի վատհոգի բղջախոհությունն է, տոփա՛նքը, մե՛ղք է բարձրածայնե՛լն անդամ, առդո՛ւստրը սեփական... Որպիսի՝ պղծություն: Փոխանակայն բանի, որ արդեն ծաղկած Մանեի համար հավատարժան մի փեսացուի նշանառենք, ինքն է ուրեմն մտքովն անցկացնում... Նման շնություն, պղծություն մտքո՛վն անցկացնե՛լն իսկ հանցանք է ծանրագույն, ո՛ւր մնաց՝ իրականացնել կամենալը ...

Տե՛ր Հիսուս, փրկությո՛ւն առաքիր թշվառ, հուսագուրկայս հոգուս: Փրկիր դստերն իմ մատաղ ու անմեղ՝ ոճրապարտ, վավաշոտ գայլ-հորից:

ՕՐ ՑՈԹԵՐՈՐԴ ... Ահա հոգուս համար թանկ և երանելի օրերիս այս տարեգիր մատյանին ուզում եմ վստահել պատմությունը մի կնոջ, որն իր վրիպյալ սիրո զոհն է ամբողջապես: Նազիրե խանումը՝ մեծահարուստ պարսիկ իշխանավորի դուստրը, ծնվել ու մեծացել է իր զարմին ու տանը վայել շքեղ պայմաններում: «Ինձ համար չկա բառը չի եղել», — ասաց նա մոգի միջոցով: Երբ արդեն վեր կացան գնալու իմ հերթական աղոթքներից հետո, և դուրս ե-

կան, մինչև մոգի կառքին հասնելը Նազիրեն հետ դարձավ, մտավ ներս և ինձ հանձնեց մի մագաղաթ՝ ոլորված: «Սուրբ Շուշան, –ասաց, – վերցրո՞ւ, կարդա հոգուս այս ճիշը, այն հայերեն է: Խնդրելով խնդրեցի, որ ինձ սուրբ չանվանի այլես: «Դա մեծ մեղք է, – ասացի, – ես մի պարզ քրիստոնյա եմ, ի՞նչ սուրբ... ես քո քույրն եմ, Նազիրենանում»:

«Թող այդպէ՞ս լինի, – պատասխանեց պարսկուհին, – ազնվաշնո՞րհ տիկին Շուշան, թող քո ասածի պես լինի», – և խոնարհում անելով դուրս եկավ:

Ահա ձեռքիս է Նազիրեի գրությունը հայերեն, թարգմանել է տվել երկի:

«Նազիրե խանումի հոգու ճիչը.

Թող ամենազոր Աստված դատավոր լինի, ինչպես և է, մեր արած ու չարած, գործած ու չգործած մեղքերի համար: ՍիրելիՇուշան–Վարդենի, դուստրդ բարեհիշատակ Վարդան սպարապետի, ոչ ոքի չեմ խոստովանել առ այսօր, բայց դո՞ւ պիտի իմանաս, որ ես հայուհի եմ: Եվ իմ ծննդյան, ավագանի անունն էլ Նազելի է: Հետո՛ դարձա Նազիրե: Պատմեմ: Բոլորիս հայտնի պատվարժան հայրդ՝ Վարդան սպարապետը, լավ գիտեր հորս՝ պարսիկ մեծահարուստ իշխանավոր Խորշիդին, բազում ինչք ու կայքի և հարստության տեր: Ինչպես ընդունված է պարսկաց մեջ, հայրս՝ Խորշիդը, կանանց ունի՝ 20 կանանցից բաղկացած: Ավագ կինն ու սիրելին Շահը ուն է՝ մայրս: Խոստովանեմ ահա, որ ես նրանց հարազատ դուստրը չեմ, այլ՝ հոգեգավակը: Հայրս՝ Խորշիդն, այդ չգիտե: Մայրս՝ Շահը խանումը, հորս կանանց մեջ ավագն ու սիրելին, շա՛տ էր ուզում արու զավակ պարզել ամուսնուն: Սակայն, կամոքն Աստծո, ոչ արու զավակ, ոչ էլ աղջիկ, չէին հասնում լույս աշխարհ. Շահը խանումը վիժում էր: Ի հեճուկս

նրա, մրցակից կանայք՝ իր բախտակիցները (հորս քսան կանանցից առավել սիրվածները նազիրե, Զոլեյխա և Մանիժա խանումներն են մորիցս հետո) երջանկացել էին արդեն մի մի արու զավակով, Մանիժա խանումն էլ աղջիկ էր ծնել: Այս բոլորը դասակի մի-մի հարված էին մայրացուիս՝ Շահրուի ոսկի սրտին: Իսկ որ նա շատ բարեսեր ու խոնարհամիտ, կարույալներին օգնող ու հասնող կին է՝ բոլորը գիտեն: Դրա համար էլ սիրված է ամենքից:

Ահա, հերթական վիժումից հետո, մայրացուս՝ Շահրուն, խորունկ հուսահատության գիրկն է ընկնում, զօրուգիշեր լալիս և աղոթում է աստծուն, որ մի ելք գտնի: Իմ հարազատ մորաքույրը՝ Նարեն, որ հայտնի, ամենահաս հեքիմ է, հաճախ էր Շահրու խանումի հրավերով այցելում նրան: Շահրու խանումի համար դժվարին այդ պահին մորաքույրս խորհուրդ է տալիս նրան չքարձրածայնել իր վիժումը, և որ ինքը կհոգա՛... երեխայի, նորածնի մասին, քանի որ իր քույրը (իմ իրական մայրը՝ Զողանը) հղի է և ուր որ է՝ պիտի ծննդաբերի: Կենաց ու մահու երդում են տալիս միմյանց, որ այդ բանը իրենց երկուսից և ճշմարիտ ծնողներիցս բացի ոչ ոք չի իմանա: Ծնվում եմ ես, որ ծնողներիս հինգերորդ զավակն էի՝ երեք արու զավակից և մի դստրիկից հետո:

Որոշում են այդպես էլ անել, համաձայնության են գալիս: Անունս էլ՝ Նազելի, իսկական մայրս է դնում, որը Շահրուն պարսկական նազիրե է դարձնում այն: Պարզ է՝ լինում է նաև մեծագին փոխհատուցում Շահրու խանումի կողմից թե՛ մորաքույրս, թե՛ մեր ընտանիքին առանձին, իսկ մենք դժվար ապրելիս ենք եղել: Հորս՝ վաճառական Գրիգորի գործերը արդեն վաղուց լավ չեին: Գալով իմ հոգեզավակ լինելուն, պիտի խոստովանեմ, որ դժվար թե գտնվի ավելի լավ ու նվիրված մայր հարազատ զավակների

Համար, որքան Շահրու խանումն է եղել իմ համար։ Բնուստ շատ բարի այս կինը հենց մանկուց ինձ սիրեց մայրահամ այնպիսի գորովով ու խանդաղատանքով, որ շատ չի պատահում։ Հենց մեր ընտանիքում էլ, մյուս կանաց համեմատությամբ, նրա նվիրումը աչքի էր զարնում։ Պարզ է, որ ինչպես մյուս խանումների երեխաներին, այնպես էլ՝ ինձ, խնամում էին դայակները։ Սակայն մայրս՝ Շահրուն, դայակի անելիքն էլ ինքն էր անում՝ չվստահելով նրան... Նկատել էին, որ Խորշիդ մեծավորի կին Շահրուի նման նվիրված մայր քիչ կդժնվի ողջ երկրամասում։ Այդ առթիվ հայրս նկատողություն էր անում իր մյուս կանաց, որ օրե՛ր շարունակ խոսք ու բամբասանքով, կերուխումերով, զվարճանքներով տարված՝ սակավ ուշադրության էին արժանացնում իրենց ժառանգներին։

Այդպես, մեծանում էինք ոսկու և առատության մեջ։ Մեկ-մեկ մայրս՝ Զոզանը, ինձ տեսնելու էր գալիս մորաքույր Նարեի հետ, ինքն էլ ներկայանալով որպես մի ուրիշ հեքիմ։ Գնալիս Շահրու խանումը երկուսի գրպաններն էլ ոսկով էր լցնում, թանկարժեք նվերներ տալիս... Հատուկ վերաբերմունքով նշում էր նաև տոն օրերը։

Այսպես, իմ հասունացման օրը (իսկ դա հատուկ շուքով ու արարողակարգով է նշվում արևելյան իշխանական ընտանիքներում) մայրս ընծաներ չնորհեց տան մեծին ու փոքրին։ Հատուկ փախլավա թխվեց և, կանանցի սրահում շքեղ հացկերույթ եղավ։ Էլ չեմ խոսում ինձ արված նվերների մասին։ Հատուկ ընծաներ էր նախատեսել նաև մորս ու մորաքրոջս համար։ Շատ բարի կին է Շահրու խանումը, և ինձ սիրում է իր կյանքից առավել։ Դրանում համոզվել եմ բազմից։

Հասունացումից հետո, երբ ինձ արդեն դիտում էին իբրև հարսնացու օրիորդի, ընդունված էր, որ մեզ հանդեսի

էին հանում ի ցույց ընտանիքի հեռու և մոտիկ բարեկամների՝ հարմար փեսացուներին կողմնորոշելու, և մեզ՝ աղջիկներիս էլ մեր մուրագին հասցնելու, տունուտեղի տերդարձնելու նպատակով: Այդպես էլ ինձ, մյուս դեռահաս աղջիկների նման, հնարավոր հանդիպումների ժամանակ ցուցանում էին հարմար երիտասարդներին:

Այդպիսի մի հանդիպման ժամանակ էր, որ տեսա Խոսրովին: Խոսրովն իմ խորթ եղբայրներից մեկն է ուրիշ մորից՝ Նուշաբե խանումից: Ինձ համար, փա՛ռք աստծո, լրիկ օտար մարդ: Այսպես սկսվեց մեր սերը: Խոսրովը զինական է. նա կրթություն ստացավ և զինական գործի մեջ հմտացավ հոր՝ Խորշիդի հոգատար հովանավորությամբ: Ամուսնացրին մեզ: Լավ էինք ապրում: Խոսրովը խենթանում էր ինձ համար: Շուշան տիկնոջս ասեմ, որ ամբողջ ցեղի կանանց մեջ (թե մայր, թե մանուկ) ամենագեղեցիկն էի համարվում: Գուցե մայրացուկս՝ Շահրու խանումի օրինակով, շատ էին սիրում, հարգ ու պատվով շրջապատում: Ես էլ, երեխ, բարի եմ շրջապատի հանդեպ:

Այսպես անցան օրեր: Մի անուշիկ աղջնակ էլ ես ունեմ. լուսնի մահիկ լինի ասես, Աստված նրան պահապան: Փոքրիկ Լալեն, որին տեսնելու երջանկությունից զրկված եմ այս հիվանդության պատճառով: Մե՛կ-մեկ միայն ինձ պարգևում եմ հեռվից նրան աննկատ նայելու հաճույքը: Ինձ տեսնելուն պես ձեռքերը մեկնում է, որ գրկի... Ու ո՞նց է սրտակտուր լալիս (մինչև ուշաթափ մարի...), որ մայրը (... ես՝ դժբախտ) չի մոտենում իրեն, և մանավանդ, չի թողնում, որ ի՛նքը մոտենա... Հետո, քիչ առ քիչ, հասկացավ, ընկալեց, ընդգրկեց իր ցավի սահմանները: Հիմա հեռվի՛ց ենք նայում միմյանց, հիմա Լալեն հասկանո՞ւմ է, թե բանն ինչ է: Իմ թշվա՛ռ զավակ, որի կենդանի մայրը մեռա՛ծ է նրա համար: Աղջիկս փոքրուց է ճաշակում այն

դառնությունը, որ մեծի ուսերն իսկ դժվարությամբ կկրեն:

Հիմա՝ իմ մեղքի՝, ո՛չ, հանցանքի՝ մասին, որի համար էլ Աստված պատժել է ինձ անիծյալ այս հիվանդությամբ:

Բարետես երիտասարդ է իմ ամուսին Խոսրովը, զինական, իմաստնություն սիրող, գեղեցկի նկատմամբ ուշադիր: Երգի, երաժշտության համար միշտ բաց է ունկն ու սիրությունը: Այսօր էլ, ա՛յս ամենից հետո, չեմ գղջում, որ հարսնացա նրան, չեմ զղջում:

Մի անգամ, իրենց զինական գործերով մեր տանը հավաքվեցին Խոսրովի ընկերները: Քանի որ տոնական օր էր, եկել էին ընտանիքներով, որը՝ կնոջ, որն էլ՝ քրոջ կամ եղբոր հետ: Ահազին պատրաստություն էինք տեսել, մեծ ճաշկերույթ եղավ: Հրավիրել էինք նվագածուների: Պատահեց այնպես, որ այդ ժամանակ մեր տանը հյուրընկալվում էր մի դերվիչ: Արևելյան հարուստ տներում ընդունված է հյուրընկալել այդպիսի անցորդ դերվիշներին, պատահում է, անգամ, տարիներով... ճաշկերույթի ողջ ընթացքում նկատեցի, որ Խոսրովի ուշադրությունը մի այլ տեղ է: Դժվար չեղավ գտնել նրա ուշադրության առարկան: Հրավիրվածների մեջ էր և (ծնողների, նաև եղբոր հետ) շատ անուշիկ մի էակ՝ Շամիրան: Սկզբում քնական գտա այդ ամենը: Թվում էր՝ նայեց, հիացավ Շամիրայի գեղեցկությամբ, և... ուրիշ ոչինչ: Ընդհանրապես, թեկուզ ունեոր պարսկական ընտանիքում, երկրորդ կամ երրորդ կնոջ տուն բերելը նախընտրելի է համարվում ավելի հասուն տարիքում, մինչև իսկ ծերության հասակում... Այդ ժամանակ իմ ամուսին Խոսրովը հազիվ քսան տարեկան էր. մեր դստրիկ Լալեն նո՞ր էր ծնվել: Խոսրովն ինձ շատ էր սիրում: Ընտանեկան խաղաղ բույն էր մեր տունը, և ես երջանիկ էի:

Հրավերքն ավարտվեց: Դրանից հետո Խոսրովն ասես փոխվեց, ավելի ու ավելի շատ էր լինում Շամիրայենց ըն-

տանիքում։ Նրա՝ Շամիրայի եղբայրն էլ սկսեց ավելի հաճախակի այցելել մեզ։ Մայրս՝ Շահրու խանումը, որ ամբողջ էռլթյամբ կապված էր ինձ, անհանգստության նշաններ էր ցույց տալիս։ Շուտով ականջիս հասած շշուկները հիմնավորում էին նրա տագնապը։ Խոսրովն ուզում էր իբրև երկրորդ կին բերել Շամիրային։ Մայրս շա՛տ լավ հասկանում էր իմ հոգեվիճակը, խորաթափանց կին էր Շահրու խանումը, գիտեր կյանքը, մարդկային, մանավանդ կանացի՝ փոխհարաբերությունները... Հայուհու իմ պատկերացմամբ՝ իմ տունն ու սերը խորտակվում էին, իմ օրն ու արել՝ խավարում։

Տարբեր հարց է, որ պարսկուհիները հանգիստ ու համակերպված են նայում այդ երեսութին, թեպետ, ներքին կարգով, տան ներսում բոլորովին էլ հաշտ ու խաղաղ չեն այդ հարաբերությունները։ Դրա արդյունքն են այդ կանանց միջև մշտական կոփներն ու խառնակչությունը։ Իհարկե, այդ էլ բնական է. բազո՞ւմ ծաղիկների համար... մի մեղու՝ տղամարդ։ Խեղճ իմ խոսրով։ Երեսում է, սիրահարվել էր։ Կանանցի մյուս կանայք նույնպես, գլխի ընկնելով, որ այդ ամենը Շահրու խանումի սրտովը չէ, ոչ էլ իմ, անընդհատ խոսք ու զրույց էին բացում այդ մասին, թաքուն կամ բացահայտ խրախուսում խոսրովին...

Մի օր էլ Շահրու խանումի հետ որոշեցինք դերվիշի հետ խորհրդակցել այդ խնդրով։ մայր ու աղջիկ միայն այդ մասին էինք մտածում։ Ի՞նչ անենք, ինչպե՞ս անենք, որ այդ ամուսնությունը չկայանա, իսկ եթե այդ պիտի լինի, ապա գոնե՝ հետո՛, ավելի ուշ... Զգում էինք, որ, անշուշտ, հետաձգելով հեռու կդնա՛, հեռու կմնա... Ո՞վ գիտե, այդ ընթացքում գուցե չնախատեսված, անսպասելի դեպքեր լինեն, կրքերը սառչեն, շա՛տ բան փոխվի։

Խորհրդակցեցինք արծաթամորուս և իմաստուն, կյանքի

տաքն ու պաղը մաղած դերվիշի հետ։ Հասկացավ մեզ կես խոսքից։ Ուրիշ բան չէինք ոզում, քան սառեցնել հրո այդ օջախը։ Օջախ, որ Խոսրովին կլանում էր օրեցօր ավելի ու ավելի։ Վերջին ժամանակներում նա արդեն օրվա մեծ մասն անցկացնում էր Շամիրայենց տանը։ Ըստ Շահրու խանումին և ինձ հասած լուրերի, Շամիրան էլ արդեն անտարբեր չէ Խոսրովի նկատմամբ։ Ի՞մ Խոսրովի, իմ Լալեի հո՛ր... Այսպե՞ս...

Դերվիշը խորագետ մարդ էր։ Իր ասելով, եղել էր բազում բնակավայրերում, ուսումնասիրել մարդկանց ու նրանց բարքերը, նիստուկացը։ Շա՛տ բան գիտեր։ Զգիւտեմ, մայրս՝ Շահրու խանումը, ի՞նչ էր խոսել նրա հետ և ե՞րբ, որ մի օր էլ դերվիշը հայտնեց, թե իր մեկնումից առաջ հրավիրված է Շամիրայենց տուն։ Շամիրայի հայրն ու եղբայրը հարմար էին գտել հրավիրել Աստծո թափառական ծառային իրենց տուն էլ՝ նրա բարի խոսքին և օրհնությանն արժանանալու համար։ Մինչ մեր տանից գնալը դերվիշն ու մայրս երկար զրուցեցին։ Շահրու խանումը չուզեց, որ ես ներկա լինեմ այդ զրույցին։ Այդպես էլ արեցինք։ Դերվիշի գնալուց հետո մայրս ինձ հայտնեց, թե նա խոստացել է օգնել մեզ՝ ինձ և մորս։ Ի՞նչ կերպ։ Մորս ասել էր, թե Շամիրան դեռ փոքր է, իր երջանկությունը ավելի ուշ կգտնի, այնինչ Նազիրե խանումը աչքի առաջ հալումաշ է լինում օրեցօր... Ինքն այնպես կանի, որ Խոսրովին ու Շամիրան իրարից հեռանան։ Հետո կտեսնենք։ Ինքն էլի անցնելու է այս ճանապարհներով, դերվիշները մշտական ճամփորդներ են, այնպես որ, եկող տարի այս ժամանակ այս կողմերում կլինի...

...Միրելի Շուշան տիկին, սրբանկա՛ր, արդա՛ր, որ բոլորիս աչքի առաջ ընդունել ես ցավդ՝ անտրտունջ, շունչ առշունչ հատնելով մեծ համբերությանդ հետ։ Ես այդպիսին

չեղա՛: Շտապեցի՛: Խույս տվի, խուսափեցի իմ խաչից:
Չուզեցի ընդունել, ինչ աստված էր նախատեսել:

Զիմացանք, չգիտենք, թե ինչ արեց դերվիշը Շամիրա-
յենց տանը, թե իրո՞ք դերվիշն արեց այդ, բայց Շամիրան
ծանր հիվանդացավ, շա՛տ ծանր... Այնքան որ ... ամուս-
նության մասին խոսք անդամ լինել չի կարող, ոչ շուտ, ոչ
ուշ... ի՞նչ ամուսնություն, խեղճ աղջիկը մատաղ հասա-
կում այնպիսի՛ ցավի տեր դարձավ, որ ամբողջովին փոխ-
վեց: Նա, նա, աստվածաշնո՞րհ Շուշան տիկին, չարագու-
շակ բոր հիվանդությամբ վարակվեց, որտեղի՞ց, ինչպե՛ս,
ոչ ոք չիմացավ: Անիծյալ այս հիվանդությունը, ասում են,
շա՛տ վարակիչ է, ճիշտ է, բայց նաև... նախասահմանված...

Ահա և իմ պատմությունը: Այս սոսկանքը՝ բորը, հիմա
էլ իմ ճակատագիրն է ու խաչը: Հիմա Շամիրան էլ, ես էլ,
ապրում ենք մերոնցից հեռու, առանձին մի տան մեջ. մեզ
սպասարկում-խնամում են նույն ծառաները: Սկզբում
ծնողները Շամիրայի համար ձեռք բերեցին այդ մեկուսա-
վայրը, հետո՝ տնեցիներս ինձ էլ տեղավորեցին այնտեղ: ...
Երբ, ժամանակ առ ժամանակ, Լալեիս հեռվից տեսնելու
բախտն եմ ունենում, երջանկանո՞ւմ եմ: Մորս՝ նույնպես:
Սակայն, զարմանալի՛ բան կատարվեց սիրելի՛ Շուշան տի-
կին, Շամիրայի հիվանդությունից ի վեր մորս՝ Շահրու խա-
նումի և իմ փոխհարաբերություները... փոխվեցին: Զէ, չէ,
ոչ մի խոսք կամ բախում չի եղել, ոչ մի... պատճառ... չկա:
Բայց Շամիրայի հետ պատահածից հետո ասես պաղ, գե-
րեզմանաշունչ քամի անցավ մեր միջև... Նախկին ջերմութ-
յունն ու մաքրությունը չկա, թեև դստերս՝ Լալեին, նա է
պահում, և այն էլ ինչպե՛ս, ինչպես ժամանակին՝ ինձ...

Ամուսինս՝ Խոսրովն ամուսնացավ, երբ մահադրոշմ այս
հիվանդությունն արգեն երևացել էր ինձ վրա: Այսպես ե-
ղավ»:

Կարդալով սրտակեղեք այս պատմությունը, ես, նորից-նոր, հասկացա, որ ճակատագրից խուսափել չի՛ լինի: Քարացել եմ այս մանվածապատ, օձագալար պատմությանն ի տես: Ի՞նչ խորն են թաքնված չարի արմատները, ի՞նչ լիաբուռն է... որոմը, որ այսպես թունավորում է շրջակայքն ու ապականում, մի բան էլ ճյուղարձակելո՛վ, ավա՛ղ, ճյուղարձակելո՛վ...

Հիմա ներս մտավ Հույսը՝ շան իր տեսակին բնորոշ կենսասիրությամբ, հոգնա՛ծ, բայց զվա՛րթ ու ապրո՛ղ: Ի՞նչ հաճույքով խմեց-վերջացրեց իր ջրամանի ջուրը, շատ է ծարավել, ի՞նչ ախորժակով կերավ իր համար բերված ճաշը, որ պահակներին խնդրում եմ պատրաստել: Հիմա էլ, երախտագետ հայացքն ուղղելով ինձ, պոչն է շարժում: Երբեմն խորհում եմ, որ կենդանիներն առավել բախտավոր են, քան մենք: Նրանք ուղիղ և պարզ են իրենց կենցաղի, կյանքի իրենց գծի մեջ: Ապրում են Աստծո չնորհած կյանքը էության բոլո՛ր բջիջներով:

ԽԱՐԴԱԿԻՉԸ

Վրաց առաջնորդ անթիպատրոս Վազգեն բդեշխը կառավարման իր մութ խոհանոցն ուներ: Նախքան ուրացումն էլ նրա մոտ ելումուտ ունեին ամենատարբե՛ր անձնավորություններ՝ արքության արժանացած եպիսկոպոսներից, պատվարժան իշխանավորներից, հզոր վաճառականներից, օտարերկրյա բարձրաստիճան հյուրերից սկսած ... մինչև տարակուսելի վարքի ու զբաղումի տեր, անվայելուչ արարածներ: Խուժադադուժ մի զանգված՝ բաղկացած կախարդներից, խոսք տանող-բերողներից, չարախոս-բամ-

բառակներից, մարդասպաններից, բացորոշ խառնակիչներից: Սրանց գոյությունն ու գործունեության պտուղը ևս հարկավոր էր բդեշխին... Այս, ինչ անում էին սրա՛նք, ընդունակ էին միայն իրե՛նք անելու: Անկասկած, սրանք ո՛չ հարդանք ու պատիվ, ո՛չ էլ համակրանք չէին վայելում ո՛չ ժողովրդի, ո՛չ էլ հենց իր՝ բդեշխի աչքում: Սակայն դա պետք էլ չէր սրանց, սրանցը փողն էր. հին այդ կավատուհին, աշխարհի ստեղծման ժամանակներից ի վեր ընդունյա ամենաթունավո՛ր օձը, որ իր գալարների մեջ է առնում կյանքե՛ր, ճակատագրե՛ր, երկրնե՛ր, պետություննե՛ր, ամենաշեն ինչ՝ մարդկային փոխհարաբերությունների պարագծերում:

Այդ օրը Վազգեն բդեշխը թիկնապահ Լևանին հանձնարարեց իր մոտ բերելո խոսք տանող-բերող և խառնակիչ Սև Հոռովիին: Սև Հոռովի մականվանյալ այդ կինը ոմն մեկն էր վաժառուին մոտ, անցյալը՝ մութ, զբաղումները՝ անորոշ: Սև մականունն էլ ստացել էր ո՛չ միայն սև, մութ գործերով զբաղվելու, այլև եղկելի արտաքինի համար: Զյութագույն մազերի խճճանքով պատաժ անճակատ, սևամաշկ, պղուկածածկ դեմք, որի մի կեսը մյոււմից նկատելիունն հետ էր ընկած... Ծուռումուռ, խոշոր քիթ, մանր ու խորընկա աչքերի առնետի՛ նայվածք, իսկ մեջքին տարիները դրել էին ահոելի մի կուզ՝ իբրև կատարած սև գործերի մի ծանը բեռ:

Լևան թիկնապահը հայտնեց, որ կատարել է հանձնարարությունը: Բդեշխն արտոնեց Հոռովիին ներս գալու: Ներս մտնելուն պես Սև Հոռովիը երկու ձեռքով (որոնց մաքրությունը խիստ կասկածելի էր) փութով բռնեց բդեշխի աջն ու համբուրեց: Վազգենը պժգանքով հետ քաշեց ձեռքը, որի վրա շողշողում էր մատանու աչք ծակող խոշոր, կարմիր հակինթը, պարսից արքայի ընծան:

- Նստի՛ր,— մորուքի միջից մոլտաց բդեշխը:
- Լսում եմ, տե՛ր,— քրթմնջաց անդուր ձայնով Սև Հռովիլ:
- Գիտե՛ս անշուշտ այս պատմությունը,— դժվար խոսեց բդեշխը որոշ լուսթյունից հետո:
- Սև Հռովիլը գլխով արեց, առնետի իր մանր ու սուրութեկ աչքերը սկսենելով նրան:
- Կստանաս եռապատիկն այն ոսկու, որ քո խաղերի համար վճարում եմ,— ասաց բդեշխը, հետո, ասես անկախ իրենից ձայնը բարձրացնելով, մեկեն պոռթկաց.
- Պիտի փոխես Շուշանին, լսո՞ւմ ես, փոխե՛ս..., դու այդ կարող ես: Առաջին անդամը չէ...
- Սև Հռովիլը փոքր ինչ լուռ մնաց, ապա ժպտաց քսուժպիտով. «Առաջին անդամը չէ՝, բայց ո՞չ... Շուշան տիկնոջ համար: Շուշան տիկինը... Օ՛, նա ոչ մեկին նման չէ՛: Ողջ քաղաքն է խոսում...»:
- Լոի՛ր,— որոտաց Վազգենը,— լոի՛ր, գործի՛ անցիր, ի՞նչ կերպ պիտի մոտենաս...
- Մի բան կմոգնեմ, տեր իմ, առաջին անդա՞մն է, ի՞նչ չէ: Կթափանցեմ մոտը, իսկ հետո... կտեսնենք... Շուշան տիկնոջ հետ շա՞տ դժվար է: Նա իր կամակոր հոր աղջիկն է, օ՛, սուրբ Վարդանի-, հեշտ չէ՛:
- Հեշտ չէ՛,— ձեռքը սեղանին խփելով եզրափակեց բդեշխը,— գնա՛: Սև Հռովիլ կանգնեց, այդպես նրա կուզը առավել տեսանելի դարձավ, հապաղում էր ինչ-որ: Բդեշխը, ասես մի բան հիշելով, ձեռքը տարավ դրամապանակին և մի քանի ոսկի դրեց սեղանին: Վերցրո՛ւ, ասում էր նրա հայացքը: Աև Հռովիլ սովոր շարժումով գրպւսնեց փողն ու շտապեց դուրս գալու: Բդեշխի՝ արգահատանքով լի հայացքը ուղեկցում էր նրան մինչև դռան փակվելը:

ԶՔԱՎՈՐՆԵՐԻՆ ԱՆՎՃԱՐ ՑՈՐԵՆ ԵՆ ԲԱԺԱՆՈՒՄ...

Վազգեն բդեշխի՝ Ցուրտավից բացակայելու օրերին դայակ Բրաբեռնը կես ժամով կարողացել էր ներս թափանցել Վարդենու մոտ և ահա թե ի՞նչ էր պատմել:

Պարզվում է, որ բդեշխը քաջ գիտե ժողովրդի կողմից իր սիրված չլինելու մասին: Նա այդ մասին գիտեր առաջ էլ՝ դեռևս հոր (Աշուշա բդեշխի) կենդանության օրոք: Թե ինչո՞վ էր նա արժանացել նման դաժան պատժի, Բրաբին չգիտեր, բայց պարզից էլ պարզ է, որ նրա չսիրված լինելը ճշմարիտ է: Իսկ ուրացության, դավաճանության այս պատմությունից հետո ատում էին բացեիրաց, համոզվել էր դայակ Բրաբեռնը: Անթաքո՛ւյց: Վազգեն բդեշխին տեսնելիս թեքում էին իրենց ճամփան, նկատելով, որ մոտենում է, հեռանում էին նախապես... Եվ այս վերաբերմունքը բուլորն էին դրսեորում, ուամիկ դասից սկսյալ մինչև ապահոված քաղաքացիներն ու ունեորները: Շատերն էլ, որ առաջներում ջերմ հարաբերությունների մեջ էին բդեշխի հետ, նրա ուրացությունից հետո խուսափում էին հետը շփվելուց: Այսպես էին անում թե՛ վրացիները, թե՛ հայերը, թէ՛ այլազգիները, որովհետև Ցուրտավ քաղաքը բազմազգ էր: Հնդհանրապես ոչ առատաձեռն բդեշխը (նույնը չէր կարելի ասել հոր՝ Աշուշայի մասին), արդեն ակներեորեն նեղվում էր իր նկատմամբ միանդամայն տեղին սառը վերաբերմունքից և ելք էր որոնում ժողովրդի սիրտը շահելու: Ինչ-խոսք, կնոջ՝ Շուշան-Վարդենիի հալածանքների սկսվելուց ի վեր (որ լավ հայտնի էին ողջ քաղաքին), սառն ու փշոտ վերաբերմունքն արդեն վերածել էր թշնամանքի:

Եվ ահա, Ցուրտավ քաղաքի բնակչության, առավելապես աշխատավոր դասի հետ իր հարաբերությունները լավացնելու կամ մեղմելու միտումով բղեշխը որոշել էր բարի գործ կատարել՝ չքավորներին մեծաքանակ ցորեն բաժանել։ Այդ լուրն արդեն տարածվել էր քաղաքում։ Բղեշխի գործավորները տասնյակ պարկերով ցորենը տարել դարսել էին քաղաքի հրապարակում, տեղ գրավելով դրանց կողքին։ Կիրակի օրը պիտի բաժանեին։

Եկավ Կիրակին։ Լուսաբացի հետ խուռներամ բազմություն էր ալիքվում հրապարակում։ Ասում-խոսում էին, նայում պարկերի կողմը, այնտեղ կանգնած պահապաններին։ Եվ երբ պահակներից մեկը՝ Նոդարը, հրահանգեց, ցորենը բաժանողները ձայնեցին հրապարակով մեկ։ «Մոտեցե՛ք ստանալու բարեգործ Վազգեն բղեշխի շնորհած ընտիր ցորենը՝ անվճար...»։

Քար լոռություն տիրեց։ Մարդիկ փոքր-ինչ մոտեցան պարկերին։

Դարձյալ լսվեց բարձրագոչ հրավերը՝ անվճար ցորեն ստանալու։ Էլի ոչ մի քայլ, ո՞չ մի շարժում, թեև հրապարակում ասեղ գցելու տեղ չկարգ

Խելապակաս Դաթիկոն էր միայն, որ չքողարկված հետաքրքրությամբ նայում էր պարկերին, բոլորին հայտնի էր, որ նրա խնամքին յո՛թ շունչ կա, և որ բոլորն էլ «օրումեջ են ուտում...»

— Չմոտենա՛ս, — մոտակայքից լսվեց առնական մի ձայն, — ես քեզ ցորեն կտա՛մ, ինչքա՞ն ես ուզում...

Դաթիկոն նայեց ձայնի կողմը՝ իլարիոն վաճառականն էր, նոր հագուստով, ինչպես միշտ՝ բարետես։ Նոր էլ վերադարձել էր առևտրական շրջագայությունից։

— Ե՛ս էլ կտամ, մո՛տ արի, — լսվեց մեկ ուրիշ ձայն, — է՛ս կողմն արի էդտեղից, մա՛րդ աստծո...»

Այս ասուլիսը բավական էր, որ պարկերին ու պահնորդներին քիչ թե շատ մոտ կանգնածները զգալիորեն հեռանան: Պահնորդներն ու բաժանողները, որ արդեն վաղուց բացել էին պարկերի բերանները, կշեռքները պատրաստել, նայեցին միմյանց երեսի: Էլի՛ մեկ-երկու անգամ հրավիրեցին ժողովրդին՝ ստանալու «բարերարի՛» անվճար ցորենը:

Բազմության մեջ շատանում էր քչփչոցն ու ցածրաձայն խոսակցությունը: Դարձյալ ոչ մի շարժում, ո՛չ մի քայլ դեպի պարկերը: Լսվում էին վրացերեն, հայերեն խոսքեր, խեղղված ծիծաղ հնչեց: Մեկը շվացրեց, չիմացան ո՞վ էր: Ծա՛նը տեսարան էր:

— Ո՞ւր է խելառ Դաթիկոն,— հետաքրքրվում էր մեկը. Հակոբ երեցն էր: Ցույց տվին, մոտեցավ Դաթիկոյին, ինչոր բան ասաց... Դաթիկոն գլխով էր անում, ապա գնացին միասին: Հայտնի էր այն գթասիրտ վերաբերմունքն ու նվիրվածությունը, որ ուներ Հակոբ երեցը դեպի ամեն ազգի թշվառներն ու կարոտյալները: Գիտեին նաև, որ անսքող ատելությամբ է լցված դեպի ուրացող բդեշխը: Հասկացան, որ Հակոբ երեցը Դաթիկոյին տարավ մի առանձին, ուրիշ ակունքից ցորեն տալու, որովհետեւ այս հարուստ վաճառականների «ջրին վլավ գցել չի՛ լինի» (ասում-խոսում են ու... այդքանը), մինչդեռ Դաթիկոն իսկապե՞ս կարոտյալ է, հացազուրկ, ո՞վ գիտե, մեկ էլ տեսնես՝ վերցնի ու մոտենա «բարեգո՛րծ» բդեշխի շնորհած պարկերին...

«Ո՞չ ոք, ո՞չ ոք չպիտի մոտենա, — մտորում էր կիսաձայն Հակոբ երեցը, — որպեսզի դավաճանն զգա իր զազրելի արարքի տարողությունը»:

Մեկ-երկու անգամ էլ ձայնեցին՝ հրավիրելով բազմությանը ցորեն ստանալու, հետո քար լուռաթյուն տիրեց: Բազմությունն սկսեց ցրվել... Երեկոյանում էր, տուն շտապեց

Նաև Բրաբիոնը:

Այս պատմությունն իմանալուց հետո Շուշան-Վարդենին գոհացել էր հոգով և փա՛ռք տվել ամենագլուխ Աստծուն: Վերածնվել էր ասես, ուրեմն միայն ի՛նքը չէ, ի՛ր ցասումն ու ընդգումը, ի՛ր պատասխանն առ ուրացողը, ո՛ղջ ժողովուրդը, մեծամասնությունն է դավաճանին հակադարձում... «Զայն բազմաց՝ ձայն Աստծո»:

«Հիրավի հիշարժան, զորավոր ապտակ է, արժանի՛ դատաստան՝ անիրավին», – խորհում էր Շուշան-Վարդենին:

Այդ օրը նա քնեց հանգիստ ու անխոռով քնով (ինչպես չէր եղել վաղո՛ւց), որը մանկան նման՝ անշուշտ հյուղանիկ և սաղմոսը շուրթերին...

Շունը՝ Հույսը, կենդանու անսիալ բնազդով զգալով տիրուհու հանդարտ վիճակը, լիզեց նրա ձեռքն ու կլանչեց զվարթ, ապա քուն մտավ ինքն էլ՝ նրա ոտքերի մոտ:

ՍԱԴՐԱՆՔ

Դուան տեղում կախված փսիաթը կասկածելի խշոտաց. կնոջ ձեռք էր, եղունգների տակ՝ կեղտի սևերիզ շերտով...

Գլուխը ներս մտցնելով, Սև Հոռովիը հարցական նայեց Շուշան-Վարդենին :

– Կարո՞ղ եմ ներս գալ, Շուշա՞ն տիկին, – խոլտաց Սև Հոռովի:

– Արի՛, – մեծահոգի շեշտով վրա բերեց տիկինը, – նորից ի՞նչ է եղել:

– Ի՞նչ պիտի լինի, տիկի՞նս, այս եղածները քի՞չ են: Ու՞հ, ինչպես է փոխվել Շուշան տիկինը, ինչպե՞ս... Արժե՞, որ նա թշնամի՛ ուրախացնի այսպես առանձին կենալով մեր փառավոր Վազգեն բղեշխից: Ի վերջո, Աստված մեկն

է. բոլոր կրոնները նո՞ւյն Աստծուն են երկրպագում:
 Շուշան տիկինը գուսապ սպասողականությամբ նայում էր
 Սև Հոռովին, հայացքով արտահայտելով այն միտքը, թե
 ա՞յդ է ասածդ, դրա՞ համար ես եկել:
 – Հակոբ երեցին տեսա, լուրեր են շրջում, որ գրում է
 քո այս չարչարանքի մասին: Ճի՞շտ է:
 Շուշան-Վարդենին լուռ էր, ապա.— Քեզանից եմ
 լսում,— ասաց: Շուշան-Վարդենին լուռ էր: Սև Հոռովիը
 նեղվում էր այդ լուռովյունից:
 – Իսկ ես լսել եմ, որ Հակոբ երեցը քեզ հետ անկեղծ չէ,
 նա բգեշխի մարդն է, գրելու պատրվակով գալիս է լրտե-
 սելու քեզ:
 Շուշան տիկնոջ դեմքին քմծիծաղ երևաց.
 – Ի՞նչս լրտեսի,— ասաց,— աղոթքն ու սաղմոսերգութ-
 յո՞ւնը, շղթաների մեջ լինե՞լս...
 – Հակոբ երեցը լավ մարդ չէ՝, փրփրեց ջադուն,— նա
 միշտ էլ վատն է եղել: Զոջիկ իշխանին քո սենեկապանու-
 հի էթերիից կտրողը նա է: Նրանք առաջ սիրել են իրար:
 Զոջիկի սիրուհին է եղել, բայց Հակոբ երեցը մինչ քահա-
 նա ձեռնադրվելը սիրել է նրան, չ՝ պատանի օրերին:
 Շուշան տիկինը ակնհայտ զզվանքով զննում էր Սև Հո-
 ռովիին:
 – Զե՞ս փոխվում, չէ՞՝, ասաց,— միշտ թունավոր ու
 խառնակիչ: Ինչքան պիտի ապրես այդպես: Դարձի՛ արի,
 կորուսյալ հոգի: Մի լա՛վ բան ասա, լա՛վ բանի մասին
 մտածիր, գոհացի՛ր կյանքով:
 – Ինձ համար ի՞նչ լավ. ինձ լա՞վն է ստեղծել Աստված,
 որ գոհանամ: Նայիր կերպարանքիս:
 – Կարեորը հոգի՛ն է, դրսինը, կեղեն անցողի՛կ է, ժա-
 մանակավո՛ր, Հոռովի, իմացի՛ր այս: Եվ հետո, ներսդ եթե
 գեղեցիկ լինի, դուրսդ էլ այդպիսին կթվա:

— Հա՛յ—հա՛յ, քո ներսը գեղեցի՛կ է, խոսք չկա՛, Շուշան տիկին, եկեղեցու խորան լինի ասես, բայց ահա գեղեցիկ այդ հոգին ինչպե՛ս է թողնում, որ գեղեցիկ տեսքդ այդպես փոխվի՛, ի՛նչ օրն ես ընկել:

— Ինչո՞ւ ես եկել, Հոռո՛փ,— փորձեց կարճ կապել Շուշան—Վարդենին:— Ի՞նձ ասելու ի՞նչ ունես:

— Է, Է՛, Շուշան տիկին, դուստրդ սուրբ Վարդանի, իսկ դու—ինձ ասելու բան չունե՞ս,— մանր աչքերի խորամանկ հայացքը սեեռելով Շուշանի աչքերին, ծորաց Հոռովիը: Ապա շարունակեց.— Մեկն ու մեկին մի բան չե՞ս ուզում հաղորդել դու, այսպես փակված: Յանկացել ես տեսնել ինձ:—

— Ե՞ս,— զարմանք կտրեց Շուշան-Վարդենին, — քե՞զ...

— Այո՛, քո այս պահապաններից մեկն ասաց, անունը չգիտեմ:

— Ո՞ր մեկը... ե՞րբ...

— Անունը չգիտեմ, մի քանի օր առաջ:

— Անկարելի՛ բան ես ասում, Հոռովի, մտքո՛վս էլ չի անցել կամենալ տեսնել քեզ: Գնա՛, Հոռովի, ես պիտի աղոթեմ: Ինչպես էլ հնարո՛ւմ ես նման բաներ, և միշտ... Առաջներում, երբ ձեռքդ ինձ չէր հասնում, ծառաների մեջ կոիվ գցելով էիր գոհանում, ահա ինձ էլ չես խնայում: Սուտ խոսելը մեծ մեղք է, մեծ...

— Հակոբ երեցին ես ասել, հիշեցի, — իմանել փորձեց խառնակիչը, — նա լինում է այստեղ, չնայած բղեշին արգելել է:

— Դո՛ւրս, — սաստելու պես գոչեց Շուշան-Վարդենին, — դո՛ւրս, վատհոգի՛... Հիմա արդեն իրոք կպատվիրեմ պահապաններին, որ քեզ երբեք ներս չժողնեն:

Մե Հոռովիը դուրս եկավ: Նա իր ուզածին հասել էր: Հունցել էր արդեն սև բամբասանքը: Մտեղծել էր առիթը: Նրա՛ նման մեկի համար դա դժվար չէր: Հիմա կդնար և է-

թերիի ականջը կլցներ հենց իր՝ Հոռովի ասածները, իբր Շուշան տիկնոջ խոսք... Հակոբ երեցին կհասցներ, հետո՝ Զոջիկին մեջ կքաշեր, մի ամբողջ կծիկ սադրանքի: Ի վերջո գործը կհասներ բղեշխին, ինչի համար որ արվե՛լ էր այս բոլորը: Ահա՛, տեսե՛ք, թե իրականում ինչո՞վ է զբաղվում Շուշան-Վարդենին, այնինչ խոսվում է, թե ապաշխարում է հավատուրաց ամուսնու փոխարեն:

Մեկ շաբաթ անց սադրանքը պատրաստ էր: Բամբասանքի կծիկը գլորվել-ներառել էր իր մեջ մի քանի՛ հոգու:

Երբ, մի քանի օրից, պահակներին սիրաշահելով հյուղակ մտավ էթերին, բամբասանքն արդեն գորդյան հանգույցի էր վերածվել... Շուշան տիկինը տարակուսած լսում էր նրա ասածները, ավելի ճիշտ, Հոռովի բարբաջանքը Զոջիկի ու Հակոբ երեցի կարծեցյալ սիրո մասին առ էթերին, ի՛բր... ի՛ր անունից, ի՛ր բերանից դուրս եկած...

— Ե՛ս, իհա՛րկե, չե՛մ հավատում, որ դուք ասած լինեք նման բան, — հուզմունքից հեռում էր էթերին, — այս վհուկը ստեղծում է իր սուտն ու ծախում: Նրան ո՞վ չգիտե... Երեկ բղեշխի մոտից դուրս եկավ գոհունակ, գրպանը՝ լիքը: Ահա թե ո՞վ է թե տալիս սրան, — վրդովմունք էր հայտնում ալեկոծված էթերին:

Աև Հոռովին իսկապես վարպետորեն էր հյուսել իր սարդուստայնը: Խառնշտել էր Զոջիկի ու էթերիի զգացմունքների մարած խարույկը, Հակոբ երեցի անվան վրա ստվեր գցել, Շուշան-Վարդենին անգամ՝ իր ազնիվ մեկուսացման մեջ, խառնել իր պղտորած ջրերին...

Այդ մասին Հակոբ երեցը հայտնեց Շուշան տիկնոջը ակնհայտ զայրույթով: Պարզ դարձավ, որ ո՛չ մի սեր էլ չի եղել ի՛ր և էթերիի միջև, նման բանի մասին ինքը նո՞ր է լսում, ուրիշից... Կրկնելով կրկնեց սակայն, որ այդ խոսքը տարածվելուն պես ինքն իսկույն զգաց, որ սադրանք է

Շուշան-Վարդենիի դեմ:

– Ոչ էլ հավատացի, ազնիվ տիկին, – ասաց, – ականջովս
էլ լսեմ՝ չե՞մ հավատա, որ դո՞ւք... Տե՛ր իմ, ինչ գարշելի
էակ է այս Սև Հռոռովիք:

Իսկ Վազգեն բդեշիլը քթի տակ քմծիծաղում էր, լսելով
արձագանքները:

ԱՆԵՇՔԴ ՔԵԶ ԴԱՐՄԱ...

Շուշան-Վարդենիի խոսքով «խորան ավերող» Վազգեն
բդեշիլը հավատափոխությունից հետո բերել էր իր հետ
պարսիկ մոգերի, նաև՝ հարակից սպասարկու մի խումբ:
Ի՞նչ իմանաս, թե սպասավորի անվան տակ ովքե՞ր էին: Ե-
կել էին իբր ծառայելո՞ւ մոգերին: Ծառայում էլ էին,
բայց... Նրանցից մեկն ահա, մի կին, մոտ-մոտ էր անում
Շուշան-Վարդենիին:

Պարսկուհի Աշրաֆը ուշագրավ կին էր՝ արևելյան շքեղ,
գունեղ գեղեցկությամբ: Բանիմաց էր, ճարպիկ, ուշիմ: Ա-
սածդ դեռ լեզվով չէ, մտքով ու բնազդով կես խոսքից էր
ըմբռնում: Վազգեն բդեշիլը նրան հատուկ հանձնարա-
րություն էր տվել. «մշակելու» Շուշան տիկնոջը, փխրեցնե-
լո՞ւ նրա հոգու կարծրացած հերկը իր (Վազգենի) նկատ-
մամբ, մտնելու նրա էության խորքերը, այդ բոլորից առաջ,
անշուշտ, եթե ոչ սիրելի, ապա գոնե համակրելի դառնալու
Շուշանի աչքին: Բանալին հենց այդ համակրանքը պիտի
լիներ, այն սողանցքը, որով պիտի թափանցեր Շուշան տիկ-
նոջ ներաշխարհը: Հետը միշտ մի թարգման մոգ էր գալիս:

Առաջին այցելությանը պարսկուհի Աշրաֆը նստեց-
պատմեց իր ծանր կյանքը: Ծանր էր, թե թեթև, այդպե՞ս
ներկայացվեց: Ի՞նչ սարսափելի ամուսին ուներ՝ կծծի, դա-

ժան, խստաբարո՛: Մեռավ վերջերս, իրեն թողնելով մենակ, քանի որ զավակ չունի: Ինքն էլ, ահա, ծառայություն է անում, բուժելու շնորհը էլ ունի, կարող է անցկացնել գլխացավը, բուժել չար աչքի հարվածից, գրբացություն անել, գուշակություններ... մի խոսքով, ամեն բան, ինչին արժեք է տալիս ու հավատում արևելցի կանանց մեծ մասը: Շուշան-Վարդենիի ոտքերի վիճակը տեսնելով, նա լաց եղավ, հետո թարգման մոդի հետ գույլով ջուր բերեցին, լազան: Աշրաֆը լվաց Շուշան-Վարդենիի ոտքերը, իրեն հայտնի ինչ-որ քսուք քսեց, փաթաթեց հետը բերած շորով: Շուշան տիկինը շնորհակալություն հայտնեց նրան, իսկ գրբացության կամ բժիշկի նրա առաջարկությանն ի պատասխան սրտաբուխ մերժեց, ասելով, թե քրիստոնեից Սուրբ Գիլքն արգելում է այդ: Կարիք չկա նաև վաղօրոք իմանալու գլխիդ գալիքը. լինելու բանը կատարվում է, և պատրաստ պիտի լինել դրան: «Հեռացի՛ր չարից»՝ պատգամում է քրիստոնեական կրոնը: «Բացի այդ, հայերս բարեսեր ժողովուրդ ենք, և մի այսպիսի ասացվածք էլ ունենք՝ «Անեքդ քե՛զ դառնա», և այդպես էլ լինում է», ։-փորձեց հասկացնել պարսկուհի Աշրաֆին, որը խորամանկ ու սիրաժպիտ հայացքով լսում էր նրան, ներկած-ծարիրած աշ-քերը փոխնիփոխ ուղղելով մերթ Շուշան տիկնոջը, մերթ՝ թարգմանին:

Մի այլ անգամ, ի՛բր բոլորից թաքո՛ւն, խմորեղեն էր բերել Շուշան տիկնոջը, հյուրասիրեց, ասաց, թե ինքն է պատրաստել հատուկ նրա համար: Տիկինը մի փոքր կերավ ու գոհացավ այդքանով, բայց բերանի մեջ անծանոթ մի դառնահամ էր զգում երկար ժամանակ: «Կթունավորի սա ինձ իրենց թմրադեղերով, որ բթացնում են կամքը, ընկճում մարդու հոգին», ։- մտորում էր Շուշան տիկինը, ։- Տե՛ր իմ, ի՛նչ գործ ունի այս կինն իմ տանը, իմ քանդվող

տան ավերակների վրա այս ի՞նչ գիշակերներ են պտտվում։ Այդ բոլորը «խորան ավերող» ամուսնու՝ Վազգենի գործերն էին։

ԲՐԱՅԻՆ ՀԵՌԱՆՈՒՄ Է...

Տարադեպ էր Բրաբիի առողջության հանկարծահաս վատացումը։ Միանգամից սկսել էր նիհարել, դալկացել էր դեմքը, աչքերը՝ սովորաբար աշխույժ ու խորաթափանց, կորցրել էին փայլը, մշուշվել։ Էթերին տեղեկացնում էր Շուշան-Վարդենիին դայակի առողջության մասին։ Այն Բրաբին, որ Շուշան տիկնոջ ընտանիքի ներքին առանցքն էր, թե՛ տիկնոջ, թե՛ նրա զավակների պահապան «հրեշտակը», օրըստօրե հատնում էր բոլորի աչքի առաջ, հալվում մոմի պես...

Անկասկած, բգեշխի դավանափոխությունը և ուրացումը նրա վրա էլ էր ազդել, ինչպես մյուսների։ Սակայն Բրաբիոնը այդ ցնցող երևույթն ու հետևանքները իր սրտի՝ միջով էր տարել, քանի որ տառապում էր կրկնակի՛. նախ՝ իբրև ճշմարիտ ու հավատավոր քրիստոնյա, ապա՝ Շուշան-Վարդենիի, իր՝ գրեթե հոգեոր դստեր, խորտակվող կյանքի ու ճակատագրի առումով։ Որքան էլ որ նա ճգնում էր զվարթերես ու առույգ երեալ Շուշան տիկնոջ աչքին, ներսից սիրտն արյուն էր լալիս։ Շուշան-Վարդենիի ինքնակամ մեկուսացումից հետո նրա տանը ծավալվող հետագա դեպքերը ևս ցավեցնում էին Բրաբիոնի հոգին։ Պարսիկ մոգերի անարգել անցուղարձն ամրոցում, նրանց բացեիրաց ինքնավստահ, երբեմն էլ ամբարտավան կեցվածքը ամեն պահի խոցում էին նրա սիրտը։ Հապա նրանց պաշտամունքի ծեսերը, երբ ամեն օր լուսաբացին ողջ ամ-

ըոցով ու բակով մեկ տարածվում էր ... «Ա՛հմի եադ, ա՛հմի Մազդաս... (Ես եմ, որ ես եմ Մազդասոն)»: Եվ այս ամենը կրկնվում էր օրվա մեջ մի քանի անգամ: Տան մեջ վառվող ատրուշանները՝ ա՛ջ ու ահյակ, մոմերի, սրբաշունչ մոմերի վտարումը տնից: Դժվար՝ դժվար էր Բրաբիոնի համար այս ամենի ականատեսը լինելը, ինչ-որ չափով նաև՝ ակամա մասնակցելը: Մի անգամ, ինչպես էր եղել, փոքրիկ Բագրատը մանկական չարաձճիությամբ փչել-հանգըրել էր մանկական սրահում տեղադրված ատրուշանը. ի՞նչ սկսվեց: «Ո՞վ է սպանել կրակը» – ողջ տնով մեկ որոտում էր մոգպետի ձայնը: Զարաչք ու փորձող հայացքով մոգերը հարցուփորձ էին անում բոլորին, իրենց լեզվով Փշացնում, մինչև որ անմեղ երեխան, դեռևս չթունավորված մանկան հոգով խոստովանեց, թե ի՞նքն է արել... Պարսկուհի Աշրաֆը, որ մոգերին ծառայելու պատրվակով էր հայտնվել այս տանը, հետզհետե տիրական հովեր էր առնում, քիչ առ քիչ՝ երեխաների դայակությանն էլ ձեռք գցելով... Հետեւում էր նրանց սննդին և առողջությանը, խաղերին, և ամեն աստծո օր, մազգեզանց կրոնի համաձայն, նրանց պաշտամունքի էր կանգնեցնում և հետեւում էր, որ ամեն ինչ տեղը-տեղին անեն: Երեխաներն արդեն պարսկական հանդերձանքով էին, և երբ Աշրաֆի ու մի տղամարդ մոգի հակողությամբ ու գլխավորությամբ աղոթք էին անում ծնկաչոք..., Բրաբիի սիրտը կտոր-կտոր էր լինում, իբր թէ՛ այդ մանկանց առաջվա դայակի, թե՛ նրանց մոր անօրինակ տանջանքի համար...

Ի՞նչ սիրով ու գուրգուրանքով էին մեծացնում այս երեխաներին՝ Մանեին, Հերակլին, Սահակին (որն արդեն չկա՛ր...), Բագրատին, նրանցից յուրաքանչյուրի հետ ասես նորի՛ց ծնված լինելով, նորից նոր մեծանալո՛վ, նրանց հիվանդություններով «հիվանդանալո՛վ», նրանց լացին ու

ծիծաղին խառնվա՛ծ լինելով... Անցավ այդ ամենը, անցա՛վ: Հիմա Մանեն, սրբանկարի պես գեղեցիկ ու անուշիկ իր Մանե՛ն, օրավուր նմանվում էր... պարսկուհու: Նրան, եղբայրներից առավել, նույն սեռից լինելու առանձնաշնորհով, Աշրաֆ կոչեցյալը իր կողմն էր գրավել... Երբ Բրաբիոնը դայակի իր նախկին իրավունքի բերումով ինչ-ինչ խորհուրդ կամ խրատ էր տալիս նրան, կամ՝ որևէ բանի միջամտում, Մանեն լռում էր և օտարոտի հայացքով նայում իրեն...

Այն հազվադեպ հնարավորություններից մեկի ժամանակ, երբ բղեշիր բացակայում էր Յուրտավից զորական գործերով, Բրաբին կարողացավ (պահակներին կաշառելու միջոցով) թափանցել Շուշան-Վարդենիի հյուղակը: Երբ ողջագուրգեցին, լացին ու դատարկեցին հոգիներում կուտակված ցավը, Բրաբին պատմեց և Աշրաֆի մասին, թէ նա ինչպէս է երեխաներին շուրջկալել...

Շուշան-Վարդենին լցվեց. «Ես գիտեի՛, Բրաբի, գիտեի, զգո՛ւմ էի, որ այդպես պիտի լիներ, և հիմա, իմացի՛ր (այդ ամենը այստեղից տեսնում եմ, չէ՞), սարսափելի՛, չարագուշա՛կ, ծա՛նը բան պիտի ասեմ. զավակներիս պարսկացումը տեսնելով (Սահակ Պարթևի զարմի, Վարդան Մամիկոնյանի թոռների...), ի՛մ հոգեհատորների, ես էլ ասես օտարգո՛ւմ եմ նրանցից: Միայն քեզ եմ ասում այս, լսու՞մ ես, ինքս ինձ էլ չեմ ուզում խոստովանել, բայց այդպես է, վա՛յ ինձ, կորցնո՛ւմ եմ զավակներիս: Եվ գիտե՞ս, հիմա ինձ թվում է, թե բարին այն էր, որ (ների՛ր ինձ, Տե՛ր Աստված) Սահակս... ջրամո՛ւյն եղավ իր անարա՛տ, նախնակա՞ն վիճակում, և մյուս զավակներիս հետ այսօր չի պղծվում...

Երկար լաց եղան ու մորմոքեցին Շուշան տիկինն ու Բրաբիոն դայակը, հետո հիշողության կածանով հին, լավ

օրերի գիրկը գնացին (իսկ դա ո՛ւժ էր տալիս), վայելեցին միմյանց ներկայությունը, չիմանալով, որ դա իրենց վերջին հանդիպումն է:

Մի քանի օր անց, այլայլված, իրեն կորցրած ներս ընկալ էթերին, գուժելով Բրաբիոնի մահը: Քնել, չէր արթնացել, չնայած նախորդ օրը վիճակն այնքան էլ վատ չէր: Շրթունքներն ու աչքերը կապույտով էին շրջանակված... Պատահական չէ, որ երկուսն էլ, թե՛ էթերին, թե՛ Շուշան տիկինը մտածեցին (մտաբերելով մանավանդ Բրաբիի օրը օրին հալումաշ լինելը...), թե, շա՞տ հավանական է, և Աստված մեղք չհամարի, դայակ Բրաբիոնի վախճանի հանգամանքը թունավորման է նման...

Էթերին փնտրում էր Բրաբիոնի գիշերվա ջրի բաժակը (խեղճ կինը սովորույթ ուներ մի բաժակ ջուր դնել մահճակալի կողքի սեղանիկին, որ խմում էր գիշերվա ժամերին), և այդպես էլ չգտավ:

Բրաբիոնի թաղման հարցն այնքան լրջացավ, որ Շուշան տիկինն անձամբ խառնվեց խնդրին: Բոլորը քարացան, երբ սև, հնամաշ պարեգոտով ու շղթայակապ ներս մտավ Շուշան-Վարդենին: «Թող ո՛չ ոք չհանդգնի ճշմարիտ քրիստոնյա և հոգեշունչ հավատացյալ իմ Բրաբիոնին մոտենալ իր անլվա թաթերով..., — գոչեց նա, մոտենալով դագաղին:

Բդեշխը զինավարժությունների էր գնացել, և նրա տանն ապրող մոգերը, որ ձեռ ու ոտ էին ընկել դայակին պարսկական ծեսով ու արարողակարգով թաղելու, Շուշան տիկնոջ այս արգելանքից հետո պապանձվեցին-մնացին, քաշվելով մի կողմ: Շուշան-Վարդենին տնօրինեց, որպես զի Հակոբ երեցը գա մի այլ քահանայի հետ. ըստ պատշաճին հոգեհանգստյան արարողությամբ արժեվորեցին դայակ Բրաբիոնին և նրան պատրաստեցին երկրորդ՝ հոգեռոր

կյանքի համար:

- Մի՛ լքիր ինձ, Բրա՛բի, այսուհետև գեթ երազո՛վ արի,
- Հուզվեց սովորաբար անկոտրում ու տիրական բնավորությամբ հորը հիշեցնող Շուշան-Վարդենին, – ինձ մենակ մի՛ թող, Բրա՛բի, այս... օտարացման մեջ:

ՎԵՐՀՈՒԾ

Այդ օրը Հակոբ երեցը այլայլված էր: Բրաբիոնի թաղումից հետո զինավարժություններից տուն դարձած Վազգեն բղեշխը, իմանալով թաղման մանրամասները, և այն, որ Շուշան-Վարդենին արգելել էր հանգուցյալին պարսկական ծեսով թաղելու, հերթական անգամ վայրենաբարո ծեծի էր ենթարկել նրան:

Տեսնելով Շուշան տիկնոջ արյունլվա ձեռուոտը, խոշտանգված դեմքը՝ պատռված շրթունքով, նա լաց եղավ: Շուշան-Վարդենին լոելյայն նայում էր նրան, ապա խոսեց խորունկ, հոգու խորքերից եկող ձայնով:

– Մի՛ տրտմիր, – ասաց, – ես, թերևս, գոհ եմ այս ամենի համար. կավե այս սափորը, որ մարմինս է, հատնումսպառվում է այսպես փշրվելով, զորացնո՛ւմ է սակայն Հոգի՛ն: Հավատա՛, Տեր հայր, օրեցօր ինձ առավել ուժեղ եմ զգում, թեև, այո՛, վերքերս ցավո՛ւմ են, ցավո՛ւմ են... Հոգուս ցավն ավելի՛ն է, համեմատել իսկ չի լինի:

Ահա թե ինչ եմ ուզում պատմել հորս՝ սպարապետ Վարդան Մամիկոնյանի կյանքից: Տարինե՛ր առաջ, քուշանների հետ կռվի օրերին է եղել այս դեպքը, հայտնի Մահվիռոտի ճակատամարտից հետո: Սպարապետ Վարդանը հայոց այրուձիով կռվում էր պարսից կողմից: Հայտնի է, որ կռվի ելքը վճռում է հայրս՝ քուշաններին ներքաշելով անապատի խորքերն ու հաշվեհարդար տեսնելով

նրանց հետ։ Ճակատամարտից հետո նյուշապուհ քաղաքում հավաքված պարսից մեծամեծերն ու կռվի մասնակիցները խոսում են ուզմական անցուդարձիա և մարտի հաղթական ելքը վճռորոշած հայոց սպարապետի մասին, գորվում են հայոց այրուծին։ Հայրս էլ այնտեղ է լինում բնականաբար։ Պարսից մեծամեծ զորականներից ոմանց հաճելի չէր այդ, քանի որ հայտնապես մեջտեղ էր բերում նրանց ուզմավարական անկարողությունը... Նրանցից մեկը՝ Նուշիրվանը, չկարողանալով զսպել ներքին անբարեհաճությունն ու նախանձը, պոռթկում է. «Մենք Վարդանին սիրում ենք նրա համար, որ Վարդանը հայի նման չէ»։ Այս ասելն է լինում, սպարապետ հորս շառաչուն ապտակն իջնում է զազրախոսի դեմքին։ «Ապիրա՛տ, — գոչում է նա, — հերիք չէ՞ հաչես հայի վրա»։ Ամենքը խառնվում են իրար, ոմանք սպարապետին են զսպում, մյուսները ջանում են Նուշիրվանին հեռացնել։ Այս թոհութոհում նզովյալ Նուշիրվանը փրփուրն ի բերան գոռում է. «Հիմա ես լուրը կտանեմ Հաղկերտին»։

«Ես էլ հենց դրա՛ համար կերցրի, — հետեւում է հորս պատասխանը, — որ լուրը տանես, ու նա էլ իմանա։ Թողամենքն իմանան, որ հայը հայի է նման և ո՛չ պարսիկի»։

— Ես ա՛յս հոր դուստրն եմ, տեր հայր, ի մտի ունեցիր սա, և իմ հոգին էլ նրանից ժառանգած հավատի ուժով է սնվում։

Լոեցին։ Հակոբ երեցը կռացավ, բռնեց Շուշան-Վարդենիի ձեռքն ու համբուրեց լոելյայն։ Ապա խոսեց. — Ավելի՛ն պիտի ասեմ պատվարժան տիկնոջը. ինչ սպարապետ Վարդանն արեց սրով ու քաջությամբ՝ նահատակվելով վասն ճշմարիտ հավատի ու հայրենյաց, դուք կատարում եք ձեր անձո՛վ, ողջակիզվելով իբրև անարատ մի մոմ՝ Քրիստոսի օրհնյալ խորանում...»

ԾՈՒԾԱՆ ՎԱՐԴԵՆԻԻ ՀԻԾԱՏԱԿԱՐԱՆԸ (...արդեն չեմ հիշում որերորդ օրն է)

Կորցըի Բրաբիոնին, իմ սիրելի դայակին, կյանքիս լավագույն ժամանակի ուղեկցին, որն իր հոգեռոր պաշտպանությամբ ինձ գոտևորեց, ո՛ւժ տվեց դժոխային այս օրերում:

Օրհնյա՛լ լինես, Բրաբիոն, օրհնյա՛լ լինես, որովհետեւ ինձ համար կրկնակի թանկ ես նաև հորս և մորս հավատարիմն ու սիրելին լինելու հանգամանքով։ Տեսնես ե՞րբ կհանդիպենք, Բրա՛բի, իմ լա՛վ, համբերատա՛ր, թշնամու սրից ընկա՛ծ զինվոր։ Կասկածներս հետզհետեւ ամրացան. այս Աշրաֆ կոչեցյալը (անշուշտ, ո՛չ մենակ...) կերակնրան գլուխը, կթերին էլ նույն կարծիքին է։ Հակոբ երեցն էլ։ Ի՞նչ դժվար է, երբ միտքդ զորեղ է, բայց ձեռքդ՝ կարճ, այն ի բարին օգտագործելու համար։ Ի՞նչ դժվար է կապված ձեռքերով նստել այսպես, երբ շա՛տ բան ունես անելու...

...Եվ ա՛յս պահին, երբ Բրաբիոնի կորստով մի անգամ էլ որբացա, Վազգենը, ամուսինս համարված, կրկին հոշոտեց ու բզկտեց ինձ, որ հանդնել եմ մինչև հոգու խորքը քրիստոնյա Բրաբիոնին թաղել... քրիստոնեակա՛ն ծեսով։ Հապա՞... Արժանավո՞ր հոր՝ Աշուշաբդեշի, անարժա՛ն, օտարամո՛լ, դավաճա՞ն, ուխտանե՞նդ որդին, որն իր ուրացումով անարգեց նախ հո՛ր հիշատակը։

Եվ սա այն մարդն է, որն ինձ սիրո՛ւմ էր իրը երեկ... Եթե այսպես ոսկորս է կրծում ինձ սիրո՛ղը, ապա օտարն ինչեր չի անի։ Գայլե՛ր, գայլեր են աջ ու ահյակ...

...Տե՛ր իմ, ահա, հիմա հեկհե ներս ընկավ կամավոր

կերպով ինձ ընկերակցող Հույս շնիկը։ Կշտանալով բառում, ինձ էլ մի կտոր ոսկո՞ր է բերել…

ՕՐ ... Ի վերջո, երկրային այս կյանքում բոլորն են ապերջանիկ, մազի՛ց կախված առողջությամբ, ակնթարթի՛ն միայն տեր։ Ահա մեծահարուստ, գոռող, ամբարտավան Շալվա իշխանը, ծայրեծած՝ յլ ապահով, սակայն ծանր, մահացու հիվանդությամբ է տառապում, և նրան քիչ ժամանակ է մնում ապրելու։ Այս ամենը նրանից է, որ մոռացել և մոռանում ենք Աստծուն, այսինքն՝ մարդ մնալու գլխավոր արժեչափը։ Հիրավի. «Մարդ կամենում է, Աստված տնօրինում»։ Քանի՛-քանիսն էին նախանձում Շալվայի հարստությանը. հենց Վազգենն էլ, քանի՛ցս ատամները կրծտելով նկատել է, թե Շալվայի ունեցվածքը, որ պապերից է եկել, որդոց-որդի չէ՛, ծոռից-ծոռ էլ ուտեն, չի՛ սպառվի։

...Շնչելը, ապրելը, գոյությունը պահպանելը դժվարացել է, որովհետև մարդն այլևս չի՛ հավատում մարդուն, գիտե, որ մեծ մասի համար որոշիչը հարստությունն է, փողը, ինչքը։ Այս էլ կա, եթե մարդը չի դիմանում փորձությանը, ուրեմն մինչ ա՛յդ էլ կայուն չի եղել իր հավատամքի մեջ. ահա «իմ» Վազգենն էլ ուրեմն, չորս երեխաներիս հա՛յը, որ մշտապես և ամեն ինչում փնտրում էր իր գայլաբաժի՛նը (թեկուզ պարսից արգահատելի արքայի գարշապարը լիզելու գնով, մինչև իսկ դավաճանություն անելու, հավատանենդ լինելու չափ), գա՛յլ է եղել ուրեմն գայլերի մեջ։ Ինչի՞ է ձգտում, ի՞նչ չունի։ Սատանայական ի՞նչ կիրք, հանապազ ավելի ու ավելի դիզելու, կուտակելու։ Մյուս կրքերը ևս... սատանայակա՞ն, պղծաշո՞ւնչ, եղկելի՛... Օչ Վազգեն...»

ՕՐ ... ԵՐԵԿ գիշերամուտին, ԵՐԲ օդում հովի պես թեթև մի բան կար, այնպես ուզեցի քայլել, երկու-երեք քայլ անել գետնին, հողի վրա... Բդեշխը որսի էր գնացել իր նմանների հետ, իր գիշատիչ բարքը բավարարելու... Պահապաններին խնդրեցի թույլ տալ, թեկուղ այս շղթաներով ծանրաբեռ, մի քայլ անելու: Նայեցին իրար մի երկու վայրկյան ու գլուխները կախեցին: Ավելի երիտասարդն ասաց. «Բայց ո՞չ ոք չիմանա՛, տիկին... Եթե բգեշիս ականջն ընկնի, գիտե՛ք ինչ կանի մեզ, ուրեմն՝ այդպիսի բան չի՛ եղել, դուրս եկեք, քայլեք...»:

Տե՛ր իմ, ինչ կատարվեց. քայլելիս երերում էի, ոտքերս բռնվե՛լ են այս երկարատև անշարժությունից, այդքա՞ն երկար ժամանակ չքայլելուց... Մի քանի քայլ հազիվ արած՝ ծունկի եկա հողին. խոնարհվեցի շնչելու նրա բույրը: Ի՞նչ շքեղ գունահանդես է շուրջբոլորը, տերևի ու խոտի սոսափյո՛ւն, նաև՝ չորացած խաշամի բույր, Հողի՛, Հողի՛ բույր: Աշնան օրեր են: Մրգի բույրեր, հողի տնքո՛ցը երկունքի ցավից... այսքա՞ն ծառերի պտղաբերումից: Ի՞նչ գեղեցիկ է աշխարհու, Տեր: Հատուկ խոնարհում հողին, մեր ամենամեծ Մորը. չէ՞ որ մահից հետո, երբ բարեսեր հոգին դեպի երկինք է սավառնում, մեր երբեմնի սիրված ու փայփայված, խնամված ու գուրգուրված, և, ի վերջո, հոգնա՞ծ ու չարչարված մարմինները մայր Հողում են հանգրվանում, նրա ամենահաս, ամենասեր, ամենքի համար բաց ու արդար գրկում: Ամենաշնո՞րհ գրկում: Հրեշտականման անմեղ մանուկն ու մարդակուլ սրիկան ապաստան են գտնում Հողի նո՞ւյն ողորմած գրկում: Որպիսի՛ մեծ Սիրտ, որպիսի՛ աստվածային սեր... Օրհնա՞նք քեզ, Տեր... Օրհնա՞նք, ողորմա՞ծ, օրհնա՞նք, Ամենակարո՞ղ...

Երեկ նորից եկել էր բորոտ «պարսկուհին», իրականում՝ մեր հայուհի Նազիրեն, արդեն գիտեմ: Երկար մնաց ինձ

մոտ, փոքրիկ այս հյուղակում: Ես աղոթում էի նրա համար, իսկ նա կուց-կուց արյուն էր լալիս... Անցյալ անգամ՝ ոչ, բայց երեկ, քանի որ երկուսով էինք, և նա նստել էր ինձ ավելի մոտ՝ նեխող մսի ծանր գարշահոտություն զգացի... Նրա շքեղ հագուստը, ընտիր օծանելիքը անկարող են քողարկելու մեռնող, քայլայվող կիսամե՛ռ մարմնի, մահվա՛ն հոտը: Մահվա՛ն հոտը: Ամեն մահ չէ, որ գարշահոտ է, ամեն մահ չէ, որ դժոխային ցավերով է ուղեկցվում: Մահեր կան, որ երկնային պարգև են՝ երազելի՛ մահեր... Մահեր կան, որ փրկությո՛ւն են...

Օ, թշվա՛ռ իմ ամուսին Վազգեն, ի՞նչ դժոխային տանձանք է սպասում հանցապարտիդ մահվանից հետո... Ո՛ղջ մեր Յուրտավ գյուղաքաղաքը այս մասին է խոսում: Ո՛ղջ Յուրտավ քաղաքը ամոթահա՛ր է քեզ նման անառակ զավակ ունենալու համար: Երանի հրա՛շք լիներ, փոխվեիր, դարձի՛ գայիր...

ՕՐ ... Նկատեցի, որ Հույսը վեր նայելով անընդմեջ հաշում է. հյուղակիս բացվածքից նայում եմ մեր տան (ոչ, իմ նախկի՛ն տան), քարակոփ ամրոցի վերին հարկի պատշգամբի բազրիքին փովել-նստել է մեր Թուշիկ կատուն: Բազրիքը լայն չէ, մի ափաչափ, Թուշիկը՝ չաղլիկ ու խոշոր, այնպես որ թվում է, թե ամեն վայրկյան կարող է ընկնել: Բայց, տեսնում եմ, թե ինչպես հանգիստ ու խաղաղ է տեղավորվել, ասես գետնի վրա լինի: Դեռ վա՛ր է նայում, շարժվում կողքի՝ հանգի՛ստ, անտարբե՛ր: Մինչդեռ վար նայելիս զգում եմ Թուշիկի կանաչ աչքերի ուղղվածությունը, հայացքում հայտնվող տագնապի չասեմ, զգոնությա՛ն ցոլքը, ուրեմն գիտե՛, զգո՛ւմ է, որ սովորականից բարձր վայրում է գտնվում: Նայում եմ նրան ու թվում է, թե ուր որ է կընկնի, չընկնի^o, մտածում եմ: Այս էլ եմ հի-

շում, որ այսքա՞ն տարիների ընթացքում երբե՞ք չի ընկել այդ պատշգամբից։ Առաջներում ուշադրություն չեմ դարձրել, հիմա, ահա, այս հյուղակից որքան պարզ է երեսում, թե ի՞նչ ուժ կա այս էակի մեջ։ Մենք՝ մարդիկս, կարո՞ղ ենք այդպես։ Միայն երկա՛ր ժամանակ մարզվելուց հետո լարախաղացները կարող են հմտանալ, բայց էլի ոչ այդքան ու այդ չափի։ Թուշիկս՝ մոխրագույն, ասես տաք մորթու մեջ ընկղմված բրդոտ մեծ գլխով, զմրուխտե աչքերի փայլող ուլունքներով, փուզած բազրիքի հենց եզրին, և պե՛տքն էլ չէ, մերթ նիրհում է, մերթ աչքերը բացելով՝ զննում շուրջը։ Աստվածաստեղծ բնություն, խոր ու անեղբ բնություն, անըմբոնելի լինելու չափ պա՛րզ, միաժամանակ բարդ են խորհուրդներդ։

Այ քեզ բա՛ն. ահա նորից ներս ընկավ Հույս շնիկը, էլի՛ ոսկոր է բերել։ Զարմանալին այն է, որ ատամներով ոսկորը բռնած՝ դունչը պարզում է ինձ, աչքերով էլ հասկացնում, թե՝ վերցրո՛ւ։ Լրիվ հասկացնում է, թե ինձ համար է բերել… Թփիթփացը նրա սառած մեջքին, շոյեցի ականջատակերը (որ շներն այնքան սիրում են) և շեշտելով խոսքս, ասացի. «Հո՛ւյս, իմ լա՛վ շուն, շնորհակա՛լ եմ, ի՞նքդ կեր, ի՞նքդ»։ Այս խոսքերիս վրա կենդանին աշխուժացավ և կենտրոնացավ ոսկորի վրա։

Վաղուց նկատել եմ, որ մարդկանց մեջ էլ կենդանական շա՛տ բան կա։ Սիրած ուտելիքը վայելելիս (մանավանդ, եթե քաղցած է), մարդ-արարածը նույնպիսի մոլեգին եռանդ է դրսեռում. աչքերը փայլում են, ատամները՝ կրծտում, արագ-արագ կլանում է ուտելիքը։ Ախորժակ բառն այստեղ շատ է աննշան. սա ուտելու-վայելելու կենդանական կիրք է, նաև՝ կենսաբանական։ Եվ որքան շատ է խժուում, այնքան ծարավի՛ է դառնում խժուելու…

ՍՐԾԻ ՄՅԱԿԻ ԿՈՂՄՈՒՄ

«Այս Վազգենը քանի գնաց այնքան տկարամիտ դարձավ, չի՝ մտածում արդյոք, որ այսքան արգելանքի մեջ Սև Հոռովիի անարգել ելումուտը մտքիս մեջ բացեիբաց կասկած է հարուցում, որ այդ կինը հատուկ ցուցումով է դալիս: Երեխան՝ իսկ կհասկանա», – մտորեց Շուշան տիկինը, տեսնելով, թե ինչպես գող կատվի զգուշավոր քայլվածքով բակ մտավ Սև Հոռովիը: Այդպես էլ է՛ր: Սև Հոռովիը եկավ, կանգնեց Շուշան տիկնոջ հյուղակի առջեւ, կիսաբաց արեց կախված փսխաթն ու արհեստական ժաղիտով դիմեց Շուշան-Վարդենիին.

– Պայծառափայլ տիկին Շուշանին ողջույն:
– Ողջույնդ ի բարին, – արձագանքեց Շուշան տիկինը:
Սև Հոռովիը շտապով սողոսկեց և հոգնած փովեց հողե հատակին:
Է՛, Շուշան տիկին, – ասաց, – ինձ ինչու՝ չես սիրում՝
+ չգիտեմ, բայց նախկին տիկին Շուշանից ի՞նչ է մնացել: Պայծառափայլ... Սիրտս ցավում է քեզ համար:
– Այդ ասելու համա՞ր ես եկել, – քմծիծաղեց տիկինը:
– Զէ, այդ չէ՛, ուրիշ բան: Իմացած լինես, տիկին, որ Աշրափ կոչեցյալ այս պարսկուհին Վազգեն բգեշխի անկողինն է կիսում: Դրա համար էլ վատացել են էթերիի հետ:
Որովհետև էթերին էլ...

Լոռություն տիրեց:

Շուշան-Վարդենին անթափանց դեմքով նստել էր առաջվա պես, ասես չէր էլ լսել Սև Հոռովին: Վերջինս անհարմար կացության մեջ ընկավ, քանի որ անարձագանք մնաց:

— Հոռո՛փ, — ծանր արտաքերեց Շուշան տիկինը, — ուզածդի ի՞նչ է, ինչու՞ պոկ չես գալիս ինձանից: Աշրաֆը նեղացրե՞լ է քեզ:

— Աշրա՛ֆը, նա ո՞վ է, որ ինձ նեղացնի, տիկի՞նս, նա ո՞վ է այստեղ, երեկ է մեջտեղ եկել, իսկ Հոռովիին ամբողջ Ցուրտավը գիտե հարյուր տարի... Մի՛ կարծիր, որ... Ասած ճշմարիտ է: Էժթերին էլ...

— Եթե ճշմարիտ էլ լինե՞ր, ինչու՞ ես եկել և ինձ ասում այդ ամենը, ասա՛, ինչու՞... Երբ Վազգեն բղեշխը ամենաթա՞նկ բանն է ուրացել՝ Հավատն ու Հոգին, նրա մարմնի՞ կորուսը պիտի սգամ... Ի՞նքն է դրդել, որ զաս ու պղտորես ինձ, գեթ մի անգամ ճշմարիտն ասա ի սե՛ր Աստծո: Նա չի՛ իմանա, ճշմարի՞տն ասա:

— Ինչպե՞ս ասեմ, Շուշան տիկին, ես ինքս մտածեցի, որ շատ բան չգիտես տան անցուղարձից՝ այսպես փակված..., — ծամծմեց Սև Հոռովիը, — ինքն ինչու՞ պիտի ինձ ասի, կամ ես որտեղի՞ց պիտի նրան տեսնեմ... Բղեշխն ամբողջ ժամանակ զորական գործերի մեջ է...

Շուշան-Վարդենին մտովի ուրիշ տեղ էր, իր երեխաների մոտ՝ տեսնես հիմա ի՞նչ են անում...

Այդ պահին ո՞ղջ ամրոցով ու բակով մեկ արձագանքեց մոգերի արարողական մեղեդին՝ «Ա՛հմի եադ, ա՛հմի Մազդաո...»: Աղոթքի ժամ էր:

Սև Հոռովիը փորձող հայացքով նայում էր Շուշան-Վարդենիին: Վերջինս աչքերը հառել էր անհայտին, ասես ինքը չկար այդտեղ, բացակա էր: Լոռությունը խախտողը էլի Հոռովիը եղավ.

— Ասում են՝ բորոտ պարսկուհին՝ Նազիրե խանումը, սկսում է լավանալ, հա՞՝, —հարցրեց: — Հնարավո՞ր բան է:

— Նոր Կտակարանը չե՞ս կարդացել. նաև բորոտների բժշկումը Հիսուսի կողմից: Աստծո համար անհնարին բան

չկա, – հայացքը Սև Հոռովիին ուղելով ասաց Շուշան-Վարդենին: – Գնա՛, կարդա՛ Սուրբ գիրքը: Հոգուդ մասին մտածի՛ր, գնա՛:

Հոռովիը վեր կացավ: Գնալու պահին ուսերին գցած ծածկոցի տակից ինչ-որ բան հանեց, նաև՝ փոքրիկ մի ծաղկեփունջ դաշտային ծաղիկներից...

– Այդ ի՞նչ է, ուտելի՞ք, հետ տար, իսկ ծաղիկների համար չնորհակա՛լ եմ, – գրեթե հուզվեց Շուշան տիկինը: – Ծաղիկնե՛ր... իմ այս վիճակում, գնա՛ Հոռովի, բարին ընդ քեզ...

Սև Հոռովի գնալուց հետո թերևս ծաղիկնե՞րն էին պատճառը, թե՞ լսածը, որ Շուշան-Վարդենին իրապես հուզվեց, կնոջական խոցված հպարտությունը եփ եկավ նրա կրծքի տակ հին օրերի սիրո ծարավով...

Էթերիի մասին գիտեր. դայակ Բրաբիոնն էր ասել, միաժամանակ խորհուրդ տալով, որ չիմանալու դնի. մեկ է, Վազգենը ուղղվողը չէ, իսկ էթերին այս խառնակ օրերին նեցուկ է իրեն այսպես թե այնպես: Ճիշտ էր Բրաբին, և Շուշան տիկինն այդպես էլ վարվեց: Բայց ահա Սև Հոռովի անփակ բերա՛նն է ընկել այդ խոսքը: ...Ա՛յն ժամանակ, երբ Բրաբիոնը հայտնել էր Շուշանին, թե ակամա բռնեցրել էր Վազգեն բդեշիխին ու էթերիին, Շուշանը շա՛տ բան էր հասկացել: Պարզվում է, որ Վազգենը չի խնայել հարազատ եղբորն անգամ. չէ՞ որ էթերին խոստովանեց, թե ինքն ու Շուշան տիկնոջ տագրը՝ ջոջիկ իշխանը, սիրում էին միմյանց...

Շուշան տիկինն այդ պահին այնպե՛ս ցավագին վերապրեց Բրաբիոնի կորուստը: Լինե՛ր հիմա, լինե՛ր, պահակներին կաշառելով գիշերամուտին մոտը գար իր առանձնությունը ջերմացնելու...

...իսկ Աշրաֆի պատմությունը նորություն էր, թեև նոր

բան չէր վկայում. Վազգենի հոռի, վավաշոտ նկարագիրն ու բարքը նորություն չէին. Շուշան տիկնոջ ականջին շա՞տ բան էր հասնում նրա դրսի՝ արկածներից առաջ էլ... Ի վերջո, պարսկացման գնալու հրեշավոր շարժառիթը՝ հարազատ դստերը տիրանալո՛ւ... ծայրակե՛տը, գագա՛թը չէ՞ր Վազգենի հոգեստ անկման...

Իսկ այս օձեղե՛ն Աշրաֆը, որ գեռ հո՛գ էլ է տանում իր մասին...

Եվ էլի՛ մի խոց ու հարված Վազգենից եկած, այն էլ՝ ի՛նչ հարված: Շուշան-Վազգենին ինքն իրեն մտորում էր, թե իր իմացածն ավելին է Վազգենի պղծության մասին: Իր չարաղետ ուրացման այս երկույթին ավելի հուսալի և ամուր կերպարանք տալու համար պարսից արքայի աչքին, Վազգեն բղեշխը, տեր իմ, պարսկուհի կին է ուզել արքայից: Նա էլ հարմար է գտել, ոչ ավելի, ոչ պակաս, իր կնոջ մո՛րը (զոքանչին) մատուցել բղջախոհ բղեշխին:

Որքա՛ն ընկավ այս մարդը... Իսկ ինքը մինչեւ վերջերս սիրո՛ւմ էր նրան, գեռես սիրո՛ւմ էր...



«ՄԻՌԱԿԱՆԷՔ ԶՄԱՐԳԱՐԻՏԱ ԶԵՐ ԱՌԱՋԻ ԽՈԶԱՑ»

Աբեսալոմ իշխանը Ցուրտավ քաղաքի երևելիներից էր. տուն-տեղ, կալվածք, պապական ժառանգություն։ Ասում էին, թե նրա կինը՝ Մաղվալան, հռոմեական Ներոն կայսեր կնոջ՝ Պոպպեայի պես, կաթով է լողանում ամիսը մեկ՝ իր ճերմակ, մետաքսյա մաշկը թարմ պահելու համար։ Իրողությունն այն էր, որ վերջին շրջանում Աբեսալոմ իշխանը փոխվել, հունից դուրս էր եկել, առաջվախոհեմ ու ծանրաբարո մարդը չէր, որ զրուցակցի տասը խոսքին մի պատասխան էր տալիս։ Այն Աբեսալոմը, որ ինչ-ինչ, բայց իր լումայի գինը լավ գիտեր, սկսել էր տեղի-անտեղի փող բաշխել սրան-նրան։ Նաև սկսել էր կերուխումե՞ր, հացկերույթնե՞ր տալ, խրախճանե՞լ, ասես դրանց վրա ծախսվող փողը նեղություն էր տալիս իրեն։ Զարմանում էին, զարմանում էին, զիսունյոթ տարին էր բոլորում, երբ այդ պատմությունն սկսվեց։ Սեղանակիցների հաճկատար խմբով շրջապատված Աբեսալոմը արդեն երկու-երեք տարուց ի վեր խրախճանքների մեջ էր, երբ այդ գեպքը պատահեց։

Բնականաբար, երբ մարդուս կենցաղը, բարքը, նիստուկացը փոխվում է, ինքն էլ սկսում է փոխվել՝ ներդաշնակելով այդ ամենին։ Պարզ է, որ հաճկատարների խումբը չէ, Աբեսալոմ իշխանը փոխվեց։ Զուր չէ ասված. «Ասա՛, ո՛վ է ընկերդ, ասեմ՝ ո՛վ ես դու»։ Պատճառ էր, թե հետեանք, չիմացվեց, բայց ուրիշ մի շեղում էլ հայտնվեց Աբեսալոմի կյանքում։ Խեղճ Մաղվալա իշխանուհի. ա՛յդ էլ պիտի տեսներ, արդեն պսակված աղջկա ու տղայի և թոռների տեր։

Նախօրինակը չունեցող բան էր. Արեսալոմը տնից դուրս գտել էր մեկին, կողքի, զարտուղի մի «սեր»: Ավելի շուտ, այդ «սերն» էր եկել-գտել նրան: Նրա ո՛չ պապերի, ո՛չ էլ հոր կենսագրության մեջ նման բան չէր եղել, եթե անգամ եղել էր, թաքուն, խալխի աչքից հեռու և ծածկված: Այնինչ Արեսալոմը խախտվել էր այդ հողի վրա: Այ քեզ բա՞ն: Նախկինում ի՞նքը ուրիշներին կմեղադրեր նման բանի համար:

Շատ հավանական է, որ մանկավիկ հացընկերների էլ սրտովն էր, քանի որ քաջալերելով այդ կապը՝ խրախճանքի առիթներն էին շատացնում: Փաստն այն էր, որ նախկինում պատկառելի այս մարդը կապվել էր ո՛չ ավելի, ո՛չ պակաս, անառակ վարքով քաղաքին հայտնի մեկի հետ, և չէր էլ թաքցնում: Ի՞նչ էր գտել Արեսալոմը մողեսի դուրս պլրծած աչքերով և առանց ծնոտի, մի կարգին մարմին էլ չունեցող այս կնոջ մեջ, հայտնի չէր, իրականությունն այն էր, որ սմբած պոռնիկի փորձված իր միջոցներով սա մտոք և կամոք թմրադեղել էր տարիքն առած մարդուն: Խեղձ Արեսալոմ, որովհետև հիշյալ պոռնիկը շարունակո՞ւմ էր հավատարիմ մնալ իր արհեստին, իսկ թակարդն ընկած Արեսալոմն էլ հավատարիմ էր մնում նրա՞ն: Զէ, ակնհայտ էր, որ խախտվել էր... Վերջնամնաց այդ կնոջ հետ շարունակվող կապի սարդոստայնում Արեսալոմը վերջինիս գերին դարձավ, նույնիսկ խոստովանում էր, թե «վախենում է նրանից»: Է, ճիշտ է ասված, թե մարդուս վերջը բարի լինի: Ընտանիքի խնդրանքով եպիսկոպոս Ափոցը զբուցել էր Արեսալոմի հետ, ասել, որ ամեն ինչին վերջ կա, եղավ՝ թող անցած լինի, բայց ո՛ղջ քաղաքին ի տես շարունակե՛լ այդ ամենը: Բոլորն էլ նկատում էին նաև, որ Արեսալոմը մարմնապես էլ փոխվել էր, ուժասպառ եղել:

Այսպես, մինչև... Մի օր, կերուխումի ընթացքում, հափ-
րացած Աբեսալումը իր հացկատակների և մաշածի հետ
խրախճանելիս, չափն անցնում է, հայհոյում է Աստծուն...
Ներկաները սահմոկած լռում են... Նո՞ւյն օրը, խրախճանքի
ամենամոլեգին պահին Աբեսալումն առաջարկում է ոմանց
իր հետ մտնելու սեփական տան շքեղ ջրավազանը՝ գովա-
նալու: Նախ մաշածն է իրեն նետում ջուրը, դեռ հորդո-
րում է տատամսողներին, ապա՝ Աբեսալումն ինքը... Այդ
նետվելն է լինում: Ներկաները պատմում էին. «Ճիշտ է,
ջրավազանը շատ խորը չէ, բայց փոքր բարձրությունից էլ
մարդ կարող է ընկնել ու վնասվել...»:

Վնասվե՞լ... այն խոսքը չէ: Զուրն ընկնելուն պես Աբե-
սալումը գոռում է և օգնության կանչում... Գինովցած մար-
դիկ, իրիկնամուտ, իրարանցում... Մինչ հրավիրված-բեր-
ված հեքիմը տեղ է հասնում՝ Աբեսալում շարժվե՛լ իսկ չի
կարողանում: Եկած հեքիմը հավաստում է, որ Աբեսալումի
ողնաշարն է կոտրվել, և որ նա առմիշտ անկողնուն գամ-
ված կմնա...»

Երբ Շուշան-Վարդենին լսեց իշխան Աբեսալումի գլխին
պայթած աղետը, դառնացավ. «Աստծո դատաստան չէ,
ի՞նչ է, – ասաց, – և ա՛յս ամենից հետո էլ դարձի չեն դա-
լիս...»: Նկատի ուներ ի՞ր իշխան Աբեսալումին՝ Վազգեն
բգեշխին: «Երբ Հազարավորնե՛ր անգամ ուտելու հա՛ց չու-
նեն և գլխներին՝ ծա՛ծկ, սրանք հարստությա՛ն մեջ, շքեղ
կյանքից հղիանո՛ւմ են, խոտորվում»:

«...Մի՛ արկանէք զմարգարիտս ձեր առաջի խոզաց...»:
Լա՛վ է ասված: Բայց ասողին լսո՛ղ է պետք: Ինքս նույն
կացության մեջ չե՞մ: Ե՛ս, մահկանացուս էլ իմ հերթին
վրիպել եմ, իմ մարգարիտները՝ սերն ու նվիրումը փռե-
լով... խոզի՛ առջե»:

ՄԻ ԱՆԿՐԿՆԵԼԻ ԳԻՇԵՐ

Այդ օրն անձրեւ էր եկել, և հողը թաց էր, ուստի երեան էին եկել նրա՝ նաև խորքո՞ւմ ապրող բույրերը։ Ո՞չ միայն վերգետնյա խոտերի ու ծաղիկների, այլև ընդգետնյա սերմերի ու արմատների՝, նախնյաց խաղաղ փոշիացող ոսկորների հոտը։ Շուշան տիկինը փոքրինչ նիրհել էր՝ գլուխը դրած խոտով լեցուն, մաշկյա փոքրիկ բարձին, երբ մի ծանոթ ներկայության զգացողություն ունեցավ։ Աչքերը բացեց դանդաղ. նրան թվաց, թե երազ է տեսնում։

Երազ չէր. Հյուղակում կանգնած էր Վազգեն բդեշխն ինքը՝ իր ողջ ասպազենով, հաղթահասակ, փոշոտ ու հոգնած։ Նոր էին դարձել հոների դեմ կռվից։ Վազգեն բդեշխն այնքան անհամատեղելի էր փոքրիկ հյուղակին և նրա ճգնակյաց բնակչուհուն, որ մի այլ կյանքի երևույթ էր թվում, տարբեր և օտարոտի։ Շուշան տիկինը գինու թեթևակի բույր զգաց։ Բդեշխը հուզված էր ինչ-որ բանից, բայց ո՞չ այլ անգամների պես։ Նրանից ասես գոլորշի էր ելնում, աչքերը վառվում էին Շուշանին վաղուց ծանոթ մի հրով. զարմանալի բան նա, ամեն անգամվա պես չհայհոյեց ու չգոռդուաց, այլ փորձեց գրկել Շուշան տիկնոջը։ Շուշան-Վարդենին վանեց նրան։

— Ինչու՞ ես տանջում քեզ, Շուշանս, ի՞նչ է լինելու սրա վերջը, այս ի՞նչ ես դարձել։

Նա բռնեց կնոջ ձեռքը, մյուս ձեռքով շոյեց մի սկ, պարզ քուղով ամփոփված նրա մազերը, որ սկսել էին սպիտակել։

— Ու՞ր տարար իմ գեղեցկուհի կնոջը, իմ սիրած, գուրգուրած Շուշանին, իմ երեխաների մո՞րը, կի՞ն, — գոչեց նա լցված...

Եվ սովորաբար գոռ ու անկոտրում, կրակացայտ նրա աչքերից... արցունքներ հոսեցին: Բղեշխն արցունքները չէր սրբում, նրանք հոսում էին բրոնզափայլ այտերով, իջնում թավ մորուքն ի վար: Շուշան-Վարդենին քարացել էր: Մի տեսակ հոգեկան կարկամություն էր եկել վրան, խոսելու ուժ չուներ: ... Շատ էր անսպասելի այս ամենը, շատ անակնկալ...

— Դու քո Հիսուսին ինձանից ավելի[՝] ես սիրում, կյանքիցդ ու զավակներիցդ ավելի[՝]: Ու՞՞ է նա, թող գա ու փրկի քեզ: Եթե դու ինձ ճշմարի՛տ սիրեիր, իմ կողքի՛ն կլինեիր, քո ընտանիքում, երեխաներիդ գլխին... Որբացրե՛լ ես ի՞նձ էլ, նրանց էլ...

Շուշան-Վարդենին արդեն գտել էր իրեն և լուռ դիտում էր ամուսնուն:

Հանկարծ Վազգենը ծնկի եկավ, գրկեց Շուշանի շղթայակապ ոտքերը, որ, ի հավելումն ամենի՝ ուռած-այտուցված էին, և արդեն բարձրաձայն հեկեկաց.

— Ինձ հրե՛շ դարձրիր, հրե՛շ, Շուշանս, այս տանջանքները, որ կրում ես, քո մարմինն են չարչարում, իմ՝ հոգին...

— Հոգի՛ն, — խուլ ձայնով արտաբերեց Շուշան տիկինը, — մի[՝]շտ լսեցի, հոգի՛ն:

— Ճի՛շտ լսեցիր, ե՛ս էլ հոգի ունեմ, գուցե ուրիշ ճարչունեմ և դրա[՝] համար եմ մազգեզանց կրոնն ընդունում: Ինչու[՝] ես դիմադարձում ինձ, ինչու[՝] չես ուզում հասկանալ, որ դժվար է կյանքը, և բարձունքի հասնելը՝ անհնարին, եթե...

— Ես մի՛ բարձունք գիտեմ, — աչքերը վեր հառեց Շուշան տիկինը: — Մի՛ բարձունք, մի՛ հոգի և մի՛ արարչություն...

— Եվ ի՞նչ պիտի տա քեզ քո Արարչությունը, — հեգնեց դառնացած բղեշխը:

— Օ՛, շա՛տ ավելին, քան ատրուշաններով պղծված այս ամրոցն է, կամ էլ՝ պարսից թագավորի զոքանչի հետ քնելը... Եվ ամենայն պղծություն արյունակիցների միջև, և առհասարակ...

Բդեշխը լուր էր: Նրա գինովությունն անցել էր:
Մեկ էլ, որտեղից-որտեղ հերձեւ ներս ընկավ Հույս շնիկը, հյուղակում օտար մարդ տեսնելով՝ սկսեց չարացած հաչել նրա վրա:

— Ինձ օտարի տե՛ղ է դնում, ինձ վրա հաչո՛ւմ է իմ տանը բույն ու հաց գտած այս շունը, — հանկարծ որոտընդուստ քրքջաց բդեշխը, — տե՛ս սրան:

— Ճիշտ այդպես մե՛նք էլ՝ ուրանում, նաև անհարկի հաշում ենք մեզ բույն ու հաց տվողի՝ վրա, պատշա՞ճ է այդ: Դարձի՛ եկ, Վազգեն, դարձի՛ եկ, միգուցե դեռ ուշ չէ: Թողարքայական պատիվներ չլինեն, իշխանականն էլ բավարար է, գոհանանք մեր հացով ու Աստծով, մեր ընտանեկան բույնը թող վեր լինի ամեն տեսակ արքունիքից:

— Ուշ է, Շուշանս, ո՛ւշ է, — զարմանալի հանդարտ ձայնով արտաքերեց Վազգեն բդեշխը, մի անգամ էլ նայելով նրան, ու առանց հրաժեշտի, կռանալով դուրս եկավ հյուղակից:

Ինչ-որ տեղ մոտակայքում սրտակեղեք ճշում էր, ճշում էր աքարը...

ԷԹԵՐԻԻ ՎԵՐՁԻՆ ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Էթերին հիվանդ էր. Էթերի՛ն՝ աներևույթ առանցքը բդեշխական ամրոցի: Էթերին՝ երեկ ո՛ղջ մի համակարգ՝ կյանքի կոչող ամրոցի ներքին անցուղարձը (մաքրություն, լվացք, խոհանոց, երեխաների խնամք), ու նաև դրսի՛,

շրջապատի՝ հետ շփումների հսկող աչքը։ Էթերի ներկայությունն ամրոցում շատ բան էր նշանակում, իսկ Շուշան տիկնոջ ինքնամեկուսացումից հետո՝ առավել ևս։ Մինչ այդ էլ էթերին ավելին գիտեր, քան Շուշան տիկինը իր իսկ տան մասին։ Եվ հիմա էթերին հիվանդ էր։ Սովորական հիվանդություն չէ, ինչ-որ չարաշուք, դժբախտություն գուշակող բան կար նրա հիվանդության մեջ։

Ու՞մ չար աչքն էր դիպել նրան, ու՞մ անեծքը տեղ հասել, որ գեղանի, վառվուն ու գործիմաց այս կինը հանկարծ փոխվեց, դարձավ ասես այլ մի անձնավորություն։ Ի՞նչ եղավ, որ նա՝ արդեն թույլ և ուժասպառ, իր ցավերի մեջ փակված, տեսադաշտից դուրս թողեց բոլորին, բացի Շուշան-Վարդենիից։

Խոսքի արժեքն իմացող էթերին, ի հարկին՝ զվարճախոս ու սրամիտ, դարձել էր դառնահայաց, մտասույզ, սակավախոս։ Արտաքինն էլ փոխվել էր. ճոխ, ոսկեգույն մազերը՝ արդեն սպիտակով ակոսված, նոսրացել էին, մաշկը դեղնել ու թարշամել, սև, խոչոր, խոսուն աչքերը մշուշվել էին հանգուցյալ թրաբիոն դայակի աչքերի նման... Ոչինչ չօգնեց, ո՛չ հրավիրված հեքիմներն ու կախարդները, ո՛չ բուժիչ բույսերն ու հմայիլները։ Ասես անտեսանելի մի ուժ նրան հրում էր դեպի խավարը։ Զեռքերն այնքան էին նիշարել, որ մատանիները վայր էին ընկնում մատներից։ Շուշան-Վարդենին ուշ իմացավ էթերի հիվանդության մասին, քանի որ ամեն ինչի մասին նրան իրազեկողը հենց էթերին էր։ Ազգբում մտածեց, թե գուցե սովորական հոգնածության կամ պաղառության արդյունք է, հետո՝ իմացավ անուղղելին. էթերին ծանր հիվանդ էր, նման հիվանդների համար ասում էին՝ գնացող է...»

Շինծու տիրության դիմակը երեսին մի օր ներս ընկապ պարսկուհի Աշրաֆը, հայտնելով Շուշան տիկնոջը, թե

Հիվանդ պառկած էթերին խնդրում է շնորհ անել այցելելու իրեն:

«Քանի որ Վազգեն բդեշխն էլ այստեղ չէ, հնարավոր է», — ասաց նա արդեն իր սովորած հայերենով: Մինչդեռ խորաթափանց մեկը, որպիսին Շուշան տիկինն էր, վաղուց էր հասկացել, որ Աշրաֆը (լավ կամ վատ...) հայերեն առաջ էլ գիտեր... Շուշան-Վարդենին մի երկվայրկյան նայում էր նրան. հանկարծ նա ամեն ինչ հասկացավ, որ թե՛ Բրաբիոնին, թե՛ էթերիին պատուհասողը նույն ձեռքն է՝ ոճրագործ, օտարադավան այս կինը:

Էթերին, որ դալուկ մի ուրվական էր դարձել, պառկած էր անկողնում: Զափից ավելի նիհարելուց աչքերն ավելի խոշորացել էին, և նրանց մեջ ասես սառել-քարացել էր մի հարցում՝ ինչու՞... Մինչև էթերիի սենյակին հասնելը Շուշան-Վարդենին՝ ոտարորդիկ ու սևազգեստ, իր նախկին տան շքեղության միջով անցավ միանձնուհու պես, արդեն վաղուց օտարացա՛ծ այդ ամենին, ասես խորը, վաղուց տեսած երազի մեջ... Առաջին բանը, որ անցավ նրա մտքով, այն էր, թե երեխաներն ու՞ր են... Ո՛չ էլ ձայներն էին լսվում... Մինչ այս դեպքերը երեխաների անուշ, կարկաչուն ձայներից անմիջապես իմացվում էր, թե նրանք որ սենյակում են: Զուգեց հարցնել Աշրաֆին, բավարարվելով իր մտորումով, թե այս առիթից օգտվելով Աշրաֆը իրեն զրկել է երեխաներին գոնե հպանցիկ տեսնելու հնարավորությունից էլ...

Էթերին պառկած էր գունատ, մեռելատիպ, անշարժ, կողքի սեղանիկին՝ մի բաժակ ջուր, հեռում էր շնչառառությունից, կարծես հոգեվարք ապրող զառամյալ լիներ: Ի՞նչ էր դարձել իր շքեղ էթերին. Շուշան տիկնոջ սիրտը լցվեց, կոկորդը սեղմվեց, բայց նայելով իրեն ուղեկցող Աշրաֆին՝ զսպեց լացը: Հետո նշանացի հասկացրեց, որ նա

Հեռանա: Աշրաֆն «առաջադիմե՛լ» էր փոխանակ լոելյայն հեռանալու, դեռ մի բան էլ դժգոհ դեմք արեց գնալիս: Ահա թե նրա ձեռքերը ո՞նց էր երկարացրել անհեռատես, անհոգի, կենդանական բնագդներով ապրող Վազգեն բղեշիլը, մտորում էր Շուշան-Վարդենին:

Սրտամաշ լոռւթյուն տիրեց: Էթերին փորձ արեց նստելու անկողնում. Շուշան տիկինն օգնեց նրան կիսանստելու՝ բարձերը թիկունքին դնելով:

— Երբվանի՞ց ես այսպես, — հարց ուղղեց նա Էթերիին,
— ինձ չէին ասել:

— Ո՞վ պիտի ասեր, այս թունավոր օ՞ձը, — ի մտի ունենալով Աշրաֆին՝ հեալով խոսեց Էթերին: — Իմ արյունը նրա վիզը, սա նրա՝ արա՛ծն է, Շուշան տիկին: Ճիշտ և ճիշտ ինչպես Բրաբիին, Աստվածա՛ծ իմ...

Արցունքները ծորեցին Էթերիի խամրած աչքերից:
— Գնում եմ այս աշխարհից, տիկինս, և մինչև դրան երեցին կանչելը, որ հաղորդություն տա ինձ, ուզում եմ ինքս խոստովանել ձե՛զ, քե՛զ՝ մեն ու միակիդ, Շուշան-Վարդենիի՞ն: Ես շա՛տ, շատ մեղավոր եմ Շուշան տիկինոջս առաջ, հանցավո՛ր եմ, հանցավոր: Ես արժանի էի մահվան, բայց ո՛չ այս օձաշապիկ կնոջ ձեռքով: Շուշան տիկինս թողիմանա, որ ես տարինե՛ր ի վեր խաբո՛ւմ էի իրեն՝ երիցս անիծյալ Վազգեն բղեշխի այրական կամքը կատարելով... Աշրաֆը նաև... դրա՛ համար ինձ հետ այսպես վարվելուց, որովհետեւ ի՛նքն էլ...

Շուշան-Վարդենին համրացել էր: Կրծքի տակ անհանգիստ տրոփում էր սիրտը, ասես հանցանքը խոստովանողն ի՛նքը լիներ:

— Բայց դա իմ կամքով չէ՛ր, Շուշան տիկինոջս ասեմ, որ ես, Աստված մեղք չհամարի, դեռ սիրում եմ իշխան Զոջիկին առաջվա՛պես, թեւ ո՛չ մի օր մարմնական կապի մեջ

չեմ եղել նրա հետ: Այսպես եղավ: Մտածեցի խղճիս պարտքը տալ Շուշան տիկնոջս... մահվանիցս առաջ:

Հետո չորացած-բարակած ձեռքերով խլեց Շուշան տիկնոջ ձեռքն ու տարավ շուրթերին, երկար ժամանակ համբուրում էր...

— Սրբուհի՛ Շուշան, — ոգեց մահամերձը սրտաբուխ, — ես երջանիկ եմ, որ թեև այսպես մեղափոր, ապրեցի՛ քո՛ կողքին, մաքրվեցի ես էլ, և... վերին դուռն ու բարձրյալի արդար աշյանին ներկայանալու եմ գնում... — լռեց սպասողական...

— Ներվա՛ծ, — վրա բերեց Շուշան-Վարդենին, — ներվա՛ծ, էթերի՛, քո՛ւյրս...

Շուշան-Վարդենին սկսեց աղոթել էթերիի համար: Էթերին միացավ նրան: Աղոթքի պահին հանկարծ երկուսն էլ զգացին մեկի ներկայությունը. դռների մեջ արձանացած կանգնել էր Աշբաֆը՝ լուսումունջ, զարմացած...

Շուշան-Վարդենին հոգաց, որպեսզի Հակոբ երեցը գա և հաղորդություն տա մահամերձ էթերիին: Այդպես էլ արեցին:

Երբ էթերիի դագաղը դուրս էին բերում ամրոցից, հորդանձրեկ տեղաց, ասես սրբել-լվանալու համար ևս մի պատմություն մարդկային դառնաղետ ճակատագրի:

Էթերիի մահից հետո Շուշան-Վարդենին լիովին թևափակ եղավ ու ներամփոփվեց իր մեջ, մենա՛կ մնալով ամրոցում, ի՛ր իսկ տան մեջ, որն արդեն վաղուց օտա՞ր էր, օտա՞ր... Հիմա արդեն իբրև դրսի աշխարհին կապող ճշմարիտ օղակ մնում էր Հակոբ երեցը միայն. հավատարիմ մի հոգի: ...Սև Հոռովին էլ երեսում էր երբեմն, իբրև թե բդեշխից գաղտնի՛, բայց նա ուրի՛շ, ընդհակառա՛կն, խառնակիչը գալիս էր մոլորության մեջ գցելու և պղտորելու իրեն...

ԾՈՒԾԱՆ ՎԱՐԴԵՆԻԻ ՀԻԾԱՏԱԿԱՐԱՆԸ

Ահա վերստին մտանք աշնան թագավորությունը։ Աշնանավերջի տաքչո՛ւնչ, ոսկեհատի՛կ օրեր, ամեն մեկը պարգև՝ մոտեցող ցրտից ու ձմռան հեռապատկերից առավե՛լ թանկացած։ Անցնում, անցնո՛ւմ են օրերը մեկ առ մեկ, մեր նվազող, հալչող, վախճանին մոտեցող կյանքից։ Եվ որքա՛ն քիչ մարդ կա, որ հասկանում է այս խորն ու պարզ ճշմարտությունը, որպեսզի շտապի ապրե՛լ, արարել բարին, լավո՛վ իմաստավորել ու կարեռել կյանքը։

... Դժվա՛ր իմ կյանք, որ երբեմն երանություն ես թվում շա՛տ-շատերի զարհուրելի գոյության դեմ-հանդիման։

Ահա Նազիրե խանումը (Նազելի...) աչքիս առաջ, իր սոսկալի ճակատագրով։ Բայց, փա՛ռք տիրոջը, կարծես վիճակը բարելավվում է, ձեռքերի վերքերից մի քանիսը փակվել-չորացե՛լ են։ Երանի՛ լավանար՝ իր ջահել կյանքի, իր փոքրիկ Լալեի համար, որ անմայր պիտի մնա... Սակայն, չգիտես, երբեմն մահից (համեմատաբար՝ թեթև) չե՞նք փրկվում, ավելի՛ ծա՛նը մահվան բաժին դառնալու համար... երբեմն չգիտես, փրկվե՞լն է լավ, թե՞ չփրկվելը... Եվ ոչ ոք չգիտե, թե ինչ է սպասում իրեն, կամ՝ կյանքի այս կամ այն փուլում ի՞նչ կփլվի իր գլխին։ Հույն մտածողներից մեկի խոսքն է՝ «Մի՛ ասա, թե մարդը երջանիկ էր, եթե նրա վաճիւանը չես տեսել...»

Ահա աղետալի գոյության դատապարտված Աբեսալոմ իշխանը, կամ՝ Շալվա իշխանը, որոնք մինչ իրենց դժբախտությունը սուրո՛ւմ էին Հաջողության խաղացկուն ձին հեծած... ի՞նչ եղավ...

Ցուրտ, անուրած այս կյանքի ու կեցության հոլովույ-

թում մի՛ քիչ, մի՛ նշխարաշափ երջանկություն ես ուզում,
ա՛յն էլ չկա:

Աստծո ստեղծած աշխարհում վատ ենք ճանաչում կենդանիներին, կամ չենք ճանաչում առհասարակ: Բրաբիոնը հանկարծամահ եղավ, մինչ մեկ օր առաջ չույս շնիկը այնպես էր ոռնում, փորձեցի արգելել, էլի՛ ու էլի՛ դունչը վեր պարզած ոռնո՞ւմ էր... Մյուս օրը գումեցին Բրաբիի մահվան բոթը: Կենդանիներն զգում են բաներ, որ մեզ չի տրված հասկանալ ու զգալ: Կենդանիները, ինչպես և ողջ բնությունը, Աստծո սիրելիներն են մարդուց առավել, քանի որ չեն մեղանչում...

Այս արևի տակ ամե՛ն ոք իր վիշտն ունի, ամեն մարդ տանում է իր խաչը: Դրա համար էլ մտածում ես, որ բոլոր մարդիկ, ի վերջո, հարազատներ են, բոլորն էլ ապարախտ ու կարեկցանքի արժանի, քանզի բոլորն էլ խաղալիք են ճակատագրի ձեռքին:

Վերջերս ուրիշ ցավեր էլ եկան լնկերանալու ոտքերիս ցավին, մշտական այս քամուց, որ վզզում է հյուղակում, ձեռքերս ու թիկունքս տանջագին ցավում են: Անշուշտ, այս բանտարկված-անշարժ վիճակն էլ նպաստում է վա՛տ բանի՝ կենդանի, շարժուն մարմնի քարանալո՞ւն: Եվ ցավի ամեն փուլից, յուրաքանչյուր հիվանդությունից ապաքինվելուց հետո, երբ օրը օրին, ժամը ժամին զգում ես ներսումդ կենաց ուժի՛, կյանքի՝ ալիքի վերաբախումը, երբ զգում ես, որ դառնում ես դեպի կյա՛նքը, մեծ ու խորունկ մի երախտագիտություն է լցնում էությունդ՝ առ Բարձրյալն, առ շնորհատուր բնությունն, առ ծակատագիրն, քանի որ լա՛վ գիտես, թե կարող էր և ա՛յլ կերպ վերջանալ: Ի՞նչ թանկ է կեցության, գոյության բոպեն, ի՞նչ մեծ խորհուրդ կա Ապրելու, գոյատեելու, կյանքի և արարումի շղթայում լինելու շնորհի մեջ: Այն էլ՝ ի՞նչ շնորհ... Թեկուզ

այսպես հիասթափված ու երեխաներիցս զրկված, ամուսնու կողմից՝ բազմակի՝ խաբված ու դավաճանված, թեկուզ փողի ու պղծության, ընչաքաղցության ու փառքի տենդի այս քառում, թեկուզ հույսի մի բարակ, երերուն շողի փարած... Երբ գլուխդ բարձրացնում ես և վերում տեսնում ես երկինքը՝ մերժ արևազարդ, մերժ՝ լուսնի ու աստղերի անմեկնելի հեքիաթով լեցուն: Երկինքը, որտեղ պիտի շարունակվե՛ս դու...

Ապաքինում տուր բոլորի՛ս վերքերին՝ հոգեոր ու մարմնավոր, ճյուղն ու ծա՛ռն ստեղծող, երջանի՛կ ու անբա՛խտ դարձնող Արարի՛չ:

ՕՐ ... Խոր աշուն է, ո՛րերորդ աշունն իմ հյուղակում, բանտարկության մեջ, մինչդեռ ոչինչ այնպես չի շեշտում հոգու ազատությունը, ինչպես բանտարկյալ վիճակը: Ամրոցի ողջ բակով մեկ քամին քշում է խշացող ու հեծեծացող տերեները (աշնան տերեները ծիծաղ չունեն): Նայում եմ ու սիրտս ցավո՛ւմ է. անվերադարձ անցածի վկայություններն են նրանք: Ուզում ես խառնվել կարմիր, գեղին, ոսկեգույնի բոլո՛ր երանգներով ներկված տերեներին, խառնվել ու զգալ, որ, ի վերջո, դու էլ նրանցից ես... Ամեն տերև իր ճշմարտության և իր կյանքի կրողն է: Մեկը ծառի վրա է մնում մինչև ձյան գալը, մյուսն ընկնում է ոտքի տակ ու տրորվում, երրորդին վիճակվում է մարդկային ձեռքերի քնքշանքին արժանանալ (դուստրս՝ Մանեն, որքա՛ն էր սիրում բազմերանգ տերեներ հավաքել աշնանը, տեսնես հիմա էլ հավաքո՞ւմ է...):

Ճյուղն օգտվում է տերեւի գեղեցկությունից, նրա ակամա զոհաբերումից ու ձակատագրից: Ճյուղը զարդարվո՞ւմ, իմաստավորվում է նրանով, մինչ տերեւ գնում է, ճյուղը՝ մնում...

* * *

...Արդեն երկա՛ր ժամանակ է, որ կամավոր ընդունածս բանտարկյալի այս կյանքում այդպես էլ չվարժվեցի արթնացումին, արթնանալո՛ւն... Արթնանում եմ միշտ էլ զարմանքո՛վ, թե որտե՞ղ եմ (տարիների փորձն ու հաստատված զգացողությունն է...), հետո սառն ու կարծր իրականությունը խրվում է սիրտս դաշույնի պես. այստեղ եմ, քանի որ... Քա՛վ լիցի, իմ այստեղ լինելը չէ՛, որ խոցում է հոգիս (ի՛նքս եմ նախընտրել այդ), այլ՝ պատճա՛ռը...

...Ժամանակ ի վեր ինչ-որ մոտալուտ վատ բանի, մի անհայտ վերահաս փորձանքի կանխազգացողություն ունեի. այսքա՛ն ցավի մեջ՝ նո՛րը... Եվ իրոք. ծանր հիվանդ էր էթերին. անչափ նիհարել էր, գունատվել, ուտել չէր կարողանում, անուժ էր, թույլ... Երբ տեսա վերջին անգամ, ամրոցի պատերը բռնելով էր քայլում: Նա մի ուժեղ նեցուկ էր ինձ հնից, լա՛վ օրերից, ճշմարի՛տ նեցուկ:

Պարսկուհի Աշրաֆի գործե՛րն են: Սիրտս վկայում է, որ օձաշապիկ այս կինը թունավորել է էթերիին:

...Օրավուր չէ՛, ժամեժա՛մ փլվող այս տունը դո՛ւ ես քանդում, ամբարիշտդ Վազգեն, ըստ կամաց օտարի... Ինչ-պե՞ս ես ավանդելու հոգիդ, ինչպե՞ս, երբ գա ժա՛մդ...

...Եվ այս ամենից հետո պիտի կարողանամ (ջանա՛մ, ճգնե՛մ) պահպանել իմ մեջ լավը, հավատալո՛ւ, սիրելո՛ւ, զարմանալո՛ւ, գնահատելո՛ւ կարողությունը, կյանքի նախապայմանն ու հիմքը՝ աստվածաշնորհ Բարին: Այլապես կյանքը կզրկվի իմաստից: Բոլորի՛, շատերի կյանքը: Անցումի ստվերով, ծերության մղձավանջով երկփեղկված կյանքը: Սիրուց, ջահելությունից, երազից մի օր զրկված լինելու արհավիրքով հղի կյանքը: Եվ եթե չլինի չավատն առ Աստված, կյանք կոչվածը կդառնա կենցաղային մանր

Խսդգություն, կենսաբանական ու կենդանական վատթար գոյություն. քանզի կենդանիները չարություն չունեն, իսկ մարդու կերտվածքի մեջ եղող Զարը (շատ կամ քիչ...) խանգարում է ապրել:

Հետաքրիր շղթայակապություն է այս ընտանիք ասածի: Ամենասուրբ, ամենաբարձր զգացմունքի վրա հիմնված, երբեմն էլ (և ավելի՝ շատ) վերաճում է ըռնակալական մի բոռնցքի, որի մեջ (նայած հանգամանքներին) սեղմված, անազատ, կաշկանդված ու շղթայակապ (հոգեպես, բայց նաև՝ մարմնապես, ինձ պես...) ապրում է կինը:

...Երես անկյալ աղաչե՛մ քեզ, Աստվա՛ծ, փրկության ձե՛ռք մեկնիր էթերին... նրա անկորնչելի Հոգուն, զի կորուսյալ մարմինը հանգիստ գտավ հոգում:

ՕՐ ... Մարդկային փոխարաբերությունների տարապայման խառնարանում զարմանալի արժեչափ են կենդանիները: Ահա տարիներով պահա՛ծ, խնամած-փայփայած իմ թուշիկ կատուն. Հյուղակիս կո՛ղմն իսկ չի նայում, ո՛ւր մնաց՝ գա՛, որ հեռու էլ չէ իր համար: Զի գալիս, քանի որ ուտելիքն ամրոցի՞ց է ստանում, ա՞յդ բնազդն է հետ պահում, թե՞ օտարացե՛լ է (ինչու՞, ես միշտ սիրել եմ նրան, ուշադրություն շռայլել իր հանդեպ): Պողպատագույն-մոխրագույն, բրդոտ ու թափամազ մեր թուշիկը՝ կանաչ, զմրուխտե աչքերով: Զավակներիս սիրելի՛ն... Հատկապես Բագրատիկի...

Կանացի խառնվածքին համահունչ ինչ-որ բան կա կատուների մեջ: Հարազատ, միաժամանակ՝ վանող, որովհետեւ նմանությունը թե՛ ձգում է, թե՛ վանում: Զուր չէ, որ պատմության էջերում կատուները միշտ անսովոր ճակատագիր են ունեցել, մերթ սրբացվել են, մերթ հակառակը՝ հալածվել...

Այնինչ շունը. իսկակա՞ն եղբայրը մարդու. լա՛վ եղբայրը, քանի որ ամեն եղբայր կամ քույր այդ բառերի հոգեոր խորունկ իմաստ չունի: Ահա Հույսը. գրեթե նոր ենք ճանաչել միմյանց, հյուղակում իմ ապրած առաջին տարվա վերջո՞ւմ, բայց ի՞նչ նվիրում... Պատահական չէ, որ ասում են շա՞ն հավատարմություն, ո՛չ թե մարդկային...

* * *

...ի՞նչ իշխանություն ունեն բույրե՞րը մեզ վրա, մեր կյանքում, գույների, գծերի, ձևերի, մեղեղիների, պատկերների նման... Եվ ամրոցից եկող (խոհանոցի հարածուն «կյանքո՞վ» պայմանավորված) բույրերն ինձ անհանգատություն են պատճառում (ո՛չ այնքան ուտելիքի անհասանելիության առումով), այլ նրա՝ համար, որ տեսակ-տեսակ ճաշերի բույրերը թարմացնում են հիշողությանս մեջ հին ու նոր գեազեր, ընտանեկան տոնախմբություննե՞րը մեր անցած կյանքի:

Զրերին բաժին դարձած Սահակս որքա՞ն էր սիրում հարիսա, Մանեն՝ փախլավա, իսկ Հերակլն ու Բագրատիկը՝ նշով կարկանդա՞կ... Ինչպե՞ս էին շտապեցնում խոհարարին, որ քաղցր ժպիտով բացատրում էր, թե պետք է սպասել... Մինչ այդ ես կարդում էի նրանց համար, հանելուկներ էինք լուծում... Ուտելիքի այս շարունակվող բույրերն ինձ հիշեցնո՞ւմ, հիշեցնո՞ւմ են երեխաներիս հետ համատեղ չշարունակվո՞ղ կյանքի մեր երջանկությունը...

Ամենածանր, ամենածնշող հոգսերի մեջ էլ լուսաբացի, արեի առաջին ճառագայթի հետ մեկեն փոխվում է հոգեվիճակը, լույսը թափանցում է Հոգո՞ւդ մեջ: Լավ է ասել ժողովուրդը՝ «Հույսը բացվի, բարին՝ հետը»:

ԾՈՒԾԱՆ ՎԱՐԴԵՆԻՆ ՎԵՐԱԴԱՐՁՆՈՒՄ Է ԲԴԵԾԽԻՆ ՆՐԱ ՏՎԱԾ ՆՎԵՐՆԵՐԸ

Եթերիի թաղումը բավական խոսք ու զրույց էր հարուցել քաղաքում: Եթերիին ևս, ինչպես Բրաբիոնին, թաղել էին քրիստոնեական արարողակարգով: Մինչդեռ հայտնի էր, որ Վազգեն բղեշխը Ցուրտավ վերադառնալուց հետո Բրաբիոնի քրիստոնեական ծեսով թաղվելու առիթով ընդհարվել էր Շուշան տիկնոջ հետ, արդեն բացեիբաց հաշիվ պահանջելով գրա համար: Բանը վերջացել էր, ինչպես հայտնի էր, բղեշխի գազանաբարո նկարագրի հերթական դրսեորումով՝ ծեծով...

Այս անգամ Շուշան-Վարդենին մի էական փաստ ուներ. Էթերին, իբրև քրիստոնյա վրացուհի և Ցուրտավ քաղաքի լիիրավ քաղաքացի, իրավասու էր ինքը վճռելու իր թաղման պարագան (ինչպես և արել էր), ի տարբերություն Բրաբիոնի, որն այս քաղաքում էր գտնվում իբրև օտար մեկը, սպասարկու անձնավորություն, հետևաբար, տիրոջ (կամ տիրուհու) կամքին ենթակա:

Իրիկնադեմ էր, երբ հայտնվեց Հակոբ երեցը:

— Ողջո՞ւյն տանս այսմիկ, — շեմից ողջունեց նա Շուշան տիկնոջն ու ներս մտավ: Ճիշտ ժամանակին էր եկել. մի քանի օրից բղեշխը վերադառնալու էր: Նույն մտահոգությունը տանջում էր թե՛ Հակոբ երեցին, թե՛ Շուշան տիկնոջը: Ի՞նչ էր սպասում Շուշանին Եթերիի թաղման առիթով: Հայտնի էր, որ բղեշխի բերած և ամրոցում արմատներ գցած մոգերը, մոգպե՛տն առանձնապես, խիստ նախանձախնդիր էին իրենց ծառայությունն ու խոսքն առաջ տանելու: Արտաքուստ նրանք լոռում էին, մինչդեռ հետո այդ

լոռությունը բազմաձայն հորդում էր ուրացողի առջև հազա՞ր ու մի խոսքով... Ընդհանրապես լուսկյաց մոգերն ու հատկապես մոգպետը բդեշխի մոտ դառնում էին ո՛չ միայն պերճախոս, այլև դրության տեր դարձածի անթաքույց պահպաժք էին դրսկորում:

Հակոբ երեցը շատ բան գիտեր դրսի անցուղարձից: Հայտնեց, որ մահացել է Շալվա իշխանը, շա՛տ ցավագին մահով: Այնքան սոսկալի են եղել հոգեվարքի ցավերն ու չարչարանքները, որ նա մահ է տենչացել, որպեսզի ազատվի՛ վերջապես: Վազգեն բդեշխը թեև քաղաքի շրջակայքում է եղել զինավարժությունների բերումով, նաւիրնտրել է հրաժարվել երկարամյա իր բարեկամին ու ընկերոջը, որպիսին Շալվան էր նրա համար, վերջին հրաժեշտը տալու պարտք ու պարտականությունից: Հակոբ երեցը վկայում էր, որ նա այդպես էլ չերեաց ո՛չ հոգեհանգստին, ո՛չ իսկ թաղմանը որի ժամանակ ընդհանուր բազմամարդության մեջ կարող էր ներկա լինել, բայց աչք չծակել, որից, թվում էր, քաշվում է... իրականությունն այն էր, որ բդեշխը՝ լրիվ օտարացա՛ծ, ինքն էր խուսափում նախկին միջավայրից ու կապերից: Մի խոսքով, Շալվային առանց դաշտանի հրաժեշտի թաղել էին՝ հարգեսոր կարգով ու տեղը տեղին: Հենց այդտեղից էլ Հակոբ երեցը շտապել էր Շուշան տիկնոջ մոտ:

Շուշան-Վարդենին տեղեկացրեց Հակոբ երեցին, թե վաղուց է մտորում վերադարձնել Վազգեն բդեշխի մատուցած նվերները, թե՛ հարսանեկան շքեղ զարդերը, թե՛ այլայլ առիթներով ընծաները: Երեցը չառարկեց, խոստացավ կատարել այդ հանձնարարությունը:

— Այդ նվերները մի տեսակ կաշկանդում ու չարչարում են հոգիս, և բդեշխի օտարացմանն ի պատասխան կամենում եմ ես էլ նրան օտարել ինձնից նաև ա՛յս ձեռվ: Տա-

ուապանքի այս տարիները այնպես հղկեցին ու կոփեցին ինձ, որ թվում է, թե այդ զարդերը... ծաղրում են ինձ: Այսքանից հետո... ի՞նչ զարդ, երբ մեր միջև հիմա մի պաղ գերեզմանափոս է ընկած, անլցնելի մի վիճ, խորտակված հավատիս գերեզմանը:

Շուշան տիկինը երեցին կանչեց հաջորդ օրը երեկոյան, որպեսզի զարդերն արդեն վերցրած լինի:

* * *

Շուշան-Վարդենին արթնացել էր, լվացվել և առավոտյան աղոթքն էր անում: Խնդիրն այն էր, որ շղթայված էին նրա թե՛ ձեռքերը, թե՛ ոտքերը, պարանոցի՛ն իսկ շղթա կար. այդ ամենը Վազգենը կնքում էր ու բանալին պահում քաղաքից դուրս գնալիս: Բայց մի բանալի էլ ավագ պահակի մոտ կար՝ չնախատեսվա՛ծ դեպքերի համար: Բդեշինը հույս էր փայփայում, թե կարող է այնպես լինել, որ մի օր էլ, իր երկարատես բացակայության ժամանակ, Շուշան-Վարդենին ավանդի հոգին, և այդ բանալին պետք գա... Չնայած նման մտորումների ժամանակ խղճի մի սուր խայթ, այնուամենայնիվ, խոցում էր նրան: Պատահել էր, որ տարբեր ժամանակներում տուն դառնալով ու բակ մտնելով, ի լուր բոլորի, հարցրել էր պահակներին. «Կենդանի՞ է դեռ խղճուկը»:

Շուշան-Վարդենին ներս կանչեց ավագ պահակին և բացատրեց, թե շատ կարճ ժամանակով ամրոց գնալու խիստ անհրաժեշտություն կա:

Պահակը հանեց շղթաների բանալին... փականքները գնդացին... Շուշան տիկինը մի երկվայրկյան երերաց. շղթաները ասես նրան նաև պահում էին... Ազատված թևերն ու ոտքերը, պարանոցը հանկարծակի այդ թեթևացումից սրսփացին, գլուխը պտտվեց, Շուշան տիկինը

նստեց մի փոքր, որ վերագտնի իրեն, ապա դուրս եկավ:

Ոտաբորիկ, սեազգեստ, աշխատելով առույգ երեալ ի հեծուկս տանը ելումուտ անող մոգերի ու Աշրաֆի, նա բազրիքին հենվելով բարձրացավ աստիճաններով։ Աշրաֆն ընդառաջ ելավ՝ քսու ժաղիտը դեմքին, ձև արեց օգնելու տիկնոջը, ու թեև շա՛տ էր հետաքրքրված, թե տեսնես ինչու՞ է գալիս, Շուշանի երեսին նայելով չհանդնեց հարցնել։ Շուշան-Վարդենին այնքան ուժասպառ էր, որքան ժամանակ չէր քայլել, ուստի ոտքերը թալկացել էին, դրա համար թեթևակի երերում էր... Բայց այն, ինչ տեսավ նա, մագնիսի՛ նման հավաքեց-կենտրոնացրեց նրա ուժերը, և նա, մի կողմ հրելով Աշրաֆին, ձգվեց մեկեն, կանգնեց անհենարան, իր ցավող, այտուցված ու արյունալցված ոտքերի վրա...

Ընդարձակ դահլիճում, որի չորս անկյուններում՝ շքեղ պատվանդանների վրա, բոցկտալով վառվում էին ատրուշանները, հատակին փուլած գորգին պաշտամունքի էին նստել (ծունկի եկած...) զավակները՝ օտար հագուստներով... Մոգպետը՝ ճերմակահանդերձ, սրածայր գլխարկով, նրանց առջև կանգնած, ծորուն, ոնդային ձայնով ինչ-որ բան էր մռմռում...

Շուշան տիկինը քարացել էր. երեխանները աչքերը հառեցին նրան, բնազդաբար վեր կենալու շարժում արեցին, սակայն մոգպետը ճարպկորեն կանխեց նրանց, թևերը տարածած ընդառաջ գնալով նրանց, և մի նո՞ր ալիք տալով իր ձայնին։ Շուշան-Վարդենին մի կերպ անցավ, հասավ իր զարդասենյակը՝ կոկ, փոքրիկ, մտերմիկ, բացեց դուռն ու տապալվեց գետնին՝ ուժերի լարումից... Նյարդերն այլև չդիմացան։

Աշրաֆը, որ ակնդետ հետեւում էր նրան, դրսից փորձեց դուռը բանալ, տիկինը պատասխանեց, որ հանգիստ թողնի

Իրեն: Հետո, մի կերպ ուժերն հավաքելով վեր կացավ, մոտեցավ (իրեն հայտնի թաքստոցից հանելով օժիտի իր սնդուկի բանալին) ընտիր կաղնեփայտից, արծաթե օղակապերով ու գամերով ամրացված սնդուկին, բացեց այն. ծանոթ, շա՞տ սիրելի մի բույր խփեց երեսին, ասես տարիների խորքից (սա էլ երեխաներին տեսնելուց հետո երկրո՛րդ հարվածն էր) տեսավ Սահականույշ տատին, մորը, հոր բրոնզափայլ դեմքն ու կենտրոնացած հայացքը...

Մեկ-մեկ հանեց զարդերը՝ հարսանեկան, ապա մյուսները՝ տարբեր առիթներով ստացած, փաթաթեց դրանք նույն սնդուկից հանված մետաքսե ծածկոցի մեջ, ապա կողպեց սնդուկը, բանալին դրեց նախկին տեղն ու կապոցը ձեռքին դուրս եկավ: Մոգպետ դու մոգպետ, ուրիշ ժամանակ երկարուժիգ աղոթում էր ժամերո՛վ, չիմա արագորեն կարճել էր արարողությունը, որ երեխաները մորը տեսնելու երկրորդ առիթը չունենա՛ն: Է՛, դառնորեն մտորում էր Շուշան-Վարդենին, բոբիկ ոտքերը շքեղ գորգի վրա այնպես դնելով, ասես անապատի այրող ավազի վրայո՛վ քայլեր, եթե հա՛յրը, հարազատ հայրը իր անմեղ մանկանց չխնայեց, մոգպետին՝ ի՛նչ: Դրա համար էլ շտապեց երեխաների տեսադաշտից հանել-հեռացնել մորը, որպեսզի մանուկներն ո՛վ գիտե, առիթ չունենա՛ն շփվելու նրան...

Հասնելով իր հյուղակին, Շուշան-Վարդենին ներս մտավ, իր շղթաները կրկին ընդունեց ձեռքերին, ոտքերին, պարանոցին... Երբ պահակը դուրս եկավ, նա հոգնած փլվելով իր խշտյակին... լա՛ց եղավ: Այդպես երբեք չէր լացել. սա մի ուրի՛շ լաց էր, անցած ո՛ղջ կյանքի, փլուզված երազների, հոգու մեջ պարփակված տեսանելի ու անտեսանելի ցավերի համար: Իր նախկին կյանքին, մարմնից ծնված ու մարմինը խոցող վշտերին, առհասարակ՝ մարմնականին: Հրաժեշտ տալու լաց էր դա: Դրանից հետո նրա

Համար սկսվում էր Հոգու կյանքը, սկիզբը Մեծ ճանապարհի...

* * *

Ժամանակ անց, երբ Հակոբ երեցն արդեն տարել ու բդեշխին էր վերադարձրել Շուշան-Վարդենիի զարդերը՝ նրա իսկ խնդրանքով, Շուշան տիկինը բակում անցուդարձ անող Աշրաֆի պարանոցին տեսավ իր ոսկյա շղթան... առանց խաչի, նաև ձեռքերին՝ իր մատանիներից երկուսը: «Երբապի՛ղծ», — խորհեց բարձրաձայն նա Վազգենի մասին, — «այսպէ՛ս, ա՛յս ձեռվ էլ... ուրացությա՛ն է գնում, ընկնո՛ւմ է մինչև վերջ՝ գետնաքարշ ու զզվելի: Գեթ ծնողների՛դ հիշատակը հարգեիր, այդ զարդերին դիպել են Հո՛րդ ձեռքերը»:

ՀՈԳԵՀԱՆԴԻՊՈՒՄ

Իսկ օրերը գլորվո՛ւմ էին համր ու անտարբեր՝ մի անտեսանելի, զորավոր ձեռքի պատկանող տերողորմյայի հատիկների նման... Օրը օրին Շուշան-Վարդենիի մարմնական վիճակը ծանրանում էր. հյուղակի խոնավությունն ու միջատները, անդադար քամին, աշնան եղանակներին ու ձմռա՛նը մանավանդ՝ ցո՛ւրտը, հեշտ չէր: Մեկ-երկու անգամ էլ կարի՛ճ հայտնվեց. ո՛չ ավելի, ո՛չ պակաս: Ի՞նքը՝ թունոտ խորհրդանիշը մահվան՝ սև, եղկելի, հարցականի նմանվող պոչով (թույնն այնտե՛ղ է հենց): Կարիճին տրուբելուց հետո Շուշան տիկինը հիշեց, թե ինչպես էր ժամանակին երեխաներին բացատրում սև և դեղին կարիճների տարբերությունը... սև մահաբեր է, նրա թույնի դեմ ճարչկա (լինում է գերեզմանոցներում, անապատներում, տա-

փաստաններում, ավերակների մեջ...), իսկ դեղինը կամ շեշտը համեմատաբար տանելի չարիք են, թույնը մահացու չէ, հնարավո՞ր է փրկել կարծահարին...

Հիշում էր՝ ջրերի՝ բաժին դարձած, գերեզման իսկ չունեցած իր Սահակը այն ժամանակ հարցրեց, թե ինչի՞ համար են կարիքները, եթե թունավոր են ու մահացու: Ինչու՞ նրանք գոյություն ունեն, չէ՞ որ մարդիկ զգվում ու գգուշանում են նրանցից: Շուշան-Վարդենին հիշում էր, որ թե՛ Սահակն ու Հերակլը, թե՛ Մանեն (Բագրատիկը դեռևս չէր ծնվել) ուշագիր՝ իր պատասխանին էին սպասում. ինքը հարմար գտավ պատասխանել, թե չարը նրա համար է, որ ընդգծվի, շեշտվի Բարու առաքելությունը, նաև՝ իմաստ ստանա Բարու պայքարն ու մաքառումը նրա դեմ: Մի կողմում մեղուն ու զատիկն են... մյուս կողմում՝ կարիքն ու սարդը... Մարդիկ էլ այդպիսին են՝ չար ու բարի, մեղու և կարիճ, ինչպես գոյության երկու հակադիր բեեռները՝ Քրիստոսն ու Սատանան: Եթե սկը չլինի, սպիտակի գեղեցկությունն ու մաքրությունը չի՛ երևա: Եթե սկը չլինի, սպիտակն էլ չի լինի...

Առհասարակ, իր մեկուսացումից ի վեր, երբ բգեշխը տան ծառայողներին խստիվ պատվիրել էր, էլ չենք խոսում նորեկ մոգերի ու հարակից ծառայողների մասին, երեխաներին հեռո՛ւ պահել մոր տեսադաշտից, իր համար երկու իմաստով կորած զավակների կարուղ Շուշան տիկնոջը այրում էր հեռավոր կրակի նման... Հոգո՛ւ պայծառատեսությամբ նրանց սիրում, հիշում ու կարոտում էր առաջվա՛տեսքով ու ոգով: Այսպես՝ օտարադավան դարձած և արդեն օտարացած տեսնելը խոցում էր նրա հոգին առավել, քան իր ներկա տանջալի վիճակն ու ապագան:

* * *

Արդեն գիշերային ժամն էր՝ «մթացյալն»։ Զարաքարո բղեշխն արգելել էր հյուղակում ո՛չ միայն ձիթաճրագի, այլև մոմերի գոյությունը։

«Ապրի՞ր հոգուրդ լույսով, – ծանակել էր նա տիկնոջը, – մինչև դրախտիդ լույսերին արժանանաս...»։ Շուշան-Վարդենին պատասխանի չէր արժանացրել նրան։ Լռել էր մեծախորհուրդ լուռթյամբ։ Օ՛, որքա՞ն խորախորհուրդ է լուռթյան աշխարհը և խոնարհ՝ իր մեջ ընդունելու կյանքի բիրտ ու այլեայլ աղմուկնե՛րը, միաժամանակ մնալով լայնաշունչ ու խաղաղ՝ լեռնային մաքրաջուր լճակի նման։ Խորքում՝ հատակին, մնում են վիրավորանքի ու զագրախոսության պաղ քարերը։

Գետնին փոված իր խշտյակին թիկն տված, Հույս շնիկը կողքին՝ Շուշան տիկինն սկսել էր նիրհել, կամ թվում էր, թե նիրհում է, երբ կիսարթուն-կիսանիրհ՝ նրա ականջին մի հարազատ ձայն հասավ։ Հոր՝ Վարդան Մամիկոնյանի ձայնն էր, անշփոթելի, փոքր-ինչ խզված ու խռպոտ (զորական խստակեցության արդյունք)։ «Վարդենի՛, աղջի՛կս, դու շարունակում ես Ավարայրի ճակատամարտի իմ բաժինը, շնորհակա՛լ եմ... դիմացի՞ր, տոկա՛, զավակս, իմացի՞ր, ուժեղը դու ես, հաղթանակը քոնն է, գիտցի՞ր... Հողի՛ պես անմեռ ես, Հայրենի հո՛ղ զավակս...»

Շուշան-Վարդենին աչքերը բացեց, շնիկը՝ Հույսը, դուրս էր եկել հավանաբար բնական պետքը հոգալու, և հիմա ներս էր մտնում գլուխը կախ։ Պահակներից մեկը դռան տեղում կախված փսխաթը մի կողմ տանելով բարի գիշեր մաղթեց տիրուհուն։ Հետո լսվեց, թե ինչ ասաց մյուսը երկյուղախառն ձայնով. «Հապա եթե տերն իմանա՞...»։ «Տե՞րը, – լսվեց առաջինի ձայնը, – ուզում ես ասել

բդե՞շիսը, Տերը Շուշան տիկնոջ թիկունքին է, դու մեր դար-
դը լաց, որ ակամա չարագործ ենք դարձել»:

Լոռություն տիրեց: Շունը սիրունիկ գլուխը պարզեց տի-
րուհուն, և երբ տիրուհին շոյեց նրան, քնքշացած լիզեց
ձեռքը: Աչքերը փայլում էին խտացող մութի մեջ: Քիչ
անց քուն մտան երկուսն էլ՝ երկու որբ մանկանց նման:

ՆԱԽՆԻՆԵՐԻ ՍՐԲԱԶԱՆ ՓՈՅԻՆ

Հորը՝ Վարդան զորավարին արթմնի՞, թե երազում
տեսնելը վերակոչեց Շուշան-Վարդենիի ուժերը: Արեգակի
հետ արթնանալով՝ մի ուրիշ զգացումով էր լցված այս ան-
գամ՝ հպարտության... Առհասարակ երազում մոտ հարա-
զատներին և ազգի հոգեմոտ մեծերին տեսնելիս ասես կեն-
դանի հանդիպման էր արժանացած լինում, օրերով հագե-
նում էր նրանց թողած հոգելույսով, ամրանո՛ւմ էությամբ
ու հոգով: Ճշմարիտ, նրանք ասես իրոք գալիս էին Շուշան-
Վարդենիին սատարելո՛ւ, ո՛ւժ և համբերությո՛ւն, կորո՛վ
ներարկելու հետզհետե մաշվող, ուժասպառվող մարմնին:
Այնինչ հոգով հարստանում ու լիանում էր՝ օրերո՛վ անց-
յալի թանկ հուշերի գրկում սավանելու չափ:

Զարմանալի՞ բան. բանտարկյալի այդ փոքրիկ, մուժ ու
ցուրտ հյուղակը ասես դադարում էր այդպիսին լինելուց:
Շղթաները, ծա՛նը շղթաները, չէին ճնշում: Պահակներն ա-
սես չկային: Եվ Հույս շնիկի երախտագիտության ցույցերը
նրան հիշեցնում էին անցած օրերը, երբ Շուշան-
Վարդենին ո՛չ միայն առատորեն դրամներ և ուտելիք էր
բաշխում իր դուռը ծեծող աղքատներին, այլև ներս տա-
նում նրանց, կերակրում, լողանալու հնարավորություն
տալիս, հետո միայն ճանապարհում նրանց լիածեռն: Ըն-

չասեր, մանրախնդիր բդեշխին դուր չէր գալիս կնոջ բարեսեր վարմունքը, սակայն չէր արգելում բացեիքաց։ Այդ յուրօրինակ հյուրերի գնալուց հետո հեգնում էր՝ աչքերը չարաժպիտ կկոցած։ «Այս աշխարհում մարդ պիտի Յուրտավի աղքատներից լինի, որ իշխանական ամրոցում այսպես լողանա՛, սեղա՛ն նստի, հետո էլ հեռանա՝ բեռներով...»։

«Տե՛ր Աստված, – ընդգում էր Շուշան տիկինը, – մե՞ծ բան ես համարում կարույալներին մի պատառ հաց տալը, կամ գոնե մեկ-մեկ՝ ջրի երես տեսնելը մեր տանը։ Աղքատացա՛նք, ի՞նչ է։ Հապա քրիստոնեական բարեսիրությունը։ Հապա նրանց օրհնա՛նքն ու բարի խո՛սքը, որ՝ մեկին հարյո՛ւր կշատացնի մեր տան բերքն ու բարիքը։ Մեծ, շա՛տ մեծ բան է օրհնանքի արժանանալը, Վազգեն, արժանացիր դո՛ւ էլ։ Զինավառ կյանքից լրիվ կոշտացել ես։»

Բդեշխն անախորժ լոռում էր, մինչև որ մի օր, չդիմանալով այլես, պոռթկաց։ Դա նրա պարսկանալուց առաջ էր, քիչ առաջ. այդ օրը դուռը ծեծողը մի աղքատ կին էր՝ երեխան հետը։ Շուշան-Վարդենին նրանց դարձյա՛լ ճանապարհում էր լողացած-մաքրված, կերած-կշտացած, ձեռքերին էլ՝ երկու կապոց... Երբ մայր ու որդի դուրս եկան ամրոցից և նրանց հետևից մետաղե դարպասը ծանրորեն ճռչաց, բդեշխը ձեռքը խփեց սեղանին, որոտալով. «Տե՛ս, սա վերջի՛ն անգամը լինի, քե՛զ եմ ասում, Շուշան։ Հաճոչէ ինձ այս ամենը, հասկացիր։ Երկար համբերեցի»։

Շուշան-Վարդենին տարակուսած ու խռովյալ նայել էր ամուսնուն. «Իրա՞վ, – ասել էր անկեղծ զարմանքով, – ե՞ս եմ քեզ ուրիշ մարդ կարծել ի սկզբանե, թե՞ դո՛ւ ես փոխվել... Զէի սպասում...»։

Վազգենը թավ հոնքերի տակից նայել էր նրան, լոել մի պահ, ապա. ասել. «Դո՛ւ ես ինձ այլ մարդ կարծել, – դո՛ւ,

խենթո՛ւկս. հասակն առած կին ես արդեն, բայց նույն Վարդի՛ն ես, ինչպես անվանում էին քեզ ձերոնք...»:

Այդ «ձերոնք»-ը դիպել էր տիկնոջ սրտին: «Հայրդ էլ, մեծահարգ Աշուշա բղեշխը, ախորժում էր ինձ մկրտության ավազանի անունով՝ Վարդենի կոչել, վա՞տ էր, — արտաքուստ՝ բարեժպիտ, ներքուստ վրդոված խոսել էր Շուշան տիկինը»: «Վատ չէր, բայց հայրս էլ քեզ պես սիրում էր աղքատներին երես տալ, նո՞ւյն ծառի պտուղն եք, սպարապետ հա՛յրդ էլ, ի՞նչ խոսք, քաշներովդ մեկ ոսկի՛ եք, սո՞ւրբ, մեզպեսները պիտի ձեր ոտքերը համբուրեն, չէ՛, չէ՛, Հիսուսի նման, միմյանց ոտք լվանան ու ջուրն էլ խմեն», — թունոտ հռհռացել էր բղեշխը:

Շուշան-Վարդենին կարկամել էր: Ինչ-ինչ, բայց նման անծածկույթ սրբապղծություն նա չէր սպասում:

«Զարաչար սխալվե՞լ եմ ուրեմն քեզ ազնվաբարո ու ճշմարիտ քրիստոնյա համարելով, Վազգեն, — դողացող ճայնով արտաբերել էր նա մինչև հոգու խորքը խոցված: Բղեշխը միասմանակ լոել էր, հետո ծանրումնեծ վրա բերել.

«Առանց Հիսուսի էլ աշխարհը տեղն է, հավատա՛, առանց կույս Մարիամի էլ... Շատ ժողովուրդներ կան, որ առանց նրանց ապրում են...»:

Շուշան-Վարդենիին ասես ընկղմել էին սառը ջրի մեջ, ականջները՝ դժմացել, ճի՞շտ էր լսել, և այս վայրահաչ սրբապիղծն իր երեխաների հա՞յրն է... Քրիստոսասեր Աշուշա բղեշխի որդի՞ն: Հանուն հավատի կյանքը զոհաբերած սպարապետ Վարդան Մամիկոնյանի բարեհաճությունը նվաճած փեսա՞ն...

«Ուրիշ ժողովուրդնե՛ր կա՛ն, — աշխատելով մտքերը ժողովել, հոգու ցավը զսպած պատասխանել էր Շուշանը, — կա՛ն, դրանք այլադավաններն են, որոնք լուսավո՞ր այս

ժամանակներում Սուրբ Հոգու փոխարեն... կրա՛կն են պաշտում, և խառնակվում են միմյանց հետ արյունապղծությամբ՝ քույր-եղբայր, հայր ու աղջիկ, մայր ու որդի... Մեղա՛քեզ, Աստված... ինչու՞ հանկարծ հաճո՛ դարձավ քեզ այդ ամենը...»:

Զարագուշակ էր եղել լոռությունը: Եվ շարունակվել էր՝ մինչև որ Վազգեն բգեշխը ծանրաքայլ դուրս էր գնացել:

Շուշան-Վարդենին հիշում էր. այդ գիշեր չքնեց: Առավոտյան նախաճաշի ժամանակ էլ ստվերի պես անշշուկ մտավ ներս՝ անքնությունից կարմրած աչքերով, դունատ, և երբ տեսավ գոհ ու զվարթերես իր նախաճաշն անող բգեշխին, կամացուկ նստեց ո՛չ թե հանդիպակաց աթոռին (ինչպես միշտ), այլ ամուսնուց բավական հեռու, մի կես-բերան «բարի լույս» մրմնջալով: Վազգենը, որ ախորժակով ու լիաբերան ճաշակում էր երեխ խորովածը, գլխով արեց ի պատասխան, հետո փորձող հայացքով զննում էր Շուշան տիկնոջը:

Շուշան-Վարդենին սպասում էր. սպասում էր տագնապո՛վ, հույսո՛վ, թե հիմա՛, հիմա՛ Վազգենը կհոհուա անվայելուչ (թեկուզ այդպե՛ս..) ու կասի, որ երեկվա պատահածը թյուրիմացություն էր, դա՛ռը, անհաջո՛ղ կատակ...

— Ինչու՞ չես ուտում, — ասես ա՛յլ աշխարհից եկած ձայնով լոռությունը խախտեց Վազգենը, — առավոտ կանուխ խոհարարը ջանացել է, և ո՛չ իզուր...

Շուշան-Վարդենու բերանը չէր բացվում բա՛ռ իսկ ասելու: Ակնապիշ նայում էր ամուսնուն, ասես օտա՞ր երկրներից խուժած արտառոց մի գագանի, որ խոսում էր մարդու լեզվով...

Այդպես տեսեց մինչև բգեշխն ուտելն ավարտեց, վրայից ըմպել-պարպելով արդեն կիսով չափ դատարկ գինու գավը, հենց այն, որով մեղրաշուր էր խմում նաև... Հետո վեր

կացավ, հեգնական ժամանով զինվորական խոնարհում աշ-
րեց Շուշանին, դուրս գնաց:

Շուշան-Վարդենին այսպիսի՝ ցավ (անհամեմատելի՛...) մեկ էլ ապրել էր սպարապետ Հոր՝ Վարդան Մամիկոնյանի կորսոյան ժամանակ: Սակայն նա ուրի՛շ էր. Հոր կորսոյան-նահատակման պահն ուրի՛շ էր. դա ընդհանրակա՛ն, մե՛ծ, ողջագոյա՛ վիշտ-երևույթ էր, նաև՝ հպարտություն, պարտավորություն, խոստում, երդում՝ շարունակելու սպարապետի գործը և ուղին: Հայրը՝ նահատակվելով, սկսել էր ապրել մի նոր, ոգեղե՛ն կյանքով...

Բայց այս Վազգե՛նը, որ տարիներով յուրային է համարվել, այն էլ՝ ամուսի՛ն, իր երեխաների հա՛յրը, Վարդան Մամիկոնյանի թոռների... հայրը: Ուխտանե՛նդ, ուխտանե՛նդ, ինչե՛ր խոսեց՝ թունոտ, սրբապիղձ... Թե՞ ինքն է խելագարվում, և այդ ամենը իրեն... թվացել է: Շուշան տիկինը փութով խաչակնքեց... Զէ՛, չի՛ խելագարվել: Ահա, բղեշխի առավոտվա պահվածքը ցույց տվեց, որ երեկվա համար ոչ միայն չի՛ զղում, այլև մնում է իր համոզմունքին... Ե՛րբ դավանափոխության ազգուրաց միտքը համոզ-
մունք դարձավ նրա գլխում, երբ...

Ե՞րբ դարձավ հայրենամերժ, իր ապուպապերի կրոնն ուրացող, դեմքնթաց, անջատական: Ե՞րբ... օձացա՛վ այս-
քան:

Այդ օձին տաքացրել էր նաև ինքը, ի՛նքը... հավիտյանս (ակամա) հանցապարտ մնալով ազնվահոգի Սահակ Պար-
թե պապի, իր (քրիստոսասեր...) Սահականույշ մոր, վասն հավատի ու հայրենիի ողջակիզված Հոր՝ Վարդան Մամի-
կոնյանի սրբաշունչ հիշատակների առաջ:

ՆԱԹԵԼԱՆ՝ ՎԻՐԱՎՈՐ

Իրիկնադեմ էր, խաղաղ մի ժամ, երբ հյուղի շեմին հայտնվեց Շուշան տիկնոջ տեղերկինը՝ նաթելան։ Կաշառել էր պահակներին ու ներս մտել։ Շուշանը կարոտե՛լ էր նրան, վաղուց չէին տեսնվել։ Նաթելան՝ նմանապես։ Նաթելան, որ թաքուն քաղցրավենիք էր բերել, իսկույն թաքցնել տվեց այն, ով գիտե, որտեղի՛ց-որտեղ այնպիսի մեկը ներս մտնի, և... տեսնելով՝ տեղեկացնի բղեշխին։ Եվ, Աստված մի արասցե, պատճառ դառնա բղեշխի բռնկվելուն, չէ՞ որ արգելելով արգելել է այդպիսի բաները։

«Բղեշխն էլ հո առիթի՛ է սպասում», — անկեղծությանն ազատություն տվեց Նաթելան, հապարտ, գեղեցիկ գլուխը հետ գցած։ Լոեցին։

Ներս մտած շունը նայեց, նայեց Նաթելային ու, ոչ այս, ոչ այն, մոտ գնաց, քսվեց ոտքերին, պոչը խաղացնելով ողջունեց նրան։ «Մրա՛ն տես», — հուզվեց Նաթելան, — սրանք հո տարբերում են չարն ու բարին, լավն ու վատը։ Մարդկանց էլ ճանաչո՛ւմ են, ամենքին չէ՛, որ ջերմողեն են դիմավորում, ուրեմն ինձ ընդունեց»։ Տիսուր ժպիտով հաստատելով նրա ասածը՝ Շուշան-Վարդենին ավելացրեց։ «Այդպե՛ս է, տեսնելո՞ւ բան էր, թե ո՞նց էր հաչում Վազգեն բղեշխի վրա... Մինչև չգնաց այստեղից, չհանգստացավ... Կենդանիները շատ զգայուն են, մի՛ կարծիր, որ չեն խոսում՝ չեն էլ հասկանում։ Ընդհակառակն, խոսելու հնարավորությունից զրկված լինելը նրանց ավելի՛ կենտրոնացած ու խորաթափանց է դարձրել»։

Նաթելան երկար ու խորը նայեց Շուշան տիկնոջ աչքերին և վերջապես վճռեց իրեն տանջող հարցը տալ։

— Եթերին... շա՞տ հիվանդ էր։ Եթե իմանայի, կայցելեի նրան։ Նրանից ես միայն բարիք եմ տեսել, բայց վերջերս

այնպիսի բան իմացա, որ... մտածեցի՝ Շուշանին հարցնեմ,
շխտակ հոգի՝ նա ինձ ճշմարտությունը կասի:

Շուշան տիկինը հարցական նայում էր նրան, և հանկարծ գլխի ընկավ, թե խոսքն ինչի՝ մասին է. պարզ է, Սև Հոռովի հերթական խարդավանքի զոհն այս անգամ... մեռած էթերին և Նաթելան էին: Այ քեզ բա՛ն: Ինչպե՛ս է կարողանում այդ կինը այստեղից-այնտեղից փախցրած տեղեկությունները նման ուղղել զոհի ուղիղ սրտին:
Հիմա էլ՝ Նաթելան:

— Ի՞նչ է եղել, — հարցրեց Շուշան տիկինը, — պատահաբար հո Սև Հոռովիը չի՞ հանդիպել քեզ...

Սև Հոռովի անունը լսելով՝ Նաթելան շիկնեց, կարկամեց մի պահ, հետո վրա բերեց.

— Այո:

— Այո՞, ուրեմն տագնապդ զո՛ւր է, հանգստացի՛ր, այդ կինը ոտքից գլուխ սուտ է ու կեղծիք, իսկակա՞ն խառնակիչ, դա ե՛ս եմ ասում քեզ, — Հոգնած շարունակեց Շուշանը, — տեսնու՞մ ես, չկա չարիք առանց բարիքի, այդ առիթեղավ, որ տեսնվենք... — Ենթադրում եմ Զոջիկի և էթերիի կարծեցյալ կապի մասին, այդպես չէ՞՝, Նաթելա:

— Այդպես է, — մրմնջաց Նաթելան գունատված, — հետո գլուխը կախեց ու լուռ մնաց:

— Ի՞նձ էլ է ասել, այդտեղից գիտեմ, — միտքն առաջտարավ Շուշան տիկինը: — Սև Հոռովիը խաղում է հետդ՝ ինչպես կատուն՝ մկան հետ, զգո՛ւյշ մնա: Այս պատմության մեջ ճշմարիտն այն է, որ Զոջիկն ու էթերին պատանության օրերին սիրել են միմյանց, բայց ո՛չ ավելին. նրանք երբեք մարմնապես մտերիմ չեն եղել, էթերին խոստովանել է ինձ: Հետո՛, իսկ հետո՛, սիրելիս, էթերին Վազգենի պես մի վավաշոտի բաժին է դարձել. ես էլ այդ վերջերս եմ իմացել, այսքանը: Ուրիշ բան չկա:

Եթերիի մահը պարսկուհի Աշրաֆի ձեռքի գործն է անկասկած: Բրաբիոնի՛ն էլ նրա սև ձեռքը պատուհասեց, իմացի՛ր:

Նաթելան շշմել էր:

— Իմ համբերատա՛ր Շուշան տիկին, որքա՛ն բան դիտես դու, և ի՞նչ ցավեր են տանջում քո հոգին, նախանձում եմ... արիությանդ, — Շուշան-Վարդենիի վզովն ընկավ Նաթելան, — Տե՛ր Աստված, ուրեմն ես մտածմ՛ւնք եմ հորինել ինձ համար: Իմ լա՛վ Ձոջիկ, նրա համար առավել ծանր պիտի լինի այս պատմությունն ուրեմն:

— Անշուշտ, — հաստատական շարժեց գլուխը Շուշանը:

— Դրա՞ համար է ուրեմն, որ, քույրի՛կ Շուշան, մենք... Ձոջիկի հետ... այնքան էլ երջանիկ չենք կարծես, ինչպե՞ս ասեմ...

— Եթերին հանգամանքների զոհ էր, ո՛չ ավելին, սակայն նախախնամության զորավոր ձեռքն է կանխորոշում ամեն բան, — լսվեց Շուշանի ձայնը արդեն մթնող հյուղակում:

— Շուշան տիկին, քանի դեռ չի մինել, գնամ, — խոսեց հոգեկան հավասարակշռությունը վերագտած Նաթելան:

— Գնա՛, Նաթելա, սիրելիս:

Համբուրգեցին: Շունը հրաժեշտի կլանչունով ու պոչը շարժելով ճանապարհեց Նաթելային:

ՈՐԴՈՒՄ ՍԱՀԱԿԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ

Վաղամեռիկ Սահակի ծննդյան տարեդարձն էր, տարաբախտ որդու, որ Կուր գետի ալիքներին զոհ դարձավ: Շուշան տիկինը հիշում էր, թե ինչպես ոչ հեռավոր անցյալում (Սահակն իր երրորդ երեխան էր) մկրտեցին նրան՝ տալով Շուշան-Վարդենիի պապի՛ կաթողիկոս Սահակ

Պարթեի անունը: Տղեկը սկզբից ևեթ զարմանալի ճակատագիր ուներ: Քրոջ՝ Մանեի և եղբոր՝ Հերակլի հետ խաղալիս, միշտ փորձանքը նրան էր պատահում: Մի անգամ խաղալիս փուշ էր մտել ոտքը. ուռել էր, թարախակալել, շա՛տ երկար տեղյ բուժումը: Եվ սա այն դեպքում, երբ Մանեի, Հերակլի, նրանց հետ խաղացող մյուս երեխաների ձեռքն ու ոտքը օրը հազար անգամ փուշ էր մտնում...

Մյուս փորձանքը. եթե անվտանգ թվացող փուշը վտանգավոր դարձավ, ապա օձը, որ խայթել էր Սահակին (հազի՞վ փրկեցին) արդեն բացահայտ վկայություն էր, որ մանկան դիմուի վրա դժբախտության մի ուրու է պտտվում: Հայրը՝ Վազգեն բդեշխը, որ այն ժամանակ չէր պղծվել այսքան, և դեռ ընդունակ էր լավ արարքների, իրեն պատիվ բերող մի քայլ կատարեց: Երբ օձահարներին բուժող հայտնի Զավահիրը Սահակին փրկելու իր գործը սկսեց օձի վերքից թույնը ծծել-թթելով, և համարեց, թե մանուկն արդեն փրկված է, բդեշխը չհանգստացավ, մինչև ինքն էլ չկատարեց իր հայրական պարտքը՝ փոխարինելով Զավահիրին: Այն ժամանակ բոլորը հիացել էին նրա անձնուրաց մանկասիրությամբ: Ինչ-ինչ, բայց որ նա լավ հայր էր երեխաների համար և լավ ամուսին մինչ այս դեպքերը, Շուշան տիկինը չէր ժխտում:

«Լավն ինչպե՞ս ուրանաս», — զրուցում էր նա ժամանակին Բրաբիոնի հետ, անկեղծանալով:

«Զարմանալի է, որ մարդու ներսում (գուցե հենց իրե՛ն էլ անհայտ...) չարն ու հոռին ի հայտ բերելու բանալի է դառնում կրո՞նը (այս դեպքում՝ մազդեզանց), այնինչ կրոնն ինքը պիտի ծառայի մարդու մեջ գաղանայինը խեղդելուն և մարդկայինը վերհանելուն... Այդպես չէ՞», Բրաբի»:

Այդ խոսակցության ժամանակ Բրաբին բազմիմաստ

լոել էր, հոգոց հանելով, հետո, այնուամենայնիվ, արտահայտել էր մտքինը (...ա՛յդ տխուր օրերին բգեշխն արդեն սկսել էր քրիստոնեին ոչ վայել վարքագծի ինչ-ինչ նշաններ ցույց տալ), ասելով Շուշանին. «Ի՞նքը՝ ամուսինդ է խոտորը, թե չէ այս կամ այն կրոնի թողտվությունները ինչո՞ւ ա՛յս մեկին չեն դայթակղում, իսկ մյուսին՝ հանում են հունից...»:

Շուշան-Վարդենին հիշում էր, որ թեև այն ժամանակ ցույց չտվեց, բայց ներքուստ վիրավորվել էր Բրաբիի խոսքից... Ինքն էլ չգիտեր՝ ինչու... Հետո, հետո հասկացավ, որ այդպես էր, քանզի դեռևս սիրում էր Վազգենին, հետեաբար՝ կույր էր նրա թերությունների, սխալների հանդեպ, չէր տեսնում...

Բրաբիոնի իրավացիությունը կյանքով հաստատվեց: Այն էլ ինչպես հաստատվեց: «Երանի, – այսօր մտածում էր Շուշան-Վարդենին, – Վազգենը կամ ես մեռած լինեինք, որպեսզի տեղի չունենա՛ր... Հիմա արդեն անուղղելին: Չտեսնեի՛ այս...»:

Խեղդված տղեկի՝ վաղամեռիկ Սահակի ծննդյան տարեդարձը ալեկոծեց վշտահար մոր սիրտը, փոթորկի նման խառնեց հին ու նոր դառնությունները, առավել կսկսալի դարձնելով մանկան կորուստը: Վշտացյալ Շուշան-Վարդենին բաց արեց հիշատակարան-մատյանը, ուր Սահակի մահվան առթիվ իր գրած... բանաստեղծություններն էին: Ալզբից էլ իրեն դատափետում էր նման հանդգնության համար. «Ի՞նչ, – մտորում էր, – համարձակվում ես գրածդ բանաստեղծությունն համարել Սուրբ Մեսրոպ Մաշտոցից և մեծահմուտ Սահակ Պարթևից հետո...»: Իսկ ներսից երկրորդ մի ձայն առարկում էր, թե այս տողերը որդու կոսրայան ցավի արտահայտությունն են, որ պահէ տվել մագաղաթին իբրև մո՛ր սրտի խոսք... ո՛չ ավելին,

այնպես որ չի՝ մեղանչել Մեսրոպի ու Սահակի սրբազան հիշատակի առջև։ Ահա, այդ մեծերի խոսքն իր հետ է մշտապես, թանկ ու հոգեմոտ մի ուրիշ մատենիկում, որ ստեղ-ստեղ ընթերցում է աղոթքի կամ սաղմոսերգության ընդմիջումներին։

...իր գրածները միայն Բրաբիոնի մոտ է կարդացել։ Լսելուց հետո Բրաբիոնը, ի նշան հավանության, համբուրել էր Շուշանի ճակատն ու միտք հայտնել, թե Սահակ Պարթևի թոռնուհին ժառանգել է մի բան ուրեմն վեհատիպ իր պապից…

Հետո Շուշան-Վարդենին ծնկի եկավ և սկսեց բարձրածայն ընթերցել Սահակի մահվան առթիվ գրած իր երեք ոտանափորները, որովհետև դա էլ ի՞ր աղոթքն էր։

Ապա փետուրը թաթախելով մելանի մեջ՝ գրեց իր հիշատակարան-մատյանի հաջորդ էջին. «Այսօր՝ Սահակիս ծննդյան տարեդարձը նշեցի ողջ օրս նրան նվիրելով՝ հիշելով, աղոթելով, նրան նվիրած իմ համեստ տողերն ընթերցելով։ Հուսով եմ, որ Սահակիս անմահ հոգին ունկնդրում է ինձ։ Եվ իմա՞ռք Տիրոջը այս հնարավորության համար»։

Շուշան-Վարդենին այնքան էր տարվել օրվա խորհրդով, որ չէր նկատել, թե ինչպես պահակը՝ ակնածանքով ու երկյուղած, կավամանով ջուրն ու գարեհացը՝ պարզ մի սկուտեղի վրա, դրել է հյուղի անկյունում, հատակին։ Կերավ գարեհացն ու ըմպեց ջուրը։ Ուրիշ բանի կարիք չէր էլ զգում արդեն վաղուց։ Վարժվել էր կիսաանոթի, սրբակենցաղ այս գոյությանը։

ՆԱԶԻՐԵ ԽԱՆՈՒՄԻ ԱՌՈՂՋՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՐԵԼԱՎՎՈՒՄ Է...

Անքննելի են Աստծո խորհուրդները, ճանապարհներն՝
անիմանալի, որոնցով մի դեպքում՝ Աստծո դատաստանն
ու պատիժն էր համում, այլ պայմաններում՝... անհավա-
տալի, չսպասվող, ողորմած, ամենահաս Փրկությունը...

Շուշան տիկինն, անշուշտ, չգիտեր, թե որտեղի՞ց էր Սև
Հոռովի ականջն ընկել, որ Նազիրե խանումի առողջական
վիճակի բարելավվում է, սակայն մտաբերում էր, որ Սև Հո-
ռովը իր վերջին գալուն նման մի բան ասաց: Ո՞վ գիտե՝
որտեղից էր իմացել, Վազգեն բղեշի և նրա նմանների
համար դժվար չէր աչքեր ու ականջներ ունենալ ամե-
նուր... տեսանելի լինեին դրանք, թե ոչ:

Նման բան հաստատապես կար. իր վերջին այցելության
ժամանակ Նազիրե խանումը երախտագիտության ար-
ցունքն աչքին, հավաստել էր, թե իրոք, առողջական իր վի-
ճակը բարելավվում է ...

Դեմքի և մարմնի վրայի վերքերի մեծ մասը չորացել-
փակվել էին, իսկ չարագույժ հիվանդության նախանշան
կարմիր բծերը՝ անհետացել: Հրաշալի՛ երազներ էր տես-
նում՝ կյանքով և արևով լեցուն, մինչդեռ ... առաջ (հի-
վանդության ի հայտ գալուց ի վեր) գիշերները քուն չու-
ներ համարյա, աչքերը կպցնելուն պես դժոխային, մղձա-
վանջային երազները տանջահար էին անում նրան:

...Անցյալ օրն էլ դստրիկին՝ Լալեին, ընդամենը մի քանի
քայլ հեռվից տեսնելու բա՛խտն է ունեցել: Մի տեսնեք, թե
ո՞նց է մեծացել Լալեն, բլբլո՛ւմ է, խոսո՛ւմ, երգո՛ւմ, իրեն
էլ ասաց՝ մայրի՛կ...

Այս անգամ մայրացուն՝ Շահը խանումն էլ հետն էր
եկել, իսկ դա մի այլ կողմով էլ վկայում էր Նազիրեի առող-

ջական վիճակի բարելավվելը։ Նախկին դրության մեջ ո՛չ ոքի չէր թույլատրվում ընկերանալ նրան, բացի ուղեկից մոգից։ Իր ասելով, Շահրու խանումն անձամբ ցանկացել էր տեսնել Շուշան-Վարդենիին, հայտնի սպարապետ Վարդան Մամիկոնյանի դստեղը, քանզի նրա մասին խոսքն ու զրույցը գնալով ծափալվում էր, հրաշքներ էին պատմում։ Ահա, հրաշք չէ, ի՞նչ է, իր դստեր՝ Նազիրեի հիվանդության պատմությունը։ Շահրու խանումը, որ վեհատես, գեղեցիկ կին էր, հարստության, ըստ ամենայնի, ակներև նշաններով՝ ականջներին, պարանոցին, դաստակներին ու ձեռքերին մեծարժեք աղամանդակուու զարդերով, քար էր կտրել Շուշան տիկնոջ կեցության ավելի՝ քան համեստ, վանական միանձնուհու էլ չէ՛, այլ ճգնակեցուհու հիշեցնող պարզությունից։ Երբ իմացավ նաև, որ նրա սնունդն էլ գարեհաց է միայն ու ջուր, լաց եղավ…

«Դժվար է Աստծո աշխարհում ապրելը, – մոգի միջոցով արտահայտեց նա իր միտքը, – չա՛տ դժվար է. ինչու՞՝, մեր հարեմում, օրինակ, ծույլ, անուղեղ և անաշխատ կանայք առավոտից-երեկո բամբասանքո՛վ են ապրում, պաշտամունքն իսկ ժամանակին ու հանգամանորեն չեն կատարում, իսկ ահա ազնվական այս կինը կամավոր ընտրել է դեպի Աստված տանող իր ուղին, և չարչարվում է՝ առանց այդ մասին բա՛ռ իսկ ասելու, տրտնջալու, բողոքելու…»։

Շահրու խանումը տակավին լիովին չգիտեր կամ թուուցիկ էր լսել Վազգեն բղեշխի ծանր ձեռքի և Շուշան-Վարդենիին հասնող մարմնական հալածանքի ու ծեծի մասին, բայց այն, ինչ տեսնում էր՝ վեր էր ամեն սպասումից։ Ոտաբրիկ, հնամաշ պարեգոտով, հյուծված, դալուկ դեմքի վրա սև մոմերի պես այրվող աչքերով, նա ասես մարգարեռւհի լիներ. ա՛յս աշխարհից չէր կարծես։ Շահրու խանումը աչքը չէր կտրում Շուշան-Վարդենիից, հետո

կրկին դիմելով մոգին, որ թարգմանի, ասաց. «...Լաել եմ Ձեր հոր՝ արժանահիշատակ Վարդան Սպարապետի և նրա մեծագործ ուժի մասին, տեսած լինելու բախտն, ավաղ, չունենալով։ Սակայն հիմա՝ ի դեմս նրա արիասիրտ դստեր՝ Շուշան-Վարդենիիդ, հոգով աչքերով տեսնում եմ նաև սպարապետին : Ճշմարիտ է, որ սովոր ու աղոթքներից ուժասպառ թեև՝ դուք մի ո՞ղջ զորաբանակի ո՞ւժ ունեք, Շուշան Վարդենի՝, հայոց մեծիմաց տիկին»։

Շուշան-Վարդենին լուսում էր։ Այս առիթով ամրոցից վազել եկել էր Աշրաֆը՝ Հյուրասիրության պատրաստություն տեսնելու. Հապճեպորեն ներս բերված սեղանիկի վրա փայլում էր խոնչան՝ լեփ-լեցուն ընտիր քաղցրավենիքով... նրբահամ օշարակներով...

Նրբանկատ ու խորատես Շահը լուսանումը ոչնչի ձեռք չտվեց (չէ^o որ տանտիրուհին՝ Շուշան տիկինը, հրաժարվել էր այս ամենից)։ Նույն կերպ վարվեցին և ուղեկից թարգման մոգն ու Նազիրե խանումը։

Շահը լուսանումը եկել էր չնորհակալություն հայտնելու Շուշան-Վարդենիին՝ իր դստեր առողջության բարելավման համար։

Աշրաֆը, որ եկել ու մնացել էր Հյուղակում, ուշադիր լսում ու տեսնում էր անցուղարձը, որպեսզի հետո տեղը-տեղին ներկայացնի բգեշխին։ Միաժամանակ, նա անխառն ակնածանքով, նույնիսկ ահով էր համակված դեպի Շուշան տիկինը, հենց Շահը լուսանումի՝ պատվարժան Խոսրով մեծավորի տիկնոջ, գալուստն այստեղ՝ վլեկ այս Հյուղակը, նրա դստեր՝ Նազիրեի... անբուժելի՝ հիվանդությունից... բուժվելը։

Վերջերս Շուշան-Վարդենիին այցելում էին նաև բազմաթիվ մեծահարդ հոգեորականներ։ Անցյալ անգամ Վարդեն բգեշխի եղբայրը՝ Զոջիկ իշխանն էր եկել տիկնոջ՝

Նաթելայի հետ... մեղքերի թողությունն հայցելու Շուշան-Վարդենիից... Սպարապետ Վարդան Մամիկոնյանի դուստրը և կաթողիկոս Սահակ Պարթևի թոռնուհին հետզհետե սրբուհու կերպարանք էր առնում ո՞ղջ Ցուրտավ քաղաքի համար։ Չնայած բղեշխի դրած արգելքներին, հասարակ ժողովրդից շատերն էլ՝ հիվանդությունից բուժվելու, դժբախտության կամ ա՛յլ առիթներով գտնում էին ճամփան՝ դեպի բղեշխական հզոր, քարակոփ ամրոցի բակում ծվարած համեստ Հյուղակը։ Պահակներն էլ բավական հարստացան՝ կաշառք վերցնելով եկողներից։

Վազգեն բղեշխը լսում էր այդ ամենի մասին։ Ազգբում՝ զայրանում, ապա՝ զարմանում, իսկ հետո, ինքն էլ չգիտեր, թե ի՞նչ անորոշ մի զգացում էր համբավի մասին... Ակնածանք էր, ահ, նաև՝ հպարտություն այս կնոջ մեջ (որն ի՛ր կինն է...) ապրող հզոր, անկոտրում, աներեր ուժի նկատմամբ։

Օձի՛ պես ճապուկ ու խորամանկ Աշրաֆն արդեն... վախենում էր Շուշան-Վարդենիից։

Գնալիս Շահը խանումն հարցրեց, թե ինչո՞վ, ինչ-պե՞ս երախտահատույց լինի Շուշան տիկնոջը, ի վերջո, նա իր դստեր կյանքն է փրկել։ Շեշտեց, թե Նազիրեն իրեն տեղեկացրել է, որ ո՛չ փող, ո՛չ էլ գանձ է վերցնում։ Ուրեմն, ինչպե՞ս պիտի լինի։

Մի երկվայրկյան Շուշան տիկինը լուսում էր, հետո դարձավ. «Ա՛յն, որ Նազիրե խանումը՝ ջահել մի կին, նաև՝ մա՛յր, դեպի կյանք է գալիս մահից, ձե՛ր ասելով՝ իմ աղոթքների օգնությամբ է (օժանդակությամբ թերես...), բայց ո՛չ նրանց շնորհի՛վ, որովհետև առանց Աստծո շնորհի հազարավորների՝ աղոթքն էլ անիմաստ է, ամենամեծ վարձատրությունն ու հատուցումն է ինձ համար։ Փողը, ինչքը, գանձը այնքան փոքր բան են Հոգուց, սրտի՛ց

բիսած ճշմարիտ երախտագիտության առջև, ինչպես ավաշահատիկը՝ Ծովի...

Զեր թանկ, անգնահատելի երախտագիտությունը թող նվեր լինի վաղամեռիկ որդուս, Կուր գետում խեղղված, անգերեզման մնացած Սահակիս հոգեոր շիրմաքարին. թող մի փունջ ճերմակ ծաղկի տեսքով զարդարի այն: Ամեն»:

Շահրու խանումն ու Նազիրեն, ուղեկից մոգն ու Աշրաֆը արձանացել էին խորավիշտ, հույժ խոցված այդ կնոջ Հոգու մեծության առաջ: Նազիրեն ու Շահրուն համբուրեցին Շուշան-Վարդենիի ձեռքը, ապա դուրս եկան հյուղակից, զգուշանալով, որ դռան տեղում կախված փսիաթը չդիպչի իրենց շքեղ հագուստներին:



ՀԱԿՈԲ ԵՐԵՅԸ ԳՐՈՒՄ Է

Կան մարդիկ, որոնք ոմանց համար լավ են, շատերի համար՝ վատ: Կան ուրիշներ էլ, որ շատերի համար լավ են, ոմանց համար՝ վատ: Հազվագեպ է լինում, որ նույն մարդուն սիրեն բոլո՞րը: Հակոբ երեցն այդ բացառիկ անհատականություններից էր: Նա հավասարապես սիրելի ու հարգելի էր բազմազգ Յուրտավի բնակիչների համար, բոլորը նրան գիտեին իբրև պարկեշտ մարդու:

Վեճերի, ընդհարումների ժամանակ, եթե Հակոբ երեցն իրազեկ էր տեղի ունեցածին, բավական էր, որ ասեր իր խոսքը, և հարցը վճռված էր: Գիտեին, որ նա ճիշտն է ասում, ճշմարտությունը: Հայտնի էր, որ ո՛չ մի բան ի զորուչէր նրան փոխելու, ո՛չ իսկ հոգեոր և աշխարհիկ մեծավորների խոսքը:

«Միայն Աստծուն եմ պատասխանատու, իբրև գերագույն Խղճի», — սիրում էր կրկնել Հակոբ երեցը:

Ունեցվածքի բաժանման մի դատական վեճի ելքը վճռելիս, իբրև մասնակից հրավիրված Հակոբ երեցն ասել էր. «Աստծուն պիտի ներկայանանք մեր սև ու սպիտակով, ա՛յս մասին մտածեցեք, ո՛վ մահկանացուներ: Անմահ Հոգու մասին մտածեցեք, որ հավիտենակա՞ն է... Ուկու պարկերն ու շքեղ կայքը նույնիսկ փետուրի արժեք ու կշիռ չունեն անմահ Հոգու հետ նժարվելիս»:

Երբ Հակոբ երեցը քայլում էր Յուրտավի փողոցներով, նրան նկատում էին բոլորը, և անպայման՝ ողջունում: Իշխանավորների ու մեծահարուստների առջև խոնարհվո՞ւմ էին թեև, սակայն Հակոբ երեցին տեսնելիս է, որ հույսով ու հավատով էին լցվում, և ճանապարհ էին տալիս հարգալից: Շատերը Հակոբ երեցի մոտ էին գնում ընտանեկան

կամ այլ հարցերով նրա հետ խորհրդակցելու: Զգում էին ու մեծարում այդ շիտակ մարդու հոգեոր ուժը:

Վազգեն բղեշխի ուրացությունը Հակոբ երեցն այդպես էլ չէր ընդունել հոգեին՝ խորունկ արհամարհանքով լցված լինելով դեպի այդ մարդը: Համարում էր (և բարձրաձայն արտահայտել էր իր միտքը, շա՛տ լավ գիտենալով, որ տեղ կհասցնեն), որ եթե Վազգենը կարողացել է ուրանա՛լ, ուրեմն է՛ն գլխից նրա հավատը խախուտ է եղել: Այդպիսի մեկի կորուստն էլ կորուստ չէ..

Ուրացությունից հետո մոլեգնած Վազգեն բղեշխը (մանավանդ՝ մոգերի հրահրմամբ) ընդհատակյա, ծածուկ միջոցներով ջանաց Հակոբ երեցի ոտքը կտրել իր տանից, բայց չեղավ: Հակոբ երեցն ինքն էլ չէր կամենա ամրոց գնալ ... մոգերի՞ն պիտի տեսներ, բայց ամրոցի բակում գտնվող հյուղակում լինում էր: Նախ, քանի որ Շուշան տիկինը՝ այդ տան տիրուհին, իբրև հավատավոր քրիստոնյա ի գին հալածանքի ու տառապանքի պահպանում էր իր հավատը (և տան մեջ ուրեմն դավանակի՛ց, քրիստոնյա կա՛ր), ապա իբրև հոգեոր հովիկ առհասարակ իր պարտքն էր հենց թեկուզ ուրացյալի՛, հավատափոխի՛ հարկի տակ եկողների՛ն անդամ դարձի բերելու փորձ անել:

Ուրացությամբ իրեն ցմահ արատավորած բղեշխը չհանդգնե՛ց էլ Հակոբ երեցի՝ իր տանից ոտքը կտրելու մասին խոսք բանալ, քանի որ տեսնում էր Սամվել, Հովհան, Ափոց եպիսկոպոսների, այլև մյուս երեքլիների ակնհայտ խորշանքն իր նկատմամբ: Տվեց-առավ, մտածեց, որ ավելի լավ է շատ չկարեռի այդ հանգամանքը:

Եթե ճշմարիտ ու հավատասեր Աշուշա բղեշխն արթնանա՛ր մահվան քնից, կմենթանա՛ր. որդին՝ Վազգենը, նո՛ր «գործո՛վ» էր տարփած, նոր շինություն-ապարանք էր կառուցում, որպեսզի ավելի ընդարձակ ու հարմարավետ լի-

նեն մոգերի կացարանները, իսկ բո՞ւն պատճառն այն էր, որ ուզում էր տո՞ւն բերել «նորահարսի՛ն»՝ պարսից արքայի... զոքանչի՛ն...

Ողբացյալ բդեշխ, չգիտեր, որ շինարարությանը զուգահեռ ի՞նչ ծաղր ու ծանակի, երդիծական կծու պատումների «հերո՞ս» էր դարձել։ Շուկայից՝ մարդկային կենցաղի այդ բազմաբղետ խառնարանից սկսյալ մինչև իշխանություններն ու վերևներն առհասարակ։ ...Մարդիկ նաև ա՛յս ձեռվ էին պատժում դավաճանին, և դեռ շարունակվո՞ղ նրա դավաճանությունը...

Զէ, ճշմարտությունը երկո՞ւ ոտքի վրա էր կանգնած այնուամենայնիվ, մեծաքսակ բդեշխը ի՞նչ արեց-չարեց՝ հազիվ կարողացավ մեկ-երկու գործավոր գտնել կառուցվող շենքի վրա աշխատելու համար։ Զէին համաձայնում՝ հրապարակավ կամ անհիմն պատճառաբանություններով մերժո՞ւմ էին նրան, այնպես որ ստիպված եղավ գործավորների՛ն էլ Պարսկաստանից բերել...

Ուրիշ բա՛ն էլ եղավ. կառուցի դուռ-պատուհանի համար բերված փայտի դարսերի մեջ գիշերը կրա՞կ էր ընկել, թե՞ գցել էին, երբ կեսգիշերին հրդեհի իրարանցում ընկավ և փայտի մեծ մասն այրվեց... Բդեշխը տեսնում էր, այլև արդեն անմիջականորեն իր վրա զգում հայրենակիցների անթաքույց թշնամանքը, և դա առավել չարացնում ու թույնով էր լցնում նրան, միաժամանակ առավել խո՞րը թաղվելով այլևս կորցրած ճանապարհի անել ճահճի տիղմի մեջ... Բանն այնտեղ էր հասել, որ պարսից Պերող արքային իր հավատարիմների միջոցով տեղեկացնում էր. «Արքայից արքա Հազկերտին ընդդիմացած Վարդանի դուստրն է, այդ համոզմամբ եմ կտտում մինչև մահ, որովհետեւ իր աշխարհավեր հոր պես չհամաձայնեց ծառայել արքայի աստվածներին»։

Հակոբ երեցը ևս, մյուսների նման, տեսնում ու լսում էր այս ամենը, և օրեցօր, որքան շատանում էր արգահատանքը բդեշխի հանդեպ, նույնքան և ավելի մեծանում էր ակնածանքն ու հիացումն առ Շուշան-Վարդենին։ Դառնաղետ, սակայն մեծախորհուրդ այս պատմության սկզբում, երբ բդեշխը նոր էր տուն դարձել ուրացողի խարանը ճակատին, Հակոբ երեցը այդ ամենը գրի առնելիս, բնականաբար, չէր անտեսել տխուր այդ փաստը։ Սակայն հետզհետե, հընթացս գեպքերին, այնքան խորացավ ու ներթափանցեց (մասնավորապես Շուշան-Վարդենիի վարքագծից ելնելով...) երեսոյթի մեջ, որ հարկ համարեց իրեն համակած զգացումները, խոհերն առանձին մի մատյանի մեջ ամփոփել։ Այդ մատյանն էլ հենց հետագայում դարձավ նրա գիրքը՝ Շուշան-Վարդենիի անօրինակ տառապանքի և նահատակության մասին, Վկայի ու տարեգրի խոսքը, ժամանակի խոսքը։

Բդեշխի առաջին վայրագություններից սկսած մինչև վերջինը նա արձանագրել էր իր մատյանում։ Պատահել էր, որ գրառելիս չէր կարողացել զսպել սրտի տաքնապն ու հերքը, հուզմունքը, և այդ տեղում արդարացի զայրութի տողեր էլ էին հայտնվել։ Սկզբում այդ մասին ոչինչ չէր ասել Շուշան տիկնոջը, հետո խոստովանել էր, նաև՝ միտք հայտնել, թե այդ մատյանն ընդամենը անաչառ վկայի իր խոսքն է այս ողբալի պատմության մասին, իսկական դատավորն Աստված է և կցուցանի իրենը։

Շուշան-Վարդենին համեստորեն լրում էր և առավել հարգանքով լցվում Հակոբ երեցի անձի հանդեպ, քանզի, հայտնի բան է, իշխանամետ, պարսկամոլ, փառատենչ բդեշխը մի օր կընկներ նրա մատյանի հետքերի վրա... իսկ դա չէր կարող անվտանգ լինել Հակոբ երեցի համար։ Եվ ահա նա, չերկնչելով ոչնչից, շիտակ, արդարասեր մարդու,

առավել ևս հոգեոր հովվի իր պարտքն էր կատարում իր հոտի հանդեպ: Պատրաստ էր դիմագրավելու նաև ոխակալ բղեշխից սպասվող չարիքը. սա կոիվ է ի մահ, հենց Շուշան-Վարդենիի կենդանի օրինակով:

Զիմացվեց՝ ինչպես կամաց-կամաց Հակոբ երեցի մատյանի լուրը բերներան հասավ գրեթե բոլորին... Ընկալ Վազգեն բղեշխի ականջն էլ՝ փոթորկելով նրա առանց այն էլ պղտոր հոգին: Նա այդ ամենը համարեց անձնական վիրավորանք, թշնամանք ու ոտնձգություն իր դեմ, և ըստ այդմ էլ որոշեց ահաբեկել Հակոբ երեցին: Այդ էլ չօգնեց: Նրա թիկնապահ Լեանը, որ մութ ու խուժաղուժ նկարագրով բղեշխին ընկերակցելու արժանի մեկն էր, եկավ և զեկուցեց բղեշխին, թե Հակոբ երեցն անդրդվելի՞ է, անկուրում, աներկյուղ... Փողի, կաշառքի մասին խոսելն էլ անհմաստ է, այն աստիճանի անընչասեր ու փողատյաց է այդ մարդը: Կարկամեցին մնացին, թե ի՞նչ կերպ Հակոբ երեցի մերկացնող-դատապարտող մատյանի դեմն առնեն:

«Կնամոլ մեկն էլ չէ, որպեսզի ...», — քթի տակ մոմոաց բղեշխը: Լեանը քմծիծաղով հաստատեց նրա ասածը:

Հակոբ երեցն էլ, իբրև արդարության մարտիկ, քնած չէր. մատյանի մասին տեղեկացրել էր Հարգարժան Սամվել (եպիսկոպոսների առաջնորդ), նաև Հովհան և Ափոց եպիսկոպոսներին, մատյանից որոշ գլուխներ ընթերցել նրանց Համար՝ հավանության արժանանալով: Լուրը տարածվել էր, իշխանավորներից ոմանք ևս ցանկություն էին հայտնել ծանոթանալու մատյանին:

Հակոբ երեցի նկատմամբ հատուկ հետաքրքրություն էր սկսել դրսեորել անկողին ընկած, ավերակյալ Աբեսալոմ իշխանը: Դժբախտությունը՝ (ողնաշարի կոտրվելը գինարբուքի ժամանակ) միանգամից փոխել էր նրա կյանքը, ցնցել ոչ միայն մարմնապես, այլև բարոյապես, ավա՛ղ, ու-

շացա՛ծ Աբեսալոմին: Քանի՛ անգամ տուն հրավիրեց Հակոբ երեցին. վերջինս գնում էր, աղոթքով և իր ներկայությամբ նույնիսկ կյանքի կոչում իննսունամյա ծերունու պես զառամյալ թվացող Աբեսալոմին: Աբեսալոմն ի վիճակի չէր, և Մաղվալա իշխանուհին քանի՛ անգամ գնաց Շուշան-Վարդենիի ոտքը, որպեսզի նրա աղոթքներով բարելավում լինի ամուսնու վիճակին:

Ցուրտավ՝ գյուղաքաղաքի լավ ու վատի, ու ու սպիտակի, լաց ու ծիծաղի մեջ ողջախոհության կոչող զանգի դողանջի պես էր հնչում. Հակոբ երեցը գրում է իր մատյանը:

ԷԼԻ ՄԻ ԵՐԱԶ...

Այդ օրն անձրե եկավ առավոտից ի վեր, ստեպ-ստեպ կտրվելով ու նորից մաղելով, ինչպես լինում է բարակ անձրեկի ժամանակ:

Շուշան տիկնոջ համար ծանր օր էր. իր երբեմնի տուն-ամրոցի կողքի շինարարությունը..., ելումուտ անող պարսիկ գործավորների խոսակցությունները, ձայները, կանչերը տպավորություն էին ստեղծում, ասես ո՛չ թե տանն ես, այլ օտարության մեջ: Ի լրումն ամենի, երբ Աշրաֆը պարսկատարագ Մանեին կողքը գցած դուրս եկավ ամրոցից՝ տիրուհու պահպանով, սիրտը ճմլվեց. այսօրվա՞ համար էր ուրախացել ինքը (ողջ գերդաստանի հետ մեկտեղ) անդրանիկ զավակի՝ դստեր ծնունդով: Մանեն էլ, Աշրաֆի կողմից զգուշացված կամ ոչ, մոր հյուղակի կողմն իսկ չնայեց..., որ սովորաբար անում էր՝ գողունի հայացքներ գցելով հյուղակին, մորը տեսնելու հույսով... չէ՞ որ շա՛տ օրեր էին անցնում, մինչ հնարավոր էր լինում տեսնել միմյանց թեկուղ այդպես՝ հեռվից... Ուր գնացին տեսնես.

պարսկուհի այս կավատը (ամե՛ն ինչի ընդունակ, ինչպես ցույց տվեցին հանգամանքները) այս էլ քանի՛ անգամ ամբողջից գուրս ո՛ւր է տանում տասնհինգ տարին նոր բոլորող, անմեղ, ապաբախտ իր աղջկան: Ի՞նչ որոգայթ է հյուսվում նրա շուրջը, եթե արդե՛ն որոգայթի մեջ չէ: Հերակլն ու Բագրատիկը ևս չեն երևում, էթերին էլ չկա, ավա՛ղ, որ բոլոր առումներով հոգ էր տանում երեխաներին... «Տե՛ր Աստված, ինչպե՛ս եմ խորհում նման բան», — սարսուռով մտածում էր Շուշան-Վարդենին, — ուրեմն Սահակս... փրկվե՞ց...»: Փրկվե՛ց՝ սառն ու զգոն արձանագրում էր տրամաբանությունը: Փրկվեց՝ հանգերգում էր անձրել:

Եկավ պարսից պաշտամունքի ժամը: Վերստին մոգպետի ոնդային ձայնը ձգեց-երկարացրեց արդեն ծանոթ մեղեղին: «Այս ինչպե՞ս է, որ Աշրաֆն աղոթքի չէ, հավանական է, այնտեղ է աղոթում, ուր գնացին Մանեի հետ», — մտորեց Շուշան-Վարդենին: Մանեի հետ՝ միտքը դաշույնի պես խրվեց թիկունքը: Զէ՛ր հաշտվում, չէ՛, ո՛չ մտքով, ո՛չ տեսողութա՞մբ իսկ... Տեսածի՛ն իսկ հավատալ չէր ուզում:

Հանկարծ մոտակա կիսակառույց շենքից վեճի ձայներ լսվեցին, գոռում-գոյզուն, ակնհայտ էր, որ շինարարներն էին, ի՞նչ էր եղել: Իր հյուղակին պահակ կարգվածներից մեկը՝ հետաքրքրված, գնաց իմանալու աղմուկի պատճառը: Երբ հետ եկավ, Շուշան տիկինը նրանից տեղեկացավ, թե ինչն ինչոց է. կոիվ էր եղել, պարսիկ գործավորները, որ ավելի շատ են քանակով, և գիտեն, որ բգեշխի հովանավորությունն են վայելում, վիրավորել են հայազգի երկու-երեք գործավորների, անգամ՝ սպառնացել:

«Մերոնք էլ, բնակա՞ն է, դիմադարձել են», — զապված զայրույթով պոռթկաց պահակը: Նրա՛ էլ, երկրո՛րդ պահակի համար էլ գժվար էր, Շուշան տիկինն այնպե՞ս լավ հասկացավ նրանց հոգեվիճակը...

*Մթնդում էր: Անձրեկից թաց գետինն առողջ հողաբույ-
րով էր շնչում: Թեթևակի քամի կար: Մոտենում էր Հույ-
սը՝ բերանին թռչու՞ն էր, ի՞նչ էր: Մոտեցավ: Շուշան տիկ-
նոջ սիրտը շամփրեց անորոշ մի ցավ. ի՞նչ է, ընտանեբույր
Հու՞յն էլ վայրենացավ. շան երախում այն աքարն էր, որ
վերջին օրերին այնքան հաճախ էր ճշում սրտակեղեք...*

*— Այդ ի՞նչ ես արել, Հույս, — գոչեց տիկինը, — հապա
գցի՛ր, թո՛ղ նրան, թո՛ղ...*

*Հույսը հանգիստ վայր դրեց ավարը՝ զարմացած աչքե-
րը հառելով տիրուհուն: Զէ, ակներև էր, որ շունը չէր
սպանել թռչունին, Շուշան տիկինը տեսավ, որ խեղճ ա-
քարը վաղուց արդեն հյուրընկալ որս էր դարձել որդերի
համար... Ու՞մ էր վնասում այս թռչունը, մտածեց Շուշան-
Վարդենին, հետո խնդրեց պահակներին թաղել նրան:*

*Գիշերամուտին թեթևակի մաղող անձրեն ուժեղացավ,
իսկ կեսգիշերն անց երկինքը որոտաց ու կայծակը շաչեց...
Անձրեն առատացավ, հորդացավ, խոշոր կաթիլները քա-
մուց տարուբերվող փսիաթից անցնելով թափանցում էին
ներս: Շուշան տիկինը ներս քաշվեց, Հույսն էլ կողքը, այդ-
պես էլ քնեցին, ինչպես շատ անգամ էր եղել, անձրեի խոլ
աղմուկի, ջրի միալար շափշափյունի ներքո...*

*... Շուշան-Վարդենին ընդո՞ստ վեր թռավ, քնահարամ
անելով Հույս շնիկին. չգիտեր՝ որքան ժամանակ էր անցել.
Վերջերս մղձավանջային երազներից հաճախ էր այդպես
տագնապահար արթնանում: Հետո, գիշերվա մնացյալ
մասն էլ հանգստի չէր ծառայում. տեսածն աչքի առաջ էր
գալիս էլի՛ ու էլի: Այսպիսի երազ երբեէ չէ՛ր տեսել.*

*... Բարձրագիր, լայնատարած կառավինարանին կանգ-
նած էր Վազգեն բդեշխը, երկու ձեռքով բռնած ծանր, մեծ-
կակ մի սկսութեղ, որի վրա... սեփական կտրված գլո՛ւխն
էր...*

ԾՈՒՅԱՆ ՎԱՐԴԵՆԻԻ ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆԸ

Ահա և ցըտերն ընկան։ Դուքսը՝ ցուրտ, ներսը՝ ցուրտ,
միջավայրը, մարդկային փոխհարաբերությունները՝
ցուրտ...

Կյանքի, մեր այս երկրային կյանքի ամենադաժան հաշ-
տուցումներից մեկն է Ծերությունը։ Զկա ավելի տխուր
բան, քան ծերության օրերին տեսնել ջարդուկիչուր եղած
երազներդ։ Երեկ ամրոցի բակը մտավ ծեր մի մամիկ։ Տե՛ր
իմ, այս շեն տունը, այս հզոր ամրոցը, որ աղքատների, առ-
հասարակ կարույալների համար հուսալի պատվար էր,
ի՞նչ է դարձել այսօր։ Այս կինը հավանաբար առաջներում
վայելել է իմ առատաձեռնությունը, աստծո տված մի պա-
տառ հացից իրեն բաժին եմ հանել, հագուստից-բանից էլ...
Ահա ձմեռնամուտ է, եկել է նորից։

...Այս տանն իրեն տիրուհի՛ կարծող Աշրաֆը կոպտորեն
գուրս արեց խեղճին, դեռ սաստելով, որ այլևս չերևա։ Ի՞նչ
իրավունքով, Տե՛ր իմ, ո՛վ է հազարաղեմ, սևահոգի այս կի-
նը, որ այնպե՞ս լավ ներդաշնակեց բգեշխի մութ կրքերին
ու ծրագրերին։ Նմանը նմանին է գտնում։

Դժվար է այն մարդու վիճակը, որ կյանքում իրեն ան-
դարձանելի չարիք պատճառողների պատիժը ստիպված է
թողնել Աստծո՛ դատաստանին։

Ինչո՛ւ նրանք են ավելի խորն ու դաժան ցավ պատճա-
ռում մեզ, հենց նրանք, ում երջանկության թանկ ու
անկրկնելի՛ պահե՛ր ենք պարզեել, ում չենք խնայել ամե-
նաթանկ բանը՝ Սե՛րը մեր... Ինչու՞ հենց նրանք են սպա-
նում մեզ, հենց նրանք, ովքեր միայն երախտապա՛րտ պի-
տի լինեն մեզ՝ առհավետ...

Երբ կյանքիս ծա՛նը, ծա՛նը այս պահերին լալիս եմ, ի՛նչ տրտում աչքերով է նայում ինձ Հույսը, որի հասկացող, գթառատ աչքերն առանց այն էլ տխուր են... Եվ, մի տեսակ, ցավում, ամաչում եմ նրան առավել տխրեցնելու, վիշտ պատճառելու համար, դեմքս շրջո՛ւմ եմ, որ լացս չտեսնի:

Աշրաֆին կանչեցի ու պատվիրեցի, որ պահարանից հանի ու բերի բրդյա ծածկոցներից մեկը՝ հենց ձմեռվա համար նախատեսված: Սիրալի՛ր ժպտաց ու լեզու թափեց, ո՛ղջ օրն անցավ՝ չկա՛, ո՛չ էլ կրերի երեխ... Ցո՛ւրտ է, Հույսը սեղմվել է ինձ, դրսում ոռնում է քամին: Այնքա՛ն ցուրտ է, ասես օձ է բարձրանում ողնաշարիդ միջով՝ սառնության շունչը... Հյուղակի առջև ինձ հսկո՛ղ երկու պահակները կրակ են արել, տաքանում են...

... Իրոք, ի՛նչ պարգև, փրկությո՛ւն ու հրա՛շք է այս քունը, Աստվա՛ծ իմ, այս դարձղարձիկ, քարեղեն ու անսիրտ աշխարհում: ...Աչքերդ փակում ու գնում ես ա՛յլ մի աշխարհ, ուր առաջիկ պես մոտ ու հարազատ դեմքեր կան, ուր կարող է հնարավոր դառնալ անհնարինը՝ խոսել կորցրած հարազատներիդ հետ, մանավանդ տեսնել, տեսնե՛լ նրանց:

... Ինչպես ենք հաշտվում կորուստների հետ, ինչպե՛ս ենք հաշտվում: Այդպես՝ մի՛ քիչ, քիչ-քիչ մեռնելով...

Այսօր խոշո՛ր, առատ փաթիլներով ձյուն եկավ... Գիշերային անդորրում բակ ու շրջապատ ողջ սպիտա՛կ-սպիտակ էին: Մինչ առավոտ գոնե մաքուր կմնա, ուրախացանես:

... Մարդկային հոգին էլ այդպես է՝ մաքո՛ւր, ճերմակ, անբասիր-անաղարտ, բայց հետո նրա վրա՝ էլ... ոտնաշետքե՛ր են դաջվում, ոտնահետքե՛ր...

Արդեն երրորդ օրն է պատվիրելուցս ի վեր, որ Աշրաֆը

բրդյա ծածկոցը չի բերում. ոտքերս սառույց են կտրել (ոտաքորիկ մանավանդ), իսկ խեղճ շնիկն ինձ սեղմված դողով՝ է... Ինչու՞ մարդկանց մեծ մասը, երբ լավ ես վարվում հետները՝ բարի, մարդկային, քրիստոնեաբար, փոխադարձում է վատո՞վ, ուզում է, ո՞չ ավելի, ո՞չ պակաս, նսեմացնել քեզ։ Աշրաֆն օրինակ։ Նրա՞ համար արդյոք, որ իրենց էլ ստորացրել են։ Այս կնոջ պարագան իրոք զարմանալի է. եկել, խցկել է իմ տունուտեղի մեջ... բոլո՞ր իմաստներով, խլել և խլում է իմ բաժինը, և դեռ խնայո՞ւմ է ինձ իմ իսկ ունեցվածքը...

Սկսովանք չկա, չէ, ապրում ենք, քանի դեռ գնալու մեր ժամը չի՛ եկել։ Եվ հատիկ-հատիկ գլորվող այս ժամերը մոտեցնում են մեզ Անդենականին, Շարունակվողին ու Հաւկերժականին։ Ամեն։

... Նայում ես այնքա՞ն հարազատ, միա՛կ ու սիրելի դարձած, քոնը՝ դարձած մարմնի՛դ՝ քո հին ընկերոջը։ Եվ բնությունն ու աստված, ինչ տվել են շոայլորեն, աստիճանաբար հե՛տ են վերցնում՝ առողջություն, գեղեցկություն, երիտասարդություն...

Եվ որ մի օր թողնելու ես այս ամենն ու գնաս, Հոգի՛, իմ Հոգի՛... Թողնելով այս սիրելի, տառապած, հարազատ, շա՛տ հարազատ մարմինը, որի մեջ ապրեցիր երկրային կյանքում։

* * *

Այնուամենայնիվ, ծա՛նը կյանքն էլ կյանք է... Ցամաքած հույսով, ավերված տուն ու տեղով, կսկիծի ու կորսոյան (կորուստների) բեռան տակ չկռանալը, չքեկվելը, ապրե՛լն է ուժը։ Պե՛տք է ապրել։ Եվ երբ... այս ամենից հետո չե՛ս չարանում, ա՛յդ է Հաղթանակը։ Եթե բարի ես՝ հզոր ես ուրեմն... Թե չէ, չարիքի ու չարության հորձանքով լողալն ու

չարին չարո՞վ պատասխանելը ի՞նչ մի դժվար բան է: Հաղթանակը Զչարանալն է: Զչարանալն է Հաղթանակը:

* * *

Երեկ գիշեր, հյուղակից մի քիչ հեռու չներ էին ոռնում, ամենայն հավանականությամբ՝ կովում էին: Հույսը, որ խաղաղ մրափում էր մշմշալով, այդ աղմուկից արթանացավ, ականջ դրեց, հետո սկսեց գնալ-գալ նեղլիկ հյուղակում, հետո էլ՝ հաչել սկսեց: Ուրեմն չների կովի այդ ձայներից Հույսն հասկացա՞վ ինչ-որ բան և իր վերաբերմունքն է արտահայտում: Հանգստացրի, ասացի, որ պառկի տեղը, ի՞նչ գործ ունի կովարար այդ շների հետ: Հասկացավ, ասածիս հնչերանգից լիովին կողմնորոշվեց. իրոք, դադարեց քայլել ու հաչելուց, եկավ պառկեց կողքիս՝ ականջը նրանց ձայնին, հայացքը՝ ուշիմ...

Շա՛տ գեղքերում մարդիկս այս շնիկի ու նրա ցեղակիցների չափ չկանք. հեռվից-հեռու հասկանում են իրար, մենք իսկի մոտիկից չենք հասկանում... Դեռ ուրիշ բան էլ կա, նույնքան հետաքրքիր: Աշնան վերջին Հույս շնիկն անհանգիստ էր. ուտելու համար ի՞նչ էին տվել պահակները՝ չգիտեմ, գուցե մրսե՞լ էր, բայց պառկել էր թաթիկներով փորը բռնած... Հետո, երբ երևի ցավը մեղմվեց, դուրս եկավ հյուղակից. տեսնեմ՝ մոտակա խոտածածկ տարածության մեջ հոտվալով մի բան է փնտրում: Գտավ. ուզածն ինչ-որ խո՛տ էր ուրեմն (մե՛զ համար՝ ինչ-որ, բայց նա լա՛վ գիտեր), տեսնեմ կամաց-կամաց պոկոտում է խոտը, ուտում: Մեկ ժամ անց էլի առույգ էր ու շարժուն: Բնազդ է, ասում ենք, մինչ բնազդի մեջ խելքի բաժին էլ կա: Էլի՛ մի բան: Նկատել եմ (է՛, արդեն հինգերորդ տարին է, որ Հույսն ինձ հետ է), որ հիվանդանալիս բուժման ուրիշ միջոց էլ ունի. ոչինչ չի ուտում, պառկում է, միայն ջուր է

խմում, ուրեմն մաքրո՛ւմ է իրեն, հապա՛: Ելի՛ բնազդով,
գուցե և ո՛չ միայն բնազդով... Ահա թե ինչպիսին են մեր
կրտսեր եղբայրները՝ կենդանիները, և որքա՛ն բան ունենք
նրանցից սովորելու:

... Այսպես, գիշերը, երբ մթության մեջ պառկած լալիս
ես, և արցունքները թրջում են դեմքդ, մտածում ես, որ
Աստված տեսնո՛ւմ է քեզ, տեսնո՛ւմ է արցունքներդ և
հասկանո՛ւմ է, հասկանում:

Անապատում քայլողի մենությունը... Մեն-մենակ քայ-
լողի... Դատապարտվածի՞... ի՞նչ իմանաս... գուցե այդ ա-
նապատը օրերից մի օր կհանի՞ նրա դեմ իր ամենաշքեղ
օազիսը: Գուցե նա կմեռնի՞ այդ անապատում անընկե՛ր ու
ծարա՛վ... Երկու դեպքում էլ չքեզ է անապատում քայլողի
մենությունը, նա այդ մենության արքան է՝ անզույգ ու
անմրցակից, իր ձակատագրի և իր Ցավի արքան: Իսկ ար-
քան արքա է միշտ:

* * *

Հույս շնիկից, որն այնքան փոքր ու անպաշտպան է
թվում, Համբերությո՛ւն եմ սովորում, Համբերե՛լ եմ սովո-
րում...

* * *

Հիմա, ձայներից դատելով, թաղման մի թափոր անցավ
մեր ամրոցի կողքով: Գնաց մեր կողքից մեզանից ևս մեկը՝
հանգստանալո՛ւ այս աշխարհի հոգս ու ցավից... Որքան
ժամանակ է, որ զրկված եմ գերեզմանոց գնալու հնարավո-
րությունից. իսկ դա նույնքան կարեոր է, ինչպես ուղղա-
լարը պատը շարելիս, մի՛ գծի, մի ուղղության է բերում
կյանքիդ պատը, հավասարակշռում...

Կյանքի՛ օրենք...

Մահվան օրենք...
Կորստի՛ և հարատեման օրենք...

* * *

...Այսօր արթանացա այն մտքով, որ մենությունը սոսկ մարմինը չէ, նաև հոգին է հյուծում, գուցեկ՝ նախ հոգին, որովհետեւ հաղորդակից չլինելով մեկ այլ հոգու հետ, սնվում է, այրվում իր լույսով, և՛ իր, և՛ դիմացինի (չեղած) փոխարեն: Միշտ, դարձյալ, անսպառ, դրա համար էլ ի վերջո հյուծվում է... ես ասում եմ. է՛հ, հյուծվե՛ս, չհյուծվե՛ս՝ պիտի դիմանա՛ս, իմ չոգի՛, չոգի՛, պիտի դիմանաս, որովհետեւ հավատում եմ քեզ...

* * *

Զարմանալի լպիրշություն (ահոելի՛ չարության հետ, ի-հարկե...) Աշրաֆ կոչվող այս կնոջ կողմից, ուղղակի զարմանալի՛. առ այսօր (ասելուս տասներո՛րդ օ՛րն է արդեն), դեռ տաք ծածկոցը չի բերել: Որոշեցի՛ է՛լ չասել, որպեսզի չմտածի, թե այդքան մեծ վնաս է տալիս ինձ: Իսկ ցուրտը նեղում է չնիկին էլ, ինձ էլ...

Տառապանքի՛ իմաստնություն...

Ցավի՛ իմաստնություն...

Համբերության իմաստնություն...

* * *

Ահա թե ինչո՞ւ հերթով պատուհասեց Բրաբիոնին, էթե-րիին, հիմա էլ ի՞նձ է հետամուտ, որպեսզի անարգել ի՛ր ուզածն անի: Իսկ իր ուզածը բգեշխի էլ ուզածն է... Ողորմելի Վազգեն, մինչեւ ո՛ւր ընկար, հարազատասպա՛ն...

ԲԱԳՐԱՏԻԿԸ ԳՏՆՈՒՄ Է ՄՈՐԸ

Վախորդ գիշերը Շուշան-Վարդենին երազում հորը՝ Վամիկոնեից տիկնոջն էր տեսել: Երազահանները մեկնաբանում էին, որ մահացած ծնողներին երազում տեսնելը մի կարևոր ու անսպասելի գեապի ազդարար է, աննախադեպ, միաժամանակ լավ, հաճելի մի բանի իրականացում:

Օրվա ո՞ր ժամն էր. Շուշան տիկինը հետո մտաբերելիս ստույգ չէր հիշում, այնքան տակնուվրա էր եղել հոգով, կարծես թե միջօրէից հետո էր, քանի որ առավոտյան մոգպետը պաշտամունքի էր շարում-կանգնեցնում ամրոցի մեծին ու փոքրին, հետո՝ միայն նախաճաշի իրավունք տալիս:

...Նախ մի՛ ոստյունով գեալի հյուղակի ելքը ցատկեց Հույս շնիկը, ապա մանկական փամփլիկ մի ձեռք մի կողմքաշեց կախված փսիաթն ու... շեմին հայտնվեց... Բագրատիկը: Տե՛ր Աստված: Շուշան-Վարդենին կորցրեց իրեն, մինչ տղեկը կարոտով փարփեց նրան՝ մայրի՛կ ասելով: Գրկեց որդուն՝ արդեն քանի՛ տարի մոտիկից չտեսած, ո՛ւր մնաց թե՝ գրկե՛ր, սեղմեց կրծքին, համբուրո՛ւմ է, համբուրո՛ւմ է գլուխը, աչքերը, ձեռքերը, էլի՛ ու էլի՛, ասես չհավատալով կատարվածին: Բագրատիկն արցունքոտ աչքերով նայում էր մորն ու... շոյելով նրան, միաժամանակ կրկնում. «Մայրի՛կ, մայրի՛կ...»:

Շունը ուրախ կլանչյունով պտտվում էր նրանց շուրջը... Մի քանի րոպե (որ տարիների՛ կարուն էին խտացնում...) իրար փարփած միմյանց ներկայությունն ըմբոշինելուց հետո Շուշան տիկինն էլ, Բագրատիկն էլ՝ արձանացան հան-

կարծ. ամրոցի բակով մեկ տղայի անունն էր ձայնում և փնտրում Աշրաֆը՝ մոգպետի հետ միասին։ Մայր ու տղա սսկվեցին։ Հույսը, ինչ-որ բան հասկանալով, կանգ առավ ինքն էլ։ Լսվեց, որ Աշրաֆի հարցին ի պատասխան տասներեքամյա Հերակլը պատասխանեց, թե ինքը տեսավ, որ Բագրատիկը դուրս վազեց դարպասից… Հետաքրքիր էր, Հերակլը միտումնավո՞ր, թե՞ սխալմամբ մոլորության մեջ գցեց կհուկին, բայց այդ լսելուն պես Աշրաֆը վայնասուն բարձրացրեց և չաղրան գլխին քաշելով դուրս վազեց բակից…

— Բագրատի՛կս, — շոյում ու շոյում էր երեխային մայրը, — իմ լա՛վ, խելո՛ք, անո՛ւշ տղաս… Եվ արցունքները հոսում էին դալուկ այտերն ի վար…

Բակում շարունակվում էր իրարանցումը։ Պահակները, որ անշուշտ տեսել էին Բագրատիկի հյուղակ մտնելը, ձայն-ծառուն չէին հանում, խորապես ազդված… Իրենք էլ, ի վերջո, ընտանետեր ու երեխատեր էին։ Քա՛րն իսկ կհուզվեր, ուր մնաց…

Քիչ անց չարագույժ ու խոռվյալ բակ խուժեց Աշրաֆը, քայլերը միանգամից ուղղելով Շուշան-Վարդենիի հյուղակի կողմը։ Նախ, չհամարձակվելով միանգամից ներս մտնել, հարցրեց պահակներին։ Պատասխան չստանալով, մի կողմ քաշեց փսխաթն ու կանգնեց հյուղի շեմին չարապիտ. «Ահա թե որտե՛ղ ես», — կեղծ ժպիտով դիմեց տղեկին, — իսկ ես ո՛ղջ փողոցը ոտի տակ տվի քեզ գտնելու համար»։ Բագրատիկը սեղմվել էր մորը. «Չե՛մ ուզում, գնա՛, — ասաց նա Աշրաֆին, — մնում եմ մայրիկիս մոտ»։

Շուշան տիկինը քարացել էր պահի անսովորությունից, ցավից, ճակատագրի այդօրինակ խաղերից, հետո ծանր արտաքրեց. «Գնա՛, Աշրա՛ֆ, երեխան հետո կգա…»։

Աշրաֆը կանգնել-մնացել էր՝ օձացած, նախանձափր-

փուր, ուզածին հասնելու վճռականությամբ։ Հարցը լուծեց չնիկը, որը բնագդով զգում էր կատարվածը, և, բնականաբար, մոր և երեխայի կողմն էր (շները տարբերում են բարին...), էլ չասելով կապվածության մասին առ տիրուհին, հաչելով հարձակվեց Աշրաֆի վրա, իբր դո՛ւ գնա... Աշրաֆն անհողդողդ կանգնել էր։ Մի քանի վայրկյան մնաց այդպես, հետո ընդուստ շուռ եկավ և, առանց մի խոսքի, տիրական քայլերով գնաց դեպի ամրոցը։

Ժամանակ անց, երբ Բագրատիկը ողջ այդ անցուդարձից, ապա չնիկի հետ խաղալուց հոգնել ու մոր կրծքին փարփած քնել էր՝ եկան պահակները և Բագրատիկին զգուշորեն գրկելով՝ ամրոց տարան։

ՍԱՐԴՈՍՏԱՅՆ

Պարսից արքայի զոքանչի՝ «նորահարսի» պարագան ծանր էր ի սկզբանե։ Ճիշտն ասած, Վազգեն բղեշխը մահու չափ խոցված էր Պերոզ արքայի այդ ընտրությունից (ընտրություն մի՛ ասա, նենգամիտ ու մութ թակարդ ասա...): Երբ նա պարսից արքայից կին ուզեց իր համար, ի հաստատումն իր ճշմարիտ դափանափոխության (դափանափոխությունը ճշմարիտ լինու՞մ է որ...), ակնկալում էր, որ կարժանանա պարսից արքայադուստրերից մեկնումեկին կնության առնելու պատվին։ Այդպես չեղավ։ Այդ դեռ ոչինչ, գոնե պալատական քաղցրաբարո, ճկուն տիկիններից մեկը լիներ։

...Բայց ա՛յս տարբերակը. Պերոզի զոքանչը (Տե՛ր ասոված...) կյանքի մրրիկներում կոփված, վիճաբան, սրի բերանի՛ պես խոցող ու վտանգավոր... Քառասնամյա տարիքում, ճշմարիտ է, Ֆեյրուզ խանումը դեռևս գեղեցկատես

էր ու մեծաշուք, սակայն քառասուն օձի էլ փաթույթ տված, նույնքա՞ն էլ թույն ունեցող այդ մեգերան բդեշխի տանն այլ բան չէր, քան հայտնի տրոյական ձին... Հապամի ասա Ֆեյրուզ խանո՛ւմ. ժանտաժափի՛տ սիրալիրությամբ մի կին. (բերանը, շուրջերը ժպտում են, իսկ աչքերը...): Պարզ երևում է, որ սրան ասես մագերը կտրիր, գլուխն էլ հետը կթոցնի...

Վազգեն բդեշխը վիրավորված էր Պերողից, հույժ խոցված՝ կրկնակի՛. լավ, եթե ոչ ծաղկատի արքայադուստրերից մեկը, ապա գոնե տարիքով իրենից փո՛քը մեկը լիներ (Ֆեյրուզն ախր իր տարիքին է, իսկ արևելյան պատկերացումներով քառասունամյա կինը... ծե՛ր է համարվում): Վիրավորանքի գեռ երրո՛րդ կողմն էլ կար: Սատանայից օր առաջ ծնված բդեշխը լա՛վ գիտեր, որ հավաքականորեն Ֆեյրուզ խանում կոչվող երևույթը իրականում լրտեսական ո՛ղջ մի ցանց էր, սարդոստայն... Դուրս է գալիս, որ Պերողը չի՛ հավատացել իրեն, իր ուրացումին, և... չի՛ էլ վստահում... Ո՛չ միայն չի վստահում, այլև՝ ստուգո՛ւմ է, մշտապես հսկո՛ւմ Ֆեյրուզ խանումի հետ եկած աչքերի ու ականջների միջոցով: Վազգենն այն էլ էր գիտակցում, անշուշտ, որ եթե նրա փոխարեն մատաղատի արքայադուստրերից մեկն էլ լիներ, միևնույնն է՝ լրտեսական «զորաբանակը» լինելու էր... Վազգեն բդեշխը իրերի և երևույթների հետեւում նրանց չերևացո՛ղ կողմն էլ տեսանելո՛ւ կարողություն ուներ...

Վերջերս եղած միջադեպը հատկապես, մա՛զ էր մնում, որ նրան հաներ հունից: Հարցն այն է, որ իր ժամանումից ի վեր Ֆեյրուզ խանումը աչքով աչք չուներ Աշրաֆի հետ: Դա, գուցեև, փոքր-ինչ հասկանալի էր, բայց այսչա՛փ... Ի վերջո, սա իր՝ Վազգենի տունն է, և Ֆեյրուզ խանումն էլ այստեղ իբրև կի՞ն է մտել, ո՛չ որպես զորահրամանատա՛ր,

այն էլ իրենից բարձր աստիճանակարգով։ Աշրաֆը, Ֆեյրուզից ոչ պակաս հողմածեծ ու փորձված, միաժամանակ ավելի՝ դիվանագետ, քանի որ իշխանության իմաստով համամատաբար թույլ կողմ էր, մի օր արցունքն աչքին եկավ, ընկավ Վազգեն բդեշխի ոտքերը. «Տե՛ր իմ, եթե ես այս տանը պետք չեմ այլևս, այդպես էլ ասա՛, կհեռանամ եկած ճանապարհով, ճիշտ է, սրտիս մեջ մինչև մահ փայփայելով տիրոջս ազնիվ կերպարանքը և նրա անունը՝ շուրթերիս։ Թող ե՛ս գիտենամ, թե որքա՞ն եմ սիրում նրան և որքա՞ն նվիրված եմ։

Բայց ահա, արժանապատիվ Ֆեյրուզ խանումը, գալուց ի վեր, այնպիսի շեշտով է խոսում ինձ հետ, ասես իր ծառաներից մեկը լինեմ։ Եվ, ընդհանրապես, տեսնող աչքը կտարբերի, որ նա նո՞ւյն վարժապետական ոճով է խոսում... բոլորի՝ հետ։ Ասես ինքը բոլորիս ուսուցի՛չն է, տե՛ր իմ։ Մեծ է իմ համբերությունը՝ տիրոջս նկատմամբ իմ սիրո չափ, բայց ես էլ կարող եմ մի օր համբերությունից դուրս գալ, չէ՞։ Կոպտում է, նվաստացնում իր ծառայողների ներկայությամբ։ Ինչ է ուզում ինձնից, մանավանդ որ առանձի՞ն էլ ապրում է իր համար կառուցված պալատում։»

«Ի՞նչ է անում նա», — մտքերը ժողովելով հարցրեց Վազգենը, որի հասունացող զայրույթն արդեն իրենից առաջ էր վազում...»

«Ի՞նչ ասեմ, տեր իմ, արևելյան ասացվածք կա, թե թշնամին իր թշնամու մտադրությունները չի իմանում, ի՞նչ իմանամ, օրը մի բան չէ՛, օրը մի քանի՛ բան է հնարում... Անցյալ անգամ որդիդ՝ քաջարի պատանյակ Հերակլը, հիվանդացել էր։ Ես ինչ-որ պետքն էր, արել եմ։ Հիմա լավ է, հազն ու մրսածությունն անցան։ Բայց ահա, եկավ ամրոց մտավ հարգելի Ֆեյրուզ խանումը, և ձայնը

գլուխը գցած ի՞նչ ասի, որ լավ լինի: Ֆշշում է. «Այս ի՞նչ եղավ, որ հիվանդացրել ես որդուս, որովհետև ամբողջ օրը աչքդ այրմարդոց կողմն է: Ասեմ, որ տիրոջիցս բացի, ես ոչ մեկի կողմն էլ չե՞մ նայել»:

«Գնա՛, – հոգնած ձայնով խոսեց Վազգեն բդեշխը, – ես կհոգամ...», – իսկ գլխում օձագալար այն միտքն էր պտտվում, թե օտար այս կանայք այստեղ՝ ի՛ր տանը, իրենց իշխանության խաղաքարերն են ծտում, մինչ իր Շուշանը... քա՛ր է կրծում իր բանտում...

Ինքը լա՛վ, շա՛տ լավ գիտե կանանց իրենց տեղը նստեցնելու ձեր (իր Շուշանին իսկ չխնայեց...), սրա՛նց տես՝ այրմարդու գլո՛ւխ են կորցրել, այնտե՛ղ, պարսից արքունիքում են այսպես սանձարձակվել սրանք: Ես էլ ահա նստելու կնիկների վեճերը հարթող դատավոր եմ դարձել, երանի՛ ինձ...

Եթե միայն Շուշանն իր կողքին լիներ առաջին կնոջ իրավունքով ու իշխանությամբ, իր հպարտ բնավորությամբ, սրանց բոլորին ի չի՛ք կդարձներ...

Բայց եթե իր իմացած Շուշանն է՝ չի՛ դավաճանի իր հավատամքին:

Չի՛ դավաճանի:

ՄԱՆԵՆ ԱՆՀԵՏԱՆՈՒՄ Է...

Գիշերամուտին հայտնվեց Սև Հոռովիը: Զարմանալի՛ բան. տգեղությունը, անշուշտ, մնացել էր, բայց դեմքի արտահայտությունը լրիվ փոխվել էր: Կարծես Սև Հոռովիը չլինե՛ր: Աչքերը նայում էին ցավագին, կոկիծո՛վ... Ծնոտը կախ էր ընկել:

Զայնն ասես դուրս չէր գալիս կոկորդից: Լուռ, սեեռուն

նայում էր Շուշան-Վարդենին։ Ասես նրան մեծ դժբախտություն էր պատահել։

— Հոռո՞վ, — հարցական հայացքն ուղղելով նրան, խոսեց Շուշան տիկինը, — խոսի՛ր, մի բան ասա։

— Ի՞նչ խոսեմ, երանի լեզուս լալկվեր ու չասեի՛ այն, ինչ հիմա լսելու ես... Շուշան տիկին, համբերատա՛րս, խաչյա՛լս, արիացի՛ր ընդունելու նո՞ր այս հարվածը. Մանեն... չկա՛, անհետացել է...»

Շուշան-Վարդենին նախ ականջներին չհավատաց։ Այդ անունով իր դուստրից բացի ուրիշ մեկը չկար սակայն... Մանե՞ն, ուրեմն ի՞ր Մանեն...»

Հետո ընդուստ վեր թռավ ու բռնելով Հոռովի ուսերից, գոչեց.

— Խոսի՛ր, խոսի՛ր, ի՞նչ է պատահել Մանեիս, ի՞նչ է պատահել։

Հոռովի վիշտն անկեղծ էր։ Ի վերջո, որքան էլ փորձված ու խարդախ, ինչպես բոլոր իր նմանների, նրա հոգու խորքում նույնպես փակ մի անկյուն կար, ուր ծվեն-ծվեն եղած բարուց մի կտոր էր մնում... Բարու այդ հատիկն էր, որ ապրեցնում էր նրան...»

Այսպիսի ցնցում Շուշան-Վարդենին մեկ էլ ապրել էր ամուսնու՝ Վազգեն բղեշի ուրացման բոթը լսելիս։ Նա ուշագնաց եղավ, ինչպես այն ժամանակ։ Հոռովն իր ուժերով ուշքի բերեց նրան, շատ լավ գիտակցելով, որ Աշրաֆի և այլոց չար աչքը չպիտի՛ տեսնի այս ամենը։ Թող չտեսնի՛

Շուշան-Վարդենին ուշքի եկավ դանդաղորեն։ Հոռովը կավե ջրամանի ողջ պարունակությունը ցնցուղել էր երեսին։ Դանդաղ բացեց աչքերը, սակայն տեսնելով իր վրա կռացած Հոռովին՝ կրկին ուշքը կորցրեց։ Երբ վերստին բացեց աչքերն ու հետամուտ եղավ լսածին, ցածր, ցածր

Ճայնով հարցրեց.

— Ուրեմն, ճշմարի՞տ է լսածս: Այս ամենը երազ չէ՝, չա՛ր երազ, — մրմնջաց նա:

Երազ չէր, ավաղ: Հոռովիը պատմեց, որ ամրոցում բոլորը խառնվել են իրար: Բոլորն ո՞վքեր էին սակայն. Մանեի եղբայրները՝ Հերակլը, Բագրատիկը: Մյուսները, մնացյալը՝ Աշրաֆը, մոգպետը, մոգերը, ծառայակազմը... Ինչպես պատմեց Հոռովիը, ինքը սկզբում կարծում էր, թե դա հորինած, սուտ լուր է, Աշրաֆի սարքածը (հետո՝ կերևա, թե ինչու՞...), իսկ երբ տեսավ իրար անցած եղբայրներին...

Շուշան տիկինը քարացել էր. ու՞ր է Մանեն: Անկասկած նրան մի տեղ տարել են, ինքը հո չէ՞ր կարող գնալ, կորչել... Աշրաֆի մատը խառն է հարկավ, չէ՞ որ Բրաբիոնի և էթերիի կորստից հետո տան էլ, երեխաների էլ կյանքի դեկը Աշրաֆը վերցրել է իր ձեռքը: Վերջին շրջանում սակայն Աշրաֆ-Ֆեյրուզ հետզհետե բարդացող հակամարտությունն էլ խորհելու տեղիք էր տալիս: Ո՞վ գիտե, քանի որ երեխաների կյանքին հետևող և պատասխանատու էր կարգված Աշրաֆը, երեխաներին վտանգելը նշանակում էր ուղղակի հարված հասցնել Աշրաֆին... Ֆեյրուզն իր ձեռքին հազար ու մի միջոց ուներ նման բան ձեռնարկելու...

ԱՅՑԵԼՈՒՄ ԵՆ ՇՈՒԾԱՆ ՎԱՐԴԵՆԻԻՆ

Շուշան-Վարդենիի ինքնահոժար արգելափակման... վեցերո՛րդ տարին լրանում էր արդեն: Վե՛ց տարի. որքա՛ն ջուր էր հոսել այդ ժամանակից ի վեր: Ուրացող հոր ճնշումով ու պնդմամբ, մոգերի տևական ու նպատակաւաց քարողիսոսությամբ երեխաները գրեթե լրիվ օտարվել

էին մորից, նաև՝ ամենայն հայկականից։ Աշբաֆը միաժամանակ և՛ տիրուհու, և՛ կառավարչի կերպարանք էր ընդունել, ստանձնելով ամրոցի ներսի ու դրսի բոլոր հարցերի պատասխանատվությունը։ Այդ բոլորի կամա թե ակամա վկան՝ Շուշան-Վարդենին, վաղուց արդեն չէր գայրանում, չէ՛, հոգում շերտ-շերտ խտանում էր դառնությունը։ Ամրոցին կից ապարանքում (որի շինարարությունը այնքան ծախս ու հոգս էր պատճառել բդեշխին), տոնական օրվա պես ժամանակ առ ժամանակ Պարսկաստանից գալիս-հանգրվանում էր «նորահարսը»՝ պարսից արքայի զոքա՛նչը. Ֆեյրուզ խանումը, թիկնապահների, սպասարկու անձնակազմի, այլազան կասկածելի անձանց հոծ մի խմբով։ Նախկինում, անցած երանելի օրերին, խաղաղ կյանքով ապրող ամրոցը հիմա ասես զորաբանակի կացարան լիներ՝ աղմկալից, չգաղարող անցուղարձով, անվերջ եկող ու գնացող օտար հյուրերի խմբերով։

Ի հակադրություն եռուն այդ մեղվափեթակի՝ բոռերի՝ էլ ներկայությամբ այնքան հարուստ, Շուշան-Վարդենիի ավելի քան համեստ հյուղակը սրբատեղի էր դարձել։ Դա միանգամից չեղավ, իհարկե։ Ժամանակի հետ, Աստծո և հավատի հովանուն ապավինած հոգիները միմյանց տեղեկացնելով, փոխանցելով, հաղորդելով, գտան հանկարծ ապրող մի սրբուհի, որն իր կյանքով ու անձով էր հաստատում Աստծո պատվիրանները։ Այստեղ գալիս էին, սակայն, ճիշտ հակառակ պատկերը ներկայացնող մարդիկ, ո՛չ միայն տկարներ ու հուսահատներ, նաև՝ հզոր իշխաններ, բարձրաշխարհիկ կանայք, միով բանիվ՝ մարդիկ, որոնք բոլորն էլ իրենց հոգու խորքում անհրապարակելի մի վիշտ ունեին։

Գալիս էին Շուշան-Վարդենիին, ավելի ճիշտ՝ սրբուհի Շուշանին (նրան հիմա այդպես էին անվանում) վստահելու

իրենց ցավը, բժշկություն աղերսելու՝ հոգեսոր և մարմնավոր։ Գալիս էին մայրության ծարավի կանայք, որոնք խորապես հավատում էին, թե Շուշանի աղոթքներով զավակի տեր կդառնան... Ծնողների նախաձեռնությամբ՝ ծաղիկ աղջիկներ էին գալիս՝ նրանից պարկեշտության դասեր առնելու... Բերում էին նաև հիվանդ կամ չար աչքի զոհ դարձած մանկանց ու մեծերի, որպեսզի սրբուհի Շուշանը իր ներքին, հոգեկան լույսով ցըի՛ նրանց հոգուն չոքած խափարը... Գալիս էին ու գալիս... Եվ գնացող-եկողների ոտնահետքերը դաշվում էին հեռավոր ճանապարհներին, առավել ընդարձակելով Շուշան-Վարդենիի համբավը։

Այդ ընթացքում, հոգսաշատ ու ծանրաբեռնված կյանքից առավել կոշտացած ու ծանրացած բղեշխը, այնուամենայնիվ, մի օր վճռեց Շուշան-Վարդենիին հսկող պահակներին հանել՝ հավանաբար, գնացող-եկող եկեղեցականների ազդեցությամբ։ Շատ չանցած սակայն իրենց ազդեցության ուժն ի գործ դրին Աշրաֆն ու «նորահարսը», մոգերը նաև, և պահակները նորից կարգվեցին Շուշան-Վարդենիի գլխին։

Այդպես գլորվում էին օրերը, որոնք արդեն վերջապահ մի սահմանագծի էին մոտենում, անդենականի սահմանագծին...։

Հոգով առավել զորացած, մարմնով սակայն նշխարի պես հատնելով՝ իր անունով եկող-գնացողներին իր հոգու կորովն ու լույսը բաշխելով՝ Շուշան-Վարդենին հանգչում էր քիչ առ քիչ...։

Վեց երկար ու ձիգ տարիների ճգնակեցությունը, գաղանաբարո բղեշխի ծեծն ու հալածանքը, հյուղակի ծանր պայմանները (ցուրտ, քամի, խոնավություն...) արել էին իրենցը։ Շուշան-Վարդենին հիմա արդեն ավելի շատ ողի էր, քան մարմին, լույս, քան ստվեր... Շրջապատի մարդիկ

էլ զգում էին այդ, մասնավորաբար՝ հոգեոր ոլորտի սպա-սավորները:

Շուշան-Վարդենիի եթե ո՞չ ամենօրյա, ապա ամենշաբաթյա հյուրերն էին Սամվել, Ափոց, Հովհան Եղիսկոպոսները: Իսկ Հակոբ երեցն ամեն օր էր այցելում, որովհետև ներքին ընկալումով զգում էր մոտալուտ վախճանը:

Զարմանալի բան. սկսել էր հաճախակի գալ Մե Հոռո՞վն էլ, այս անգամ՝ հակառակ ծայրից: Մի օր այդպես էլ ասել էր Շուշան-Վարդենիին, նրա ոտքերն ընկնելով. «Կյանքս չարի, ստի ու խարդավանքի մեջ անցավ, Շուշա՞ն տիկին, այսպես ապրել այլեւս չեմ ուզում, թեկուզ շա՞տ, շա՞տ փող տան, ուզում եմ մաքո՞ւր մեռնել, երբ ժամս գա»:

Այդպես գալիս ու գալիս էին, իսկ Շուշան-Վարդենին մտորում էր մեկուսի, թե այսքան մարդ գալիս ու գնում է, բայց հանգամանքների դժվար բերումով նրանց մեջ չեն իր զավակները, իր հոգեհատորները՝ իրենից խլված երկուստեք՝ հոգով ու մարմնով: Ամառ օրով մրսո՞ւմ էր Շուշան-Վարդենին, ուրիշ՝ մի աշխարհի ցուրտն զգալով երակներում, լսում էր հեռավոր կանչը նախնիների: Մարմինն էլի ցավում էր, բազում հիվանդությունները կրծում էին նրան, սակայն Շուշան-Վարդենին զգում էր, որ դրանք վերջին ցավերն են: Եվ ո՞չ միայն չէր պակասեցնում աղոթքները, սաղմոսերգությունը, այլև ավելացնո՞ւմ էր, լիովի՞ն, ողջ հոգով և էությամբ տրվելով դրանց, քանզի զգում էր, որ քիչ ժամանակ է մնում ըմբոշխնելու դրանք այս աշխարհում:

Երազներում սկսել էր ավելի հաճախ տեսնել մոտ և հեռու հարազատներին՝ ծնողներին հատկապես: Սահականույշը՝ մայրն էլ էր գալիս, լուռ, տիրաժալիտ: Խեղդված որդուն՝ Սահակին էր տեսնում հաճախ... Մինչ հոր՝ Վար-

դան Մամիկոնյանի ներկայությունը զգում էր մշտապես.
ասես նա իր թիկունքին լիներ:

Մի օր էլ գրի առավ մագաղաթյա իր հիշատակարանում.
չո՛րս տող, ո՛չ ավելի, որոնք չարչարանքի իր տարիների
խտացումն էին.

Գերեզմանատան մեծ խաղաղություն,
ես շատ սիրեցի լոռությունդ խոր,
եվ ցավելով չէ՛, որ գիրկդ եմ գալու,
Գալու եմ սիրո՛վ, գալու եմ սիրո՛վ...

Շուշան-Վարդենին զգում էր, որ մի նոր շունչ է մտնում
իր օրերի մեջ. մոտեցող վախճանի շունչը: Օրերը, ժամերը,
գոյության պահերը թանկանո՞ւմ էին, ցավերը՝ մեղմա-
նում: Վերքերը չէին լավանում, բայց այլևս կարևոր չէր,
քանի որ այնտեղ, ուր պիտի գնար, ո՛չ մարմին կար, ո՛չ
վերք...



ՍԻԶԻՓՈՍԻ ՔԱՐԸ

Ըուշան-Վարդենիի մոտալուտ վախճանի տրամադրությունը, այսպես թե այնպես, թևածում էր ողջ ամբոցի վրա: Ամրոցին կից իր ապարանքում իրադարձությունների ընթացքին էր հետևում և Ֆեյրուզ խանումը:

Առավել զարմանալին (իսկ բգեշխի համար՝ ուղղակի՛ խոցելին), նրան հողին հավասարեցնո՞ղն այն էր, որ հենց իրեն՝ Վազգեն բգեշխին էին հարց ուղղում Շուշան տիկնոջ առողջական վիճակի մասին: Անշուշտ, այդքանը հասկանալու չափ խելք ունեցող բգեշխը գլխի էր ընկնում, որ դա իրեն՝ իբրև հանցագործի, մերկացնելու, այլև ստորացնելու ձև է. այսինքն թե ինչ էլ անես, մեկ է, Շուշան-Վարդենին մեզ համար Շուշան-Վարդենի է, այնպես որ, ո՞նց է նրա առողջականը, շատ էլ որ այս հարցը քեզ ախորժելի չէ: Ախորժելի չէ՞ միայն: Շուշան տիկնոջ առողջական վիճակին վերաբերող ամեն հարց դաշույնի պես խրվում էր բգեշխի ծանր թիկունքը: Իրապե՞ս ծանր:

Ուրացությունից հետո անցած բոլոր տարիներին Վազգեն կոչեցյալ բգեշխը իր դավանափոխությունը, դավաճանությունը Միզիփոսի քարի պես ամեն օր ճգնում էր բարձրացնել լեռան գագաթը (այսինքն, թեկուզ պայմանականութեն, ընդունելի՛ դարձնել) և ամե՞ն օր այդ հույսն ի դերև էր ելնում, քանի որ քարն աղմկաշառաչ գլորվում էր վար, ամեն անգամ արձանագրելով, ազդարարելով, կոչնակելով ի լուր աշխարհի իր դավաճան լինելը: Անըմբոնելի լինելու չափ նուրբ, սակայն ճշմարիտ մի դատաստանով բգեշխի դավաճանությունը ամեն օր կրկնվո՞ւմ էր, քանդելով հենց իրեն: Պատկերացնեն իսկ դժվար էր, մի մարդասպանի, որը մտովի և ողջ էությամբ անվերջ վերապրում է, կրկնո՞ւմ

է իր կատարած սպանությունը, այսինքն , փաստորեն ամեն օր սպանում է ինքն իրե՛ն...

Տեսքն էլ փոխվել էր: Փառատենչությունն ու իշխանության մոլուցքը, որ, երկում է, դեռևս պատանության տարիներից (պարսից արքունիքում պատանդ եղած ժամանակից) սնել էին նրա դավանափոխության, ուրացումի մոլախոտը, հետո այսպես փարթամացնելու չափ, չարորակ ուռուցքի պես տարածվել էին նախ նրա՝ ներսում, ըստ ամենայնի թունավորելով հոգին ու մարմինը: Ինքը կամենում էր այդ, թե ոչ, դավաճանի էության մեջ, սակայն, կար մի բան, որ հակընդդեմ էր հենց իրեն: Բողեշխի հոգում ուրացողը չէր հաղթել ամբողջովին. սրտի թաքուն գաղտնարանում նա ինքն իրենից զզվում էր, ատո՛ւմ իրեն, միաժամանակ շարունակելով գնալ վարընթաց այդ ճանապարհով, քանի որ հետ դառնալու ո՛չ ցանկություն կար, ո՛չ էլ հնարավորություն: Ավելին, Վազգենը ձգտում էր հաղթել ինքն իրեն, քանի որ իր իսկ ներսում կռիվ ուներ նախ ի՛ր հետ: Փաստացի ուրացության հինգ-վեց տարիները նրան բազմեցրել էին ամեն գնով իր ուզածին հասնելու ձգտող մի նսեմ արարածի՝ դավաճանի երերուն գահույքին, սակայն իր ներսում պահպանվող ժառանգական դատապարտությունը՝ յոթը պորտից առա՛ջ և հետո՛, քրքրում էր նրա հոգին:

Անշուշտ, այդ կրակի վրա ակամա յուղ էր լցնում նաև Շուշան տիկնոջ անշեղ վարքագիծը իրեկ սրբասեր ու անարատ քրիստոնյայի: Վազգեն բողեշխը դավաճան էր և շարունակում էր մնա՛լ այդպիսին, սակայն գիտակցելո՛վ իր դավաճան լինելը... Խղճի՛ (ուրեմն և հապատության ու բարոյականության...) հատիկը, որը տակավին մնացել էր նրա հոգու ամենախոր գաղտնարանում, եթե չէր աճում, ապա չէր էլ չորացել...

ԾՈՒԾԱՆ ՎԱՐԴԵՆԻԻ ՀԻԾԱՏԱԿԱՐԱՆԸ

Անցյալ օրը, տեսնեմ, աներևակայելի վայնասունով բակից մի սե կատվի է դուրս անում Աշրաֆը։ Պահակների հարցին, թե ինչ է եղել, պատասխանեց, թե սե կատուն ընդհանրապես չարիք ու դժբախտություն է բերում, իսկ իրեն՝ գլխացա՞վ... Զհանգստացավ, մինչեւ բակից չհանեց իւեղճ կենդանուն։

Առհասարակ սե կատուներից և հարանման սնահավատ երեւույթներից շա՛տ բարձր եմ կանգնած, որպեսզի վախենամ նրանցից։ Հայ-հայ, որտե՞ղ են մարդիկ, որ սկսենք կենդանիներից վախենալ։ Մարդիկ, մարդիկ են սարսափելի, ո՛չ թե սե կատուները։ Աշրաֆն ինքն, օրինակ, հարյուր սե կատվի չափ չարիք է պարփակում իր մեջ... Արդարեւ, փոքր խելքերը լավ ապաստան են մեծ չարության համար։

Կամ՝ տնաքանդ, հայրենաքանդ իմ ամուսինը...

Այս աշխարհում իմ շա՛տ ունեցածից ի՞նչ մնաց. ընտանիքս քանդվեց, երջանկությունս հալվեց աղի նման, զավակներս՝ ողջ-ողջ մեռան ինձ համար, ամուսնուս մասին խոսե՛լ իսկ չարժե... Հավատն առ Աստված և նախնիներիս թանկ հիշատակը մնաց իբրև անկողոպտելի հարստություն։

... Սուրբ Զատիկի տոնն է այսօր.

Քրիստոս հարեավ ի մեռելոց.

Օրհնեա՛լ է Յարութիւնը Քրիստոսի:

... Հստ ամենայնի՛ օրհնյա՛լ լինի, որպեսզի Քրիստոսի կերպարանքով հողագնդի վրա շրջող ամեն ոք իմանա՛,

Հասկանա՞ Զ ո հ ա բ ե ր ու թ յ ա ն իմաստն ու գեղեց-
կությունը, վեհությունն ու ազնվագարմությունը վերջա-
պես: Որպեսզի ամեն մարդ կրակն իր բաղարջի տակ չքա-
շի՛, ինչպես է դա՛ր ու դարեր, և ա՛յժմ...

... Գալրնանամուտի անձրևաշատ օրերն էին. արթնացա,
տեսնում եմ՝ շրջակայքը մառախուղի քողով է պատած:
Հյուղակս ասես նավասենյակ լինի, և թվում է, լողում ենք
մառախուղի մեջ: Նայում եմ դուրս՝ երկու քայլից անդին
չի երեսում: Իսկ մեր ամրոցն արդեն խոշոր նավի է նման,
որ ուրվագծվում է մշուշում: Ներսը՝ մառախուղ, դուրս՝
մառախուղ... Ուզում ես աղաղակել. փրկիր մեր հոգիները,
Տեր, զի ամեն ինչից առավել Հոգի՛ն է վտանգված հիմա,
Հոգին՝ վերերկրյա՛, անկորնչելի՛:

...Եվ հետո, մարմի՛նն էլ Հոգի է ի վերջո:

* * *

Նայում ես երբեմն ու տեսնում, թե չարության ի՞նչ
սառցալեռներ են թաքցնում ոմանց «տա՛ք», «Ծե՛րմ»
ժպիտները: Աշրաֆն օրինակ... Իսկ Ֆեյրուզ խանումի դեմ-
քին այնպիսի մի անվիճարկելի՛ արտահայտություն կա,
կարծես ասում է՝ մեծ լեռները ես եմ ստեղծել, իսկ փոք-
րերն իմ ահի՛ց են ծնվել: Հոգեսպան ամուսնուս համար
«անփոխարինելի» այս կանայք... գոեհկամիտ, եսասեր,
ինքնաբավ, հանգուցյալ Բրաբիի՛, հանգուցյալ Էթերիի՛ մի՛
մազը չարժեն...

Տե՛ր իմ, այս էլ քանի՛ անգամ մեռա, սրտիս համար
թանկ ամեն մեռնողի հետ:

* * *

Խոնարհամիտ, ի բարօրություն մարդկության խարույկ
ելնելու պատրաստ Հակոբ երեցը զարմացնում և հիացնում

է ինձ: Հոգու անսպառ կորովը համեստ ապրող այդ մարդուն դարձնում է հզոր և անպարտելի: Գրպանները լիքը շատ իշխաններ ու հարուստներ կնախանձեին նրա առաքինության համբավին:

* * *

Սահականույշը՝ մայրս էր ասում. «Գիշերն հղի է, չգիտես առավոտյան ինչե՛ր կծնվեն...»: Իրոք, օրը օրին չէ, ժամը ժամին ենք փոխվում: Կնոջը կորցրած Գրիգորիս Շահպարոնյանը շքեղ մի սիրուհի ուներ՝ նուռիկը: Վերջերս Գրիգորիսը թողնում է նուռիկին, կապվելով քամու բերած մեկի հետ... Է՛, քամու բերած, քամու տարած... Մի օր էլ Շահպարոնյանի հարուստ տունը թալանում են, և այնպես հիմնովին, որ կասկածի տեղիք չի մնում, թե՛ ով է նրանց ուղենշել: Գրիգորիսն անկողին է ընկնում կաթվածահար, իսկ քամու բերածը քամու թևին էլ թռչում է... Ահա այսպես:

...Եվ այնուամենայնիվ, Ցուրտավ մեր քաղաքում (լա՞վ էին, թե վատ, ծանրաբարո՞, թե պոռնիկի ավար)... ո՛չ մեկը Վազգենի արածը չարեց. չուրացավ իր հավատը, չդավաճանեց իր պապերի կրոնին, չպղծվեց հոգով... կործանելով իր հետ ընտանիքն էլ...

Տէ՛ր, փրկեա՛ զմեղ ի չարէ...



ՀՈՒՐՈՒԹՔՆԵՐ

Վազգեն բդեշխը կարկամել մնացել էր: Իր ուրացության չորրորդ-հինգերորդ տարին էր լրանում արդեն, մինչդեռ (ինչպես ծրագրել էր) Շուշան-Վարդենին ո՞չ ճկվում-խոնարհվում ընդունում էր ամուսնու դավանափոխությունը և ինքն էլ կանգնում նրա կողքին՝ մազդեզանց կրոնը համարելով նաև իրենը, ո՞չ էլ... գնում էր այն աշխարհը՝ իր նախնիների գիրկը, որպեսզի ամուսնու ձեռքերն ազատ արձակվեն: Դեռ չհաշված այն հանգամանքը, որ ինքը՝ բդեշխը ո՞չ միայն Յուրտավի, այլ ողջ Քարթլիի կծու ասեկուսեների ու ծաղրապատումների «Հերոս» էր դարձել:

Պարսից արքունիքում էլ սիրված-հարգված մեկը չէր. դարերի՝ իմաստնությունն ու պատմության ձայնը խլացնել կլինի⁹... Հայրենին՝ դավաճանողը օտարին կդավաճանի ու կդավաճանի... Եվ հետո՝ երկրորդին, երրորդին, բուրրին... Կդավաճանի¹⁰... Դրա համար էլ միշտ օգտվել են դավաճաններից, հետո... որպեսզի այս անգամ էլ իրենց չդավաճանեն... Պարսից արքաները ո՞չ իմաստնության, ո՞չ էլ փորձի պակաս ունեին այդ լա՛վ իմանալու համար: Դրա համար էլ Վազգեն բդեշխին հանդուրժում էին այնքանով, որքանով... Նրա հետ կապված հեռահար ծրագրեր ունեին կրոնափոխելու ողջ Քարթլին:

Հերթական անգամ կռվի դաշտից տուն դառնալով ու համոզվելով, որ Շուշան տիկինն աննկուն է, թեև՝ սովից ու ծարավից, ծեծերից ու խոշտանգումներից հալումաշ եղած, Վազգենը որոշեց դիմել հուր ու ջրի միջով անցած Ֆեյրուզ խանումին՝ խորհրդակցելու նպատակով: Վերջինս արդեն

բդեշխի կնոջ, ուրեմն՝ տիրուհու իշխանությամբ կարկուտ էր տեղում ծառայողների գլխին: Ֆեյրուզ խանումը, նույն ինքը՝ Պարսից Պերոզ արքայի զոքանչն ու բդեշխի ներկայիս կինը, շա՛տ բան գիտեր գրբացության, բժժանքի, զանազա՞ն կախարդանքների մասին, նաև ուներ իր ծառայակազմում այդ բոլորի քաջիմաց վարպետներ՝ կին թե տղամարդ:

Երկարատեւ հանդիպման ժամանակ ի՞նչ խոսեցին նրանք Վազգենի հետ՝ հայտնի չէ, սակայն լուծում ստացան երկու հարց: Առաջինը. Ֆեյրուզի «զինանոցից» շա՛տ հմուտ մի կախարդուհի պիտի զբաղվի ՇուշանՎարդենիով: Երկրորդ հարցը, որ լուծում գտավ, բդեշխի դստեր՝ Մանեի ճակատագրին էր վերաբերում: Հարմար համարվեց «անհետացնել» նրան՝ տանել-թաքցնելով հեռավոր մի ապարանքում (ֆեյրուզ խանումն այդ մասին կհոգա)... «ինչ վերաբերում է իրերի հետագա ընթացքին՝ Աշրաֆն արդեն նախապատրաստում է նրան...», — շարունակեց երկիմաստ խոսքը Ֆեյրուզը: Նրանց առանձնազրույցը վերջացավ առավոտյան կողմ: Հրաժեշտի ժամանակ Վազգեն բդեշխը նրան նվիրեց Շուշան տիկնոջ վերադրած զարդերից մեկը...

Իրոք, անշունչ առարկաներն էլ իրենց ճակատագիրն ունեն:

* * *

Հազիվ լույսը բացված՝ Շուշան տիկնոջ հյուղակի շեմին հայտնվեց «կախարդության» «տեսանելի» նշաններով շրջապատից տարբերվող մի կին: Գլուխն ու երեսը քողարկող չաղրան բանված էր անծանոթ նախշերով, մի ձեռքին՝ գավազան, մյուս ձեռքին՝ կապոց... Հիպնոսի խորհրդավոր, դարերի խորքը գնացող արվեստ... Ծարի-

րած աչքերը թարթելով նա երկար ու սկեռուն նայեց Շուշանի աչքերի մեջ, հետո Աշրաֆի օգնությամբ բացատրեց, թե եկել է բդեշխի հրավերով, հատուկ՝ Շուշան տիկնոջը «բուժելու»...

Բուժել բառի վրա Շուշան-Վարդենին հեգնական նայեց Աշրաֆին, վերջինս հայացքը չփախցրեց, այլ կրկնեց բառը: «Ինչի՞ց բուժելու, – հարցրեց Շուշան-Վարդենին, – քրիստոնեական կրոնից և ճմարիտ քրիստոնյայի իմ պարտականությունների՞ց, իսկ ինքն ո՞վ է», – Աշրաֆին դիմելով հայացքը գամեց կախարդուհուն:

Ասպարեզ գտած խաբեբայի ճարպկությամբ Աշրաֆը լեզվին տվեց. «Զոլեյխա խանումը այսպես երիտասարդ է երեւում, բայց մե՛ծ է տարիքով, ծեր չասեմ. նա արեգակնադեմ Հազկերտ Երկրորդի մտերիմն ու խորհրդատո՛ւն է եղել: Նրա խոսքը խո՛սք է. անապատը կանաչ օազիս կուրծնի, չբեր կնոջը՝ բազմազավակ, ամուսնուն չհնազանդվող կնոջը՝ նրա ոտքերին փաթաթվող փիսի՛կ...»:

Կախարդուհի Զոլեյխան, որ (հասկանալո՞վ, թե՞ չհասկանալով...) ուշադիր լսում էր նրանց, ցույց տվեց ձեռքի գավազանը: Աշրաֆն աշխույժ գլխով արեց նրան, բլրաց. «Այս գավազանը տեսնու՞մ եք, սա՛, սիրելի Շուշան խանում, այս իւրա ֆ գ դ ր ա զ ն ան (պարսիկ մոգերի գավազանը) Հազկերտ Երկրորդի և նրա արժանապատիվ կանանց ձեռքերին ու ոտքերին է դիպել. անցկացնում է ամե՛ն ցավ, սեր չունեցողին՝ սեր, գոռողին՝ խոնարհություն, կույրին՝ լո՛ւյս է բաշխում... Մեծ է հզոր Ահուրամազդայի ուժը. թող հզոր արեգակի պես բոլորիս հասնի՛ նա...»:

Գնալիս Զոլեյխա խանումը հուռութներ նվիրեց Շուշան տիկնոջը. չորս տարբեր գույների, որ խորհրդանշում էին չորս սրբազան տարրերը. կրակագույն (կրակը), ճերմակ

(օղը), մոխրագույն (հողը) և կապույտ (ջուրը):

«Այս հուռութիները կվերափոխեն Շուշան խանումի սիրտը դեպի իր ամուսինը՝ պատվական Վազգեն բդեշխը: Մենք էլի կգանք»: Եվ դուրս եկան:

Տե՛ր Աստված, այս աղքատահոգի կանա՞յք ինձ պիտի փոխեն, «սո՛ւրբ» Հազկերտի և նրա կանանց ոտքերին դիպած այս գավազա՞նը, այս հուռութինե՞րը...

ԸՆԾԱՅՈՒՄՆ ԱՍՏՎԱԾԱՄՈՐԸ

Շուշան-Վարդենին ասեղնագործությունը սիրում էր դեռատի հասակից: Երանելի այն օրերին ավագ քրոջ հետ սիրում էին միջօրէին առանձնանալ զով պատշգամբում, և զրուցելով, նախշագարդել յուրաքանչյուրն իր ձեռագործը: Ավագ քույրը՝ Մարիամը, վարպետացել էր: Իշխանական տների օրիորդների մեջ ասեղնագործության արվեստով նա առաջին տեղերից մեկն էր բռնում: Վարդենին էլ լավ էր ասեղնագործում, բայց խոստովանում էր, որ քրոջ ընտրած նախշագարդերն ավելի նրբահյուս են, տրամադրում են մտածել: Մայրը՝ (կաթողիկոս Սահակ Պարթևի դուստր) Սահականույշը նույնպես լավ ասեղնագործող էր, չա՛տ լավ: Քույրն էլ, ինքն էլ, մորից էին ժառանգել այդ շնորհը: Պատահում էր, աշնան շուտ մթնող օրերին հավաքվում էին իրենց կամ մեկ այլ իշխանական տանը, և քաղցրավենիքի սեղանից հետո անցնում ասեղով հեքիաթներ հյուսելուն... Մի գիծ, մի գույն, մի նախշ, և ահա եղնիկի նրբին իրան է ուրվագծվում, կամ՝ կանացի դեմք... Դրանք համարվում էին համեմատաբար բարդ նախշագարդեր: Պարզերը՝ արեգակ, ծաղիկ, տերե, թիթեռնիկ... հեշտ էին տրվում Վարդենիին:

Վարդենին չէր ուզում ինքն իրեն խոստովանել, որ ասեղնագործությունից առավել գերադասում էր մատենիկ (մագաղաթե փոքր մատյան) նկարազարդելը՝ գույնզգույն մելանով... Ճիշտ է, այդ արվեստով ավելի շատ զբաղվում էին պատանիներն ու երիտասարդները, գրիչները, հոգևորականները, բայց Վարդենին էլ տարված էր դրանով։ Շատերի կարծիքով, նրա մատենիկները՝ սիրով, բժախնդրորեն պատկերազարդված, աչքն ու միտքը չոյզող արվեստի գործեր էին։ Հայրը՝ Վարդանը, սիրում էր հաճախ ձեռքն առնել դրանք, նաև՝ այս կամ այն պատկերազրի առիթով միտք հայտնում, դիտողություն անում։ Հնոց ավանդած ձեռագրերի օրինակով, թուչնագրեր ու ծաղիկներ էր վրձնում Վարդենին, մի անգամ էլ փորձեց Աստվածամորը պատկերել։

Այն օրը, երբ իր զարդերը վերցնելու համար ամրոց էր մտել, տեսել նույն սնդուկում պահված իր ասեղնագործությունները, մատենիկները մանավանդ, սիրտը միացել էր հին օրերի հուշով, տարիների միջով ասես հետ էր գնացել, մտել պատանության հավետ անթառամ պարտեզը, ուր առաջվա պես մնում էին այն օրերի անարատ հույզերն ու երազները։ Հիշում էր մոր խոսքը. «Աղջիկնե՞րս, այս չնորհքը, որ տրված է Աստծուց և կնոջ ձեռքով է կյանք առնում, հարկ է, որ փոխանցեք, ինչպես ես՝ ձեզ, դուք էլ՝ ձեր դուստրերին, հարսներին, թոռներին... Մեծ է գեղեցիկի ուժը, շունչը։ Հիշեցեք, եթե անուշահամ կերակուրները մարմինն են սնում, գեղեցիկը սնում է Հոգին...»

Իշխանական տների օրիորդների այդ հավաքների ժամանակ զրուցում էին հետաքրքիր երեսութների կամ երազների մասին։ Երբեմն աղոթում էին իրենցից մեկնումեկի սրտի թաքուն բաղձանքի իրականացման համար։ Եվ ինչպես էին ուրախանում, երբ այդ իղձը, բաղձանքն իրակա-

Նանում էր...

Շուշան-Վարդենին հիշեց, որ ժամանակ առաջ, երբ ամրոց գնաց զարդերը վերցնելու, մի կապոցի մեջ հավաքեց-ամփոփեց և իր ասեղնագործությունները, մատենիկնե՛րը, դրանք հիմա այստեղ են, հյուղակում։ Պատանության օրերից հետո էլ, արդեն հարսնացած, ժամանակ գտնում էր շարունակելու մատենիկ պատկերազարդելը, ասեղնագործությամբ էլ պարապում էր... Մանեի՛ հետ (սիրտը ցավագին սեղմվեց)։ Էլ երբե՛ք չեն նստի միասին, որ թել առ թել գույնզգույն ծաղիկնե՛ր ասեղնագործեն, ինքն այլևս չի՛ կարողանա իր Սահականույշ մոր պատգամը փոխանցել Մանեին...»

Շուշան-Վարդենին զգում էր, որ Մանեի անհետացումը երկար մի խմորված ծրագիր է, որ ամենայն հավանականությամբ, կազմվել է բգեշխի իրազեկությամբ։ Բնագդով, մայրական անշեղ բնազդով զգում էր Ֆեյրուզի և Աշրաֆի հանցավոր մասնակցությունն այդ գործին։ Եթե այդպես չէ, ինչպես է, որ հայր կոչեցյալը չի փնտրում դստերը, աշխարհն ու մարդկանց իրար չի խառնում գեթ մի բա՛ն իմանալու դստեր մասին...»

Հին ու նոր վերքերը ցավում, ցավո՛ւմ էին, իսկ Մանեի անհետացումից ի վեր ամենամեծ վերքը սիրտը դարձավ... խոցված անվրե՛պ, մահացո՛ւ...»

Բագրատիկի հայտնությունից հետո խեղճ մանկան (նաև եղբոր՝ Հերակլի) նկատմամբ առավել խիստ հսկողություն սահմանեցին, երեխաները գրեթե չէին երևում բակում։

* * *

Շուշան-Վարդենին որոշել էր. պատանության օրերից մինչ հիմա իր ասեղնագործածները, նկարազարդած մատե-

նիկները, մոր՝ Սահականույշի ձեռքերի հպումով սրբացած, մեկ-երկու ասեղնահյուսքերը, նաև Մանեի անվարժ ձեռքով պատրաստվածները... այդ ամենը տալ Հակոբ երեցին՝ եկեղեցուն հանձնելու համար, թող դա լինի իր խորունկ սիրո համեստ վկայությունը՝ Ընծայումն Աստվածամորը, այդ մասունքներով, հոգով, մարմնով, բոլորեքյան...

* * *

Այդպես էլ վարվեց, երբ Հակոբ երեցը այցելեց նրան: Դրանից հետո յուրատեսակ մի համակերպություն տիրեց Շուշան-Վարդենիին. ասես մտնում էր Ժամանակի հավերժահոս ընթացքի պաղ, պաղ ջրերի մեջ...

ՄԱՀ ՈՉ ԻՄԱՑԵԱԼ ՄԱՀ Է, ՄԱՀ ԻՄԱՑԵԱԼ ԱՆՄԱՀՈՒԹԻՒՆ

Տարիներ՝ առաջ Շուշան-Վարդենիի չորս երեխաներին մկրտեց բգեշիսի Դրան երեց Անդրեասը, որ ի բնուստ բարի, հոգեոր հովվի կոչման և պարտականության բերումով՝ առավել բարեսեր էր դարձել, բոլորից սիրված էր ու հարգված: Թշնամիներ չուներ թեև, բայց եթե ունենար էլ՝ նույնքան անաչառ կլիներ նրանց հանդեպ, վկայում էին բարեկամները: Մինչ այդ բգեշիսական ամրոցում հարազատի ելումուտ ունեցող Անդրեաս երեցը Վազգենի ուրացության պժողալի երևույթից հետո ոտքը կտրեց նրա տանից: Նա քաջ գիտակցում էր, որ, ի վերջո, բգեշիսի տունը նաև Շուշան-Վարդենիի՝ պատվարժան նախնիների արժանի՝ դստեր տունն է, բայց և այնպես... Սիրում և կարոտում էր իր սանիկներին՝ Մանեին, Հերակլին, Սահակին և Բագրատիկին, սակայն ամեն անդամ ասես շանթահար էր լիւ

նում ամրոցի մոտով անցնելիս, տեսնելով մոգերի ելումուտը, երգեցողությունը պաշտամունքի ժամերին, ո՛ւր մնաց թե նե՞րս մտներ...

Իմանալով Շուշան տիկնոջ կամավոր մեկուսացումը, ապա և գագանացած բդեշխի վայրագությունները, Անդրեաս երեցն իր պարտքը համարեց նույնպես խոսել բդեշխի հետ, չնայած իր պաշտոնակից եպիսկոպոսներն ու մյուս հոգեորականները բավական ջանք թափել էին այդ ուղղությամբ:

Զարի ուղին արդեն ոտք դրած բդեշխը ամեն անգամ կրակ էր կտրում, երբ խոսք էր բացվում Շուշան տիկնոջ առաքինի վարքի, վասն քրիստոնեական հավատի խաչ ելնելու մասին: Այդպես էր, ո՞վ չգիտեր, սակայն այդ մասին լսելիս ուրացողը ոտքից-գլուխ այրվում էր, քանի որ նման խոսակցությունները մի անգամ ևս աչքն էին խոթում իր հավատափոխությունը:

Լսելով Շուշան-Վարդենիի ուղղակի անտանելի դարձած կյանքի մասին, Անդրեաս երեցը մի օր, հանդիպելով բդեշխին, խոսք բացեց, չնայած քաջ գիտեր լսելիք պատասխանը: «Ամեն ոք ոչ միայն ազատ է իր հավատին (մանավանդ դարեր առաջ ընդունած) հավատարիմ մնալու, այլև պարտավոր է պաշտպանելո՛ւ այն: Շուշան տիկինն ազնիվ քրիստոնեի իր պարտքն է կատարում: Նրա նկատմամբ այդ բռնությունները ստորացնում են կատարողին, ո՛չ թե նրան», – ասել էր Անդրեաս երեցը, նայելով Վազգենի արնակալած աչքերին:

«Իմ ընտանեկան գործերին միջամտելու կարիք չկա, Անդրեաս երեց, – զայրույթից խեղդվելով որոտացել էր Վազգենը, – ինքս գլուխ կհանեմ»:

«Քո և մյուս ընտանիքները իմ հոգեկոր հոսն են, բդե՛շխ, մեր հայացքից չի վրիպում ոչ մի անմեղի տառապանք՝ չա-

րի ժայթքումի դեմ: Ի՞նչ ես խորհում, որքա՞ն պիտի տեկ
այս ամենը: Եվ մի՛ մոռանա, որ չորս զավակներիդ կնքա-
հայրն եմ, ես եմ նրանց մկրտել»:

«Այնքան, որքան կապը կտրած կինն իր ամուսնուն չի՛
հնազանդվի», — մղթմղթաց Վազգենը:

«Կապը կտրա՞ծ, եթե այսքան չարիքի մեջ, որ պատճա-
ռում ես նրան, Շուշան-Վարդենին պահպանում է իր հո-
գու ուժը, և գիտակցաբար մահն ընդունում վասն ձավա-
տի, նա սրբուհի՛ է, — վրդոված գոչեց Անդրեաս երեցը, —
նրա տեղը սրբերի, անմահների դասում է, այս իմացի՛ր»:
Եվ շուռ գալով հեռացավ, որոշելով այլևս երբեք չխոսել ու
չշփվել կույր հոգու տեր այս մարդու հետ:

* * *

Այնուհետև գրի առավ այդ խոսակցությունը, հետո
նաև՝ դեպքերի ընթացքին գուգահեռ շա՛տ բան...



ՄԱՐԴ ԿԱՄԵՆՈՒՄ Է, ԱՍՏՎԱԾ՝ ՏՆՈՐԻՆՈՒՄ

Աներևույթ մի ձեռք խառնում էր ճակատագրի խաղաթղթերը, և վայ այն միամիտին, ով կկարծեր, որ եթե փող և իշխանություն ունի՝ ուրեմն անխոցելի է, նա թղթախաղում դուրս նետվող խաղաթղթի պես էլ հայտնվում էր հողմի բերանում...

Օրեր, օրեր... Հետզհետե ավելի տկարացող Շուշան-Վարդենին, այնուամենայնիվ, իր մեծ կորուստների կողքին հոգու խորքում բավականության պահեր էր ապրում, երբ համոզվում էր, որ օգնել է մարդկանց: Յուրտավ քաղաքում ու շրջակայքի շեներում նրա համբավը ոսկեզօծել էր հատկապես բորոտ պարսկուհու ապաքինումը: Գնացող-եկողների մեջ շատերը կային, որոնք Շուշան-Վարդենիի շնորհիվ բարվոքել էին իրենց առողջական վիճակը, անզավակ կանայք, որ բախտավորվել էին մանկանց ծնունդով, էլի ու էլի նման դեպքեր...

Շուշան-Վարդենիի բարոյական լուսապսակը կատարյալ էր դառնում ամենակարևոր մի հանգամանքով, որ այդ ամենը նա անվճար էր անում: Փողի կամ փոխհատուցման մասին խոսելն առհասարակ արգելել էր:

Բայց հայտնվեց մեկը, մի կին, որը յուրահատուկ մի նվեր բերեց նրան՝ իր երախտագիտությունն արտահայտելու: Տարիներ ի վեր անկողնուն գամված այդ կինը Շուշանի շնորհիվ ոտքի էր կանգնել և հիմա իր հանգուցյալ մոր մազերից հյուսված մի խաչ էր բերել Շուշան-Վարդենիին:

Այդպես էլ ասաց, թե հույս ունի, որ մայրական սիրո

Խորհուրդը կրող այդ թալիսմանը ավյուն կներարկի ուժասպառ Շուշանին։ Այդ նվերը նա վերցրեց։

Կատարվեցին գեպքեր էլ, որ անսպասելի էին։ Զարմանալի՛ բաներ... Ֆեյրուզ խանումի «Թիկնազորում» որտեղի՛ց-որտեղ կար նաև օձեր պահող մի մարդ . օձերի իր վանդակով։ Ասում էին, որ բուժիչ նպատակներով օձի թույն է ստանում։ Այդպես էր, թե ոչ, ոչ ոք ճշգրիտ չգիտեր, բայց գալիս և մեծ գումարներով օձի թույն էին գնում այդ մարդուց՝ ընդարմացած ձեռք ու ոտքի, կամ ողնաշարի և թիկունքի քարացման դեմ։ Պարզվեց, որ Աշրաֆն էլ օձերի հետ շփվելու, դրանց թույնը բուժիչ նպատակով օդտագործելու ահագին փորձ ունի, որը մինչ այդ թաքցնում էր։

Սև Հոռովիը մի անգամ Շուշան-Վարդենիին հայտնեց, որ Աշրաֆն էլ ձեռնասուն մի օձ ունի, որ այստեղ, իր սենյակում է պահում։ Այդ մասին ոչ ոք չգիտեր։ Վերջին շրջանում բղեշխն, այնուամենայնիվ, ի սեր տեղեկությունների, լայնացրել էր Սև Հոռովիի գործունեության դաշտն ամրոցում։ Բղեշխը գիտակցում էր, որ կրոնափոխությունը՝ կրոնափոխություն, բայց իր տանը հայագգի քիչ մարդ է մնացել։ Սև Հոռովին կարգել էր տնտեսության մեջ Աշրաֆին օգնողի պաշտոնի, որպեսզի իրազեկ լինի տան անցուղարձին։ Այդ ելումուտի չնորհիվ էր Սև Հոռովին իմացել Աշրաֆի՝ օձ պահելու պարագան...

Իմանալով օձի, նրա թույնի թե՛ սպանող (մահացու), թե՛ բուժող հատկությունների մասին, Շուշան-Վարդենին Հոռովին չասաց, բայց մեկուսի մտորեց, թե ինչ միջոցով է, ուրեմն, Աշրաֆը կերել Բրաբիոնի էլ, էթերիի էլ գլուխը...

Շուշան տիկինն զգում էր, որ մոտ է ճշմարտությանը, որ մահվան գործիքը եղել է կամ օձը, կամ նրա թույնը։ Ներքնատեսությամբ նա մի կարևոր բան էլ կռհեց, ավելի

ճիշտ՝ կանխազգաց, որ Աշբաֆի ձեռնասուն օձը մոտակա օրերին պիտի որ իրե՛ն էլ այցելի... Աշբաֆի նպատակաւ լաց ձեռքով. մարդասպանի՛ ձեռքով:

Շուշան-Վարդենին անհանգստանում էր Հույս շնիկի համար մանավանդ...

Սակայն քիչ ժամանակ անց տեղի ունեցավ անկանխատեսելին. օձը խայթել էր հենց իրեն՝ Աշբաֆին (օձը տաքացնողին է կծում), այդ գործի մեջ արդյո՞ք Ֆեյրուզ խանումի օձապահ Միրզայի մատը խառն էր՝ չիմացվեց: Աշբաֆի թաղումը՝ բուն պարսկական արարողակարգով, մոգերի երգասացությամբ, ատրուշանների բոցեղեն լեզուներով, արտասովոր մթնոլորտ էր ստեղծել ամրոցում: Հիրավի, փոս փորողը ինքն է փոսն ընկնում:

Հաղթանակի ձին հեծած Ֆեյրուզ խանումը արդեն պատանեկության հասած Հերակլի և պատանության շեմը ուժը դնող Բագրատիկի խնամառությունը հանձնարարեց իր թիկնազորից տարիքն առած մի կնոջ՝ Նուշաբե խանումին: Շուշան-Վարդենին զգում էր, որ հիմա դեմառեմ մնացել են ինքն ու Ֆեյրուզ խանումը:



ԾՈՒՅԱՆ ՎԱՐԴԵՆԻԻ ՀԻԾԱՏԱԿԱՐԱՆԻ ՎԵՐՁԻՆ ԷԶԵՐԸ

Չէ թե մեկ, այլ բազում նշաններ է ցուցանում մեզ Աստված՝ կողմնորոշելով երկրային մեր երթը։ Աստծո նշանները։ Եկել ու գնում ենք։ Ահա նաև ես... Վերջին ժամանակներս շնչահեղձության նոպաներ եմ ունենում, խեղդվում եմ օդի պակասից։ Այդ պահերին կիսաբացում եմ դռան փոխարեն կախված փսխաթը և օ՛դ է ներս գալիս։ Կեսգիշեր է արդեն, ցուրտ, հոկտեմբեր ամսվաց ցուրտ։ Աստծո դատաստանը տես. խնդրածս տաք ծածկոցը չքերեց արդեն հանգուցյալ Աշրաֆը, խնայեց, ափսոսաց, կարծում էր, թե իրեն պիտի մնա (ինչպես տանս ամեն ինչը), և ահա... չկա ի՞նքը, պառկած է սառը հողի գրկում։ Ինձանից չո՛ւտ գնաց այս աշխարհից, ինձանից, որ ճանապարհին եմ վաղուց...Պառկել եմ, քնած շնիկը՝ կողքիս։ Պահակները, բգեշխի թույլտվությամբ, գիշերները տեղափոխվում են ամրոցի գավիթը, ծածկի տակ քնելու։

Տեսնում եմ մեկ էլ, ճամփեղը ով մի շուն է մոտենում, գալիս դեպի հյուղակը։ Շու՞ն է, թե՞ գայլ, մտածեցի, որովհետեւ կարծես թե գայլի էր նման։ Շունն էլ, ի վերջո, գայլի ընտանեցված, ընտելացած տեսակն է։ Նայում եմ, ահա, շունը մոտենում է իմ հյուղակին, աչքերն հեռվից ինձ հառած-սկեռած։ Այս էլ կա, որ ես, թերեւս, շունը գայլից չկարողանամ տարբերել, թեև ժամանակ առաջ գայլ տեսել եմ։ Հիմա վատ եմ տեսնում՝ օրըստօրե թուլացող մարմնիս ընդհանուր կորուստների հետ։ Մանուկ օրերիս (անցա՛ծ, քաղցր տարիներ), երբ մըսելիս իմ կամ քրոջս վիզը բռնվում էր և շարժել չէինք կարողանում, հայրիկն ասում

էր. «Գա՞յլ եք դարձել, գայլե՛րը վզները շարժել չեն կարուղանում, ստիպված ամբողջ մարմնով են թեքվում»:

Տեսնում եմ, ահա առաջանալով, իմ հյուղակի կողմն է գալիս «շուն-գայլը»... Եկավ, հյուղակից մոտ երկու մետր հեռու նստեց հետեւի թաթերի վրա, հայացքն ինձնից չկտրելով նայում է ու նայում... Ասես մի բան է ուզում հասկացնել: Բավական երկար նայեցինք միմյանց աչքերի մեջ. սև, թավամաշկ շուն է, դեմքի խելացի արտահայտությամբ, որ շատ շներին է բնորոշ: Զգացի, որ մրսում եմ, փսիաթը դռան բացվածքի վրա բերեցի, նեղ մի արանք թողնելով: Տեսնեմ «շուն-գայլը» այնպես, կանգնեց, որ հայացքը կրկին ինձ ուղղված լինի: Մոգվածի պես նայում ու նայում ենք իրար: Հանկարծ մի միտք կայծակեց գլխումս. թե այս «շուն-գայլն» ասես կերպարանափոխված բղեշխն է, որ դարձի է գալիս, եկել է ահա... Տեր իմ, իր դարձի մասին առաջինը ո՞ւմ պիտի ավետի, եթե ոչ ինձ պիտի ավետի իր դարձի մասին, տեր իմ... Այդպես բավական երկար խորհում էր, չեմ հիշում, թե ինչպես եմ նիրհել:

Հոկտեմբեր ամիսն ենք մտնում ահա: Տեսնես՝ ինձ վերապահվա՞ծ է տեսնել մոտեցող Սուրբ Ծննդյան տոներն ու Նոր տարին: Կտեսնե՞մ Զատիկը:

* * *

Վերջերս երազներ քիչ եմ տեսնում (թուլությունից շատ խորն եմ քնում դրա՞համար, թե՞ չեմ հիշում...): Գուցե թե՛ մեկն է, թե՛ մյուսը: Այս գիշերվա երազս հիշում եմ սակայն. անցնում էի Մահվան կամրջով: Մահվան կամուրջ ասածն էլ ոսկեզօծ, ավելի շուտ հին ոսկու գույնով մեծ մի կամուրջ էր, երկա՛ր-երկար: Քայլում են նրա վրայով շատերը, մեծ ու փոքր, ջահել ու ծեր, քայլում են ու քայլում: Ճերմակաթույր մի լույս ուղեկցում է մեզ, լուսավորում

ճամփան: Լսում եմ, թիկունքիս կողմից մեկը ձայն է տալիս. շուռ գամ տեսնեմ՝ Մահա՛կս է, կանգնել, սպասում եմ, մոտենում է, քայլում ենք երկուսով: Աչքս ընկնում է մահվան կամքջի ծայրին. ծանր-ծանր Աշրաֆն է քայլում, ստեղ-ստեղ գլխին քաշելով ցած սահող չաղրան:

* * *

Զգացողություններ կան, որ հասունության տարիքի հետ են գալիս, անձի հաշվեկշռի, հոգեկան լիարժեքության, մանավանդ մոտեցող Մահվան հետ կապված:

Մահը՝ խտացումը բոլոր իմաստնությունների:

Մահը՝ պատասխանը հարցերի բոլոր...

Մահը՝ նոր մի կյանքի ազդարար...



ԱՍՏՎԱԾԱՄՈՐ ՆՎԵՐԸ

Լույսը դեռ չբացված Շուշան-Վարդենին լսեց, որ պահակներից մեկը հիվանդ դստեր հետ եկած մի կնոջ հորդորում է սպասել է, որպեսզի Շուշան տիկինն արթնանա... – Արթուն եմ, – պատասխանեց ներսից, – թող դան: – Մայր ու աղջիկ ներս մտան, լուռ, ակնածալից բարի լույս մաղթեցին: Նրանք լավաշ և մի մեծ փունջ մարգարտածաղիկ (երիցուկ) էին բերել:

Շուշան-Վարդենիի դեմքը բացվեց ծաղիկները տեսնելով: «Շա՛տ չնորհակալ եմ, – սասաց, – գիտե՞ք, որ սա Աստվածամո՞ր ծաղիկն է: Մեծ նվեր եք բերել ինձ: Մեծ»:

Մայր ու աղջիկ ուրախացած իրար երեսի նայեցին: Զգիտեին: Հետո մայրը պատմեց, թե իր աղջիկն արդեն բավական ժամանակ է, ինչ տկար է, թույլ, չնայած ո՛չ մի տեղը չի ցավում: Դուստրը, որ իր Մանեի տարիքին էր (Մանեի՛, Մանեի՛...), լուռ ժպտում էր: «Եկել ենք, որ աղոթես նրա համար, քույր Շուշան, հավատում ենք քո խոսքի ուժին, – լցվեց մայրը, – ո՛չ մի գործի ձեռք տալ չի կարողանում թուլությունից, իսկ մենք մեծ տուն ենք, գործը՝ շա՛տ: Ասացին՝ Շուշան-Վարդենին կօգնի», – եզրափակեց կինը: «Կօգնեմ, ինչու՞ չէ, եթե կարողանամ, անպայման կաղթեմ, հիմա լսեցեք Աստվածամոր նվեր համարվող այս ծաղկի պատմությունը»:

Առաջին պատմությունն այս է: Մի անգամ Աստվածամայրը որոշում է փոքրիկ Հիսուսին ծաղկեպսակ նվիրել: Զմռանն էր, և ձյունածածկ դաշտերում ծաղիկ չգտնելով, Աստվածամայրը վճռում է իր ձեռքով ստեղծել դրանք: Գունագեղ մետաքսի վրա ասեղնագործում է փոքրիկ «ա-

րեներ», դեղին ու ճերմակ թելերով։ Այդ ծաղիկները մարդարտածաղիկ են կոչվում կամ երիցուկ... Նվերը շա՛տ դուր եկավ մանուկ Հիսուսին։ Նա ո՞ղջ ձմեռ գուրգուրանքով պահեց ասեղնագործությունը։ Գարնանը ասեղնագործած մետաքսը թաղեց հողում, և ամեն օր ջրում էր։ Որոշ ժամանակ անց ասեղնագործված ծաղիկները կյանք առան, արմատ ձգեցին, հետո տարածվեցին ողջ երկրով մեկ։ Իբրև թանկ հիշողություն այդ հրաշքի մասին՝ մարդարտածաղիկը կամ երիցուկն այսօր էլ աճում է, զգարթացնելով մարդկանց աչքն ու սիրտը։ Այն աճում է վաղ գարնանից մինչև խոր աշուն։ Հողագնդի վրա չկա մի երկիր, որտեղ չծաղկի քնքուշ ու խոնարհ, Աստվածամոր և Հիսուսի առնչությամբ սրբազնացած այս ծաղիկը։ Այն՝ բուժի՛չ է նաև, և երկրորդ պատմությունը վերջացնելուց հետո կասեմ, թե ինչ անես...

Կա նաև մարդարտածաղկի ծննդյան երկրորդ պատմությունը։ Գաբրիել հրեշտակապետը Աստծո կողմից ուղարկվում է Մարիամի մոտ՝ նրան ավետելու խոստացված Մեսիայի մոտալուս ծնունդը։ «Ուրախացի՛ր, ո՛վ շնորհընկալ, Տերը քեզ հետ է։ Օրհնյալ ես դու կանանց մեջ»

Մարիամը, տեսնելով, հրեշտակին իր սենյակում և լսելով նրա ողջույնի խոսքերը՝ հուզվում է և ինքն իրեն խորհում, թե ի՞նչ բան էր դա և ի՞նչ էր նշանակում այդ ողջույնը։ Հրեշտակն ասում է նրան. «Մի՛ վախենա, Մարիամ, որովհետեւ դու շնորհ գտար Աստծուց։ Եվ ահա դու կհղիանաս և կծնես մի որդի, որի անունը Հիսուս կղնես։ Նա մեծ կլինի և Բարձրալի Որդի կկոչվի։ Եվ Տեր Աստված նրան կտա հոր՝ Դավթի աթոռը, նա հավիտյան կթագավորի Հակոբի տան վրա և նրա թագավորությունը վախճան չի ունենա։

— Դա ինչպե՞ս կպատահի, — հարցրեց Մարիամը, — քանի որ ես տղամարդ չեմ ճանաչում։

— Առւրբ Հոգին կիջնի քո վրա, — պատասխանեց Հրեշտակը, — Բարձրյալի զորությունը հովանի կլինի քեզ, ուրովհետև նա, Ով քեզնից է ծնվելու, սուրբ է և Աստծո Որդի կկոչվի:

Հրեշտակը միևնույն ժամանակ հայտնեց Մարիամին, որ նրա ազգական Եղիսաբեթը ևս երեխա պիտի ունենա, չնայած, որ շատ մեծ էր տարիքով, որովհետև, — ավելացրեց Հրեշտակը, — Աստծո համար անհնար բան չկա»:

* * *

Հրեշտակից լսելով, որ մանուկ է ծնելու նաև իր ազգական Եղիսաբեթը, Մարիամը մեծապես ուրախացավ, և շատ չանցած նազարեթից մեկնեց այն գյուղը, ուր ապրում էին Զաքարիան ու Եղիսաբեթը: Երկար քայլեց Մարիամը լեռներով ու հովիտներով, և այնտեղ, ուր դիպչում էր Աստվածամոր ոտքը՝ փոքրիկ, ուրբ ծաղիկներ էին ենում հողից՝ ճերմակապսակ, դեղին սրտիկով...

— Հենց այս ծաղիկն էլ կօգնի քեզ, աղջիկս, — պարմանուհուն դիմեց Շուշան-Վարդենին, — կիսաշես և կիսմես ջուրը, կամ՝ թուրմ պատրաստիր: Խմիր օրը մեկ-երկու անգամ: Տիւրությունդ կանցնի, կզարթանաս, կուրախանա՛ս կյանքով, որ շա՛տ կարևոր է բոլոր հիվանդությունների բուժման համար:

Մեծ էր մոր և աղջկա ուրախությունը, երբ իմացան, թե փրկությունը հենց Աստվածամոր ծաղկից է դալու:

ԿԱԽԱՐԴՈՒՀԻՆ ԷԼԻ Է ԳԱԼԻՍ

Բոլո՞րը ներկա էին, հենց մենակ կախարդուհի Զոլեյիսան էր պակաս՝ ինքն իրեն հոգոց հանեց Շուշան-

Վարդենին, տեսնելով, որ բակ է մտնում Զոլեյխան մի մո-
գի հետ: Իրազեկ, որ Աշրաֆն արդեն չկա (դեպքերի խե-
լակորո՞ւյս ընթացք...) նա իրեն ուղեկից էր վերցրել մի մո-
գի: Եկան-մտան ներս, խոնարհում արեցին, չգիտեին որ-
տե՞ղ նստեն. ծառայողնեից մեկը հապճեպով մի նստարան
բերեց: Նստեցին: Զոլեյխան շրջվեց, ինչ-որ բան ասաց մո-
գին, վերջինս դուրս եկավ և մի բաժակ ջուր բերեց: Ապա
սկսեց հայերեն թարգմանել կախարդուհու ասածները: Զո-
լեյխան պահանջեց Շուշան տիկնոջից իր նվիրած հուռութ-
ները, ստանալով, դրանք մեկ առ մեկ գցեց ջրով լի բաժա-
կի մեջ՝ ինչ-որ մոգական բառեր շշնջալով: Պատվիրեց, որ
դրանք ողջ գիշերը մնան ջրի մեջ: Առավոտյան պիտի բա-
ժակից հանել նախ կրակագույն հուռութը (կրակը խորհր-
դանշող) և բաժակի ջրից խմել մեկ-երկու կում: Կեսօրին
պիտի հանել ճերմակ հուռութը, էլի մի քանի կում անել
ջրից: Երեկոյան՝ նույն կերպ վարփել կապույտ հուռութը
հանելով: Գիշերամուտին պիտի բաժակից հանել մոխրա-
գույն հուռութը (հողը խորհրդանշող) և խմել մնացած
ջուրն ամբողջությամբ. բաժակը պիտի դատարկվի: Ահա
այսպես, մոգի միջոցով բացատրեց Զոլեյխան, սրբազան
չորս տարրերը՝ կրակը, օդը, ջուրը և հողը Շուշան տիկնո-
ջը պիտի փոխանցեն, հաղորդեն իրենց խորհուրդը՝ կրա-
կի՝ պես վառվուռն, օդի՝ պես թափանցիկ, ջրի՝ պես մաքուր
և հողի՝ նման հաստատուն լինելու:

Մոգը դուրս եկավ, այս անգամ ներս բերելով սիսեռով
լցված մի սկուտեղ: Զոլեյխան սկուտեղը ծնկներին դրեց,
սիսեռները ձեռքում խաղացնելով (զառերի նման) սփոեց
սկուտեղով մեկ: Սիսեռներն այս ու այն կողմ ընկան: Կա-
խարդուհին երկար և ուշադիր զննում էր յուրաքանչյուր
սիսեռահատիկը, ապա՝ ընդհանուր դասավորությունը, հե-
տո խոսեց. «Քո ընտանիքի գլխավորը կովի դաշտում է,

վտանգի մեջ: Նրա կյանքը մազից է կախված: Պետք է շա՞տ զգույշ լինի: Աղջիկ ունես. աղջիկդ ուրիշ մի տան մեջ է, այստեղ չէ, բայց այստեղից շատ հեռու չէ: Աղջիկդ քո մասին է մտածում: Նա շատ է սիրում քեզ՝ իր մորը: Նրա աչքին արցունք կա... Չե՞ս ուզում տեսնել աղջկադ», — մոգի միջոցով արդեն բացահայտ հարց ուղղեց նա Շուշան տիկնոջը:

Շուշան-Վարդենին անթափանց դեմքը շրջեց դեպի նա, լուռ մնաց:

«Տղաներդ այստեղ են, բայց նրանք էլ, մոտ լինելով, հեռու են քեզանից. այդպես է երկում: Մտածում են, շատ են մտածում քո մասին, իսկ փոքրիկը կարոտից լաց է լինում: Դու մի մտերիմ, շատ մտերիմ մարդու կորուստ ունես. չես միսիթարվում, ես կօգնեմ քեզ»:

Խոսքն ավարտելով կախարդուհի Զոլեյխան բաց արեց ձեռքի կապոցը, ինչ-որ չոր, անծանոթ բույս հանեց, լցրեց իր հետ բերած թասիկի մեջ, ապա մոգից վերցրած հրահանով վառեց այն: Ուժեղ մի անուշահոտություն տարածվեց հյուղակով մեկ: Ինչ-որ բան ասելով միմյանց՝ Զոլեյխան և մոգը վեր կացան, խոնարհում արեցին Շուշան տիկնոջը, խոստանալով էլի՛ գալ: Նրանց գնալուց հետո Շուշան-Վարդենին գլխապտույտի պես մի բան զգաց, տրորեց աչքերը, հետո փսիաթը փոքր-ինչ բանալով՝ յուրահատուկ այդ բուրվառը դուրս դրեց: Նույն պահին էլ մտածեց իրեն դատապարտելով, թե ինչպե՞ս է, որ այսքան ժամանակ չի մտածել խորնկ ծխել այստեղ... Այս երկուսի գալու օգուտոն այն եղավ, որ իրեն հիշեցրին այդ մասին: Պետք է Հակոբ երեցին խնդրել, որ հետը բերի: Խունկը որտեղ էլ ծխես՝ իր սրբազն, կենսատու շնչառությամբ... ասես եկեղեցու բուրմունք և ջերմություն է տարածում: Պետք է խնդրել Հակոբ երեցին:

Հետո շեշտակի մի միտք ցավեցրեց սիրտը. ինչեր ասաց դստեր մասին, պարզ է, որ համաձայնեցված է՝... Մանեն հեռու է... և մո՞տ... Զլինի՞ հենց Ֆեյրուզ խանումի նորակառույց պալատում է...

ՖԵՅՐՈՒԶ ԽԱՆՈՒՄԻ ԱՅՑԵԼՈՒՄ Է ԾՈՒԾԱՆ ՎԱՐԴԵՆԻՒՆ

Օրերի հատիկ-հատիկ գլորվելուն զուգընթաց Շուշան-վարդենիի արդեն բեկված առողջությունը տեղի էր տալիս: Պահեր եղան, որ թուլությունից չկարողացավ տեղից վեր կենալ: Տարիներո՞վ (վեց երկար ու ձիգ տարի...) սովահար մարմինը մինչև վերջ սպառել էր իր կենսանյութը, զորությունը: Անցած երանելի տարիներին Շուշան տիկնոջը տեսած մեկը ժամանակից շուտ ծերացած, հյուծված այս կնոջ մեջ դժվար թե ճանաչեր նրան: Զավակներից զրկված լինելն էլ իրենն էր անում, իսկ դստեր «անհետացման» հանգամանքը լիովին ջլատեց նրա առանց այն էլ սպառված ուժերը: Բութ ցավում էր սիրտը. ասես այնտեղ, կրծքավանդակում, սրտի փոխարեն տաք, արյունածոր մի վերք կար: Այդպես էլ էր...

Երբ երկարատև աղոթքից հոգնած (առաջ երբեք չէր լինում, որ աղոթքից... հոգնե՛ր, աղոթքից հոգնել կլինի՞, չէ՞ որ աղոթքը ներս ու դրսով ո՛ւժ է հաղորդում մարդուն, լցնում Հույսո՞վ և Հավատո՞վ, որ կյանքի գլխավոր բաղադրյալներն են: Բայց լամպն էլ շիջո՞ւմ է, չէ՞, երբ ձեթը հատնո՞ւմ է...),

Մի օր, երբ ուժաբեկ թիկն էր տվել խշտյակին, հայերեն իմացող մոգի հետ ներս մտավ Ֆեյրուզ խանումի սենեկապետուհին, հայտնելով տիրուհու կամքը՝ տեսության դալ

Շուշան տիկնոջը: Ե՞րբ կկամենա նա իրեն ընդունել, հարց-
րել էր Թեյրուզը: **Շուշան-Վարդենին** հայտնեց, թե միջօ-
րէից հետո:

Աշնանային ցրտերն սկսվել էին: Հոգու խորքում մարմ-
րող խարույկի խանձողների պես կայծլտացին ու հանգան
բազում զգացումներ...Այս կինն իր նախկին (նախկին, և
փա՛ռք աստծո դրա համար) ամուսնու կի՛նն է, պարսից
Պերող արքայի մերձավոր ազդեցիկ կանանցից մեկը (զո-
քա՛նչը), պարսից արքունիքի կյանքում նշանակալի դեր
ու կշիռ ունեցող մեկը: Եվ հիմա, իր քանդված տան ավե-
րակների վրա թեերը տիրաբար փռած՝ նորակառո՛ւյց իր
պալատում, փաստորեն իշխում է **Շուշան-Վարդենիի** տա-
նը:

«**Շուշան-Վարդենիի** տա՞ն, — ներսից ասես մի ձայն
կրկնեց նրան, — **Շուշան-Վարդենիի**, ինչպես և բոլորի՝,
տունն այնտեղ է, ուր հավերժական հանգիստ են գտնում
լուսածարավ հոգիները: Ի՞նքը պիտի նեղվի, երբ ճիշտ է,
շղթաների մեջ է, բայց թոթափե՛լ է երկրային կապանքնե-
րը, և կիսով չափ այնտեղ է արդեն, լույսի թագավորութ-
յունում: Ի՞նքը պիտի կաշկանդված զգա իր հալումաշ վի-
ճակի և չարչարանքի համար, եթե չարչարանքի՛ց վեր է
արդեն... Ի՞նքը... կաթողիկոս Սահակ Պարթևի թոռնուհին,
պարսից «աչքի լո՛ւյս» Վարդան Մամիկոնյանի դու՞ստրը:

Մոտեցող քայլերի ձայն լսվեց... Սենեկապանուհու ձեռ-
քը հարգալից խոնարհումով մի կողմ քաշեց դռան տեղում
կախված փսիաթը, և շեմին հայտնվեց գեղեցիկ, մարմնեղ
մի կին, շքեղաշուք հագուստի ելեհջումներով... Նա ներս
մտավ, թեթևակի խոնարհում արեց **Շուշան-Վարդենիին**,
միաժամանակ վարդի օծանելիքի զգլիսիչ բույր տարածելով
շուրջը... Ապա նստեց ծառայի նախօրոք ներս բերած գա-
հավորակին: **Մյուսների** համար սովորաբար նստարան էին

բերում, իսկ Ֆեյրուզ խանումը գահավորակը հետն էր բերել: Մի երկայրկյան նրանք լռելյայն զննում էին միմյանց. հետո մոգը թարգմանեց Ֆեյրուզի հարցը, թե ինչո՞վ կարող է օգնել Շուշանին Ֆեյրուզն ինքը, ինչի՞ կարիք ունի տիկինը: Այդ մեկին արդեն Շուշան-Վարդենին չէր սպասում: Վեհանձնության և մեծահոգության քողի տակ Ֆեյրուզ խանումը, ըստ էության, երեսով էր տալիս դղյակի իսկական տիրուհու ներկա վիճակի ողջ թշվառությունը: «Ոչնչի կարիք չունեմ, փա՛ռք Աստծո, – կարողացավ հանդարտ ու արժանապատիվ արտաքերել Շուշան-Վարդենին, – ի՞նքս եմ ընտրել իմ ճամփան...»:

Պարսկուհու հայացքն ուղղված էր տիկնոջ բոքիկ ոտքերին, որ այտուցված, հիմա, աշնանը, պարզ է, նաև ցրտից կապտած էին: Ֆեյրուզի կանաչափայլ-դեղնավուն, նշաճեաչքերում հիացումի հետ համախառն սոսկանքի մի արտահայտություն երեաց... Հետո շուռ եկավ դեպի իր սենեկապանուհին և ինչ-որ բան հանձնարարեց: Սենեկապանուհին դուրս եկավ, քիչ անց ներս մտնելով բրդյա մի տաք ծածկոց ձեռքին՝ պարսկական գունագեղ նախշերով:

Այս մեկին արդեն Շուշան-Վարդենին ամենեին չէր սպասում: Հիշեց Աշրաֆին, որն այդպես էլ չբերեց իր՝ Շուշանի՝ տան ծածկոցը: Պահը նուրբ էր, և Շուշան տիկինը պարզ մի շնորհակալություն հայտնեց Ֆեյրուզ խանումին, ասես պատահածը մեծ բան չէր: Ներքուստ սակայն գնահատեց այդ արարքը, քանի որ այն հանգամանքներում, որոնց մեջ գտնվում էր Ֆեյրուզը, կարող էր չանե՛լ այդ, կարող էր և չանել...

Ապա Ֆեյրուզ խանումը մոգի միջոցով տեղեկացավ, թե եղե՞լ է այստեղ կախարդուհի Զոլեյխան, և Շուշան-Վարդենին գո՞չ է նրանից: Այժմ էլ Շուշան-Վարդենիի մեծահոգություն դրսեռություն պահը եկավ, և նա հարգալից

ու գնահատանքով խոսեց Զոլեյխայի մասին, շնորհակալաթյունն հայտնելով, որ վերջինս հնարավորինն արել է՝ իրեն օգնելու համար:

Վեր կենալիս Ֆեյրուզ խանումը սենեկապանուհու ձեռքից վերցրեց և Շուշան տիկնոջ կողքը դրեց պղնձյա մեծ սինիով փախլավան, նշելով, որ հատուկ Շուշան տիկնոջ համար է պատրաստել տվել: Փոխադարձաբար շնորհակալաթյունն հայտնելով Շուշան-Վարդենին նշեց, որ միշտ էլ բարձր է գնահատել պարսկական խմորեղենի թե՛ համը, թե՛ պատրաստման հմտությունները...

Ֆեյրուզ խանումը վեր կացավ՝ արքենի, հաղթահասակ, էլի թեթևակի գլուխ տվեց Շուշան տիկնոջն ու դուրս եկավ: Այցելությունն ավարտված էր:

Պահակները փախլավայի լավ բաժին ստացան: Քամի էր բարձրանում: Հեռվից-հեռու լսվեց Հույսի հաչոցը:

ՀԻԾԱՐԺԱՆ ԶՐՈՒՅՑ

Առավոտ կանուխ հայտնվեց Հակոբ երեցը: Նա ողջունեց Շուշան-Վարդենին, նստեց, ծոցագրպանից հանեց ուրուն մի մագաղաթ: Շուշան-Վարդենին գիտեր (երեցն ինքն էր ասել, թե մատյանի մեջ վարքագրում է Շուշան տիկնոջ կյանքը), բայց առաջին անգամն էր տեսնում ձեռագիրը:

Լռեցին: «Հույսը հիվա՞նդ է, ինչ է, — միտք հայտնեց տիկինը, — ամբողջ օրը մրափում է, մեծ մասամբ տանն է մնում»:

«Ցրտից է թերես», — պատասխանեց երեցը, միաժամանակ խորհրդածելով, թե դա հասարակ բան չէ, շունը զգում է մոտալուտ վախճանը, դրա՛ համար չի հեռանում տիրուհուց:

Երեցն առաջարկեց մի քանի գլուխ ընթերցել իր ձեռագրից Շուշան-Վարդենիի համար, որպեսզի նա որոշի, հավատարի՞մ է մնացել ինքը եղելություններին և դրանց իմաստին, ճշգրի՞տ է հաղորդել-փոխանցել ժամանակի ողին... Զէ՞ որ Շուշան-Վարդենիի կամավոր այս բանտարկությունից անցել է ամբողջ վեց տարի, երկարուժիգ օրե՛ր, շաբաթնե՛ր, ամիսնե՛ր, տարինե՛ր... առօրյա կյանք, ծնունդ և մահ, ամառ ու ձմեռ, թոշնումն ու ծաղկումն... Այս պատմության վկաներից շատերն արդեն չկան, ողջ եղողներն էլ փոխվում են... կամա թե ակամա (փոխելո՛վ խոսքն իրենց՝ հոգեվաճառությամբ), կամ էլ՝ ակամա՛ (հիվանդություն, հիշողության կորուստ...):

Ուրեմն կարեռ է, շա՛տ է կարեռ պատմության շիտակ, անաչափ գրառումը: Եվ գրչին քիչ թե շատ տիրապետող ազնիվ մահկանացուի պարտքն է հնարավոր ամեն ինչ անել՝ սերունդներին փոխանցելու Հավաստին ու ծշմարիտը: Պատմության առաջընթացի հզոր անկյունաքարերն են դրանք. և եթե ամեն սերունդ չդնի ի՛ր քարը այդ պատին, տեղը... բա՛ց, պարապ կմնա, և պատը... կփլվի...

Հակոբ երեցն սկսեց կարդալ գրածը... Լավ էր գրել, թե վատ, սակայն Շուշան-Վարդենին մտքով գնաց-հասավ վեց տարի առաջվա հոգեվիճակին: Տեսավ իրեն՝ ջահել, բդեշխի դավաճանության հարվածն իր սրտին նո՛ր ստացած, երբ այն ժամանակ դեռևս փոքր իր մանկանց (չորսի՛ն էլ, Աստված իմ, Սահակը դեռևս կենդանի էր...) առած գնաց-մտավ եկեղեցի և նրանց հետ միասին ողբում էր. ինքն՝ ամուսնու, նրանք՝ հոր հոգեռոր մահը...

Այդ ամենին հետեւեց կենդանի մեռյալի՝ բդեշխի ժամանո՛ւմը՝ մոգերո՛վ, ատրուշաններո՛վ, օտարազգի ծառաներով ու մանկավիկներով... Այն ժամանակվանից ի վեր սկսված իր մարմնական խոշտանգումները. անվերջ, ան-

վերջ... Հոգեզրկված-դազանացած այդ մարդը՝ նսեմ, բռի,
աղքատամիտ, ինքն իրեն արժանի... հետզհետե ավելի ու
ավելի ցած գլորվող: Մարմնական ցավն ի՞նչ է Հոգու
տվայտանքի առաջ. զավակների խլվե՛լն իրենից, օտարա-
նա՛լը, օտարադավա՛ն դառնալը. սո՛ւրբ մկրտությամբ
սկսված նրանց հայրենահամ կյանքի կտրուկ շրջադարձը
դեպի հավատափոխություն՝ ցածհոգի հոր ճնշմամբ: Իր
կորուսյալ-մոխրացած երազները...

Հակոբ երեցը կարդում էր վերացած, ինքն էլ տեղափոխ-
ված անցա՛ծ այն օրերը, իսկ Շուշան-Վարդենիի դալկացած
այտերն ի վար հոսում էին արցունքները, ամեն մեկը մի
հարցական՝ ինչու՞՝, ինչու՞՝ այսպես եղավ, այսպե՛ս եղա՛վ...

Հակոբ երեցը կանգ առավ. հոգեկան այրումից ինքն էլ
ուժասպառվել էր. լոեց, ջուր խմեց Շուշան տիկնոջ կավա-
մանից: Լոռություն տիրեց: Լսվում էր միայն Հույս անու-
նով շնիկի նուրբ մշմշալը քնի մեջ...

«Այսօրվա համար բավական է թերևս, – խոսեց երեցը,
– կգա՛մ էլի...»:

«Հակոբ երեց, – նրան դիմեց Շուշան-Վարդենին. –
Վերջերս հաճախ եմ մտածում ահա թե ինչի՛ մա-
սին... ժամն է պատեհ, և պիտի ասեմ քեզ. երբ ես արդեն
կլինեմ այնտե՛ղ, և նա՝ Աստված, ինձ հարցնի, թե ինչպե՞ս
էր այստեղ. կլոեմ, ի՞նչ ասեմ (չէ՞ որ ինքն ամենայն ինչ
գիտե), ասեմ՝ վա՞տ էր, ասեմ՝ լա՞վ էր...

Այդպես էլ կլոեմ:

կլոեմ»:



ՄԻ ՊԱՐԿ ԽՆՁՈՐ

Աշնանային այդ օրը՝ ձուլված հետմիջօրէի խաղաղությանը, իր լրումին էր հասնում, երբ բդեշխական ամրոցի բակը մտան երկու հոգի՝ միջին տարիքի մի կին տասնյոթամյա պատանու հետ։ Տղայի (հավանաբար որդին էր) ձեռքին մի մեծ պարկ կար։ Նրանք մի պահ շփոթված կանգ առան, շուրջը նայելով, երբ ընդառաջ ելավ բակում երթևեկող պարսիկ մոգերից մեկը։ Մոգերից կամ ծառայողներից մեկ-երկուսը անընդմեջ հսկում էին բակի անցուդարձը, մանավանդ Շուշան տիկնոջ առողջության վատթարացումից հետո, երբ սկսել էին այցելուներ գալ։ Կինն անակնկալի եկավ, երբ նրան պարսկերենով գիմեց ճերմակահանդերձ, սրածայր գլխարկով մոգը։ Անսպասելիությունից շվարած կինը չկարողացավ որևէ բան բացատրել, սակայն մոգը ամեն ինչ կուահեց։ Երբ կինը որդու հետ միասին քայլ արեց ամրոցի ուղղությամբ, մոգն արդեն որոշակիորեն մատնացույց արեց հյուղակը։ Անակնկալի եկած այդ կինը՝ Հերիքնազը, հասկացա՛վ. ակնթարժներ կան, որ տարիների խորաթափանցություն են հաղորդում մարդուն, ցնցո՛ղ ակնթարթներ։ Այրի Հերիքնազը ամբողջ յո՛թ տարի առաջ էր ամրոցում եղել, էլի՛ որդու հետ, վայելել Շուշան տիկնոջ առատաձեռնությունը։ Նա ա՛յն աղքատ կինն էր, որի առիթով պոռթկացել էր համբերությունը հատած բդեշխակը։ Շուշանը կերակրել էր մորը և որդուն, լողանալու հնարավորություն տվել նրանց, հետո էլ ուտելիքի կապոցներով ճամփա դրել։ Ինչպես շատերին...
Երբ մոգը մատնացույց արեց հյուղակը և մայր ու որդի քայլերն ուղղեցին այնտեղ, ներսից դուրս էին գալիս երկու

եպիսկոպոս։ Նրանք ճանապարհ տվեցին շփոթմունքից ի-
րենց լրիվ կորցրած մորն ու որդուն, այնքան նեղ ու ան-
հարմար էր երկու հոգու համար հյուղակի մուտքը, ո՞ւր
մնաց՝ չորսի։ «Զհասցրի՛նք էլ ձեռքերն համբուրել», —
երկյուղով նկատեց կինը՝ դիմելով որդուն։

«Բարի օ՛ր, տիրուհի Շուշանին», — գոչեց Հերիքնազը
հյուղակի հենց մուտքից, այսքան անակնկալներից դեռևս
լիովին ուշքի չեկած։ «Լսեցի, որ հիվանդ ես, եկա տեսնե-
լու...», — բնազդով որսալով պահհը, որ չարժե իր զարմանքն
արտահայտել, թե ինչու՞ ամրոցում չի գտնում նրան,
շրջանցեց Հերիքնազը. «Որդի՛ս է, Սարգիսը, հիշու՞մ ես,
այն ժամանակ փոքրիկ էր, հիմա արդեն պատանի է»։

«Հիշո՞ւմ եմ անկասկած, — տեղը բերեց Շուշան-Վար-
դենին, — Հերիքնազն ես, տղայիդ էլ եմ հիշում, իմ Բագրա-
տի տարիքին է, նստի՛ր, երեխային էլ տեղավորիր... ինչ-
պե՞ս եք. ամուսնուդ կորցրել էիր, դժվար էր... Հիմա՞ ինչ
եք անում»։

«Հիմա Սարգիսս արդեն մեծացել է, օգնում է քեռուն
մեր այգի-բանջարանոցը շենացնելու, փա՛ռք, փա՛ռք
Աստծո, ավելի լավ ենք, առաջ, տիրուհի, հիշու՞մ ես, որ...
հիմա մեր մի պատառ հացն ունենք, քեզ համար էլ մեր այ-
գուց խնձո՞ր ենք բերել, Սարգիս, բե՛ր պարկը»։ Պատանին
ներս բերեց շեմին դրված պարկը՝ կարմիր, առողջ խնձորով
լեցուն։

«Շա՞տ ուրախ եմ, — հուզվեց Շուշանը, — չնորհակա՛լ
եմ, Սարգիսը ո՞նց է մեծացել, վերցրե՛ք, կերե՛ք, ձեր բե-
րած խնձորից, ես... ափսոս»։

Այրի Հերիքնազի զգոնությունն ու նրբավարությունը,
որ դիմացել էին մինչև այդ պահհը, հանկարծ ճաք տվին և
նա լցվեց.

«Տիրուհի՛, տիրուհի՛ Շուշան, — ասաց... և գեղջուկ կնոջ

շիտակ, ջերմ սիրտը տեղի տվեց. արցունքները մեկեն հորդեցին... Լսե՛լ էի, լսել, ուրեմն ճիշտ է այդ...»:

«Հազա՞ր ափսոս, որ ճի՛շտ է, ճի՛շտ, — մրմնջաց Շուշանը, — Սարգիսին ասա, թող խնձոր վերցնի, դո՛ւ էլ...»:

«Տիրուհի՛, մի բան պիտի ասեմ, ես մինչև հիմա էլի՛ կդայի քեզ մոտ, բայց հիշում էի, թե ինչպես տեր բդեշխը զայրացած հարձակվեց քեզ վրա, ինչ է, որ օդնել էիր մեզ: Քե՛զ նման կնոջը: Նշար՝ շան բերան, ասում են մեր շենում», — եղրափակեց Հերիքնազը:

Շուշան-Վարդենին թույլ ձեռքերով չոյեց Սարգսի գլուխը, գորովանքով նայելով նրան. «Կարդալ սիրու՞մ ես, տղա՛ս...»:

Պատանու աչքերը փայլեցին. «Շա՛տ, կարդալ սովորել եմ գյուղի դպրոցում, երբ մեծանամ, կդառնամ զինվոր, հետո՝ զորավար, Վարդան Մամիկոնյանի նման...»:

«Գիտես չէ՞», որ տիրուհին Վարդան սպարապետի աղջիկն է», — վրա բերեց մայրը:

«Գիտե՛մ, — տղան միաժամանակ գլխով արեց, — լա՛վ գիտեմ: Վարդան զորավարի մասին ես շա՛տ պատմություններ եմ լսել»:

Ծերերը, մեծերը շաբաթը մեկ իրիկունները հավաքվում են Սողոմոնենց օդայում, ասում են, խոսում, — շարունակեց Հերիքնազը, — ... քիչ է պատահում, որ այնտեղ երեխաներկա լինի, բայց իմ Սարգիսը միշտ գնում է, տանը կամ այգում անդամ գործ էլ ունենա՝ թողնում է, գնում...»:

Շուշան-Վարդենին շրջեց գլուխը, հայացքն ուղղելով Սարգսին. «Կուզե՞ս կարդալ, տղա՛ս, ես քեզ մի պատվարժան հոգեորականի հետ կկապեմ՝ Հակոբ երեցի, նա քեզ ճանապարհ ցույց կտա, կօդնի...»:

«Այո՛, տիրուհի, չնորհակալ եմ, շա՛տ չնորհակալ», — հուզվեց պատանին:

«Զեռքն համբուրի՛ր, Սարգի՛ս, – խոսեց մայրը, տիրու-
հու ձեռքը սրբի՛ ձեռք է, - ասում են...»: Տղան մոտեցավ,
բռնեց Շուշան-Վարդենիի հալումաշ եղած ձեռքը, մոտեց-
րեց շուրթերին:

Շուշան-Վարդենին նրա գլուխն էր չոյում երկար, խան-
դաղատանքով, իսկ աչքերից գլորվում, գլորվում էին ար-
ցունքները:

ՀՐԱԺԵԾ

Շուշան-Վարդենիի հիվանդության տիսուր լուրը շրջան
գործեց և տնից տուն մտավ այնպես, ինչպես ո՛ղջ այդ յոթ
տարիների ընթացքում նրա աստվածասեր վարքն ու բարե-
սեր գործերն էին հոլովկել-խոսվել: Կատարվեց այն, ինչին
իրավամբ արժանացել էր պապերի կրօնին հավատարիմ,
մեղսատյաց, վեհանձնյա այդ կինը: Բոթը թուխալի պես
ծանրացավ Յուրտավի վրա. բազմազդ քաղաքի բնակիչնե-
րը Շուշան-Վարդենիի հայտնվելու ժամանակից ի վեր
(յո՛թ տարի առաջ սկսված դեպքերի տեսադաշտում), ո՛չ
միայն հետևում էին այդ պատմությանը, այլև քննարկում-
վերապրում, իմաստախոսում, նաև՝ ինչու՞ չէ՝ ծանակում
Վազգեն բգեշխին, միով բանիվ, մասնակցում էին այդ ող-
բերգությանը: Տեղին ու ժամանակին հարմար՝ ժողովրդա-
կան բառ ու բանն էլ հարստացավ Շուշան-Վարդենիի
տիսուր պատմություններով:

Քրիստոնեական կրօնի և նրա պատգամած լավի, ճշմար-
տության, առաքինության խորհրդանիշ դարձավ Շուշան-
Վարդենին: Յուրտավն իր կենդանի, տառապող սրբուհին
ունեցավ և հպարտանում էր նրանով: Միայն Յուրտավինը
չէր, ողջ Վրաստանինն էր: Քաղաքային գունագեղ բառու-

բանի մեջ ավելի ու ավելի հաճախ կարելի էր հանդիպել Շուշան տիկնոջ անվանը։ Այսպես. «Ի՞նչ է, սուրբ Շուշանից ավելի՝ հավատասեր դարձար», «Սուրբ Շուշանի մոտ պիտի տանել երեխային, վաղուց լսուելու ժամանակն է», կամ էլ այսպես. «Այդ անբարիչտն այնպես է կնոջ հոգին հանում, ինչպես Վազգեն բղեշխը՝ Շուշանի»։ Ոչ ոք չիմացավ, թե ինչպես «Սուրբ» անվանումը եկավ ու փարզեց Շուշան-Վարդենիի անվանը, բայց չարչանալից նրա կյանքի վեցերորդ, թե՝ հինգերորդ տարում արդեն այդպես էին անվանում նրան։ Շուշան-Վարդենիի հետզհետե ծանրացող վիճակի հետ կապված համընդհանուր մի տիրություն թևերը փռեց քաղաքի վրա։ Զհաշված ծնյալ չարերին ու վատհոգիներին, բոլորի գեմքին էլ կարդացվում էր հոգսի մի ալիք՝ տրտմության երանգով։

Հետաքրքիր էր, որ խելառ Դաթիկոն օրը մի քանի անգամ եկեղեցի էր մտնում իրազեկ լինելու Շուշան-Վարդենիի առողջական վիճակին։ Բավական է, որ իմանար, թե տիկինն այդ օրն այնքան էլ լավ չէ, փոթորկվում էր, ափերից ելնում, իր անձնական դատաստանը տեսնելով բղեշխի հետ... Ժողովրդական ցավի սրտաբուխ այդ պոռթկմանն ի տես մարդիկ էին հավաքվում, խոսքն ու զրույցը՝ ծավալվում, էլի ու էլի դատապարտում-դատափետում էին ուրացողին, դավաճանին, դազանաբարո ամուսնուն... Քաղաքի ընդհանուր դիմապատկերին նոր մի կնճիռ հայտնվեց, երբ հայտնի դարձավ Շուշան տիկնոջ առողջականի տագնապալի անկումը։ Հանկարծ զգացին, դիտակցեցին, որ նա գնում է իրենց ձեռքից... Եվ հրաժեշտի այցելություններ սկսվեցին ի դուռն սրբոյ... դեպի բղեշխական հզոր ամրոցի բակում ծվարած անշուք հյուզակը։

Ո՛չ առանց ֆեյրուզ խանումի խորհրդի Շուշան-Վարդենիի հյուզակի շեմին հսկելու կարգված պահակները

վերջապե՞ս հանվեցին, որպեսզի ելումուտն ազա՛տ լինի, էլ չենք խոսում այն մասին, որ նրանց ներկայությունը մի ավելորդ անգամ ընդգծում էր բդեշխի չարաբարո, դաժան նկարագիրը:

Աստծո դատաստան չէր, ի՞նչ էր, Վազգենի առողջության վատանալը. կերա՞ծը չէր մարսում, թե՞ ինչ, Ֆեյրուզ խանումի հմուտ և հոգեկից հեքիմները տիվ ու գիշեր բուժիչ բույսերի եփուկներ էին խմեցնում նրան: Վազգենի առաջիկ բրոնզափայլ, առողջ դեմքն այժմ սերկակիլի գույն ստացած ու խորշումած, ծանր հիվանդի դեմք էր հիշեցնում: Նոր մի հատկություն էլ էր ձեռք բերել. մարդկանց հետ խոսելիս դիմացինի աչքերին նայել չէր կարողանում, կամ խոնարհում էր աչքերը, կամ՝ նայում խոսակցի գլխից վեր: Հոգեբանական անհաղթահարելի մի պատնեշ էր գոյացել Վազգենի և զավակների միջև: Մանեն արդեն ասպարեզում չէր, իսկ արտաքուստ չնորհալի երիտասարդ դարձած Հերակլը, և ծաղկող պատանի Բագրատիկը, դեպքերի շարանի մեջ իրենց ակամա դերն ու բաժինը ունենալով, գիտակցում էին կատարվածի ողջ ողբերգականությունը, չկարողանալով, ավաղ, որևէ բան փոխել... Դրա համար էլ նրանց անուրախ դեմքերին մշտական մտահոգության կնիք կար:

Անձրևամաղ գիշերներով և թխպոտ օրերով իր գալուստն էր ազդարարում սեպտեմբերը: Տարվա այս եղանակին էր համընկել Շուշան-Վարդենիի աստիճանական ուժապառությունը: Ցուրտավում շրջում էր Հովհաննեպոսի պատկերավոր արտահայտությունը. «Շուշան-Վարդենին հիվանդ չէ՝, այլ մարո՛ւմ է, իբրև Աստծո խորանում վառվող մեծախորհուրդ մոմ»:

Շուշանի առողջությամբ հետաքրքրվող եկող-գնացողների շարքերը բազմազան էին. իշխանական տոհմերի ու վաճառականական տների ներկայացուցիչներ, պարզ, ուշ-

միկ ժողովուրդ, օտարականներ, որ գործով հայտնվելով
քաղաքում, իմացել էին իրողությունը և ցանկություն
հայտնել տեսնելու սուրբ կնոջը...

Առանձին եկան Շուշան-Վարդենիխն հրաժեշտ տալու
բորբոքությունից փրկված Նազիրե իսանումը և նրա մայրը,
Յուրտավի իշխանական տներից՝ Մաղվալա, Նինո, Էկատե-
րինե, Նաթելա իշխանուհիները, տագուր՝ Զոջիկ իշխանը,
թե՛ կնոջ՝ Նաթելայի հետ, թե՛ մենակ: Զոջիկը, որ Շուշա-
նի Հոգեղբայրն էր դարձել, ծնկեց նրա առաջ և համբու-
րելով հարսի ոսկրացած ձեռքը, լաց եղավ, մեղքերի թո-
ղություն աղերսելով նրանից: Զէ՞ որ... այդ ամենը նրա աչ-
քի առաջ էր կատարվել:

Զարմանալի՛ հոգեփոխության էր ենթարկվել Սև Հոռո-
փը. Էլի՛ անփոփոխելի տպեղ, սակայն արցունքից թաց
նրա աչքերում խորունկ, անփարատ վշտի այնպիսի ան-
կեղծ արտահայտություն կար, որ դիմացինի հոգու մեջ էր
թափանցում: Հոռոփին ամեն օր էր գալիս Շուշան-
Վարդենիխն այցելության, հետո շատերին էլ տեղեկացնե-
լով նրա վիճակի մասին:

Ֆեյրուզ խանումն էլի՛ եկավ, բուժիչ խոտերից պատ-
րաստված եփուկով լի մի աման էլ բերելով:

Բոլորը, բոլորը գիտեին, որ Շուշան-Վարդենին գնում
է...



ԴԵՊԻ ՍՅՈՒՆԸ ԼՈՒՍՈ

Հովհանն և Սամվել եպիսկոպոսները հաճախացրել էին իրենց այցելությունները:

Այդ օրը Հակոբ երեցը վաղ էր եկել: Քիչ անց եկավ նաև Ավոց եպիսկոպոսը, ինչպես պայմանավորվել էին: Վերջին օրերից մեկն էր, և Շուշան-Վարդենին ուզում էր խոսել, դատարկել հոգին:

«Ուզում եմ հիշեցնել ձեզ, Արժանապատիվ սուրբ հայրեր, – շնչահեղձ լինելով սկսեց նա, – Վարդանանց նահատակության խռովահույզ ժամանակաշրջանի մի դրվագ: Պատմիչը հաղորդում է. «Հայոց սպարապետ Վարդանը, իմանալով, որ ապստամբության գործը հույժ հայտնի են դարձնում և այն շատ ուշացնելուց մեծ վնասներ կլինեն, շատ օրեր խորհուրդ անելով, պատվական եպիսկոպոսներին, ականավոր երեցներին և հայոց ավագ տանուտերերին և սեպուհներին հավաքեց առանձին: Սա այն վերջին ժողովն էր, ուր քննարկվելու էր կեղծ ուրացությունից հրաժարվելու հարցը, ինչը պատմիչը կոչել է «փրկության դարձ»: Եղիշեի գրածից գիտենք, որ առաջին միաբանության, այսինքն եկեղեցու ուխտի հիման վրա ստեղծվեց երկրորդը՝ Վարդանանց ուխտը, որը, Ղազար Փարպեցու պատմելով, այնքան լավ անվանակոչել է Վարդան Մամիկոնյանն ինքը՝ Սպարապետն Հայոց: Նրա խոսքերն եմ ուզում հիշեցնել. «Մինչ ե՞րբ հանդուրժենք, որ Ճշմարտությունը թաքցվի, և մենք կորնչենք: Այս լուրը ելել-տարածվել, լցվել է ամեն տեղ: Պետք է գնանք հայտնի լույսով, իբրև ցերեկ ժամանակ, և կոչվենք Լույսի՝ որդիներ»:

Այս պատմությունը հիշեցրի ձեզ շարադրելու համար

ասելիքս՝ ստույգ մահվանիցս առաջ, զի կանխազգում եմ, որ մոտենում է անխուսափելին։ Գիտեք, որ իմ մկրտության, ավագանի անունը Վարդենի է (ամբողջականը՝ Վարդանուչի, ի մեծարումն հորս)։ Հետո է, որ նաև Շուշան կոչեցին։ Ահավասիկ ես՝ Վարդանուչիս, (եթե արժանի՛ էլ չէի, հուսով եմ, որ չարչարանքի այս վեց տարիներին խղճմտորեն արժանացա այդ անվանը), ուզում եմ ասել ձեզ՝ պատվարժան սուրբ Հայրերիդ, Հրաժեշտի իմ խոսքը։ Ես չգիտեմ, թե ե՞րբ կավանդեմ Հոգիս, ուստի ուզում եմ հիմա խոսել, քանզի պատահում է, որ մարդու լեզուն մահվանից առաջ բռնվում է, միտքը կամ պղտորվի...»

Այս հյուղակում անցկացրած յոթ տարին, արդարե, զուգակշռեց մինչ այդ անցկացրած սովորական կյանքիս երեսունհինգ տարիները։ Ավելին ասեմ. Հոգեւոր նժարի վրա այս յոթը տարիները անհամեմա՛տ ծանր եկան եղած երեսունհինգից։ Այնքա՛ն ծանր, որ մոտեցրին ինձ աստվածաստեղծ, կենսատու հողին, ուրկից սկիզբ է առնում երկինք տանող ճամփան։ Այս վեց տարիները վեց կյանքի արժեք ունեցան ինձ համար... Հիմա հանգիստ եմ, խաղաղված հոգով և պատրաստ մեկնումի... ձգնակյացին վայել հյուղակս, որ իմ վերանորոգումի վկան եղավ, հարազատ է ինձ արդեն։ Եվ, զարմանալի՛ մի բան պիտի հայտնեմ ձեզ. տարինե՛ր առաջ, երբ անսատված այդ մարդու հետ հյուսվում էր ընտանեկան մեր բույնը, մի քանի մառանների թվում, որոնք լիուլի կբավելին մթերապաշարի ձմեռվա և ամառվա մեր կարիքները հոգալու համար, ե՛ս եղա առաջարկողը այս հյուղակի ստեղծման, ամրոցի բակում, ձեռքի տակ և հարմար լինելու նկատառումով։ Ի՞նչ իմանայի, որ տարինե՛ր անց կյանքիս ամենակարեսոր շրջանը պիտի անցկացնեմ այստեղ։ Ի՞նչ իմանայի, որ հապճեպորեն ստեղծված այս քողովիկը իմ երկրորդ, հոգեւոր ծննդյան ավազա՛նը

պիտի լինի: Մաքրագործեցի անձն իմ այստեղ: Արժանացա լուսասեր իմ հոր՝ Վարդան Մամիկոնյանի դուստր Վարդենին (Վարդանուհին) լինելու պատվին: Ինչ նվիրումով որ իր կյանքը զոհաբերեց Հավատի համար հայրս, նույն խռնարհությամբ անձս ողջակեզ արի ես: Այսպես եղավ:

Արդ, ժամն է ժամու, և շնորհապարտ եմ, որ ներկա եք մեկնումի իմ պատրաստություններին: Երախտապարտ եմ, որ յոթ երկարուժիդ այս տարիներին չզրկեցիք ինձ հոգենոր ձեր զորակցությունից, այլ հայրագորով հոգածությամբ տեսաք ցավս, արցունքս, ընդունեցիք ապաշխարությունն իմ՝ ուրացող, անզգամ կողակցիս համար:

Արդ, խնդրանք ունեմ ձեզ. թախանձում եմ, երբ դա՛ ժամը (զգում եմ, որ մոտ է արդեն) տառապյալ մարմինս դրեք այնտեղ, որտեղից առաջին անգամ քարշ տվեց ինձ նա՛, ով արժանի չէ՛, որ անունը տամ: Արե՛ք այդ, խնդրում եմ, եթե արժանի եմ այդ կատարելու:

Մնացե՛ք խաղաղությամբ: Եվ խոնարհ հրաժեշտ ի հանդիպումն, եղբարց իմ ի մահ ի կեանս...»:

* * *

Լոռություն իջավ: Հյուղակի տիրուհու կողքին, աչքերն անհուն տիրությամբ լեցուն անշարժ ու նկուն պառկել էր շնիկը: Արդեն որերո՛րդ օրն է, որ չէր ուտում...



ՀՈԳԵՎԱՐՔԸ

Ծուշան-Վարդենիի վերջին օրերի հիշարժան իրադարձություններից էր, որ եկող-գնացող եպիսկոպոսների պնդումով սկզբում՝ մոմ, ապա նաև ձիթաճրագ վառելու հնարավորություն ստեղծվեց Հյուղակում։ Բդեշխն արդեն չկարողացավ որևէ բան անել կամ ասել առարկելու իմաստով։ Նրա դաժանություններն արել էին իրենցը։ Շուշանը մահվան եզրին էր արդեն։ Ուրացողն ինքն էլ մեկ-երկու անդամ (չգիտես՝ ինքնուրու՞յն, թե՞ Ֆեյրուզ խանումի դրդմամբ), փորձ արեց ներս մտնել իբր հրաժե՛շտ տալու համար, և հանդիպեց Շուշան-Վարդենիի կտրուկ մերժմանը. «Զեմ ուզում տեսնել անհավատ այդ մարդուն, – ասաց նա ներկաներին, – քանի որ ինչպես իր պապերի կրոնն ուրացավ, նոր ընդունածին էլ ուրեմն հարազատ չէ»։

Այդ պատասխանից հետո բդեշխն այլևս չհանդգնեց ներս մտնելու փորձ անել։ Փորձն այդ ինքնանպատակ չէր, քրիստոնեական կրոնի սիրառատ մարդասիրության վրա հիմնված՝ հայրենամերժ, դավանափոխ Վազգենը հո՛ւյս ուներ, ո՛չ ավելի, ո՛չ պակաս, ն ե լ մ ա՛ ն արժանանալ այս աշխարհի ունայնությունը լքող Շուշանից։

Իրիկնադեմ էր, որ եկավ Հակոբ երեցը։ Շուշան-Վարդենիի իննդրանքով բերել էր նրա պապի՝ Սահակ Պարթևի շարականները։ Շուշան-Վարդենին այլևս ի վիճակի չէր բարձրածայն ընթերցելու՝ ո՛ղջ հոգով ու էությամբ, ինչպես յո՛թ տարի շարունակ աղոթում էր ու սաղմոսերդգում... Ուժերն սպառվել էին, ձայնը դուրս չէր գալիս... Հակոբ երեցն առաջարկեց, որպեսզի ի՞նքն ընթերցի, ինչը տիկինն ընդունեց մեծ գոհունակությամբ։ Եվ իրիկնացող

օրվա մեջ, ձիթաճրագի մեղմ ցոլքով լուսավորված, արդեն աշնան պաղ սյուքով լեցուն հյուղակում տարածվեց Հակոբ երեցի բարեհունչ ձայնը...

Ավարտելով ընթերցումը, Հակոբ երեցը լոեց: Պապի՝ Սահակ Պարթևի շարականների ունկնդրումը (երեցը լավ կարդում էր) Շուշան-Վարդենիի հոգին լցրեց խորունկ երկյուղածությամբ առ ստեղծագործությունն ընդհանրապես: «Ստեղծագործության պահը սրբազն է, ճշմարի՛տ երկունք, – ասաց նա երեցին, – ես միշտ վարձատրել եմ ինձ ընթերցումով՝ ժամանակ առ ժամանակ կարդալով բարձրաձայն, նաև՝ երեխաններիս համար (այս ասելիս նրա դեմքը ցավագին ջղածգվեց): Բանաստեղծությունն էլ աղոթք է, անպայման, և թեկուզ միայն բանաստեղծություն կարդալո՛ւ, ունկնդրելո՛ւ համար արժեք աշխարհ գալ...»:

Շուշան-Վարդենին շարունակեց. «Համատեղ մեր կյանքի երկա՛ր տարինների ընթացքում այս մարդը, որ երեխաններիս հայրն է, մի օր, մի՛ օր անգամ չնստեց մեզ հետ, իմ ու երեխաններիս կողքին բանաստեղծությո՛ւն ունկնդրելու, մի՛ օր իսկ... քառասո՛ւն տարվա ընթացքում: Հիրավի, չո՛ր, խոպան հոգի: Այո, խոպան հոգում է, որ ազատորեն ծլարձակում է մոլախոտը, փարթամանո՛ւմ....»:

Նվազո՛ւն ու հոգնաբեկ ներս մտավ շունը. որ հիմա միայն բնական պետքի համար էր դուրս գալիս հյուղակից. մնացած ժամանակ տիրուհու կողքին էր կամ ոտքերի մոտ, հայացքն անփոփոխ հառած նրան:

ՏԵՍԻԼՔԸ

Իրենց կենաց նավակը հոգու ողջ էությամբ հավատով վարող մարդիկ տեսիլքների արժանանալու բախտն են ու-

նենում և՝ հարթմնի, և՝ կիսանիրհ վիճակում, և՝ քնած ժամանակ (երազների ձեռվ), իսկ ծանր հիվանդներին, որոնց մի ոտքը անդենականի աշխարհում է արդեն, տեսիլները տրվում են իբրև հրաժեշտի պարգև և նախանշում։ Այդ տեսիլները խառն են լինում անցած լիարյուն կյանքի կենդանի պատկերների, նոր թանկ, հիշարժան զգացողությունների, այն ամենի հետ, ինչով մարդն ապրել է, չնչել, ոգևորվել, տիրել և ուրախացել։ Մահամերձին երեացող տեսիլները այդ ամենի հանրագումարն են, իսկ ժամանակային, կյանքի տեղության իմաստով՝ ամփոփումը։

Երբ այրի Հերիքնազն ու որդին գնացին, Շուշան-Վարդենին ձեռքն առավ առողջ, կարմրաթուշ խնձորներից մեկը, ուտել չէր կարող, բղեշխի նզովյալ ձեռքով ատամների մեծ մասը փշրված էր. երկու ձեռքով բռնեց խնձորը, մոտեցրեց դեմքին ու խորը շնչեց նրա թարմ բույրը։ Շնչեց՝ էլի՛ ու էլի՛։ Խնձորն իբրև կյանքի կենսալի խորհրդանիշ՝ ասես ուժ ներարկեց ժամեժամ թուլացող նրա մարմնին, կենտրոնացրեց մտքերը, Խնձո՛րը... Իրենց տան պարտեզը հիշեց մանուկ օրերին և, հատկապես, այն, որ խնձորը գրեթե պաշտամունքի առարկա էր հայրական տանը։ Եթե որևէ լավ գործի համար ինքը կամ մեծ քույրը՝ Մարիամը, ծնողների կողմից պարգևի կամ խրախուսանքի էին արժանում և զանազան նվերներ էին ստանում, ապա այդ նվերների հետ անպայման նաև խնձոր էին ստանում։ Նոր տարվա և Սուրբ Ծնունդի տոներին Սահականույշ մայրը (ինչպես և ո՞ղջ Հայոց աշխարհում էր ընդունված) ամանորյա նվերներ էր պատրաստում ինչպես իր աղջիկների և հարազատների, այնպես էլ հյուր եկող մյուս մանկանց համար։ Մետաքսե գույնզգույն այդ տոպարկների մեջ՝ ընկույզի և տիսիլի, չիր ու չամչի, ալանիի և քաղցր սուջուի շարոցների հետ անպայման լինում էր և խնձոր...

Թարմ, անուշաբույր, վարդաճերմակ, դեղին, կարմրաթուշ, կանաչ... խնձո՞ր, տարբեր տեսակների.... Եվ երկու կամ երեք խնձորը իրենց բուրմունքով էին լցնում տոպրակը: Խնձո՞րը... Հեռավոր երկրներից, պատերազմներից տուն դառնալիս հայրը, ինչ էլ լիներ, ճանապարհին որևէ տեղից անպայման խնձոր կը երեր: Խնձորն ասես նրա վերադարձի խորհրդանիշն էր. բարի խաբրիկը, ավետիսը: Ապագա սկեսրայրը՝ արժանապատիվ Աշուշա բդեշնը, հորը՝ Վարդանին այցի գալիս անպայման խնձո՞ր էլ էր բերում, ուրիշ բան (գինի կամ թթի օղի...) բերելու հետ մեկտեղ: Տարը՝ Մամիկոնեից տիկինը, շքեղ իր հագուստի գրպանում թունուհիների համար միշտ.... խնձո՞ր էր ունենում:

Շուշան-Վարդենին հիշեց, որ հոր զինապարկում այլայլ անհրաժեշտ իրերի կողքին քույրն ու ինքը մի՛շտ մի քանի խնձո՞ր էլ գնում էին: Նույնն անում էր և մայրը: Զուր չէ, որ հեքիաթներում այն կոչվում է նաև «անմահակա՞ն խնձոր», քանի որ կենա՛ց պտուղ է:

...Ահա, ձեռքի խնձորն ու նրա բու՞յրն էր առիթը, թե՞ այլ մի բան. Շուշան-Վարդենին մի պատկեր երևաց. ինքն հենց ա՛յս վիճակով ու կերպարանքով քայլում է ինչ-որ ճանապարհով, ու՞ր է գնում... չգիտե: Դիմացը բարձրավայր է՝ կանաչախիտ ծառերով, ներքեւում փոփած մարգագետինն ալիքվում է մարգարտածաղկի (երիցուկի) դեղին ծփանքով: Ոչ ոք չկա: Իր մաշված, սկագուն պարեգոտով, ոտաբորիկ, Վարդենին քայլում է մարգարտածաղկի ծփանքի միջով բարձրավայրը գեպի: Մոտենալով, տեսնում է հացենու տակ կանգնած մի կնոջ, կողքին էլ՝ խնձորով լիքը հսկա մի զամբյուղ: Կնոջ դեմքը ծանո՞թ է, շա՞տ ծանոթ, որտե՞ղ է տեսել, աստված իմ: Հանկարծ մի միտք կայծակի հարվածի պես լուսավորում է հիշողությունը. Աստվածամա՞յրն է. ինչպե՞ս սկզբում գլխի չընկավ, Աստ-

վածամայրն է՝ գլխին նուրբ, սպիտակ քող։ Շուշան-Վարդենին զգաց, որ ոտքերը թուլանում են, քայլելը՝ դժվարանում։ Երիցուկի ճերմակ, ոսկեսրտիկ ծաղիկները գգվում էին ոտքերին, օդում հաճելի զեփյուռ կար... Տեսավ մեկ էլ, որ Աստվածամայրը ձեռքով է անում իրեն, սկսեց շնչահեղձ լինել, ինչպես վերջին այս օրերին... Աստվածամայրը հանդարտ, հոգելույս ժպիտով նայում էր իրեն, ահա, Շուշան-Վարդենին մոտեցավ ու... վլվեց ծնկների վրա, ուժերը հատան։ Լալիս է ու լալիս. տանջանքի յո՞թ տարիների կուտակված ցավն ու վիրավորանքն է հորդում. լալիս է քաղցր, սրտաբուխ...

Աստվածամայրը կռացավ, լուռ շոյեց Շուշանի գլուխը, անխոս ժպտաց նրան, հետո կողքի զամբյուղից վերցրեց մի մեծ, կարմիր խնձոր ու դրեց Շուշանի ափերի մեջ։ Ի՞նչ խոշոր խնձոր է, մտածեց Շուշան-Վարդենին ափերի մեջ առնելով ողորկ, հոտավետ, մետաքսափայլ խնձորը։ Այն է, ուզում էր շնորհակալություն հայտնել Աստվածամորը, երբ տաք ու թաց մի բան կպավ ձեռքին. աչքերը բացեց, Հույս շնիկը ձեռքերն էր լիզում...

ԵՐԿՐՈՐԴ ՏԵՍԻԼՔԸ

Տեսածից խորապես ցնցված պառկել էր Շուշան-Վարդենին՝ առաջվա ուժակորույս վիճակից ավելի բարվոք դրության մեջ։ Աչքի առաջ էր երիցուկի ծփուն դաշտը, կանաչախիտ բարձրավայրը, հացենու տակ կանգնած Աստվածամայրն ու խնձորով լի զամբյուղը։ Նայում էր, նայում այրի Հերիքնազի բերած խնձորներին, իսկ իր՝ քիչ առաջ ձեռքում բռնած խնձորը ճիշտ և ճիշտ երազում Աստվածամոր նվիրած խնձորն էր ասես։ «Զարմանալի՝

բան, — մտածեց Շուշանը, խնձորն ասես բանալի լինի մարդկային փոխհարաբերություններում։ Նաև հակառակ իմաստն ունի՝ կռվախնձոր... Վերջապես, Աղամի և Եվայի հայտնի պատմության մեջ, իբրև մարդկության ճակատագրի շրջադարձի միջոց...»։

Շունը ծարավ էր երկի, որովհետև երկար լիզում էր դատարկ ջրամանը։ Շուշան տիկինը իր ջրամանից ջուր լցրեց շան համար. Հույսն այնպես վրա ընկափ ջրամանին, որ միանգամից ցամաքեցրեց։ Պահակների հսկողությունը վերացնելուց հետո հիմա տիկնոջ ջրամանը լցնելու և գարեհացը բերելու, նաև՝ շանը կերակրելու պարտականությունը մնում էր բարձիթողի... Այցելուներից մեկնումնեկը պիտի գար, որ... Դրա համար խեղճ շնիկն սկսել էր սեփական ուժերով ուտելիք հայթայթել։ Ամրոցի խոհանոցում նրան հայտնապես երես չէին տալիս... Պարսիկ ծառայողները, չգիտես ինչու, շանը տանել չէին կարողանում, հավանական է, Շուշան-Վարդենիի նկատմամբ տածած անբարեհաճությունը ցուցադրելու միջոց համարելով։ Տղաները՝ Հերակլն ու Բագրատը, խիստ հսկողության տակ էին, որպեսզի չշփվեն մոր և նրա միջավայրի հետ։ Նրանց յուրաքանչյուր քայլի մասին տեղյակ էին պահում հորը։ Ժամանակ առ ժամանակ Սև Հոռովին էր գալիս՝ Հույս շնիկին հիմնավորապես ուրախացնելով. ուտելիք էր բերում նրան մի քանի օրվա համար, ջրամանն էլ լցնում էր, նոր գնում... Ամրոցում բղեշխի կողմից աշխատանքի կարգվելուց հետո Սև Հոռովիը փոխվել էր դեպի լա՛վը... Հաճախ էր գալիս, և Շուշան տիկնոջ ոտքերի մոտ նստելով ինչ-ինչ դրվագներ պատմում ամրոցի անցուղարձից, կամ պարզապես՝ լուռ նստում։ Բղեշխի մտքով էլ չէր անցնում Սև Հոռովի հոգեկան շրջադարձը. համոզված էր, որ վերջինս առաջվա պես հսկում էր նաև Շուշանին, ամրոցի ներքին անցուղարձի

Հետ մեկտեղ... Ուրացողը չէր էլ մտածում, թե Սև Հոռովին այժմ դահճին թողած՝ զոհի՝ կողմն է անցել, քանի որ, ինչպես Հոռովին էր ասում Շուշան տիկնոջը՝ «Հոգի՝ ունեմ տալու...»:

* * *

Նույն օրը հյուղակում լինելով՝ Հոռովիը հաղորդել էր Շուշանին այն ընդհարման մասին, որ տեղի էր ունեցել հոր և երկու որդիների միջև: Ընդհանուր առմամբ տոկալով, դիմանալով, երիտասարդ Հերակլն ու պատանի Բագրատը, իրենց երակներով հոսող արյան ձայնն այլևս չկարողանալով խեղդել, երբեմն կոպտում էին պարսիկ ծառայողներին, մոգերին առանձնապես, որոնք շատ մանրակրկիտ և բծախնդիր հետևում էին, որ տղաները բարեխղճորեն կատարեն իրենց կրոնական պարտականությունները: Եղածի մասին Հոռովին ասել էր հարևանցի, իրականում հոր և որդիների միջև ընդհարումն ավելին էր. բղեշխի գաղանաբարո բնագդը կրկին արել էր իրենը՝ ձեռքի՝ դիմելու, և ինքն իրեն հազիվ զսպող Հերակլը հորը պատասխանել էր, թե ինքն էլ ձեռքեր ունի, և իր համբերությունն էլ՝ սահման...

Սև Հոռովիը երկար ժամանակ երկմտում-տատանվում էր, ասել, թե՞ չասել Շուշան տիկնոջն այն մասին, որ իր՝ Հոռովիի կասկածը Մանեի վերաբերմամբ, իրականացել է. երանի՝ այդպես չլիներ... Մանեն, իրոք, «անհետացա՛ծ» Մանեն ապրում էր Ֆեյրուզ խանումի նորակառույց պալատի մի հարկաբաժնում, իր առանձին ծառաների (պարսիկ), մոգերի՝ հետ միասին, պարսկական նիստուկացով...

Բայց տգեղ գործով զբաղվող այդ կնոջ տգեղ կեղեի՝ արտաքինի տակ, այնուամենայնիվ, հոգու խորքում մաքուր, անարատ մի անկյուն կար, որն էլ թույլ չտվեց, որ

Մանեի մասին դառն իրողությունը հայտնի նրա տարա-
բախտ մորը: Այդպես էլ, մինչև վերջ, չասաց:

* * *

Աև Հոռոփիը նոր էր գնացել, թողնելով Շուշանի գարե-
հացն ու ջուրը, բավական ուտելիք էլ՝ շնիկին: Սեպտեմ-
բերյան կարճ օրվա դեմքը ժամանակից ավելի շուտ մթնեց,
երբ երկինքն ամպեց և սկսեց անձրեւ: Աչքերը՝ կիսա-
խուփ, պառկել էր Շուշան-Վարդենին, որովհետև ընդհա-
նուր ուժասպառության բերումով այլես նստել չէր կարո-
ղանում: Այդ ժամանակ էլ նրան երևաց երրորդ տեսիլքը:

* * *

Դատաստանի տեսարան էր. չէր երևում, թե ում էին
դատում, բայց խոսքն հնչում էր այսպես. դավաճա՞նը, ու-
րացո՞ղը, ուխտանե՞նգը: Շուշան-Վարդենին գլխի ընկավ,
որ խոսքը Վազգեն բղեշխի մասին է: Եկեղեցու խորան էր,
և նրա առջև երևաց հոր՝ նահատակված Վարդան Մամի-
կոնյանի թիսագույն դեմքը՝ հոնքերի մոայլված աղեղը
տրտում աչքերի վերեւում: «Դավաճանին ներում չկա՛, –
նետեց Վարդանը, – դավաճանի՞ն՝ մա՛հ»:

Ապա էլի եկեղեցու խորանի մոտ հայտնվեց սկեսրայրը՝
Աշուշա բղեշխը, շա՞տ տխուր ու տագնապած... Նա լռում
էր, հետո ծանր-ծանր կրկնեց Մամիկոնյան սպարապետի ա-
սածը. «Դավաճանին ներում չկա՛, չկա՛...», – ու ափերով
ծածկեց ջղաձգվող դեմքը:

...Երրորդը, տե՛ր իմ, ...Մանեն էր, իր դո՛ւստրը, իր
թշվա՛ռ դուստրը: Այն, ինչ խնայել էր ասելու Շուշանին Սև
Հոռոփիը, Մանեն իր անձով հաստատեց... ...Նա սե, պատա-
ռոտված զգեստով էր, աչքերը՝ սարսափով ու արցունքով
լեցուն, նկուն, ամոթահար...

«Դավաճանին ներում չկա՛, չկա՛, չկա՛...», — ցավագին
աղաղակեց նա և ընկավ ուշակորույս:

Հետո Շուշան-Վարդենիին պատկերացավ անցյալում,
ավելի վաղ տեսած երազի մի դրվագ: Զարմանալի երկույթ
է երազ ասածդ: ...Տարիներ առաջվա երազդ հիշում ես ա-
մենայն մանրամասնությամբ, ճշգրիտ... ասես նո՞ր ես տե-
սել:

Բարձրադիր, լայնատարած կառավինարանին կանգնած
էր Վազգեն բդեշխը, երկու ձեռքով բռնած ծանր, մեծ մի
սկուտեղ, որի վրա... սեփական կտրված գլուխն էր...



ԾՈՒՅԱՆ ՎԱՐԴԵՆԻԻ ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆԻ ՎԵՐՋԻՆ ԷԶԸ

Թա՞նկ իմ հիշատակարա՞ն , որ ցավիս ու տրտմությանս մունջ վկան եղար երկա՞ր տարիներ: Եվ ո՛չ միայն վկան . ինձ հետ կիսեցի՞ր ցավս... ինձ հետ մխացիր, երբ տանջանքիս արցունքը կաթեց մագաղաթյա դեմքիդ: Իմ լուռ խոսակից, ուղեկից իմ և հոգեմատյան: Երախտապա՞րտ եմ քեզ, քանզի լուսավորեցիր օրերս, վշտերս, կյանքս... բանտային: Այդ բանտը (թեկուզ և այդպես կոչվի) ինքս ընտրեցի ինձ համար կամովին, հոժար, նվիրումով, որովհետև որոշեցի տառապանքո՞վս սրբել ընտանիքիս վրա իջած խայտառակությունը, և միանալ Աստծուն:

...Ահա և վերջը. մոմն էլ պիտի մարի, անձրեզ՝ դադարի, թառամած տերեզ՝ մեռնի, և բողբոջի նորը... Այդ թոշնած տերեն եմ ես, իսկ իմ մեջ եղած հույսի բողբոջը բացվում է նոր կյանքի համար:

Մա՛հը, մա՛հը... ծննդից ի վեր մեր ուղեկիցը ողջ կյանքում: Ոչինչ այնպես չի բորբոքում կյանքի, ապրելու ծարավը, ինչպես Մահը: Ոչինչ այնպես չի իմաստնացնում մարդուն, ինչպես Մա՛հը: Մահվան շեմին է, որ մի մեծ խաղաղությամբ ես լցվում, գիտակցելով, որ մոտ ժամանակներս գնալու ես այս աշխարհից: Եվ մտածումներիդ առանցքն է դառնում՝ մաքո՞ւր խղճով գնալ...

Մահվան գեղեցկությունը, վսեմությունը, մահվան ծեսը: Եթե Աստծո աշխարհում մի քանի գեղեցկություն կա՝ մեկն էլ մահվա՞ն գեղեցկությունն է: Եթե մի քանի ծես կա, վսեմագույնը մահվա՞ն ծեսն է: Եվ փոքր ինչ փոխակերպելով Հիսուսի հայտնի խոսքերը, ասեմ. «Մահն է կյանքի աղը»:

* * *

Անցան, գլորվեցին օրերս հատիկ-հատիկ, անվերադարձ: Դրա[՝] համար է, որ մարդը որոնում է կովաններ, հենարաններ՝ կառչելու կյանքին, որովհետև մահվան ձգողությունն անկասելի է: Երբ ընկնում է ծա՛նը կաթիլն անձրւեի՝ արցունքի պես, գիտես, որ դու էլ հավիտենական չես, պիտի անցնես դո՛ւ էլ, որ միշտ չես տեսնելու արևալույսն ու ամպերի լազուրը, միշտ չես արբելու վարդի բուրմունքով, միշտ չես լալու և խնդալու...

Կյանքի գոյությունը մահվան մյուս բևեռն է պարզապես: Գոյության երկու նժարներն են Կյանքն ու Մահը: Թող օրհնյալ լինի Կյանքը, քանի որ կա Մահը: Թող ընդունելի լինի մահը, քանի որ կա Կյանքը: Մահվան ստույգ օրը չէ՝, որ մեռնում ենք. դրանից առաջ մեռած ենք լինում բազմի՛ցս... Ամուսինս համարված բղեշիսի ուրացության բոթն առնելուն պես չմեռա[՝] միթե... Երբ նրա դավաճանության պատճառով քար առ քար քանդվեց, և դեռ քանդվում է տունս, չմեռա[՝] միթե: Երբ մանուկ Սահակս ջրերի բաժին դարձավ, չմեռա[՝] միթե... Երբ Մանեն... չմեռա[՝] միթե... Ուրեմն ստույգ մահվանիցս առաջ մեռել եմ բազմի՛ցս...

Լքումը մահ է:

Կսկիծը մահ է:

Մոռացությունը մահ է:

Ոչ ոք չգիտե, թե որքա՛ն երկար է հույսի ճամփան մինչ հանգրվանն ամենայնի:

ԲՈԼՈՐԻԴ ՕՐՀՆՈՒՄ ԵՄ

Արդեն քանի՛ օր էր, որ շունը՝ Հույսը, ոռնում էր, ոռշում էր լության բովանդակ խորքից եկող մթար մի ողբով... գունչը վեր պարզած. ասես ահազանգում էր վշտաւլի մի երեսոյթի մասին ամենքին... Իրոք էլ. բնությանն ու Աստծուն ավելի մոտ կանգնած էակ լինելով, անմեղ կենդանին կանխազգում էր մոտալուտ բաժանումը տիրուհուց, և ողբում։ Նա պառկել էր Շուշան-Վարդենիի ոտքերի մոտ, գլուխը թաթերին դրած։ Քանի որ եկող-գնացողների համար տեղը նեղ էր, փորձեցին դուրս հանել հյուղակից, ինչ արեցին-չարեցին, չեղավ... Շուշան-Վարդենին հայտնեց, թե մի շաբաթ է արդեն, որ Հույսը ոչինչ չի ուտում, փոքր-ինչ ջուր է խմում օրվա մեջ... Ներկաները, որ օրվա տարբեր ժամերի լինում էին հիվանդի հյուղակում, կամա թե ակամա անդրադառնում էին շան վիճակին, և էլի՛ ու էլի՛ արժելորում այդ կենդանու (չների առհասարակ) հավատարմությունը, որ մարդկային նախանձն է շարժում և հարգանք ներշնչում դեպի շունը։ Ասում են, մեկ էլ ձին է գրեթե նույնքան հավատարիմ իր տիրոջը։

Ներկաներից մեկը՝ Հակոբ երեցը, հետաքրքիր մի բան պատմեց հավաքվածներին։ Մի քանի օր առաջ հյուղակում լինելով նկատել էր, որ չնիկի կավե ջրամանը ճաքել է և ջուր է թողնում։ Մյուս օրն իր հետ մի նոր ջրաման էր բերել։ Բերել է, պատմում էր, ջուրը լցրել, բայց զարմանալի՛ բան։ Նկատել, որ թեպետ նոր ջրամանը լի է ջրով, շունը կրկին ջո՛ւր է փնտրում ... հին ջրամանը լիզելով։ Հակոբ երեցը զարմանքից կարկամել է. ա՛յ քեզ բան, ուրեմն կենդանին երկնչու՞մ էր, զգուշանու՞մ նոր ջրամանից ջուր

խմելուց, թեև ծարավ էր: Հակոբ երեցը պատմեց, որ տեսնելով շան վիճակը, վերցրել է նոր ջրամանն ու տեղավորել ճաքած հնի մեջ: Շունը մի քիչ հոտվացել է հին ջրամանը, ապա զգուշությամբ սկսել է խմել ջուրը, հետո՝ էլի ու էլի: Առաջվա, սովորի, ծանոթի միջնորդությունը հիմք է դարձել, որ մոտենա, վստահի՛ նորին:

«Մինչդեռ որքա՞ն մարդ կա, որ հոգեկան, այո, հոգեկա՞ն այս կատարելությանը չի հասել», - միտք հայտնեց ներկաներից մեկը: Ակնարկն ավելի քան թափանցիկ էր. հիրավի, դավաճանը հավատարիմ մի շան չափ էլ չկա...

* * *

Այդ օրն հատկապես ծանր էր Շուշան-Վարդենիի վիճակը: Անխոս մի համաձայնությամբ ներկաները որոշեցին պատրաստ լինել մոտեցող վախճանին, որը, չես իմանա, այսօր գիշե՞րը կլինի, վա՞ղը, մյուս օ՞րը... Կարեռը հարվածին պատրաստ լինելն էր, դրա համար հիվանդին մենակ չէին թողնում, մեկը (կամ երկուսը) գալիս էին, նոր միայն մյուսները՝ գնում:

Սովորականից տարբեր վիճակ էր տիրում և ամրոցում: Շուշան-Վարդենիին հիվանդատես եկողները առաջին անգամը չէ, որ լինում էին նրա մոտ, հետևաբար հիշում էին նախորդ այցելությունների ժամանակ ամրոցում տիրող կրոնական եռուզեռը. բարձրածայն աղոթքն ու անցուդարձը այդ ժամերին: Ամենայն հավանականությամբ մոգերը հարմար էին գտել ցցուն չդարձնել հակադրությունը. ի վերջո, մահացողը ամրոցի տիրուհին է, որի պարսկացած տերը ապաստան է տվել իրենց, մինչ բակի ավելի՛ քան համեստ հյուղակում վերջին օրերն է անցկացնում իր հավատին անսասան նվիրված, ըստ ամենայնի՝ բարետոհմիկ, մանավանդ՝ զորավո՛ր, շա՛տ զորավոր այս կինը:

Ի՞նչ էլ որ լիներ, մոգերը, որ նույնպես հավատի (թե-կուզ և այլ) ծառայողներ էին, եթե բարձրածայն չխոստո-վանեին էլ, ապա ներքուստ՝ հիացում, նախանձ, ակնա-ծանք, մանավանդ՝ երկյուղածություն էին տածում Շուշան-Վարդենիի նկատմամբ։ Դա երևում էր նրանց դեմքերից, պահվածքից, շարժուձեկից։ Իսկ Ֆեյրուզ խա-նումը իրենց հավաքույթներից մեկի ժամանակ ասել էր, բացեիբաց հայտարարել, թե միայն նախանձել կարելի է քրիստոնյաների հովապետերին, որ նման հավատացյալ են սնուցել իրենց հավատի խոսքով։

* * *

Վերջին օրերին Շուշան-Վարդենիին այցելողների թվում էին մասնավորաբար եպիսկոպոսաց առաջնորդ Սամվելը, Հովհան և Ափոց եպիսկոպոսները, քահանանե-րով ու սարկավագներով հանդերձ, որոնք երանելու քաջա-լերիչներն ու նեղության կարեկիցներն էին, որպեսզի սրբին մեծ չարչարանքներից դեպի Քրիստոսի նավահան-գիստ ճամփա դնեն։ Նույնպես և՝ նախարարները, ազատ-ներ, տիկիններ, Վրաց աշխարհի այլ սեպուհներ, որպեսզի հաղորդակից դառնան երանելի Շուշանի հուղարկավոր-մանն ու օրհնությանը։

Եվ բոլորը առ ի հիշատակ սրբի նրա երկաթե կապանք-ներն իբրև մասունք էին խնդրում։ Իսկ նա ասում էր. «Ես դրան արժանի չեմ, բայց հանուն ձեր աստվածասիրութ-յան՝ թող ձեզ լինի, ինչպես կամենում եք»։ Եվ օրհնում էր բոլորին՝ ըստ յուրաքանչյուրի արժանավորության ու ա-սում։ «Թող ամենալին այն Քրիստոս լիացնի ձեզ ամենայն հոգեւոր օրհնությամբ և վայելչությամբ»։

Այդպիսի մի օր էր, որ գիմելով Սամվել եպիսկոպոսին, Շուշան-Վարդենին խոսեց շնչահեղձ լինելով. «Սրբազն,

կուզենայի հաղորդություն ընդունել, զգում եմ, որ... Նախ՝ խոստվանությունս, պատրաստ եմ ահա. գոհություն քեզ, տեր Աստված, որ անարժանությանս արժանի արիր տառապանքով ավարտել իմ ընթացքը։ Արդ, ընդունողդ հոգիների և արարիչ ամենայն արարածների, փրկիչ ու կենդանություն պարգևող, ընդունիր իմ հոգին, արժանի արա ինձ քո սիրելիների հետ հավիտենական խորաններիդ մեջ հանգստության համելու, որ պատրաստել ես քո սիրելիների համար, ուր չկան ցավեր ու տրտմություններ, հեծեծանք և այն ամենը, ինչ այս աշխարհի արդյունք է. ես ի սեր քո անվան՝ ի հաճույս քեզ մասամբ տառապանքներ, կապանքներ ու բանտեր կրեցի, ընդունիր և ինձ, իմ սուրբ նախնյաց՝ քո սիրելիների հատուցումներին արժանի արա, որոնք ամեն կարգով ծառայեցին քեզ՝ ճշմարիտ Աստծուդ, և հանուն քո փառավորյալ սուրբ անվան մեռան։ Եվ արդ՝ ես այլևս ի՞նչ թվարկեմ իմ տառապանքները, այլ քո մարդարարության շնորհին հուսալով՝ քո ձեռքն եմ ավանդում իմ հոգին։

Տեղ բաց արեցին և Սամվել եպիսկոպոսը մոտեցավ Շուշանին։ Զեռքը դրեց հիվանդի ճակատին. «Մեղա՛ Աստծո», - վերջին անգամ արտաքերեց մահամերձը։ Սամվել եպիսկոպոսը նրան տվեց նշխարը, որն ընդունեց ակնածանքով...

Այսպես երանելի Շուշան-Վարդենին ամենակալ Աստծո ձեռքն ավանդեց հոգին։ Եվ բոլորն արտասվաթոր և երկյուղալի լալիս էին և աղոթք հղում առ Աստված։

* * *

Եպիսկոպոսներն ու բոլոր հավաքածներն ամփոփեցին երանելու մարմինը և լվացին պարկեցաւ կանանց ձեռքով՝ անուշահոտ յուղով ու խունկերով, անհրաժեշտը կատարե-

լով և մաքուր կտավով պատելով՝ սաղմոսներով ու օրհնություններով, հոգեւոր երգերով ու շնորհներով ու վառվող մոմերով դրին պատրաստված տեղը՝ ինչպես նրանց պատվիրել էր Քրիստոսի սուրբ աղախինը: Եվ ողջ գիշերը, մինչև ճաշի ժամը, աղոթքներ էին մրմնջում և փառաբանություն էին կարդում տեր Աստծուն:

Եվ ապա պատարագ էին մատուցում ու մեծ տոն կատարում սուրբ Շուշանի վախճանման օրը՝

Քաղոց ամսի (Հայկական տոմարի հինգերորդ ամսի) տասնյոթին:

Եվ սահմանեցին տարեցտարի բազմամբով ժողովրդով կատարել սրբի հիշատակը՝ ի փառս և ի գովություն ամենասուրբ երրորդության: Եվ սրբի բարեխոսությամբ Տերը հավատացյալներին ոչ քիչ բժշկություններ էր պարգևում:

Այս է սուրբ Շուշանի

Նահատակության

պատմությունը:



Խմբագիր՝ Ասողիկ Եպիսկոպոս
ԳԵՂ. Խմբագիր՝ Ղևոնդ քահանա
Շապիկը՝ Ա. Օհանջանյանի
Սրբագրիչ՝ Մուլաթյան

